ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՆՈՅԵՄԲԵՐ 2017

# Լիահոնա



## Գերագույն Համաժողովի Ելույթները

© MARK MISSMAN AND MARK MABRY, ՀԱՎԱՏՔԻ ԱՉՔԵՐՈՎ

*«Ինչպե՞ս ենք մենք գալիս Նրա մոտ: Անցած ապրիլին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը և Երեց Մ. Ռասսել Բալարդը խրախուսեցին անդամներին ուսումնասիրել «Կենդանի Քրիստոսը»՝ որպես Փրկիչի մասին սովորելու մի մաս. . .*

*Երբ ես ուսումնասիրեցի Հիսուս Քրիստոսի կյանքը և ուսմունքներն ավելի մեծ ուշադրությամբ և փորձեցի անձիր սովորել «Կենդանի Քրիստոսը», Փրկիչի հանդեպ իմ երախտագիտությունն ու սերը մեծացան: Այդ ոգեշնչված փաստաթղթի յուրաքանչյուր նախադասությունը պարունակում է քարոզ և մեծացրել է իմ հավատացողությունը Նրա աստվածային դերերի և երկրային առաքելության վերաբերյալ: Այս ուսումնասիրության և մտորումների միջոցով իմ սովորածը և զգացածը հաստատում են, որ Հիսուսն իսկապես հանդիսանում է «ուրը, կյանքը և հույսն աշխարհի»:*

Ջին Բ. Բինգհեմ, Սփոփող Միության գերագույն նախագահ, “That Your Joy Might Be Full,” 85

Հավատքի աչքերով, Մարկ Միսման և Մարկ Մերբի

# Բովանդակություն Նոյեմբեր 2017

Հատոր 18 • Համար 4


## Կանանց գերագույն նիստ

6 **Վառեք ձեր լույսը**
*Շարոն Յուբանկ*

10 **Մնալ Աստծո հետ և վերանորոգել ճեղքվածքը**
*Նիլ Ֆ. Մերիոթ*

13 **Անչափելի արժեք**
*Ջոյ Դ. Ջոնս*

16 **Երեք քույրեր**
*Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ*

## Շաբաթ առավոտյան նիստ

21 **Տան կարոտը**
*Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ*

25 **Կարիքները մեր առջև են**
*Բոնիի Լ. Օսկարսոն*

28 **Ծրագիրը և Հռչակագիրը**
*Երեց Դալլին Հ. Օուքս*

32 **«Ես աշխատանք ունեմ քեզ համար»**
*Երեց Ջոն Ք. Փինգրի Կրտսեր*

36 **Կենդանի հացը, որն իջնում է երկնքից**
*Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն*

40 **Արդ դուք կատարեալ եղիք, ի վերջո**
*Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ*

## Շաբաթ ցերեկային նիստ

43 **Եկեղեցու պաշտոնյաների հաստատում**
*Նախագահ Հենրի Բ. Այրինգ*

44 **Հոգևոր խավարում**
*Երեց Գարի Ի. Սթիվենսոն*

48 **Ապաշխարությունը միշտ դրական է**
*Ստեֆեն Վ. Օուենն*

51 **Հավերժական ամենօրը**
*Երեց Քվենթին Լ. Քուք*

55 **Աստվածային ծրագրի համաձայն**
*Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ*

58 **Այրի կնոջ սիրտը**
*Երեց Օ. Վինսենթ Հալեք*

60 **Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլիներ ձեր կյանքն առանց նրա**
*Նախագահ Ռասսել Մ. Նելսոն*

## Քահանայության գերագույն նիստ

64 **Քահանայությունը և Փրկիչի քավիչ զորությունը**
*Երեց Դեյլ Գ. Ռենլանդ*

68 **Բոլոր բանների ճշմարտությունը**
*Երեց Դեյվիդ Ֆ. Էվանս*

75 **Արժանանալ Տիրոջ և ձեր ընտանիքի վստահությանը**
*Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզ*

78 **Երկնային լույսի կրողները**
*Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ*

81 **Տերն առաջնորդում է Իր Եկեղեցին**
*Նախագահ Հենրի Բ. Այրինգ*

## Կիրակի առավոտյան նիստ

85 **Եւ ձեր ուրախութիւնը լցուած լինի**
*Ջին Բ. Բինգհեմ*

88 **Մի՞թե հրաշքների օրը դադարել է**
*Երեց Դոնալդ Լ. Հոլստրոմ*

90 **Ամենամեծ և պատվական խոստումները**
*Երեց Դեյվիդ Ա. Բեդնար*

94 **Դարձեք դեպի Տերը**
*Եպիսկոպոս Վ. Քրիստոֆեր Վադել*

97 **Տեր, թույլ տուր, որ իմ աչքերը բացվեն**
*Երեց Վ. Քրեյգ Ցվիք*

100 **Մի վախեցեք բարիք գործել**
*Նախագահ Հենրի Բ. Այրինգ*

## Կիրակի ցերեկային նիստ

104 **Գաղթը շարունակվում է**
*Երեց Մ. Ռասել Բալլարդ*

107 **Մորմոնի Գիրքը որպես Աստծո զորավոր վկա**
*Թեդ Ռ. Քալիստեր*

110 **Միմյանցից հեռու, բայց միասին**
*Երեց Ջոնի Լ. Քոչ*

112 **Արդյո՞ք մենք վստահում ենք Նրան. Որքան դժվար, այնքան լավ**
*Երեց Սթենլի Գ. Էլիս*

115 **Հավերժական ճշմարտություններ. մեր գործելու անհրաժեշտությունը**
*Երեց Սդիլսոն դե Փոլա Պարելլա*

117 **Փնտրեք լավագույն գրքերից**
*Երեց Յան Ս. Արդերն*

119 **Սիրենք միմյանց, ինչպես Նա սիրեց մեզ**
*Երեց Խոսե Լ. Սլոնսո*

122 **Տիրոջ ձայնը**
*Երեց Նիլ Լ. Անդերսեն*

72 **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները և Բարձրագույն Պաշտոնյաները**

127 **Համաժողովի պատմությունների ցուցիչ**

128 **Եկեղեցու նորությունները**

137 ***«Եկ, հետևիր ինձ» ուղերձը Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության համար***

# 187-րդ կիսամյա գերագույն համաժողով

**Շաբաթ երեկո, 23 սեպտեմբերի, 2017, կանանց գերագույն ժողով**
Վարող. Քույր Ջին Բ. Բինգհեմ
Բացման աղոթք. Մեգումի Յամագուչի
Փակման աղոթք. Լեսլի Փ. Լեյթոն
Երաժշտություն. Relief Society choir from stakes in the Park City, Utah, area; Jane Fjeldsted, director; Bonnie Goodliffe, organist: "Let Zion in Her Beauty Rise," *Hymns,* no. 41, arr. Kasen, pub. by Jackman; "Sing Praise to Him," *Hymns,* no. 70, arr. Fjeldsted and Goodliffe; "True to the Faith," *Hymns,* no. 254; "We Have Partaken of Thy Love," *Hymns,* no. 155, arr. Fjeldsted and Goodliffe

**Շաբաթ առավոտ, 30 սեպտեմբերի, 2017, գերագույն նիստ**
Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Երեց Լարի Ռ. Լորենս:
Փակման աղոթք. Երեց Մասիմո Դե Ֆեո
Երաժշտություն. Tabernacle Choir; Mack Wilberg and Ryan Murphy, directors; Richard Elliott and Andrew Unsworth, organists: "Come, We That Love the Lord," *Hymns,* no. 119; "Arise, O God, and Shine," *Hymns,* no. 265, arr. Wilberg, pub. by Oxford University Press; "God Bless Our Prophet Dear," *Hymns,* no. 24, arr. Wilberg; "High on the Mountain Top," *Hymns,* no. 5; "God Is Love," *Hymns,* no. 87, arr. Murphy; "Faith in Every Footstep," Dayley, pub. by Jackman

**Շաբաթ ցերեկ, 30 սեպտեմբերի, 2017, գերագույն նիստ**
Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Բացման աղոթք. Երեց Լորենս Ե. Քորբրիջ
Փակման աղոթք. Երեց Ալլան Ֆ. Փաքեր
Երաժշտություն. youth choir from stakes in Midvale and Sandy, Utah; Leah Tarrant, director; Linda Margetts, organist: "Come, Ye Children of the Lord," *Hymns,* no. 58, arr. Wilberg, pub. by Deseret Book; medley, arr. Sally DeFord: "I'm Trying to Be like Jesus," *Children's Songbook,* 78–79; "He Sent His Son," *Children's Songbook,* 34–35; "There Is Sunshine in My Soul Today," *Hymns,* no. 227; "Rejoice, the Lord Is King!" *Hymns,* no. 66, arr. Kasen, pub. by Jackman.

**Շաբաթ երեկո, 30 սեպտեմբերի, 2017, քահանայության գերագույն նիստ**
Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Երեց Քեվին Վ. Փիրսոն
Փակման աղոթք. Երեց Ռաֆայել Ե. Փինո
Երաժշտություն. father and sons choir from stakes in Cache County, Utah; Geoffrey Anderson, director; Clay Christiansen, organist; "Put Your Shoulder to the Wheel," *Hymns,* no. 252, arr. Dalton, pub. by LDS Music Source; "Secret Prayer," *Hymns,* no. 144, arr. Kasen, pub. by Jackman; "How Firm a Foundation," *Hymns,* no. 85; "We Ever Pray for Thee," *Hymns,* no. 23, arr. Kasen, pub. by Jackman

**Կիրակի առավոտ, 1 հոկտեմբերի, 2017, գերագույն նիստ**
Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Բացման աղոթք. Երեց Մայքլ Տ. Ռինգվուդ
Փակման աղոթք. Երեց Խոսե Ա. Թեքսեյրա
Երաժշտություն. Tabernacle Choir; Mack Wilberg, director; Andrew Unsworth and Clay Christiansen, organists: "Praise to the Lord, the Almighty," *Hymns,* no. 72; "Press Forward, Saints," *Hymns,* no. 81, arr. Wilberg; "Consider the Lilies," Hoffman, arr. Lyon, pub. by Sonos; "Hark, All Ye Nations!" *Hymns,* no. 264, arr. Wilberg; "Glory to God on High," *Hymns,* no. 67; "Dear to the Heart of the Shepherd," *Hymns,* no. 221, arr. Wilberg, unpublished; "I Believe in Christ," *Hymns,* no. 134, arr. Wilberg, pub. by Jackman.

**Կիրակի ցերեկ, 1 հոկտեմբերի, 2017, գերագույն նիստ**
Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Երեց Ջոզեֆ Վ. Սիտատի
Փակման աղոթք. Երեց Էվան Ա. Շմուց
Երաժշտություն. Tabernacle Choir; Mack Wilberg and Ryan Murphy, directors; Bonnie Goodliffe and Linda Margetts, organists: "Come, O Thou King of Kings," *Hymns,* no. 59, arr. Murphy, unpublished; "Have I Done Any Good?" *Hymns,* no. 223, arr. Zabriskie, pub. by LDS Music Source; "Now Let Us Rejoice," *Hymns,* no. 3;"If the Savior Stood Beside Me," DeFord, arr. Cardon; "Israel, Israel, God Is Calling," *Hymns,* no. 7, arr. Wilberg.

**Համաժողովի ելույթները մատչելի են**
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library բջջային հավելվածում: Գերագույն համաժողովի մասին նյութերը սահմանափակ կարողություններ ունեցող անդամների համար հասանելի ձևաչափերով առկա են *disability.lds.org* կայքում:

**Տնային և այցելող ուսուցիչների ուղերձները**
Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար ընտրեք այն ուղերձը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում ուսուցանում եք:

**Կազմի վրա**
Առջևում. Լուսանկարը Լեսլի Նիլսոնի կողմից
Ետևում. Լուսանկարը՝ Քրեյգ Դայմոնդի կողմից

**Համաժողովի լուսանկարները**
Սոլթ Լեյք Սիթիում լուսանկարել են. Քոդի Բել, Ջանե Բինգհեմ, Մեյսոն Քոբերլի, Ռենդի Քոլեր, Վեսթոն Քոլթոն, Քրեյգ Դայմոնդ, Էշլի Լարսոն, Լեսլի Նիլսոն, Մեթ Ռեյեր և Դեյվ Ուորդ:

**ՆՈՅԵՄԲԵՐ 2017 ՀԱՏՈՐ 18 ՀԱՄԱՐ 4**
**ԼԻԱՀՈՆԱ 14451 201**
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

**Առաջին Նախագահություն.** Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

**Տասներկու Առաքյալների Քվորում.** Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ

**Խմբագիր.** Հյուգո Ի. Մարտինեզ
**Խմբագրի օգնականներ.** Ռանդալ Ք. Բաններ, Քերոլ Ֆ. Մակքոնկի
**Խորհրդատուներ.** Բրայան Ք. Էշթոն, Բոննի Հ. Քորդոն, Լեզառն Ռ. Քըրթիս Կրտս., Էդվարդ Դյուբ, Շերոն Յուբենկ, Դոնալդ Լ. Հոլսթրոմ, Դուգլաս Դ. Հոլմս, Էրիկ Վ. Կոպիչկե,

**Գլխավոր տնօրեն.** Ռիչարդ Ի. Հիթը
**Եկեղեցու Ամսագրերի տնօրեն.** Վլան Ռ. Լոյբորգ
**Գործարար ղեկավար.** Գարֆ Քենոն

**Գլխավոր խմբագիր.** Ադամ Ս. Օլսոն
**Գլխավոր խմբագրի օգնական.** Ռայան Քար
**Հրապարակման օգնական.** Դեբի Բեյքըն
**Գրողներ և խմբագրողներ.** Մարիսա Դենսիս, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Ջոն Ռայան Ջենսեն, Շառլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մըրդոք, Սալի Ջոնսոն Օդեքրիկ, Ջոշուա Ջ. Թերկի, Յան Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Էնն Սելու, Մարիսա Վիդիսոն
**Արվեստի գծով գործադիր տնօրեն.** Ջ. Սքոթ Նադսեն

**Արվեստի տնօրեն.** Թեդ Ռ. Փեթերսոն
**Ձևավորում.** Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Դեյվիդ Գրին, Քոլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մուլ, Էմիլի Շրեկո Ռեմինգտոն, Մարք Վ. Ռոբինսոն, Բրեդ Թիրը, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

**Մտավոր սեփականության համակարգող.** Քոլեթ Նեբեքեր Օն
**Հրատարակչության տնօրեն.** Ջեյն Էնն Փիթերս
**Հրատարակում.** Իռա Գլեն Ադեյր, Ջուլի Բըրդեթ, Թոմաս Գ. Քրոնին, Բրայըն Վ. Գիջի, Գիննի Ջ. Նիլսոն, Դերեկ Ռիչարդսոն

**Նախատպագրություն.** Ջոշուա Դենսիս, Ամմոն Հարիս
**Տպագրության տնօրեն.** Ստիվեն Տ. Լյուիս
**Բաշխման տնօրեն.** Թրոյ Ռ. Բարքեր

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ Liahona, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

*Լիահոնան* (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քբուանա, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2017 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

**Հեղինակային իրավունք.** Եթե հատուկ նշված չէ, *Լիահոնայի* նյութերը կարելի է բազմացնել անձնական ոչ կոմերցիոն նպատակով օգտագործելու համար (այդ թվում Եկեղեցու կոչումների համար): Այդ իրավունքը կարող է ցանկացած ժամանակ սահմանափակվել: Տեղողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սահմանափակումներ են նշված տվյալ աշխատանքի նկարագրական տողում: Հեղինակային իրավունքի հետ կապված հարցերը պետք է ուղղել. Intellectual Property Office, 50 E. North Temple St., L13, Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

*Լիահոնան* տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

**For Readers in the United States and Canada:**
November 2017 Vol. 18 No. 4. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

## Խոսնակների ցուցիչ

Օուեն, Ստեֆեն Վ., 48
Ալոնսո, Խոսե Լ., 119
Այրինգ, Հենրի Բ., 43, 81, 100
Անդերսեն, Նիլ Լ., 122
Արդերն, Յան Ս., 117
Բալլարդ, Մ. Ռասսել, 104
Բեդնար, Դեյվիդ Ա., 90
Բինգհեմ, Ջին Բ., 85
Էլիս, Սթեֆի Գ., 112
Էվանս, Դեյվիդ Ֆ., 68
Կոչ, Ջոնի Լ., 110
Հալեք, Օ. Վինսենթ, 58
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 40
Հոլսթրոմ, Դոնալդ Լ., 88
Մեյսզ, Ռիչարդ Ջ., 75
Մերիոթ, Նիլ Ֆ., 10
Յուբանկ, Շարոն, 6
Նելսոն, Ռասսել Մ., 60
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 16, 21, 78
Ջոնս, Ջոյ Դ., 13
Ռասբանդ, Ռոնալդ Ա., 55
Ռենլանդ, Դեյլ Գ., 64
Սթիվենսոն, Գարի Ի., 44
Վադել, Վ. Քրիստոֆեր, 94
Ցվիք, Վ. Քրեյգ, 97
Փարելա, Ադիլսոն դե Փոլա, 115
Փինգրի, Ջոն Ք. Կրտսեր, 32
Քալիսթեր, Թեդ Ռ., 107
Քուք, Քվենթին Լ., 51
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 36
Օուքս, Դալլին Հ., 28
Օսկարսոն, Բոննի Լ., 25

## Թեմաների ցուցիչ

Ազնվություն, 75
Ահարոնյան Քահանայություն, 64
Ամուսնություն, 75
Անհատական արժանավորություն, 13, 40
Անվտանգություն, 44
Աշակերտություն, 16, 21
Աշխատանք, 32
Ապաշխարություն, 6, 36, 48
Առաջնորդություն, 55
Աստվածագլուխ, 112
Աստվածային էություն, 13, 16, 55, 90
Արարողություններ, 90
Արժանավորություն, 13
Բժշկում, 78, 85, 88, 94, 97
Գերագույն համաժողով, 122
Դարձ, 13, 58, 60, 115, 117
Եկեղեցու կոչումներ, 81
Եկեղեցու ղեկավարներ, 81, 122
Եպիսկոպոսներ, 81
Երախտագիտություն, 58
Զոհաբերություն, 58, 112
Ընտանիք, 25, 28, 75, 115
Ընտրություն, 55, 94
Լրատվամիջոցներ, 44
Խաղաղություն, 13, 75, 85
Խոնարհություն, 44, 51
Ծառայություն, 21, 25, 32, 36, 78, 100, 119
Կանայք, 6
Հաղորդակցում, 6
Հաղորդություն, 36, 97
Համբերություն, 68, 117
Համեստություն, 51
Հայտնություն, 81, 122
Հայր Աստված, 10, 40, 115
Հայրություն, 75
Հանգստության օր, 90, 117
Հավատք, 68, 81, 85, 88, 100, 104, 112, 117
Հեռանկար, 40, 44, 97
Հիսուս Քրիստոս, 10, 13, 16, 21, 36, 40, 48, 51, 60, 64, 78, 81, 85, 94, 97, 100, 107, 112, 115, 119, 122
Հոգևորություն, 55
Հույս, 94
Հպարտություն, 10, 44, 51
Հրաշքներ, 88
Ձախորդություն, 21, 32, 44, 85, 88, 94, 97, 100, 112
Ճշմարտություն, 68, 78
Մարգարեներ, 115, 122
Մելքիսեդեկյան Քահանայություն, 64
Միություն, 110
Միսիոներական աշխատանք, 48, 51, 60
Մորմոնի Գիրք, 60, 68, 100, 107, 117
Ներում, 48, 51, 119
Նվիրաբերում, 58
Շնորհ, 36, 40
Ուխտեր, 64, 68, 90
Ուրախություն, 6, 16, 21, 85
Զոզեֆ Սմիթ, 107, 115, 122
Ռահվիրաներ, 104, 112
Սեր, 10, 25, 100, 119
Սուրբ Հոգի, 13
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 60, 117
Սրբություն, 36
Սփոփող Միություն, 6
Վախ, 10, 100
Վկայություն, 68, 78, 85, 100, 107
Վստահություն, 75, 94, 112
Տաղանդներ, 32
Տաճարներ, 58, 68, 90
Տասանորդ, 112
Տուն, 21, 90
Փրկության ծրագիր, 28, 88, 112, 115
Քահանայություն, 64
Քաջություն, 100
Քավություն, 10, 13, 36, 40, 48, 64, 85, 88, 94
Քննադատություն, 97, 110
Քրիստոսի Լույս, 21, 78

# 187-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում

*Տե՛ր, մեր մարգարեին*
*Առողջությամբ օրհնիր,*
*Միսիթարիր։*
*Խոսքերը Դու նրա*
*Կրակով փորագրիր*
*Հոգիների վրա*
*Հավատարիմ։*
(«Տեր, օրհնիր մեր մարգարեին», *Օրհներգեր,* հ. 24, կատարվել է շաբաթ առավոտյան նիստին)

Ավելի քան 50 տարի Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հուզիչ անձնական պատմությունները և Հիսուս Քրիստոսի մասին զորեղ վկայությունը եղել են գերագույն համաժողովի մասը։ Սակայն վատթարացող առողջական վիճակի պատճառով և՛ Նախագահ Մոնսոնը, և՛ Երեց Ռոբերտ Դ Հեյլը Տասներկու Առաքյալների Քվորումից, բացակայում էին այս համաժողովին, որը նկատելի էր։

Բացակա, բայց ոչ մոռացված։

Թեև Նախագահ Մոնսոնը համաժողովը դիտում էր տանը, իսկ Երեց Հեյլը, որ գտնվում էր հիվանդանոցում, վերջին նիստից առաջ խաղաղ ավանդեց հոգին. նրանք երկուսն էլ մեր մտքերում էին, երբ մենք աղոթում էինք նրանց համար, և նրանց ազդեցությունը զգացվում էր ելույթների ժամանակ։

Նախագահ Մոնսոնի խոսքերից մեջբերեցին ավելի քան տասնյակ խոսնակներ, այդ թվում՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը (տես էջ 60), ով հատուկ հղում կատարեց վերջին համաժողովին Նախագահ Մոնսոնի հրավերին՝ «ամեն օր աղոթքով ուսումնասիրել Մորմոնի Գիրքը և խորհել դրա շուրջ»։[1]

Երեց Նիլ Լ. Անդերսենը՝ եզրափակիչ խոսնակը (տես էջ 122), կիսվեց Երեց Հեյլսի խոսքերով, որոնք նա պատրաստել էր համաժողովի համար, սակայն չէր կարողացել հնչեցնել. «Երբ մենք ընտրում ենք հավատք ունենալ, մենք պատրաստ ենք կանգնել Աստծո ներկայության մեջ»։ Անշուշտ, Երեց Հեյլսն ընտրել է հավատքը։

Ներկա չլինելով, բայց իրականում չբացակայող Նախագահ Մոնսոնը և երեց Հեյլսը բեմահարթակի վրա չէին, սակայն կարևոր դեր էին խաղում՝ շատերի համար իմաստալից դարձնելով համաժողովը։

*Մարգարե սիրելի՛, աղոթքն է մեր,*
*Որ Տերը քեզ ափոփի, առույգ պահի։*
*Որ տարիները, երբ ուսդ թուլացնեն,*
*Լույսը սուրբ քո ներսում միշտ վառ մնա,*
*Լույսը սուրբ քո ներսում միշտ վառ մնա։*
(«Աղոթում ենք միշտ քեզ համար», *Օրհներգեր,* հ. 23, կատարվել է քահանայության գերագույն նիստին) ■

**ՀՂՈՒՄ**

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Մորմոնի Գրքի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2017, 87։

PACKAGE CHECK

**Շարոն Յուբանկ**
Սփոփող Միության Գերագույն Նախագահության
Առաջին Խորհրդական

# Վառեք ձեր լույսը

*Մարգարեներն ապավինում են մեզ, իմ քույրեր: Դուք կլինե՞ք արդարակյաց: Դուք կարտահայտե՞ք ձեր հավատքը: Կարո՞ղ եք վառել ձեր լույսը:*

Միգուցե դուք չգիտեք, բայց Նախագահ Մոնսոնը և ես երկվորյակներ ենք: Այն օրը, այն նույն ժամին, երբ ես ծնվեցի հյուսիսային Կալիֆորնիայում, 36-ամյա Թոմաս Մոնսոնը հաստատվեց որպես նոր Առաքյալ: Ինձ դուր է գալիս այն փաստը, որ ես հատուկ և անձնական կապ ունեմԱստծո մարգարեի՝ Նախագահ Մոնսոնի հետ:

Մարգարեները խոսում են կանանց մասին:[1] Դուք կլսեք նրանց խոսքերը այս հավաքին: Ուզում եմելույթս սկսել 40 տարի առաջ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի կողմից գրված մի նշանավոր մարգարեությունով: 1979 թվականի սեպտեմբերին Եկեղեցու կանայք երկրորդ անգամն էին հավաքվում իրենց համաշխարհային ժողովին: Նախագահ Քիմբալը պատրաստել էր իր ելույթը, սակայն համաժողովի օրը նա հայտնվեց հիվանդանոցում: Այդ պատճառով նա խնդրեց իր տիկնոջը՝ Կամիլա Այրինգ Քիմբալին, իր փոխարեն ընթերցելելույթը:[2]

Քույր Քիմբալը կարդաց մարգարեի խոսքերը, որոնք կարևորում էին ՎՕՍ կանանց ազդեցությունը աշխարհի լավ կանանց վրաՓրկիչի Երկրորդ Գալուստից առաջ: Ելույթի վերջում հնչեց ոգեշնչող կոչ՝ ուղղված Եկեղեցու կանանց, որի շուրջ մենք խոսում ենք այդ ժամանակից ի վեր:

Թույլ տվեք մի փոքր մեջբերում անել Նախագահ Քիմբարի խոսքերից.

«Վերջապես, իմ սիրելի՛ քույրեր, թույլ տվեք մի առաջարկություն անել, որի մասին նախկինում չի խոսվել կամ, եթե խոսվել է, ոչ այս ձևով. Վերջին օրերում Եկեղեցում մեծ աճ տեղի կունենա հիմնականում այն պատճառով, որ աշխարհի լավ կանանցից շատերը . . . մեծ թվով կմիանան Եկեղեցուն: Դա տեղի կունենա այնպիսի չափերով,

*1979թ. սեպտեմբերին Կամիլիա Այրինգ Քիմբալը ընթերցում է Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի ելույթը նրա փոխարեն:*

որ Եկեղեցու կանայք իրենց կյանքով արդարակեցություն և պարզություն կարտացոլեն, և դա այնքան վառ կարտահայտվի, որ Եկեղեցու կանայք առանձնահատուկ ձևով կտարբերվեն աշխարհի կանանցից:

Աշխարհի իրական հերոսուհիների մեջ, ովքեր կմիանան Եկեղեցուն, կլինեն կանայք, որոնք ավելի շատ մտահոգված կլինեն արդարակյաց, քան եսասեր լինելով: Այդ իսկական հերոսուհիները ունեն ճշմարիտ խոնարհություն, որն ավելի մեծ արժեք է համարում բնավորության անաչառությունը, քան տեսանելիությունը: . . .

«. . . Կլինի այնպես, . . . որ վերջին օրերին Եկեղեցու օրինակելի կանայք վիթխարի ուժ կներկայացնեն, ինչը վերաբերում է Եկեղեցու թվական և հոգևոր աճին»:[3]

Ինչպիսի՜ մարգարեական հայտարարություն: Որպես ամփոփում.

- Կանանց միջև լավ հարաբերություններն են նպաստելու գալիք տարիներին Եկեղեցու հիմնական աճին:
- Ընկերական կապերը, որ Սփոփող Միության կանայք, երիտասարդ կանայք և երեխաների միության աղջիկները կստեղծեն այլ կրոնների և հավատքների անկեղծ, հավատարիմ և աստվածային կանանց ու աղջիկների հետ, կդառնան այն վիթխարի ուժը, որով Եկեղեցին կաճի վերջին օրերում:
- Այլ տեղերից եկող այդ կանանց Նախագահ Քիմբալը կոչում է հերոսուհիներ, որոնք ավելի շատ մտահոգված են արդարակյաց, քան եսասեր լինելով, ովքեր ցույց կտան մեզ, որ բնավորության անաչառությունը ավելի արժեքավոր է, քան տեսանելիությունը:

Այդ լավ կանանցից շատերին ես հանդիպում եմ, երբ աշխարհով մեկ շրջելիս կատարում եմ իմ աշխատանքը: Նրանց ընկերությունը թանկ է ինձ համար: Դուք նույնպես ճանաչում եք նրանցից շատերին ձեր ընկերների և հարևանների մեջ: Նրանք կարող են լինել կամ չլինել

Եկեղեցու անդամ այս պահին, սակայն մենք ընկերություն ենք անում, որը շատ կարևոր է: Իսկ ինչպե՞ս ենք մենք կատարում մերբաժինը: Մենք ի՞նչ պիտի անենք: Նախագահ Քիմբալը անդրադառնում է հինգ քայլերի.

Առաջինը՝ արդարակյաց լինելն է: Արդարակյաց լինելչի նշանակում լինել կատարյալ կամ երբեք սխալներ չգործել: Դա նշանակում է ներքին կապ ստեղծել Աստծո հետ, ապաշխարել մեղքերից և սխալներից և պատրաստակամօգնել ուրիշներին:

Ապաշխարած կանայք փոխում են պատմության ընթացքը: Ես մի ընկերուհի ունեմ, որն ավտովթարի զոհ է դարձել փոքր տարիքում և կախվածություն ձեռք բերել ցավազրկող դեղորայքից: Հետո նրա ծնողներըամուսնալուծվեցին: Ապա նա հղիացավ կարճատև կապից հետո, և նրա կախվածությունները շատացան: Բայց մի երեկո նա նայեց այն խառնաշփոթին, որ առաջացել էր իր կյանքում, և մտածեց. «Բավական է»: Եվ նա աղերսեց Փրկիչ Հիսուս Քրիստոսին օգնության համար: Նա ասաց, որ իմացել էր, որ Հիսուս Քրիստոսն ավելի ուժեղ էր գտնվել, քան ինքը և իրսոսկալի հանգամանքներն են, և որ ինքըկարող էր ապավինել Նրա զորությանը, անցնելով ապաշխարության ճանապարհով:

Վերադառնալով դեպի Տերը և Նրաճանապարհները, նա փոխեց իր, իր փոքրիկ տղային իր նոր ամուսնու կյանքի պատմության ընթացքը: Նա արդարակյաց է և նրասիրտը բաց է ուրիշների համար, ովքեր սխալներ են կատարում և ցանկանում փոխվել: Ինչպես բոլորս, նա ևս կատարյալ չէ, սակայն նա գիտե, ինչպես ապաշխարել և շարունակել փորձել:

Երկրորդը՝ ճիշտ արտահայտվելն է: Ճիշտ արտահայտվել նշանակում է հստակ նկարագրել, թե ինչ եք զգում և ինչու: Այս տարվա սկզբին իմ ֆեյսբուքի լրահոսում մի գրառում հայտնվեց, որը քննադատում էր քրիստոնեությունը: Ես կարդացի, մի փոքր զայրացա, բայց

չանդրադարձա դրան: Սակայն ծանոթներիցս մեկը, ով մեր հավատքից չէ, արձագանքեց իր գրառումով: Նա գրեց. «[Սա] ուղիղ հակառակն է այն բանի, ինչ քարոզում էր Հիսուսը. նա . . . արմատական հայացքներ ուներ իր ժամանակների համար, նա . . . հավասարություն բերեց աշխարհ: . . . Նա [խոսեց] պոռնիկների հետ, [ճաշեց] հարկ հավաքողի հետ . . . , ընկերացավ անզոր կանանց և երեխաների հետ . . . , [և] տվեց մեզ բարի Սամարացու պատմությունը: . . . Ստացվում է, որ . . . իսկական քրիստոնյաները ձգտում են լինել ԱՌԱՎԵԼ սիրող մարդիկ աշխարհում»: 4 Երբ կարդացի, մտածեցի. «Ինչո՞ւ ինքս չգրեցի դա»:

Մեզանից յուրաքանչյուրը կարիք ունի սովորել ավելի լավ արտահայտելու մեր հավատքի հիմքերը: Ի՞նչ ես մտածում Հիսուս Քրիստոսի մասին: Ինչո՞ւ ես մնում Եկեղեցում: Ինչո՞ւ ես հավատում, որ Մորմոնի Գիրքը սուրբ գրություն է: Որտեղի՞ց ես խաղաղություն ստանում: Ինչո՞ւ է կարևոր, որ մարգարեն 2017-ին էլ ասելիք ունի: Որտեղի՞ց գիտես, որ նա ճշմարիտ մարգարե է: Օգտագործեք ձեր ձայնը և ձեր ուժը արտահայտելու համար այն, ինչ զգում եք և գիտեք՝ սոցիալական լրատվամիջոցներից, ձեր ընկերների հետ հանգիստ զրույցներից և ձեր թոռների հետ խոսակցություններից: Ասացեք նրանց, թե ինչու եք հավատում, որտեղից գիտեք, ինչ եք զգում, արդյոք երբևէ կասկածել եք, ինչպես եք դա հաղթահարել, ինչ նշանակություն ունի ձեզ համար Հիսուս Քրիստոսը: Ինչպես ասել է Պողոս Առաքյալը. «Մի վախենաք, . . . այլ Տեր Աստծուն ձեր սրտի մեջ սուրբ պահեցեք. Եվ միշտ պատրաստ եղէք պատասխան տալու ամենին, . . . որ ձեր մէջ եղած յոյսի համար պատճառ հարցն է»:[4]

Երրորդը՝ տարբերվելն է: Թույլ տվեք պատմել մի դեպքի մասին, որը տեղի ունեցավ այս հուլիսին Պանամա Սիթի լողափում (Ֆլորիդա):[5] Կեսօրից հետոՌոբերտա Արսրեյը նկատեց իր երկու երիտասարդ տղաներին, որոնք գոռալովօգնություն էին կանչումօվկիանոսիափից 90 մետր հեռավորության վրա: Նրանք հայտնվել էին ուժեղ հոսանքի մեջ, որը քշում էր նրանց դեպի օվկիանոս: Մոտ գտնվող զույգը փորձեց փրկել տղաներին, բայց նույնպես ընկավ հոսանքի մեջ: Արսրեյի ընտանիքի անդամները լողալով փորձեցին հասնել և փրկել մաքառող լողորդներին, և շատ շուտով ինը հոգի գերի էին ընկել հոսանքին:

Պարաններ չկային: Փրկարարներ չկային: Ոստիկանությունը փրկարար նավակի կարգադրություն էր ուղարկել, բայց օվկիանոսում գտնվող մարդիկ արդեն 20 րոպե պայքարի մեջ էին, ուժասպառ էին եղել և նրանց գլուխները սուզվում էին ջրի տակ: Ափին գտնվողների և իրավիճակին հետևողների մեջ էր Ջեսիկա Մեյ Սիմոնսը: Նրա և նրա ամուսնու մոտ միտք ծագեցմարդկային շղթա կազմել: Նրանք

ձայն տվեցին ափին գտնվողներին, խնդրելով օգնել իրենց, և տասնյակ մարդիկձեռքձեռքի տվեցին և մտան օվկիանոս: Ջեսիկան հետագայում գրել էր. «Աննկարագրելի էր տեսնել, ինչպես էին տարբեր ազգություններին և սեռի մարդիկ միավորել իրենց ջանքերըԼՐԻՎանծանոթ մարդկանց փրկելու համար»:[6] 80 հոգուց կազմված շղթան ձգվեց դեպի լողորդները: Նայեք այդ զարմանալի պահը պատկերող լուսանկարին:

Ափինգտնվողները մտածում էին միայն ավանդական լուծումների մասին և կաթվածահար էին եղել: Բայց միզույգ վայրկյանների ընթացքում այլ լուծում գտավ: Նորարարությունը և ստեղծարարությունը հոգևոր պարգևներեն: Երբ մենք պահում ենք մեր ուխտերը, ապա տարբերվում ենք մյուսներից մեր մշակույթում և հասարակության մեջ, բայց դա մեզ ոգեշնչման հնարավորություն է տալիս, որպեսզիգտնենք այլ լուծումներ, այլ մոտեցումներ, այլ կիրառումներ: Միշտ չէ, որ մենք կհարմարվենքայս աշխարհին, սակայն դրական մոտեցմամբտարբերվելով, կարող ենքկյանքի ուղի դառնալ նրանց համար, ովքեր մաքառումներիմեջ են:

Չորրորդը՝ առանձնանալն է: Առանձնանալ նշանակում է ընդունվել մյուսների կողմից որպես լավ ձևավորված անհատ: Թույլ տվեք վերադառնալ Ջեսիկա Մեյ Սիմոնսի պատմությանը լողափում: Երբ այդ մարդկային շղթան ձգվեց դեպի լողորդները, նա գիտեր, որ ի վիճակի էր օգնել: Ջեսիկա Մեյն ասաց. «Ես կարող եմ պահել շնչառությունս . . . և հեշտությամբ անցնել օլիմպիական լողավազանը և գալ հետ: [Ես գիտեի ինչպես կարող էի դուրս գալ հոսանքից:] Ես գիտեի, որ կարող էի [բոլոր լողորդներին] հասցնել մարդկային շղթայի մոտ»:[7] Նա և նրա ամուսինը վերցրին թեթև լողատախտակներ և մեկ այլ փրկարարի հետ լողացին դեպի տուժածները, ապա մեկ առ մեկ նրանց փոխանցեցին շղթային, որը նրանց ապահով հասցրեց ափ: Ջեսիկան օժտված էրառանձնակիհմտությամբ. նա գիտեր՝ ինչպես լողալ հոսանքի դեմ:

Վերականգնված ավետարանը ընդունելի է որպես լավ ձևավորված վարդապետություն: Բայց մենք պետք է տարբերվենքնրանով, թե ինչպես ենք հետևում ավետարանին:Ինչպես Ջեսիկան էր վարժ լողում, այնպես էլ մենք պիտի վարժվենքավետարանով ապրել, նախքանդժբախտ պատահարը տեղի կունենա, որպեսզի այդ պահին առանց վախենալու, բավականին ուժեղ լինենք՝ օգնելու նրանց, ովքեր քշվում են հոսանքի կողմից:

Եվ վերջապես, հինգերորդը՝ վերը նշված մեկից չորս քայլերը երջանկությանոգով կատարելն է: Երջանիկ լինելչի նշանակում արհեստական ժպիտ ունենալ դեմքին անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում: Բայց դա նշանակում է պահել Աստծո օրենքները և օգնել ու բարձրացնել մյուսներին:[8] Երբ մենք օգնում ենք, երբ բարձրացնում ենք մյուսների բեռը, օրհնում ենք մեր կյանքը այնպես, որ փորձությունները այլևս չեն սպառնում մեզ: Նախագահ Հինքլիի այս մեջբերումը դրված է այնտեղ, որտեղ ես այն տեսնում եմ ամեն օր:Նա ասել է. «Դուք չեք . . . կառուցում, ելնելովհոռետությունից կամ նենգությունից: Երբ դուք նայում եք լավատեսությամբ, աշխատում հավատով, լավ բաները տեղի են ունենում»:[9]

Որպես այդպիսի ուրախ և լավատես հոգու օրինակ ես ճանաչում եմ Էլզա անունով 13-ամյա մի աղջկա, ում ընտանիքը տեղափոխվում է Բատոն Ռուժ (Լուիզիանա)՝ ընկերներից 2900 կմ հեռու: Երբ 13 տարեկան ես, հեշտ չէ նոր վայր տեղափոխվել: Էլզան, հասկանալիորեն, կասկածներ ուներայդ տեղափոխության հետ կապված, ուստինրա հայրը օրհնություն տվեց նրան: Օրհնության ժամանակ նրա մայրը հաղորդագրություն ստացավ հեռախոսով: Լուիզիանայի ծխում ապրող երիտասարդ կանայք ուղարկել էին այս նկարը և այս խոսքերը. «Խնդրում ենք, արի մեր ծուխ»:[10]

Այս երիտասարդ կանայք այնքան լավատես էին, որ սիրեցին Էլզային մինչև նրան հանդիպելը: Նրանց խանդավառությունը լավատեսությամբ վարակեց Էլզային այդ տեղափոխությանհարցում և պատասխանեց նրա աղոթքին՝ թե արդյոք ամեն ինչ լավ էր լինելու:

Երջանկությունից և լավատեսությունից գալիս է էներգիա, որը ոչ միայն օրհնում է, այլև շենացնում մեր շուրջը գտնվողներին: Մի փոքր արարք, որով դուք լուսավորում եք մյուսների երջանկությունը, ցույց է տալիս, որ դուք արդեն իսկ կրում եք Նախագահ Քիմբալի վառած ջահը:

Ես 15 տարեկան էի, երբ հնչեց Նախագահ Քիմբալի ելույթը: Մենք, ովքեր 40անց ենք, այդ օրից ի վեր կրում ենք Նախագահ Քիմբալի այդ կոչը: Այժմ, ես նայում եմ ձեզ՝ 8, 15, 20 և 35-ամյա աղջիկներ և կանայք, և ես պատրաստվում եմ այդ ջահը փոխանցել ձեզ: Դուք այս Եկեղեցու ապագա ղեկավարներն եք, և

*80 հոգուց կազմված կամավորների շղթան փրկում է լողորդներին, որոնք քշվում էին ուժեղ հոսանքից:*

դուք եք առաջ տանելու այս լույսը ու դառնալու նրա մարգարեության իրականացումը: Մենք, ովքեր 40անց ենք, գրկում ենք ձեզ մեր ձեռքերով և զգում ձեր ուժն ուէներգիան: Մենք ունենք ձեր կարիքը:

Լսեք, թե ինչ է ասվում այս սուրբ գրության հատվածում. ՎԵՈՒ 49.26–28: Միգուցե այն գրվել է բոլորովին այլ հանգամանքներում, բայց այս երեկո Սուրբ Հոգու միջոցով ես հույս ունեմ, որ դուք կտանեք այդ խոսքերը ձեզ հետ՝ որպես ձեր անձնական կոչ այս սրբազան աշխատանքը կատարելու:

«Ահա, ես ասում եմ ձեզ. Առաջ գնացեք, ինչպես ես պատվիրել եմ ձեզ. ապաշխարեք ձեր բոլոր մեղքերից. խնդրեք և դուք կստանաք. թակեք և ձեզ կբացվի:

Ահա, ես կգնամ ձեր առջևից և ձեր թիկնապահը կլինեմ. և ես կլինեմ ձեր մեջ, և դուք չեք շփոթվի:

Ահա, ես Հիսուս Քրիստոսն եմ, և ես շուտով գալիս եմ»:[11]

Ես դիմում եմ յուրաքանչյուրիդ՝ եղեք այնպիսի դիրքում, որպեսզի զգաք ձեր հանդեպ Աստծո շռայլսերը: Դուք չեք կարող դուրս մնալ այս սիրո ազդեցությունից: Երբ զգում եք Նրա սերը, երբ սիրում եք Նրան, ապաշխարում եք և պահում Նրա պատվիրանները: Երբ պահում եք Նրա պատվիրանները, Նա կարողանում է օգտագործել ձեզ Իր գործում: Նրա գործը և փառքը կանանց ու տղամարդկանց վեհացումն ու հավերժական կյանքն է:

Մարգարեներն ապավինում են մեզ, իմ քույրեր: Դուք կլինե՞ք արդարակյաց: Դուք կարտահայտե՞ք ձեր հավատքը: Կարո՞ղ եք լինել տարբերվող և առանձնակի: Կարո՞ղ է ձեր երջանկությունը, անկախ փորձություններից, գրավել ուրիշներին, ովքեր բարի են ու ազնվազարմ և ովքեր ունեն ձեր ընկերության կարիքը: Կարո՞ղ եք վառել ձեր լույսը: Ես վկայում եմ, որ Տեր Հիսուս Քրիստոսը կքայլի մեր առջևում և կլինի մեր մեջ:

Ես ավարտում եմ մեր սիրված մարգարե Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերով. «Իմ սիրելի քույրեր, սա ձեր օրն է, սա ձեր ժամանակն է»:[12] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Նախագահ Բրիգամ Յանգ. «Եկեք [քույրեր] կազմակերպենք Կանանց Սփոփող Միություններ տարբեր ծխերում: Մենք շատ տաղանդավոր կանայք ունենք մեր մեջ, և մեզ անհրաժեշտ է նրանց օգնությունն այս հարցում: Ոմանց կարող է թվալ, թե սա աննշան մանրուք է, սակայն դա այդպես չէ. դուք կտեսնեք, որ քույրերը կլինեն շարժման աղբյուրը» (*Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* [2011], 41):

   Նախագահ Լորենզո Սնոու. «Դուք միշտ եղել եք Քահանայության կողքին՝ պատրաստ . . . անելու ձերբաժինը Աստծո արքայության շահերը առաջ տանելու գործում, և մասնակցելով այդ աշխատանքին, դուք անշուշտ մասնակից կդառնաք աշխատանքի հանդիսավոր ավարտին և այն վեհացմանն ու փառքին, որ Տերը կշնորհի Իր հավատարիմ զավակներին» (*Daughters in My Kingdom,* 7):

   Նախագահ Սպենսեր Վ Քիմբալ. «Այս կազմակերպության մեջ զորություն կա, որը դեռևս լիովին չի օգտագործվել ամրացնելու Սիոնի տները և կառուցելու Աստծո արքայությունը, և չի օգտագործվի լիարժեք, մինչև և՛ քույրերը, և՛ քահանայությունը չըմբռնեն Սփոփող Միության տեսլականը» (*Daughters in My Kingdom,* 142):

   Նախագահ Հովարդ Վ. Հանթեր. «Մեծ է Եկեղեցու կանանց համախմբվելու կարիքը, որպեսզի նրանք կանգնեն Եղբայրների հետ և նրանց կողքին՝ մեզ շրջապատող չարիքն արմատախիլ անելու և մեր Փրկիչի գործն առաջ տանելու համար: . . . Այնպես որ, մենք աղաչում ենք ձեզ՝ ծառայեք բարու ձեր հզոր ազդեցությամբ՝ ի զորացումն մեր ընտանիքների, եկեղեցու և մեր համայնքների» (*Daughters in My Kingdom,* 157):

   Նախագահ Գորդոն Բ Հինքլի. «Այս Եկեղեցու կանանց մեջ մեծ ուժ ու կարողություն կա: Կա առաջնորդություն և ուղղություն, որոշակի անկախության ոգի, և սակայն Տիրոջ արքայության մի մասը լինելու մեծ բավականությունը և ձեռք ձեռքի տվածքահանայություն կրողների հետ աշխատելը այն առաջ կտանի» (*Daughters in My Kingdom,* 143):

   Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մեջբերում է Սփոփող Միության գերագույն նախագահ Բել Սմիթ Սպաֆորդի խոսքերը. «Երբեք կանայք չեն ունցել ավելի մեծ ազդեցություն աշխարհում, քան այսօր: Երբեք հնարավորությունների դուռը այսքան լայն չի բացվել նրանց առաջ: Սա կանանց համար գրավիչ, հետաքրքիր, դժվարին և պահանջաշատ ժամանակ է: Սա վարձահատույցով լի ժամանակ է, եթե մենք պահենք մեր հավասարակշռությունը, սովորենք կյանքի ճշմարիտ արժեքները և իմաստուն ձևով որոշենք առաջնահերթությունները» [*A Woman's Reach* (1974), 21]: Իմ սիրելի՛ քույրեր, սա ձեր օրն է, սա ձեր ժամանակն է» (“The Mighty Strength of the Relief Society,” *Ensign,* Nov. 1997, 95):

   Նախագահ Ռասսել Մ. Նելսոն. «Ես աղերսում եմ ձեզ՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու քույրե՛ր, շարունակեք գործել: Ավելի քան երբևէ, ձեր օրինական և կարևոր տեղը զբաղեցրեք ձեր տանը, ձեր համայնքում և Աստծո արքայությունում: Ես խնդրում եմ ձեզ, իրականություն դարձրեք Նախագահ Քիմբալի մարգարեությունը: Եվ ես Հիսուս Քրիստոսի անունով խոստանում եմ ձեզ, որ այդպիսով Սուրբ Հոգին աննախադեպ ձևով կմեծացնի ձեր ազդեցությունը» (“A Plea to My Sisters,” *Liahona,* Nov. 2015, 97):
2. See the video of Sister Camilla Kimball reading President Spencer W. Kimball's address at conference.lds.org; see also Spencer W. Kimball, “The Role of Righteous Women,” *Ensign,* Nov. 1979, 102–4.
3. Spencer W. Kimball, “The Role of Righteous Women,” 103–4; emphasis added.
4. Ա Պետրոս 3.14–15
5. See McKinley Corbley, “80 Beachgoers Form Human Chain to Save Family Being Dragged Out to Sea by Riptide,” July 12, 2017, goodnewsnetwork.org.
6. Jessica Mae Simmons, in Corbley, “80 Beachgoers Form Human Chain.”
7. Simmons, in Corbley, “80 Beachgoers Form Human Chain.”
8. Տես Ալմա 41.10; 34.28, Վարդապետություն և Ուխտեր 38.27, Ղուկաս 16.19–25
9. *Teachings of Presidents of the Church: Gordon B. Hinckley* (2016), chapter 71.
10. Note from Virginia Pearce family.
11. Վարդապետություն և ուխտեր 49.26-28
12. Thomas S. Monson, “The Mighty Strength of the Relief Society,” 95.

**Նի Ֆ. Մերիոթ**
Երիտասարդ Կանանց Գերագույն
Նախագահության երկրորդ խորհրդական

# Մնալ Աստծո հետ և վերանորոգել ճեղքվածքը

*Քրիստոսը զորություն ունի բերելու մեզ սրտակից ընկերակցության Հոր և մեկս մյուսի հետ։*

Ենք անընդհատ պիտիխորհենք մեր գիտելիքը Երկնային Հոր մասին և հնազանդությունը դեպի Նա։ Մեր փոխհարաբերությունը Նրա հետ հավերժական է։ Մենք նրա սիրելի զավակներն ենք, և դա չի փոխվելու։ Ինչպե՞ս կարող ենք ողջ սրտով ընդունել Իրեն մոտենալու Նրա հրավերը, և այսպիսով վայելել այն օրհնությունները, որոնք Նավափագում է տալ մեզ այս կյանքումն գալիք աշխարհում։

Տերն ասել է հնադարյան Իսրայելին և Նա ասում է մեզ. «Յաւիտենական սիրով սիրել եմ քեզ. Դորա համար քաշեցի քեզ ողորմութիւնով»։[1] Խոսելով ինչպես Հայրը կկամենար, Նա նույնպես ասում է մեզ. «Դու կմնաս ինձ հետ, և ես քեզ հետ, հետևաբար, քայլիր ինձ հետ»։[2] Արդյո՞ք մենք բավականաչափ վստահում ենք Նրան՝ Նրա հետ ապրելու և քայլելու համար։

Մենք այստեղ ենք՝ այս երկրի վրա սովորելու և աճելուհամար, իսկամենակարևոր գիտելիքն ուաճը կգա Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ մեր կապից։ Նրանց հետ մեր հավատարիմ փոխհարաբերությունից է գալիս աստվածային գիտելիք, սեր, զորություն և ծառայելու կարողություն։

«Մենք պարտավոր ենք սովորել բոլորը, ինչ Աստված հայտնի է դարձրել Իր մասին»։[3] Մենք պետք է հասկանանք, որ Հայր Աստված հրահանգեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին ստեղծել երկիրը *մեր աճի համար*, որ Երկնային Հայրը տվեց Իր Որդունվճարելու արդարադատության պահանջները՝ *մեր փրկության համար,* և որ Հոր քահանայության զորությունը և Որդու ճշմարիտ Եկեղեցին անհրաժեշտ արարողություններով վերականգնվեց մեր օրհնությունների համար։ Կարողանո՞ւմ եք զգալ մեր ուրախության և աճի համար հորդացող սիրո խորությունը Նրանց պատրաստություններում։ Մենք պետք է իմանանք, որ Երկնային Հոր փրկության ծրագիրն այն է, որ մենք պետք է հնազանդվենք ավետարանի օրենքներին և արարողություններին, ձեռք բերենք հավերժական կյանք և այդպիսով դառնանք այնպիսին, ինչպես Աստված է։[4] Սա է ճշմարիտ հարատև երջանկությունը, որը Երկնային Հայրն առաջարկում է մեզ։ Չկա ուրիշ ճշմարիտ և հարատև երջանկություն։

Մեր մարտահրավերները կարող ենդուրս քաշել մեզ երջանկության այս ընթացքից։ Մենք կարող ենք կորցնել Աստծո հետ մեր վստահելի կապը, եթե փորձությունները քշեն մեզ դեպի կործանում, մեզ մեր ծնկների վրա իջեցնելու փոխարեն։

Ոտանավորի այս պարզերկտողը կոչ է անում մեզ ընտրություն կատարել առաջնահերթությունների միջև։

*Որոշ բաներ կարևոր են, որոշ բաներ ոչ,*
*Մի քանիսը հարատև են, իսկ մի քանիսը ոչ։*[5]

Քույրե՛ր, ի՞նչն է կարևոր ձեզ համար: Ի՞նչն է հարատև ձեզ համար: Հոր համար հարատև արժեքի հարց է, որ մենք սովորենք Նրա մասին, խոնարհեցնենք մեզ և աճենք Նրա հանդեպ հնազանդության մեջ երկրային փորձառությունների միջոցով: Նա ցանկանում է, որ մենք փոխենք մեր եսասիրությունը ծառայությամբ, մեր վախերը՝ հավատքով: Այս հարատև հարցերը կարող են ստուգել մեզ մինչև մեր սրտի խորքը:

*Այժմ,* մեր մահկանացու սահմանափակումներով հանդերձ, Հայրը խնդրում է մեզ սիրել, երբ սիրելը ամենադժվարն է, ծառայել, երբ ծառայելը անհարամարավետ է, ներել, երբ ներելը հոգին է լարում: Ինչպե՞ս: Ինչպե՞ս անենք դա: Մենք ջերմեռանդորեն ձգտում ենքԵրկնային Հոր օգնությունն ունենալ Նրա Որդու անունով և կատարում գործեր Նրա ձևով, մեր կամքը ինքնուրույն հպարտությամբպաշտպանելու փոխարեն:

Ես ընդունեցի իմ հպարտությունը, երբ Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը խոսեց մեր ներքին անոթը մաքրելու մասին:[6] Ես ինձ պատկերացրեցի որպես կուժ: Ինչպե՞ս պետք է իմ կուժից հանեի հպարտության նստվածքը: Եթե մենք մեզ ստիպենքխոնարհ լինելև մեզ հարկադրենքսիրել ուրիշներին, անկեղծ չի լինիև դա պարզապես չհաշխատում: Մեր մեղքերը և սխալները ստեղծում են ճեղքվածք կամ անդունդ մեր և ողջ սիրո աղբյուրի՝ մեր Երկնային Հոր միջև:

Միայն Փրկիչի Քավությունը կարող է մաքրել մեզ մեր մեղքերից և փակել այդ խզումը կամ ճեղքվածքը:

Մենք ցանկանում ենք օղակվել մեր Երկնային Հոր սիրո և առաջնորդության բազուկների մեջ, և այսպիսովառաջին տեղում դնում ենքՆրա կամքը և կոտրված սրտովաղերսում, որ Քրիստոսը մաքրող ջրի հոսքեր լցնի մեր կուժի մեջ: Սկզբում այն կարող է գալ կաթիլ առ կաթիլ, բայց երբ մենքխնդրենք և հնազանդվենք, այն կգա առատորեն: Այս կենդանի ջուրը կսկսի լցնել մեզ, և լցվելով պռնկե-պռունկ Նրա սիրով, մենք

կարող ենք վերցնել մեր հոգու կուժը և կիսվել դրա պարունակությամբ ուրիշների հետ, ովքեր ծարավ են բժշկության, հույսի և նյութական իրերի: Երբ մեր ներքին անոթը մաքրվում է, մեր երկրային հարաբերությունները սկսում են բժշկվել:

Պահանջվում է մեր անձնական օրակարգի զոհաբերումը, որ տեղ բացվիԱստծո հավերժական ծրագրերի համար: Փրկիչը, ով խոսում է Հոր փոխարեն, աղերսում է մեզ. «Մոտեցեք ինձ և ես կմոտենամ ձեզ»:[7] Մոտենալ Հորը կարող է նշանակել՝ սովորել Նրա ճշմարտության մասին սուրբ գրությունների միջոցով, հետևելով մարգարեական խորհրդին և ձգտելովլիովին կատարել Նրա կամքը:

Արդյոք մենք հասկանո՞ւմ ենք, որ Քրիստոսըզորություն ունիբերելմեզ սրտակից ընկերակցության Հոր և մեկս մյուսի հետ: Սուրբ Հոգու զորությամբ Նա կարող է մեզ տալ անհրաժեշտ ներըմբռնում փոխհարաբերությունների վերաբերյալ:

Երեխաների Միության ուսուցիչն ինձ պատմեց իր դասարանի 11 տարեկան տղաների հետ մի զորավոր փորձառության մասին: Նրանցից մեկը, ումես կկոչեմ Ջիմմի, չշփվող միայնակ երեխա էր: Մի կիրակի ուսուցիչը ոգեշնչվեց մի կողմ դնել իր դասը և պատմել, թե ինչո՞ւ էր սիրում Ջիմմիին: Նա խոսեց այդ պատանու երախտագիտության և նրա հավատքի մասին: Ապա ուսուցիչը խնդրեց դասարանի անդամներին պատմել Ջիմմիին որևէ բանի մասին, ինչը նրանք գնահատում էին նրա մեջ: Երբ դասարանի անդամները մեկ առ մեկ ասացին Ջիմմիին, թե ինչու էր նա առանձնահատուկ իրենց համար, տղան կախեց գլուխը և արցունքները սկսեցին վար գլորվել նրա դեմքով: Այդ ուսուցիչն ու դասարանը կամուրջ կառուցեցին դեպի Ջիմմիի միայնակ սիրտը: Ազնվորեն արտահատված պարզ սերը հույս է տալիս և արժեվորում մյուսներին: Ես կոչում եմ դա «վերանորոգել ճեղքվածքը կամ խզումը»:

Հավանաբար մեր կյանքը սիրառատ նախաերկրային կյանքում, ստեղծել է մեզ մոտ ճշմարիտ, հարատև սիրո ձգտում՝ այստեղ երկրի վրա: Մենք աստվածայնորեն նախատեսված ենք սեր տալու և սիրվելու համար, իսկ ամենախորը սերը գալիս է, երբ մենք մեկ ենք Աստծո հետ: Մորմոնի Գիրքը հրավիրում է մեզ «հաշտվել [Աստծո] հետ Քրիստոսի քավությանմիջոցով»:[8]

Եսայիան խոսել է նրանց մասին, ովքեր հավատարմորեն ապրում են ծոմի օրենքով և այսպիսով դառնում իրենց իսկ սերնդի համար ճեղքվածքը վերանորոգողներ: Նրանք են այն մարդիկ, ում Եսայիան խոստանում է. «կկանգնեցնեն դարերից ի վեր աւերակ հիմերը»:[9] Նույն ձևով Փրկիչը վերանորոգեցճեղքվածքը կամ հեռավորությունը մեր և Երկնային Հոր միջև: Նա, Իր մեծ քավիչ զոհաբերության միջոցով, բացում է ուղին մեզ համար՝ ճաշակելու Աստծո սիրառատ զորությունից

և այդ ժամանակ մենք հնարավորություն կունենանք վերանորոգել «աւերակ հիմերը» մեր անձնական կյանքում: Միմյանց միջև հուզական հեռավորությանբժշկումը կպահանջի ընդունել Աստծո սերը՝մեր բնական եսասիրության և վախի միտումների զոհաբերության հետ զուգակցված:

Մի հիշարժան երեկո ես և իմ բարեկամը անհամաձայնություն ունեցանք քաղաքական մի հարցի կապակցությամբ: Նա կտրուկ և մանրակրկիտ իմ մեկնաբանություններն առանձնացրեց, ապացուցելով իմ սխալ լինելը իմ ընտանիքի անդամների ներկայությամբ: Ես ինձ հիմար և անտեղյակ զգացի.հավանաբար այդպես էլկայի: Այդ գիշեր, երբ ես ծնկի իջա աղոթելու, շտապեցի բացատրել Երկնային Հորը, թե որքան դժվար էր այդ բարեկամի հետ: Ես խոսում էի ու խոսում: Հավանաբար իմ բողոքին մի պահ դադար տվեցի և Սուրբ Հոգին հնարավորություն ունեցավգրավել իմ ուշադրությունը, որովհետև, ի զարմանս ինձ, հետո ես ձայն լսեցի. «Դու երևի կամենում ես, որ ես սիրեմ նրան»: Սիրե՞լ նրան: Ես շարունակեցի աղոթել, ասելով այսպիսի մի բան. «Ինչպե՞ս կարող եմ սիրել նրան»: Չեմ կարծում, որ նույնիսկ հավանում եմ նրան: Միրտս կարծրացած է, զգացմունքներս վիրավորված: Ես չեմ կարող անել դա»:

Ապա անկասկած Հոգու օգնությամբ ես ունեցա մի նոր միտք, երբ ես ասացի. «Բայց Դու սիրում ես նրան, Երկնային Հայր: Տուր ինձ մի քիչ նրա հանդեպ Քո սիրուց, որպեսզի ես նույնպես կարողանամնրան սիրել: Իմ կոշտ զգացումները մեղմացան, սիրտս սկսեց փոխվել, և ես սկսեցի այդ մարդունայլ կերպ տեսնել: Ես սկսեցի զգալ նրա իսկական արժեքը, որը Երկնային Հայրն էր տեսնում: Եսայիան գրել է. «Եհովան կկապէ իր ժողովրդի կոտրածը եւ նորա հարուածի խոցը կբժշկէ»:[10]

Ժամանակի ընթացքում մեր միջև խզումը հաջողությամբ փակվեց: Բայց, եթե նույնիսկ նա չընդուներ իմ փոխված սիրտը, ես հասկացա, որ Երկնային Հայրը կօգնի մեզ սիրել նույնիսկ նրանց, ում կարծում ենք, հնարավոր չէ սիրել, եթե մենք Նրանից օգնություն աղերսենք: Փրկիչի Քավությունը մի խողովակ է Երկնային Հորից մշտական գթության հոսքի համար: Մենք պետք է ընտրենք մնալ այդ սիրո մեջ, որպեսզիգթություն ունենանք բոլորի հանդեպ:

Երբ մենքմեր սիրտը տալիս ենք Հորը և Որդուն, մենք փոխում ենք մեր աշխարհը, նույնիսկ, եթե մեզ շրջապատող հանգամանքները չեն փոխվում: Մենք ավելի ենք մոտենում Երկնային Հորը և զգում Քրիստոսի ճշմարիտ աշակերտ լինելու մեր ջանքերի Նրա ջերմ ընդունելությունը: Մեր խորաթափանցությունը, վստահությունը և հավատքն աճում է:

Մորմոնը խնդրում է մեզ աղոթել մերսրտի ողջ ավյունով այս սիրո համար և այն կտրվի մեզ դրա աղբյուրից, որը Երկնային Հայրն է:[11] Միայն այդ ժամանակ մենք կարող ենք դառնալ ճեղքվածք վերանորոգողներ երկրային հարաբերություններում:

Մեր Հոր անսահման սերը հասնում է մեզ, ետ բերելու մեզ Նրա փառքի և ուրախության մեջ: Նա տվեց Իր միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, վերանորոգելու մեր և Նրա միջև այդ ճեղքվածքը, որը լայն խզում է առաջացնում մեր ու Նրա միջև: Երկնային Հոր հետ վերամիավորվելը հարատև սիրո և հավերժական նպատակի էությունն է: Մենք պետք է կապ հաստատենք Նրա հետ այժմ՝ սովորելու, թե իրականում որքան կարևոր է սիրել այնպես, ինչպես Նա է սիրում և աճել՝ Նրա նման լինելու համար: Ես վկայում եմ, որ մեր հավատարիմ կապը Երկնային Հոր և Փրկիչի հետ հավերժորեն կարևոր է Նրանց և մեզ համար: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Երեմիա 31.3
2. Մովսես 6.34
3. Bruce R. McConkie, “The Mystery of Godliness” (Brigham Young University fireside, Jan. 6, 1985), speeches.byu.edu.
4. See Bruce R. McConkie, “The Mystery of Godliness,” 4.
5. Անհայտ հեղինակ
6. See Ezra Taft Benson, “Cleansing the Inner Vessel,” *Ensign,* May 1986, 4–7.
7. Վարդապետություն և Ուխտեր 88.63
8. Հակոբ 4.11
9. Եսայիա 58.12
10. Եսայիա 30.26
11. Տես Մորոնի 7.48

**Ջոյ Դ. Ջոնս**
Երեխաների Միության Գերագույն Նախագահ

# Անչափելի արժեք

*Մենք կարող ենք հաճախ վայելել Սուրբ Հոգու քաղցր շշուկները, որոնք հաստատում են մեր հոգևոր արժեքի ճշմարտությունը:*

Արևմտյան Աֆրիկայում Սիերրա Լեոնե երկիր այցելելիս ես մասնակցեցի մի հավաքի, որը վարում էր ցցի Երեխաների Միության ղեկավարը: Մարիաման ղեկավարում էր այնպիսի սիրով, շնորհով և վստահությամբ, որ հեշտ էր ենթադրել, որ նա Եկեղեցու երկար տարիներիանդամ էր: Սակայն, Մարիաման միանգամայն վերջերս էր դարձի եկել:

Նրա փոքր քույրը միացել էր Եկեղեցուն և հրավիրել Մարիամային իր հետմասնակցել Եկեղեցու դասին: Մարիաման խորապես տպավորվել էր ուղերձից: Դասը մաքրաբարոյության օրենքի մասին էր: Նա խնդրեց, որ միսիոներներն ուսուցանեն իրեն ավելի շատ բան, և նա շուտովվկայություն ստացավ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին: Նա մկրտվեց 2014թ.-ին, իսկ նրա դուստրը մկրտվեց անցյալ ամիս: Պատկերացրեք երկու հիմնական ուսմունքներ, որոնք դարձի բերեցին Մարիամային, դա մաքրաբարոյության օրենքն էր և Մարգարե Ջոզեֆ Սմիթը. երկու կետեր, որոնք աշխարհը հաճախ համարում է անտեղի, հնացած կամ անհարմար: Բայց Մարիաման վկայեց, որ նրան թիթեռի նման գրավեց լույսը: Նա ասաց. «Երբ ես գտաավետարանը, ես գտա ինձ»: Նա բացահայտեց իր արժեքը աստվածային սկզբունքների միջոցով: Նրա արժեքը, որպես Աստծո դուստր, հայտնի դարձվեց նրան Սուրբ Հոգու միջոցով:

Այժմ եկեք հանդիպենք Սինդի քույրերին Հնդկաստանից: Ռենուն, ով աջ կողմից ծայրինն է, առաջինն էր հինգ քույրերից, որ միացավ Եկեղեցուն, կիսվեց հետևյալ մտքերով.

«Նախքան կսկսեի ուսումնասիրել Եկեղեցին, ես իրականում չէի զգում, որշատ առանձնահատուկ էի: Ես ուղղակի շատ մարդկանցից մեկն էի և իմ հասարակությունն ու մշակույթը ինձ չէին ուսուցանել, որ ես ինչ-որ արժեք ունեի, որպես անձնավորություն: Երբ ես սովորեցի ավետարանը և հասկացա, որ ես մեր Երկնային Հոր դուստրն էի, դա փոխեց ինձ: Հանկարծ ես այնպես առանձնահատուկ զգացի. փաստորեն Աստվածարժեքովև նպատակով էր ստեղծել ինձ և արարել իմ հոգին ու կյանքը:

Նախքան ավետարանն իմ կյանքում ունենալը, ես միշտ փորձում էի ապացուցել մյուսներին, որ ես առանձնահատուկէի: Բայց երբիմացա ճշմարտությունը, որ ես Աստծո դուստրն էի, ես ստիպված չէի ապացուցել որևէ մեկին որևէ բան: Ես գիտեի, որ ես առանձնահատուկ էի: Երբևէչմտածեք, որ դուք ոչինչեք»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հիանալի է ասել, երբմեջբերել է այս խոսքերը. «Մարդկային հոգու արժեքը Աստծո նման դառնալու նրա կարողությունն է»:[1]

Ես օրհնված էի զգում, որ վերջերս հանդիպեցիմեկ այլ երիտասարդ կնոջ, ով հասկանում էր այս նույն ճշմարտությունը: Նրա անունը Թայանա է: Ես հանդիպեցի նրան Երեխաների Միության հիվանդանոցում Սոլթ Լեյք Սիթիում: Թայանան ավագ դպրոցում կրտսեր դասարանի աշակերտ էր, երբ նրա մոտախտորոշեցին քաղցկեղ: Նա 18 ամիս քաջաբար պայքարեց, մինչևհեռացավ կյանքից մի քանիշաբաթ

*Մարիաման (նկարում իր դստեր հետ) բացահայտեց իր արժեքը աստվածային սկզբունքները բացահայտելուց հետո:*

*Գիտենալով, որ ինքն Աստծո դուստրն է, Տատյանան խաղաղություն և քաջություն գտավ իր փորձությանը դիմակայելու համար:*

առաջ: Թայանան լցված էր լույսով և սիրով: Նա հայտնի էր իր վարակիչ ժպիտով և «երկու մատը վեր» նշանով: Երբ ուրիշները հարցնում էին. «Ինչո՞ւ հենց դու, Թայանա», նրա պատասխանն էր. «Իսկ ինչո՞ւ ոչ ես»: Թայանան ձգտում էր դառնալ իր Փրկիչի նման, ում նա այնքան ջերմորեն սիրում էր: Մեր այցելությունների ընթացքում ես իմացա, որ Թայանան հասկանում էր իր աստվածային արժեքը: Գիտենալով, որ ինքնԱստծո դուստրն էր, նա խաղաղություն և քաջություն էր ձեռք բերում, դիմակայելով իր անհաղթահարելի փորձությանը այն լավատեսությամբ, որն իրեն էր հատուկ:

Մարիաման, Ռենուն և Թայանան ուսուցանում են մեզ, որ Հոգին մեզանից յուրաքանչյուրին անհատապես կհաստատիմեր աստվածային արժեքը: Աստծո դուստրըլինելու իրողությունը կազդի ձեր կյանքի ամեն բնագավառի վրա և կառաջնորդի ձեզ ծառայության մեջ, որը դուք ցույց եք տալիս յուրաքանչյուր օր: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է սա փառահեղ խոսքերով.

«Նա ձեր Հայրն է: Նա սիրում է ձեզ: Նա և ձեր մայրը երկնքումչափազանցգնահատումեն ձեզ: . . . Դուք առանձնահատուկ եք: Ձեր տեսակի մեջ միակը՝ ստեղծված հավերժական բանականությամբ, որըձեզ հաստատում է տալիս հավերժական կյանքի համար:

«Թող ձեր մտքում հարց չծագի- ձեր արժեքի վերաբերյալ՝ որպես անհատ: Ավետարանի ծրագրի ողջ նպատակն է ձեզանից յուրաքանչյուրին հնարավորություն տալ հասնելու ձեր լիակատար ներուժին, որը հավերժական առաջընթացն է և աստվածության հնարավորությունը:[2]

Թույլ տվեք ինձ ընդգծել *արժեք* և *արժանավորություն* երկու կարևոր խոսքերըտարբերակելու անհրաժեշտությունը: Դրանք նույնը չեն: Հոգևոր *արժեքը* նշանակում է արժեվորել մեզ այն ձևով, ինչպես Երկնային Հայրն է արժեվորում մեզ, և ոչ թեաշխարհը: Մեր արժեքը որոշվել է, նախքանմեր այս աշխարհ գալը: «Աստծո սերն անսահման է և այն կտևի հավերժ»:[3]

Մյուս կողմից, *արժանավորությունը* ձեռք է բերվում հնազանդության միջոցով: Եթեմեղանչում ենք, մենք ավելի քիչ արժանավոր ենքդառնում, բայցարժեզուրկ չենք: Մենք շարունակում ենք ապաշխարել և ձգտել նմանվել Հիսուսին մեր անձեռնմխելի արժեքով: Ինչպես Նախագահ Բրիգամ Յանգն է ուսուցանել. «Ամենափոքր, ամենացածր հոգին այժմ երկրի վրա . . . արժե աշխարհներ»:[4] Ինչ էլ որ լինի, մենք միշտ արժեք ունենք Երկնային Հոր աչքում:

Չնայած այս հիասքանչ ճշմարտությանը, մեզանից որքան շատերն են մաքառում, ժամանակ առ ժամանակ մեր վերաբերյալ բացասական մտքերի կամ զգացումների հետ: Եսեմմաքառում: Դա հեշտ թակարդ է: Սատանան է հայրը բոլոր ստերի, հատկապես, երբ դա վերաբերում է մեր սեփական աստվածային էության և նպատակի վերաբերյալեղեռաթյուրումներին: Մեզ աննշան համարելը մեզ լավ ծառայություն չի մատուցում: Ընդհակառակը, այն մեզ ետ է պահում: Ինչպես մեզ հաճախ են սովորեցրել. «Ոչ ոք չի կարող ստիպել ձեզ ոչ լիարժեք զգալ առանց ձեր համաձայնության»:[5] Մենք կարող ենք դադարել համեմատել մեր վատթարագույնը որևէ մեկի լավագույնի հետ: «Համեմատությունը ուրախության գողն է»:[6]

Ընդհակառակը, Տերը հավաստիացնում է մեզ, որ երբ մենք ունենում ենք առաքինի մտքեր, Նա կօրհնի մեզ վստահությամբ, նույնիսկիմանալու վստահությամբ, թե ով ենք մենք իրականում: Երբեք չի եղել ավելի վճռական ժամանակ ականջ դնելու Նրա խոսքերին. «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար», ասել է Նա: Այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ. և . . . Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը»:[7]

Տերը հայտնել է այս լրացուցիչ ճշմարտությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթին. «Նա, ով ստանում է Աստծուց, թող համարի դա Աստծուց. և թող նա ցնծա, որ արժանի է համարվել Աստծո կողմից ստանալուն»:[8] Երբ մենք զգում ենք Հոգին, ինչպես այս հատվածն է բացատրում, մենք ընդունում ենք, որ այն, ինչ մենք զգում ենք, գալիս է մեր Երկնային Հորից: Մենք ընդունում ենք ու փառաբանում Նրան օրհնության համար: Այդ ժամանակ մենք ուրախանում ենք, որարժանի ենք համարվել ստանալու:

Պատկերացրեք, որ դուք կարդում եք սուրբ գրությունները առավոտյան և Հոգին շշնջում է ձեզ, որ այն ինչ դուք կարդում եք, ճշմարիտ է: Կարողանո՞ւմ եք ճանաչել Հոգուն և երջանիկ լինել, որ զգացիք Նրա սերը և արժանի եղաք ստանալուն:

Մայրե՛ր, գուցե դուք ծնկի իջնեք ձեր չորս տարեկան զավակի կողքին, երբ նա ասի իր գիշերային աղոթքը: Մի զգացում կպատի ձեզ, երբ լսեք: Կզգաք ջերմություն և

*Ավետարանի շնորհիվ Ռենու Սինգը (աջից վերջում) հասկացավ իր արժեքը որպես Աստծո դուստր և դարձավ առաջինը հինգ քույրերից, ով միացավ Եկեղեցուն:*

խաղաղություն: Մի կարճ զգացողություն, բայց ընդունեք, որ այդ պահին դուք արժանի համարվեցիք ստանալուն: Մենք հազվադեպ կարող ենք երբևէստանալվիթխարի հոգևոր դրսևորումներ մեր կյանքում, բայց մենք կարող ենք հաճախ վայելել Սուրբ Հոգու քաղցր շշուկները, որոնք հաստատում են մեր հոգևոր արժեքի ճշմարտությունը:

Տերը բացատրել է կապը մեր հոգևոր արժեքի և Նրա մեծ քավիչ զոհաբերության միջև, երբ Նա ասել է.

«Հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում:

Քանզի, ահա, Տերը՝ քո Քավիչը, մարմնի մեջ մահ տարավ. ուստի նա տարավ բոլոր մարդկանց ցավը, որ բոլոր մարդիկ կարողանան ապաշխարել ու գալ իր մոտ»:[9]

Քույրեր, մեզ համար Նրա արածի շնորհիվ մենք «կապված ենք Նրա հետ սիրո կապերով»:[10] Նա ասել է. «Իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ. իսկ հետո, երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ»:[11]

Թագավոր Բենիամինը նույնպես բացատրել էայդ պարտավորեցնող կապը մեր Փրկիչի հետ. «Եվ ահա, նա կտանի փորձություններ և մարմնի ցավ, քաղց, ծարավ և հոգնածություն, նույնիսկ ավելին, քան մարդ կարող է տանել և չմահանալ. քանզի ահա, արյուն կգա յուրաքանչյուր ծակոտիից, այնքան մեծ կլինի նրա տվայտանքն իր ժողովրդի ամբարշտության և պղծությունների համար»:[12] Այդ տառապանքը և այդ տառապանքի արդյունքները լցնում են մեր սրտերը սիրով և երախտագիտությամբ: Երեց Փոլ Ի. Քոելիքերն ուսուցանել է. «Երբ մենք հեռացնում ենք շեղող բաները, որոնք մեզ ձգում են դեպի աշխարհ և գործածում ենք մեր ազատությունը Նրան փնտրելով, մենք բացում ենք մեր սրտերը երկնային ուժերի համար, որոնք ձգում են մեզ դեպի Նա»:[13] Եթե սերը, որը մենք զգում ենք Փրկիչի և Նրա արածի հանդեպ, ավելի մեծ է, քան էներգիան, որ մենք ծախսում ենք մեր թուլությունների, մեր հանդեպ

անվստահության կամ վատ սովորույթների վրա, ապա Նա կօգնի մեզ հաղթահարել այն բաները, որոնք տառապանք են առաջացնում մեր կյանքում: Նա մեզ փրկում է ինքներս մեզանից:

Թույլ տվեք վերաշեշտադրել. եթե աշխարհն ավելի ուժեղ է ձգում, քան հավատքը և վստահությունը, որը մենք ունենք Փրկիչի հանդեպ, ապա աշխարհի ձգողականությունըկգերիշխի ամեն անգամ: Եթե մենք ընտրում ենք մեր բացասական մտքերի վրա կենտրոնանալ և կասկածի ենթարկել մեր արժեքը, Փրկիչից կառչած մնալու փոխարեն, ավելի դժվար կդառնաՍուրբ Հոգու տպավորությունները զգալ:

Քույրեր, եկեք չշփոթենք, թե ով ենք մենք: Չնայած հաճախ ավելի հեշտ է հոգևորապես պասսիվ լինել, քան հոգևոր ջանք գործադրել հիշելու և ընդունելու մեր աստվածային ինքնությունը, մենք չենք կարող թույլ տալ այդ անուշադրությունը այս վերջինօրերում: Թող որ մենք, որպես քույրեր «հավատարիմ լինենք Քրիստոսին, . . . թող Քրիստոսը [մեզ] վեր բարձրացնի, և թող նրա տառապանքներն ու մահը, . . . ևնրա ողորմությունն ու երկայնամտությունը, և նրա փառքի և հավերժական կյանքի հույսը մնա [մեր] մտքում հավիտյան:[14] Երբ Փրկիչը բարձրացնի մեզ ավելի բարձր մակարդակի, մենք ավելի հստակկարող ենք տեսնել՝ ոչ միայն այն, թե ով ենք մենք, այլ որ մենք ավելի մոտ ենք Նրան, քան մենք երբևէ պատկերացրել ենք: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

**ՆԵՌՈՒՄՆԵՐ**


1. Թոմաս Ս. Մոնսոն, «Հավատարիմ քահանայության մեր սրբազան պարտքին», *Լիահոնա,* մայիս 2006, 55:
2. Spencer W. Kimball, “Privileges and Responsibilities of Sisters,” *Ensign,* Nov. 1978, 105.
3. D. Todd Christofferson, “Abide in My Love,” *Liahona,* Nov. 2016, 48.
4. Brigham Young, “Remarks,” *Deseret News,* Mar. 6, 1861, 2.
5. Վերագրվում է Թեոդոր Ռուզվելտին:
6. Վերագրվում է Թեոդոր Ռուզվելտին:
7. Վարդապետություն և Ուխտեր 121.45, 46
8. Վարդապետություն և Ուխտեր 50.34
9. Վարդապետություն և Ուխտեր 18.10–11
10. “Our Savior’s Love,” *Hymns,* no. 113
11. 3 Նեփի 27.14
12. Մոսիա 3.7
13. Paul E. Koelliker, “He Truly Loves Us,” *Liahona,* May 2012, 18.
14. Մորոնի 9.25

**Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ**
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

# Երեք քույրեր

*Մենք պատասխանատու ենք մեր աշակերտ լինելու կոչման համար և այն քիչ կամ ոչ մի կապ չունի այն բանի հետ, թե ուրիշներն ինչպես են վերաբերվում մեզ։*

Սիրելի՛ քույրեր, սիրելի՛ ընկերներ, գերագույն համաժողովմեկնարկումը քույրերի ընդհանուր նիստով նշանակալից և հրաշալի է։ Միայն պատկերացրեք. տարբեր տարիքային խմբերի, տարբեր պատմություններով և տարբեր լեզուներով խոսող քույրերը համախմբվել են Տեր Հիսուս Քրիստոսի հավատքով և սիրով։

Երբ վերջերս հանդիպեցինք մեր սիրելի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետ, նա արտահայտեց իր մեծ սերը Տիրոջ հանդեպ։ Եվ ես գիտեմ որ Նախագահ Մոնսոնը շատ երախտապարտ է ձեր սիրո, ձեր աղոթքների և Տիրոջը ձեր նվիրվածության համար։

Շատ տարիներ առաջ մի հեռավոր վայրում միասին ապրում էին երեք քույրեր։

Առաջին քույրը **տխուրն** էր։ Նրա կարծիքով իր մեջ՝ ոտնաթաթից մինչև մազերի ծայրը, ինչ-որ բան այնքան էլ ճիշտ չէր։ Երբ նա խոսում էր, նրա բառերը հաճախ տարօրինակ էին հնչում, և մարդիկ ծիծաղում էին։ Երբ ինչ-որ մեկը քննադատում էր նրան կամ «մոռանում» էր հրավիրել նրան, նա կարմրում և հեռանում էր, գտնում էր առանձին մի վայր, տխուր հոգոց հանում ու մտածում, թե ինչու էր կյանքն այդքան դժգույն և տխուր։

Երկրորդ քույրը **զայրացկոտն** էր։ Նա կարծում էր, որ ինքն ամենախելացին է, բայց միշտ գտնվում էր ինչ-որ մեկը, ովավելի բարձր էր ստանում դպրոցի քննություններին։ Նա ինքն իրեն համարում էր զվարճալի, գեղեցիկ, նորաձև և հմայիչ։ Բայց միշտ ինչ-որ մեկն ավելի զվարճալի, գեղեցիկ, նորաձև կամ ավելի հմայիչ էր։

Նա երբեք ինչ-որ բանում առաջինը չէր և չէր կարողանում համակերպվել դրա հետ։ Կյանքն այդպիսին չպիտիլիներ։

Երբեմն նա հարձակվում էր ուրիշների վրա և կարծես ինչ-որ բանի կամ մեկի վրա վրդովվելու համար պատճառ էր փնտրում։

Անշուշտ, դրա պատճառով նրան չէին սիրում և նա այնքան էլ ճանաչված չէր։ Երբեմն նասեղմում էր ատամներն ուբռունցքները կմտածում. «Կյանքը շատ անարդար է»։

Կար նաև երրորդ քույրը։ Ի տարբերություն իր տխուր և զայրացկոտ քույրերի, նա **ուրախն** էր։ Եվ դա նրանից չէր, որ ավելի խելացի կամ ավելի գեղեցիկ և ունակ էր, քան իր քույրերը։ Ո՛չ, երբեմն, մարդիկ խուսափում կամ անտեսում էին նաև նրան։ Երբեմն, նրանք ծաղրում էին նրանկրած հագուստի կամ ասածխոսքերի պատճառով։ Երբեմն, նրանք վատ էինարտահայտվում նրա հասցեին։ Բայց նա թույլ չէր տալիս, որ այդ ամենը շատ մտահոգեր իրեն։

Այդ քույրը սիրում էր երգել։ Նա լավ ձայն չուներ և մարդիկ ծիծաղում էին այդ պատճառով, բայց դա չէր կանգնեցնում նրան։ Նա ասում էր. «Ես թույլ չեմ տա, որ մարդիկ կամ նրանց կարծիքները ինձ հետ պահեներգելուց»։

Այն փաստը, որ նա շարունակում էր երգել, տխրեցնում էր առաջին քրոջը և զայրացնում երկրորդին։

Անցան շատ տարիներ և, ի վերջո, քույրերի կյանքի տարիները լրացան այս երկրի վրա։

Առաջին քույրը, ով մեկ անգամ ևս համոզվեց, որ հիասթափությունները շատ են այս կյանքում, ի վերջո մահացավ *տխուր:*

Երկրորդ քույրը, ով ամեն օր մի նոր բանի համար վրդովվում էր, մահացավ *զայրացած:*

Եվ երրորդ քույրը, ով իր կյանքն ապրեց ողջ ուժով և վստահ ժպիտը դեմքին իր երգը երգելով, մեռավ *ուրախ:*

Իհարկե, կյանքն այդքան պարզ չէ, և մարդիկ այդքան անփոփոխ չեն, որքան այս պատմության քույրերը: Բայց, նույնիսկ, այսպիսի ծայրահեղ օրինակները կարող են մեզ ինչ-որ բան հուշել մեր եսի մասին: Եթե դուք շատերի նման եք, հնարավոր է, դուք ճանաչեցիք ձեզ այս քույրերից մեկի, երկուսի կամ, գուցե, երեքի մեջ: Եկեք ավելի մոտիկից նայենք նրանցից յուրաքանչյուրին:

**Զոհը**

Առաջին քույրն իրեն որպես զոհ էր տեսնում, ինչպես մեկը, ովշուտ էր ազդվում:[1] Թվում էր, թե շարունակ նրա հետ ինչ-որ վատ բան էր պատահում, որը նրան թշվառ էր դարձնում: Կյանքի հանդեպ այդպիսի մոտեցում ունենալով, նա ուրիշներին թույլ էր տալիս վերահսկել իր զգացմունքներն ու վարքագիծը: Երբ մենք այդպես ենք վարվում, մենք քամուց քշվածների նման ենթարկվում ենք ցանկացած կարծիքի, իսկ մեր օրերումսոցիալական լրատվամիջոցների մշտական առկայության դեպքումայդ քամիները փչում են փոթորիկի ուժգնությամբ:

Միրելի՛ քույրեր, դուք ինչո՞ւպետք է ձեր երջանկությունը հանձնեք ինչ-որ մեկին կամ մի քանիսին, ովքեր շատ քիչ են հոգ տանում ձեր կամ ձեր երջանկության մասին:

Եթե զգում եք, որ սկսում եք անհանգստանալ, թե ուրիշներն ինչ են մտածում ձեր մասին, ապա թույլ տվեք առաջարկել ձեզ հետևյալ հակաթույնը՝ հիշեք, թե ով եք դուք: Հիշեք, որ դուք Աստծո արքայության թագավորական տնից եք, Երկնային ծնողների դուստրերը, ովքեր թագավորում են ողջ տիեզերքում:

Ձեզ է պատկանում Աստծո հոգևոր ԴՆԹ-ն: Դուք ունեք եզակի պարգևներ, որոնք սկիզբ են առել ձեր հոգևոր ստեղծման ժամանակ և որոնք զարգացրել եք ձեր նախաերկրային երկար կյանքի ընթացքում: Դուք զավակն եք մեր ողորմած և հավիտենական Երկնային Հոր, Զորաց Տիրոջ, Մեկի, ով ստեղծել է տիեզերքը, ով պտտվող աստղերը սփռել է տիեզերքի հսկայական տիրույթումև մոլորակները տեղադրել իրենց համապատասխան ուղեծրերում:

Դուք Նրա ձեռքերում եք:

Շատ լավ ձեռքերում:

Սիրող ձեռքերում:

Հոգատար ձեռքերում:

Եվ որևէ մեկի խոսքը ոչինչ չի կարող փոխել: Նրանց խոսքերն անիմաստ են այն խոսքերի համեմատ, ինչ Աստված է ասել ձեր մասին:

Դուք Նրա թանկագին զավակն եք:

Նա սիրում է ձեզ:

Նույնիսկ, երբ դուք սայթաքում եք, նույնիսկ, երբ երես եք թեքում Նրանից, Աստված սիրում է ձեզ: Մի վախեցեք, եթե մոլորված, լքված կամ մոռացված եք զգում: Բարի Հովիվը կգտնի ձեզ: Նա կդնի ձեզ Իր ուսերին: Եվ Նա ձեզ տուն կտանի:[2]

Իմ սիրելի՛ քույրեր, խնդրում եմ թույլ տվեք, որ այս աստվածային ճշմարտությունները ամուր նստեն ձեր սրտերում: Եվ կհասկանաք, որ կան բազմաթիվ պատճառներ տխուր չլինելու համար, քանի որ դուք ստեղծվել եք հավերժական ճակատագիր ունենալու նպատակով:

Աշխարհի սիրված Փրկիչը տվեց Իր կյանքը, որպեսզի դուք կարողանաք իրականություն դարձնել այդ ճակատագիրը: Ձեր վրա եք վերցրել Նրա անունը. դուք Նրա աշակերտներն եք: Եվ Նրա շնորհիվ դուք կարող եք հագնել հավերժական փառքի պատմուճանը:

**Ատելությամբ լցվածը**

Երկրորդ քույրը զայրացած էր աշխարհի վրա: Իր տխուր քրոջ նման նա զգում էր, որ իր կյանքի խնդիրներն առաջանում են ինչ-որ մեկի պատճառով: Նա մեղադրում էր ընտանիքին, ընկերներին, իր տնօրենին և աշխատակիցներին, ոստիկաններին, հարևաններին, Եկեղեցու ղեկավարներին, ներկայիս նորաձևության միտումներին և նույնիսկ արևային ճառագայթների ուժգնությանը և պարզապես վատ բախտին: Եվ նահարձակվում էր նրանց վրա:

Նա չէր կարծում, որ ինքը բարկացկոտ մարդ էր: Ընդհակառակը, նա մտածում էր, որ միայն ինքն էր իրեն պաշտպանում: Նրա կարծիքով բոլորըգործում էին եսասիրությունից, փոքրոգությունից և ատելությունից դրդված: Մյուս կողմից նագործում էր բարի մտադրություններից՝ արդարությունից, նվիրվածությունից և սիրուց դրդված:

Դժբախտաբար, զայրացկոտ քրոջ մտածելակերպը շատ տարածված է: Դա նշվել է վերջերս արված

ուսումնասիրության մեջ, որի ժամանակ հետազոտվել է երկու մրցակից խմբերի միջև տեղ գտած հակամարտությունը: Ուսումնասիրության շրջանակներում հետազոտողները Մերձավոր Արևելքում հարցազրույց են անցկացրել պաղեստինցիների ու իսրայելացիների հետ, իսկ Միացյալ Նահանգներում՝ հանրապետականների և դեմոկրատների հետ: Նրանք պարզեցին, որ «յուրաքանչյուր կողմ գտնում էր, որ իր խմբի շարժառիթն ավելի շատ սերն է, քան ատելությունը, սակայն, երբ հարցնում էին, թե ինչու [էր] իրենց մրցակից խումբն ընդգրկված հակամարտության մեջ, [նրանք] նշում էին, որ [մյուս] խմբի շարժառիթն ատելությունն է»:[3]

Այլ խոսքերով ասած, յուրաքանչյուր խումբ կարծում էր, որ իրենք «լավ տղաներն են», արդար, բարի և ճշմարիտ: Ի տարբերություն մյուս խմբի, նրանք կարծում էին, որ մրցակիցները «վատ տղաներն են», անտեղյակ, անազնիվ, նույնիսկ՝ չար:

Այն տարի, երբ ես ծնվեցի, աշխարհն ընկղմված էր սարսափելի պատերազմի մեջ, որը աշխարհին պատճառեց տառապալից վիշտ և դառը ցավ: Այդ պատերազմը սկսվեց իմ ազգակից մի խումբ մարդկանց պատճառով, ովքեր որոշակի խմբերին դասում էին չարի շարքում և խրախուսում էին ատելություն նրանց հանդեպ:

Նրանք լռեցնում էին նրանց, ում չէին սիրում: Նրանք խայտառակում ու նվաստացնում էին նրանց: Նրանք համարում էին նրանց ցածր դասի՝ նույնիսկ մարդուց ավելի ցածր: Երբ դուք ցածրացնում եք որևէ մարդկային խմբի, հավանականությունն ավելի է մեծանում, որ դուք կարդարացնեք նրանց դեմ ուղղված բռնության խոսքերը կամ արարքները:

Ես սարսուռ եմզգում, երբ մտածում եմ, թե ինչ պատահեց 20-րդ դարի Գերմանիայի հետ:

Երբ ինչ-որ մեկը հակառակվում կամ ընդդիմանում է մեզ, հեշտ է մտածել, որ ինչ-որ բան այն չէ այդ մարդու հետ: Իսկ այդ կարծիքից հետո մի փոքր քայլ է մնում՝ ավելացնելու համար վատագույն շարժառիթները նրանց խոսքերին կամ արարքներին:

Անշուշտ, մենք պետք է պաշտպանենք ճշմարտությունը և կան պահեր, երբ պետք է բարձրաձայնենք այդ մասին: Սակայն, երբ մենք դա անում ենք զայրույթով և ատելությամբ լցված մեր սրտերով, երբ հարձակվում ենք ուրիշների վրա, որպեսզի վիրավորենք, ամաչեցնենք կամ լռեցնենք նրանց, ապա, հնարավոր է, որ մենք դա անում ենք ոչ արդար կերպով:

Ի՞նչ է Փրկիչն ուսուցանել մեզ:

«Ես ասում եմ ձեզ, սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարի արէք ձեզ ատողներին և աղոթք արեք ձեզ չարչարողների ու ձեզ հալածողների համար.

«Որ որդիք լինիք ձեր Հօրն, որ երկնքումն է»:[4]

Դա է Փրկիչի ճանապարհը: Դա առաջին քայլն է կոտրելու այն պատնեշը, որն աշխարհում ծնում է այդքան շատ զայրույթ, ատելություն, պառակտություն և բռնություն:

«Այո»,- հնարավոր է դուք պատասխանեք,- Ես կուզենայի սիրել իմ թշնամիներին, եթե միայն նրանք ցանկանան նույն կերպ վարվել»:

Բայց դա այդքան էլ կարևոր չէ, այդպե՞ս չէ: Մենք պատասխանատու ենք մեր աշակերտ լինելու կոչման համար և այն քիչ կամ ոչ մի կապ չունի այն բանի հետ, թե ուրիշներն ինչպես են վերաբերվում մեզ: Մենք ակնհայտորեն հույս ենք տածում, որ նրանք ըմբռնումով և մեծահոգությամբ կպատասխանեն, բայց մեր սերը *նրանց* հանդեպ կախված չէ *մեր* հանդեպ նրանց զգացմունքներից:

Հավանաբար, մեր թշնամիներին սիրելու մեր ջանքերը կփափկեցնեն նրանց սրտերը և լավ ազդեցություն կթողնեն նրանց վրա: Իսկ միգուցե հակառակը: Բայց դա չի նվազեցնում Հիսուս Քրիստոսին հետևելու մերհանձնառությունը:

Այսպիսով, որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք կսիրենք մեր թշնամիներին:

Մենք կհաղթահարենք զայրույթը կամ ատելությունը:

Մենք սիրով կլցնենք մեր սրտերը Աստծո զավակների հանդեպ:

Մենք կձգտենք օրհնել և ծառայել նրանց՝ նույնիսկ նրանց, ովքեր «չարչարում են [մեզ] և հալածում են [մեզ]»:[5]

### Հավատարիմ աշակերտը

Երրորդ քույրը ներկայացնում է Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտին: Նա վարվեց այնպես, որը շատ դժվար է անել՝ նա վստահեց Աստծուն, նույնիսկ, ծաղրանքի և դժվարությունների ենթարկվելու պարագայում: Ինչ-որ կերպ նա պահպանեց իր հավատքն ու հույսը, չնայած նրա շուրջը ծաղրանք ու նենգություն էր տիրում: Նա ապրեց ուրախ ոչ թե այն պատճառով, որ նրա պայմաններն ուրախալի էին, այլ որովհետև *նա* էր ուրախ:

Ոչ ոք այս կյանքն առանց ընդդիմությունների չի անցնում:

Ներքև ձգող այդքան շատ ուժերի պարագայում ինչպե՞ս ենք կենտրոնացնում մեր նպատակները հավատարիմներին խոստացված փառահեղ երջանկության վրա:

Կարծում եմ, պատասխանը կարելի է գտնել այն երազի մեկնաբանության մեջ, որը տեսավ մարգարեն հազարավոր տարիներ առաջ: Մարգարեի անունը Լեքի էր, և նրա երազը գրված է թանկարժեք և հրաշալի Մորմոնի Գրքում:

Իր տեսիլքում Լեքին տեսավ մի ընդարձակ դաշտ և այդ դաշտում մի հրաշալի ծառ, որն անասելի գեղեցիկ էր: Նա տեսավ նաև մեծ թվով մարդիկ, ովքեր քայլում էին դեպի ծառը: Նրանք ցանկանում էին ճաշակել դրա բաղձալի պտղից: Նրանք զգացին և վստահեցին, որ դա նրանց կշնորհի մեծ երջանկություն և տևական խաղաղություն:

Այնտեղ կար մի նեղ արահետ, որը տանում էր դեպի ծառը և դրա երկայնքով ձգվում էր երկաթյա մի ձող, որն օգնում էր նրանց մնալ ուղու վրա: Բայց այնտեղ կար նաև խավարի մեգ, որը մթագնում էր դեպի արահետը և ծառը տանող նրանց տեսողությունը: Եվ, միգուցե, առավել վտանգավորը մոտակա մեծ ու ընդարձակ շենքից եկող բարձր ծիծաղի ու ծաղրի ձայներն էին: Զարմանալիորեն, այդ ծաղրը նույնիսկ համոզեց այն մարդկանցից մի քանիսին, ովքեր հասել էին ծառին և ճաշակել դրա հրաշալի պտղից, և նրանք սկսեցին ամաչել ու մոլորվել:[6]

Միգուցե, նրանք սկսեցին կասկածել, որ ծառն իրոք այդքան էլ գեղեցիկ չէ, որքան մի ժամանակ կարծում էին: Միգուցե, նրանք սկսեցին կասկածի տակ դնել իրենց ապրումների իրողությունը:

Միգուցե, նրանք մտածեցին, որ եթե հեռանան ծառից, կյանքն ավելի հեշտ կլինի: Միգուցե, նրանց այլևս չծաղրեն ու չծիծաղեն նրանց վրա:

Եվ իրականում, այն մարդիկ, ովքեր ծաղրում էին նրանց, շատ երջանիկ ու լավ ժամանակ անցկացնող մարդկանց տպավորություն էին թողնում: Այսպիսով, միգուցե,

եթե նրանք լքեն ծառը, այդ հավաքվածները կողջունեն նրանց այդ մեծ ու ընդարձակ շենքում և կծափահարեն նրանց այդ որոշման, բանականության ու իմաստության համար:

**Մնացեք ուղու վրա**

Միրելի քույրեր, սիրելի ընկերներ, եթե ձեզ համար դժվար է ամուր բռնել երկաթյա ձողից և հաստատակամորեն քայլել դեպի փրկությունը, եթե վստահ մարդկանց ծիծաղն ու ծաղրը ստիպում են ձեզ երերալ, եթե դուք մտահոգված եք անպատասխան հարցերով կամ վարդապետություններով, որոնք դուք դեռևս չեք հասկանում, եթե հիասթափությունների արդյունքում դուք տրտմած եք, ես հորդորում եմ ձեզ հիշել Լեքիի երազը:

Մնացե՛ք ուղու վրա:

Երբեք բաց մի թողեք երկաթյա ձողը, որը խորհրդանշում է Աստծո խոսքը:

Իսկ եթե որևէ մեկը փորձում է այնպես անել, որ դուք ամաչեք Աստծո սերը ճաշակելուց, անտեսեք նրան:

Երբեք մի մոռացեք, որ դուք Աստծո զավակն եք. հարուստ օրհնություններ են սպասվում ձեզ, եթե դուք սովորեք ենթարկվել Նրա կամքին, դուք կրկին կապրեք Նրա հետ:[7]

Աշխարհի խոստումները, գովքը և ճանաչումը անվստահելի, կեղծ ու անբավարար են: Աստծո խոստումները անխախտ, ճշմարիտ ու երջանկաբեր են՝ այժմ և հավիտյան:

Հրավիրում եմ ձեզ կրոնի ու հավատքի մասին մտածել բարձր տեսանկյունից: Մեծ ու ընդարձակ շենքի ներսում առաջարկվող որևէ բան չի կարելի համեմատել Հիսուս Քրիստոսի կենդանի ավետարանի պտուղի հետ:

Իսկապես, «Ինչ որ աչք չտեսավ և ականջ չլսեց և մարդի սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված իրան սիրողների համար»:[8]

Ես իմ անձնական փորձից հասկացել եմ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանի աշակերտության ուղին ուրախություն տանող ուղին է: Այն ապահովություն և խաղաղություն տանող ուղին է: Այն ճշմարտության ուղին է:

Ես վկայում եմ, որ Սուրբ Հոգու զորությամբ և պարգևով դուք ինքներդ կարող եք համոզվել դրանում:

Միևնույն ժամանակ, եթե ուղին դժվարին դառնա ձեզ համար, ես հուսով եմ, որ դուք ապաստան և



ուժ կգտնեք Եկեղեցու մեր հրաշալի կազմակերպություններում՝ Երեխաների, Երիտասարդ Կանանց և Սփոփող Միություններում: Դրանք կանգառներ են ճանապարհին, որտեղ դուք կարող եք նոր ուժ հաղորդել ձեր վստահությանը և հավատքին՝ ձեր առջև սպասվող ճամփորդությունից առաջ: Դրանք ապահով տներ են, որտեղ դուք կարող եք զգալ ինչպես տանը և քաջալերանք ստանալ ձեր քույրերից ու ընկերակից անդամներից:

Երեխաների Միությունում սովորած դասերը պատրաստում են ձեզ հետագա ճշմարտությունների համար, որոնք դուք կսովորեք Երիտասարդ կանանց մոտ: Երիտասարդ Կանանց դասարանում ձեր կատարած հավատարիմ քայլերը տանում են Սփոփող Միության ընկերակցության և քույրերի միջավայր: Ճանապարհի ամեն քայլափոխում դուք ստանում եք հավելյալ հնարավորություններ, որպեսզի ցուցադրեք ձեր սերն ուրիշներին՝ հավատքի, կարեկցանքի, գթության, առաքինության և ծառայության շնորհիվ:

Աշակերտության այդ ուղին ձեր աստվածային էությանը կշնորհի անասելի երջանկություն և ինքնակայացում:

Այն հեշտ չի լինի: Այն կպահանջի ձեր լավագույն ունակությունները՝ ձեր ողջ բանականությունը, ստեղծագործական ուժը, հավատքը, նվիրվածությունը, զորությունը, վճռականությունը և սերը: Բայց մի օր դուք հետ կնայեք ձեր ջանքերին և կզարմանաք, թե որքան երախտապարտ եք նրա համար, որ մնացիք ամուր, որ հավատացիք և որ չհեռացաք ձեր ուղուց:

**Առաջ մղվեք:**

Կյանքում կլինեն բազմաթիվ հանգամանքներ, որոնք մեր վերահսկողությունից վեր կլինեն: Բայց, ի վերջո, կյանքի ճանապարհին դուք հնարավորություն կունենաք ընտրել ձեր նպատակակետը և ձեր փորձառությունները: Ոչ այնքան ձեր ունակությունները, որքան ձեր ընտրություններն են փոխում ձեր կյանքը:[9]

Դուք չպետք է թույլ տաք, որ հանգամանքները ձեզ տխրեցնեն:

Դուք չպիտիթույլ տաք, որ դրանք ձեզ զայրացնեն:

Դուք կարող եք ուրախանալ, որ դուք Աստծո դուստրն եք: Դուք կարող եք ուրախություն և երջանկություն գտնել Աստծո շնորհի և Հիսուս Քրիստոսի սիրո մեջ:

Դուք կարող եք ուրախ լինել:

Ես կոչ եմ անում ձեր սրտերը լցնել երախտագիտությամբ՝ Աստծո լիառատ և անսահման բարության նկատմամբ: Իմ սիրելի՛ քույրեր, դուք կարող եք դա անել: Իմ ողջ հոգով աղոթում եմ, որ դուք դեպի կյանքի ծառն առաջ մղվելու որոշում կայացնեք: Ես աղոթում եմ, որ դուք բարձրացնեք ձեր ձայնը և ձեր կյանքը դարձնեք գովքի փառահեղ սիմֆոնիա, ուրախանալով նրանով, թե ինչ կարող են պարգևել աշխարհին Աստծո սերը, Նրա Եկեղեցու հրաշքները և Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Որոշ մարդկանց համար աշակերտ լինելու երգի հնչյունները կարող են կեղծ թվալ, իսկ ոմանց՝ բարձրաձայն: Ժամանակների սկզբից ի վեր դա եղել է այդպես:

Սակայն, մեր Երկնային Հոր և նրանց համար, ովքեր սիրում և պատվում են Նրան, դա ամենաթանկագին և գեղեցիկ երգն է՝ Աստծո և մերձավորների հանդեպ քավիչ սիրո և ծառայության վեհ ու սրբագործող երգը:[10]

Որպես Տիրոջ Առաքյալ, ես թողնում եմ իմ օրհնությունը, որ դուք ուժ ու խիզախություն գտնեք և որպես Աստծո դուստրեր, ուրախությամբ զարգանաք և բոլոր օրերը ուրախությամբ քայլեք աշակերտության փառավոր ուղիով: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Տես 2 Նեփի 2.14, 26:
2. Տես Ղուկաս 15.4–6:
3. Բոստոնի համալսարան, «Study Finds Intractable Conflicts Stem from Misunderstanding of Motivation», *ScienceDaily,* նոյ. 4, 2014, sciencedaily.com:
4. Մատթեոս 5.44–45
5. Մատթեոս 5.44
6. Տես 1 Նեփի 8:
7. Տես «Աստծո զավակն եմ», *Երեխաների Երգարանից,* 2–3:
8. Ա Կորնթացիս 2.9
9. Տես՝ «The Most Inspirational Book Quotes of All Time», pegasuspublishers.com/blog:
10. Տես Ալմա 5.26:

**Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ**
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

# Տան կարոտը

*Դեպի լույսը դարձրեք Ձեր հոգին: Սկսեք դեպի տուն Ձեր հրաշալի ճամփորդությունը: Երբ սկսեք այն, Ձեր կյանքը կդառնա ավելի լավ, ավելի երջանիկ և ավելի իմաստալի:*

Վերջերս, երբ մենք զրուցում էինք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետ, մեծ հանդիսավորությամբ ու երջանիկ հայացքով նա ասաց, թե որքան է սիրում Տիրոջը, և գիտի, որ Տերն էլիրեն է սիրում: Իմ թանկագի՛նեղբայրներ և քույրեր, ես գիտեմ, որ Նախագահ Մոնսոնը շատ երախտապարտ է ձեր սիրո, աղոթքների և Տիրոջը ու Նրա փառահեղ ավետարանի հանդեպ ձեր նվիրվածության համար:

### Զարմանալի շուն Բոբին

Մոտ հարյուր տարի առաջ Օրիգոնից մի ընտանիք իր հանգիստն էր անցկացնում Ինդիանայում՝ 2000 մղոն (3200 կմ) տնից հեռու, երբ կորցրեցին իրենց սիրած շանը՝ Բոբիին: Ընտանիքը խելահեղորեն որոնում էրշանը ամեն տեղ, բայց ապարդյուն: Բոբիին հնարավոր չէր գտնել:

Կոտրված սրտով նրանք բռնեցին վերադարձի ճամփան, որի յուրաքանչյուրմղոնը նրանց հեռացնում էր իրենց սիրելիկենդանուց:

Վեց ամիս անց, երբ Բոբին հայտնվեց Օրիգոնում նրանց տան շեմին, ընտանիքը ցնցված էր: «Գզգզված, նիհարած, ոտքերը մինչև ոսկորները մաշված՝ [նա] կարծես ողջ ճանապարհը ոտքով էր անցել . . . մենակ»:[1] Բոբիի պատմությունը գրավեց մարդկանց ուշադրությունը Միացյալ Նահանգներով մեկ, և նա հայտնի դարձավ որպես Զարմանալի շուն Բոբին:

Բոբին միակ կենդանին չէ, որն ապշեցրել է գիտնականներին կողմնորոշվելու զարմանալի հատկությամբ և տունը գտնելուբնազդով: Թռչավորական թիթեռների որոշ տեսակներ ամեն տարի 3000 մղոն (4800 կմ) չվում են, որպեսզի ավելի լավ կլիմայական պայմաններ ունենան իրենց գոյատևման համար: Մաշկակեղև կրիաները ճամփորդում են Խաղաղ օվկիանոսով՝ Ինդոնեզիայից հասնելով Կալիֆորնիայի ափերը: Սապատավոր կետերը լողում են Հյուսիսային և Հարավային բևեռի սառը ջրերից դեպի հասարակած և ետ: Ամենից անհավատալին բևեռային ծովածիծառն է, որն ամեն տարի Արկտիկայից չվում է Անտարկտիդա և վերադառնում՝ մոտ 60000 մղոն (97000 կմ):

Երբ գիտնականներն ուսումնասիրում են այդ հետաքրքրաշարժ վարքը, նրանք նման հարցադրումներ են անում. «Ինչպե՞ս են նրանք իմանում, թե ուր գնալ» և «Ինչպե՞ս է յուրաքանչյուր հաջորդ սերունդ սովորում այդ վարքը»:

Երբ կարդում եմ կենդանիների այդ ուժեղ բնազդի մասին, ես չեմ կարող չմտածել. «Հնարավո՞ր է, որ մարդիկ նմանատիպ մղում զգան, այսպես ասած՝ ներքին մի ուղեցույց ունենան, ինչը նրանց ձգում է դեպի իրենց *երկնային տունը*»:

Հավատում եմ, որ յուրաքանչյուր տղամարդ, կին ու երեխա իր կյանքի ինչ-որ մի պահի զգացել է երկնքի կանչը: Մեր մեջ խորը ցանկություն կա ինչ-որ կերպ անցնել վարագույրի մյուս կողմն ու գրկախառնվել Երկնային Ծնողների հետ, որոնց ժամանակին իմացել ենք ու սիրել:

Ոմանք, հնարավոր է, ճնշեն այդ մղումը և այդ կանչի հանդեպ անզգայացնեն իրենց հոգիները: Բայց նրանք, ովքեր չեն մարում այդ լույսը իրենց մեջ, կարող են

մի անհավատալի ճամփորդություն սկսել՝ զարմանահրաշ մի չվերթ կատարել դեպի երկնային հեռաստանները:

**Աստված կանչում է ձեզ**

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վսեմ ուղերձն այն է, որ Աստված մեր Հայրն է, որ հոգում է մեր մասին, եւՆրա մոտ վերադառնալու ճանապարհ կա:

Աստված կանչում է ձեզ:

Նա գիտի ձեր բոլոր մտքերը, ձեր անհանգստությունները և ձեր մեծագույն հույսերը: Աստված գիտի, թե քանի անգամ եք փնտրել Նրան: Թե քանի անգամ եք անսահման ուրախություն ապրել: Թե քանի անգամ եք մենության մեջ արտասուք թափել: Թե քանի անգամ եք անօգնական, շփոթված եղել կամ բարկություն զգացել:

Ինչևէ, անկախ ձեր պատմությունից՝դուք շփոթված եք, ձախողված, կոտրված եք զգում, դառնացած եք, մատնված, թե ծեծված, իմացեք, որ դուք միայնակ չեք: Աստված դեռ կանչում է ձեզ:

Փրկիչը մեկնում է ձեզ Իր ձեռքը: Եվ ինչպես այն ձկնորսներին էր ասում, որոնք տարիներ առաջ կանգնած էին Գալիլեայի ծովի ափին, Նա անսահման սիրովասում է ձեզ. «Ե՛կ, հետևիր ինձ»:[2]

Եթե կամենաք լսել, Նա կխոսի ձեզ հետ հենց այսօր:

Երբ քայլում եք աշակերտության ուղիով, երբ քայլում եք դեպի Երկնային Հայրը, մի բան կա ձեր մեջ, ինչը կհաստատի, որ դուք լսել եք Փրկիչի կանչը և ձեր սիրտն ուղղել եք դեպի լույսը: Այն ձեզ կասի, որ ճիշտ ուղու վրա եք, եւդուք վերադառնում եք տուն:

Սկզբից ի վեր Աստծո մարգարեները հորդորել են իրենց ժամանակներիմարդկանց. «քո Եհովայ Աստուծոյ ձայնին հնազանդես . . . պատուիրանքները եւ կանոնները պահես, եւ բոլոր սրտովդ եւ բոլոր հոգիովդ քո Եհովայ Աստուծուն դառնաս»:[3]

Սուրբ գրություններումնշված են հազարավոր պատճառներ, թե ինչու պետք է դա անենք:

Այսօր թույլ տվեք նշել երկու պատճառ, թե մենք ինչուպետք է դառնանք դեպի Տերը:

Նախ՝ ձեր կյանքը ավելի լավը կդառնա:

Երկրորդը՝ Աստված ձեր միջոցով ուրիշների կյանքը ավելի լավը կդարձնի:

**Ձեր կյանքը ավելի լավը կդառնա:**

Ես վկայում եմ, որ երբ սկսենք կամ շարունակեք Աստծո մոտ տանող անհավատալի ճամփորդությունը, մեր կյանքը ավելի լավը կդառնա:

Դա չի նշանակում, որ մեր կյանքումվիշտ չի լինի: Բոլորս գիտենք Քրիստոսի հավատարիմ հետևորդների մասին, ովքեր ողբերգություն կամ անարդարություն են տեսել. Հիսուս Քրիստոսն Ինքըտառապել է ավելի շատ, քան որևէ մեկը: Ինչպես Աստված թույլ է տալիս, որ «արևը ծագի և չարերի և բարիների վրա», նա թույլ է տալիս, որ ձախորդությունը փորձի և՛ արդարներին, և՛ անարդարներին:[4] Իրականում, երբեմն մեր կյանքը կարծես ավելի դժվար է, *որովհետև* մենք ձգտում ենք ապրել մեր հավատքով:

Ոչ, Փրկիչին հետևելը չի հեռացնի մեր փորձությունները: Սակայն, այն կհեռացնի խոչընդոտները, որոնք խանգարում են, որ դուք ստանաք այն օգնությունը, որ Երկնային Հայրը ցանկանում է տալ ձեզ: Աստված ձեզ հետ կլինի: Նա կուղղորդի ձեր քայլերը: Նա կքայլի ձեզ հետ և մեծ կարիքի դեպքում իր ձեռքերի վրա կտանի ձեզ:

Դուք կճաշակեք Հոգու վսեմ պտուղները. «սերը, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, մեղմություն, բարություն, [ու] հավատք»:[5]

Հոգևոր այս պտուղները կապված չեն նյութական բարգավաճման, հաջողակ կամ բախտավոր լինելու հետ: Նրանք գալիս են Փրկիչին հետևելու արդյունքում և կարող են մեր հավատարիմ ուղեկիցը լինել անգամ սաստիկ փոթորիկներով անցնելիս:

Մահկանացու կյանքի կրակն ու աղմուկը կարող է սպառնալ ու վախեցնել, բայց նրանք, ովքեր իրենց սրտովհակվածեն դեպի Աստված, կշրջապատվենՆրա խաղաղությամբ: Նրանց ուրախությունը չի պակասի: Նրանք լքված կամ մոռացված չեն լինի:

«Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, – ուսուցանում են սուրբ գրությունները, – և քո հասկացողությանը մի վստահիր: Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, և նա կուղղէ քո ճանապարհները»:[6]

Նրանք, ովքեր ուշադրությունեն դարձնում հոգու կանչին և փնտրում են Աստծուն, ովքեր աղոթում են, հավատում ու քայլում Փրկիչի պատրաստած ուղիով, անգամ եթե ճանապարհին երբեմն սայթաքում են, սփոփիչ վստահություն են զգում, որ «բոլոր բաները միաժամանակ կգործեն [իրենց] բարիքի համար»:[7]

Քանի որ Աստված է «յոգնածին ոյժ տուողը. Եւ նա կարողութիւն չ'ունեցողին զօրութիւն է շատացնում»:[8]

«Որովհետեւ եօթն անգամ վայր կ'ընկնէ արդարը եւ կ'կանգնէ»:[9]

Եվ Տերը բարությամբ հարցնում է.

Դուք ցանկանո՞ւմ եք մշտապես ուրախություն զգալ:

Դուք փափագո՞ւմ եք ձեր սրտում զգալ խաղաղաղություն, որ ամեն մտքից վեր է:[10]

Ուրեմն դեպի լույսը դարձրեք ձեր հոգին:

Սկսեք դեպի տուն Ձեր հրաշալի ճամփորդությունը:

Երբ սկսեք այն, Ձեր կյանքը կդառնա ավելի լավ, ավելի երջանիկ և ավելի իմաստալի:

**Աստված կգործի ձեր միջոցով**

Դեպի Երկնային Հայրը ձեր ճամփորդության ընթացքում շուտով դուք կգիտակցեք, որ այդ ճամփորդությունը միայն ձեր կյանքի վրա կենտրոնանալը չէ: Ո՛չ, այդ ուղին անխուսափելիորեն ձեզ մղում է օրհնություն դառնալ Աստծո մյուս զավակների՝ ձեր եղբայրների և քույրերի համար: Եվ այդ ճամփորդության հետաքրքիր կողմերից մեկն այն է, որ ծառայելով Աստծուն և հոգալով ու օգնելով ձեր մերձավորներին, դուք մեծ առաջընթաց կնկատեք ձեր կյանքում այնպիսի ուղիներով, որ երբեք չէիք պատկերացնի:

Գուցե դուք չեք տեսնում, որ կարող եք պիտանի լինել, գուցե դուք չեք համարում, որ օրհնություն եք ինչ-որ մեկի կյանքում: Հաճախ, երբ քննում ենք մեզ, տեսնում ենք միայն մեր սահմանափակումներն ու թերությունները: Հնարավոր է մտածենք՝ որպեսզի Աստված գործի մեր միջոցով, մենք պետք է «ավելին» լինենք՝ ավելի խելացի, ավելի հարուստ, ավելի հմայիչ, ավելի տաղանդավոր, ավելի հոգևոր: Օրհնությունները կգան ոչ այնքան ձեր կարողություններից, որքան ձեր ընտրություններից: Եվ տիեզերքի Աստվածը կգործի ձեր մեջ ու ձեր միջոցով՝ մեծացնելով ձեր խոնարհ ջանքերը Իր նպատակների համար:

Նրա աշխատանքը միշտ առաջադիմել է հետևյալ կարևոր սկզբունքով. «Փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է»:[11]

Պողոս Առաքյալը, գրելով Կորնթոսի Սրբերին, նկատել է, որ նրանցից ոչ շատերն են աշխարհիկ իմաստով իմաստուն համարվելու: Բայց նշանակություն չունի, որովհետև «աշխարհիքիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ ամաչեցնէ զօրաւորներին»:[12]

Աստծո աշխատանքների պատմությունը լի է իրենց անհամապատասխան զգացող մարդկանցով: Սակայն նրանք խոնարհությամբ ծառայել են, ապավինելով Աստծո շնորհին ու Նրա խոստումին. «նրանց ձեռքը պիտի լինի իմ ձեռքը, և ես կլինեմ նրանց վահանը . . . և նրանք տղամարդու պես պիտի մարտնչեն ինձ համար. և . . . [ես] կպահպանեմ նրանց»:[13]

Այս ամռանը մեր ընտանիքը հրաշալի հնարավորություն ունեցավ այցելելու Միացյալ Նահանգներիարևելքում Եկեղեցու պատմական վայրերից մի քանիսը: Մի հատուկ ձևով մենք վերապրեցինք այդ ժամանակների պատմությունը: Մարդիկ, որոնց մասին այդքան կարդացել էի՝ Մարտին Հարրիսը, Օլիվեր Քաուդերին և Թոմաս Բ. Մարշը, ինձ համար ավելի իրական դարձան, երբ քայլում էինք այն տեղերով, որտեղ նրանք են քայլել և խորհում էինք Աստծո թագավորությունը կառուցելու համար կատարած նրանց զոհաբերությունների մասին:

Նրանք շատ հրաշալիհատկանիշներ ունեին, որոնք թույլ էին տվել նշանակալից ներդրումներ կատարել Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վերականգնման մեջ: Բայց նրանք նաև մարդիկ էին՝թույլ և սխալական, ճիշտ ինչպես ես և դուք: Ոմանք չէին համաձայնվում Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ և հեռանում էին Եկեղեցուց: Հետագայում նույն մարդկանցից շատերի սրտերը փոխվում էին և նրանք դառնում էին խոնարհ, կրկին ընկերակցելովՍրբերին:

Մենք միտում ունենք դատել այդ եղբայրներին ու նրանց նման այլ անդամների: Հնարավոր է, մենք ասենք. «Ես երբեք չէի լքի Մարգարե Ջոզեֆին»:

Չնայածդա հնարավոր է, իրականում մենք չգիտենք, թե ինչպիսին էր կյանքը այն ժամանակ այդպայմաններում: Ոչ, նրանք կատարյալ չէին, բայց որքան քաջալերող է այն միտքը, որ ամեն դեպքում Աստված



գործում էր նրանց միջոցով: Աստվածգիտեր նրանց ուժեղ և թույլ կողմերը ևնրանց բացառիկ հնարավորություն տվեց, որ ներդրում ունենան Վերականգնման մեծ օրհներգի մի քառատողում կամ մեղեդու մեջ:

Ինչ քաջալերող է այն միտքը, որ թեև *մենք* անկատար ենք, սակայն եթե մեր սիրտը դառնում է դեպի Աստված, Նա շռայլորեն ու բարությամբ կգործի մեր միջոցով Իր նպատակներն իրականացնելու համար:

Նրանք, ովքեր սիրում և ծառայում են Աստծուն ու մերձավորներին, խոնարհաբար և ակտիվորեն մասնակցում են Նրա գործին, զարմանահրաշ բաներ կտեսնեն իրենցու իրենց հարազատ մարդկանց կյանքում:

Փակ թվացող դռները կբացվեն:

Հրեշտակները կգնան նրանց առջևից ու կնախապատրաստեն ճանապարհը:

Անկախ նրանից, թե ինչ դիրք ունեք համայնքում կամ Եկեղեցում, Աստված կգործի ձեր միջոցով, եթե ցանկանաք: Նա կմեծացնի ձեր արդար ցանկությունները և դուք ձեր ցանած գթառատ գործերից լիառատ բերք ու բարիք կհնձեք:

**Մենք չենք կարողություն հասնել ինքնակառավարվող համակարգով**

Մենք՝ յուրաքանչյուրս, «օտարական և պանդուխտ ենք»[14] այս երկրում: Շատ առումներով մենք հեռու ենք տնից: Բայց դա չի նշանակում, որ պետք է կորած կամ միայնակ զգանք:

Մեր սիրելի Երկնային Հայրը մեզ տվել է Քրիստոսի Լույսը: Եվ յուրաքանչյուրիս հոգու խորքում մի երկնային թրթիռ կա, որը մեզ հորդորում է երկնային տուն վերադառնալու ուխտագնացության ճանապարհին մեր աչքերն ու սիրտը դարձնել դեպի Նա:

Ջանքեր են պահանջվում: Դուք չեքկարող տուն հասնել առանց Նրա մասին սովորելու ջանքերի, առանց Նրա հրահանգները հասկանալու ու դրանք կիրառելու ջանքերի և առանց առաջ գնալու քայլերի:

Ո՛չ, կյանքը ինքնավար մեքենա չէ: Ոչ էլինքնակառավարվող ինքնաթիռ է:

Հնարավոր չէ կյանքի ջրերով լողալ և հույս տածել, որ ջրի հոսանքը մի օր ձեզ կհասցնի ձեր ակնկալած վայրը: Աշակերտ լինելը պահանջում է մեր պատրաստակամությունը, որ անհրաժեշտության դեպքում կլողանք հոսանքին հակառակ:

Ուրիշ ոչ ոք պատասխանատու չէ ձեր անձնական ճամփորդության համար: Փրկիչը կօգնի ձեզ ու կնախապատրաստիձեր առջև ընկած ճանապարհը, բայց Նրան հետևելու և Նրա պատվիրանները պահելու պարտավորությունը պետք է գա ձեզանից: Այն միայն ձեր խաչն է, միայն ձեր արտոնությունը:

Այդ փառահեղ արկածները ձերն են:

Խնդրում եմ լսեք Փրկիչի կանչը:

Հետևեք Նրան:

Տերը հաստատել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցին, որպեսզի օգնի ձեզ կատարել Աստծուն ու մերձավորներին ծառայելու ձեր պարտավորությունը: Եկեղեցու նպատակն է՝քաջալերել, ուսուցանել, բարձրացնել ու ոգեշնչել: Այս հրաշալի Եկեղեցին ձեզ հնարավորություններ է տրամադրում գթություն ցուցաբերել, ձեռք մեկնել մարդկանց և վերականգնել ու պահել սրբազան ուխտերը: Այն նախագծվել է, որպեսզի օրհնի ձեր կյանքը և բարելավի ձեր տունը, համայնքն ու ազգը:

Եկեք միացեք մեզ ու ապավինեք Տիրոջը: Ձեր տաղանդները տրամադրեք Նրա հրաշալի աշխատանքին: Ձեռք մեկնեք, քաջալերեք, բժշկեք ու աջակցեք բոլորին, ովքեր զգում են ու հետևում են մեր երկնային տան այդ կարոտի զգացումներին: Եկեք միանանք երկնային հեռաստաններ տանող այս փառահեռ ուխտագնացությանը:

Ավետարանը հույսի, երջանկության և ուրախության գերազանց ուղերձ է: Այն մեզ տուն վերադարձնող ճանապարհն է:

Եթե ընդունենք ավետարանը հավատքով ու գործով, ամեն օր և ամեն ժամ մենք ավելի շատ կմոտենանք մեր Աստծուն: Մեր կյանքն ավելի լավը կլինի, և Տերը ուշագրավ եղանակներով կգործի մեր միջոցով, որպեսզի օրհնի մեր շրջապատի մարդկանց և իրականացնի Իր հավերժական նպատակները: Այդ մասին ես վկայում եմ և թողնում եմ ձեզ իմ օրհնությունը՝ Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Տես Susan Stelljes, “Bobbie the Wonder Dog,” *The Oregon Encyclopedia,* oregonencyclopedia.org
2. Տես Մատթեոս 4.19, Ղուկաս 18.22
3. Երկրորդ Օրինաց 30.10
4. Մատթեոս 5.45
5. Գաղատացիս 5.22
6. Առակաց 3.5–6
7. Վարդապետություն և Ուխտեր 90.24
8. Եսայիա 40.29
9. Առակաց 24.16
10. Տես Փիլիպպեցիս 4.7
11. Վարդապետություն և Ուխտեր 64.33
12. Ա Կորնթացիս 1.27
13. Վարդապետություն և Ուխտեր 35.14
14. Եբրայեցիս 11.13; Ա Պետրոս 2.11

**Բոնի Լ. Օսկարսոն**
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

# Կարիքները մեր առջև են

*Ամենակարևոր կարիքները, որոնց մենք հանդիպում ենք, մեր ընտանիքներում են, մեր բարեկամների շրջապատում, մեր ծխերում և մեր համայնքներում։*

Վերջին օրերին մենք վկա եղանք մի շարք բնական աղետների Մեքսիկայում, Միացյալ Նահանգներում, Ասիայում, Կարիբյան կղզիներում և Աֆրիկայում։ Այն բացահայտեց լավագույն մարդկային գծերը, քանի որ հազարավոր մարդիկ օգնության հասան նրանց, ովքեր վտանգի կամ կարիքի մեջ էին, ովքեր կորուստներ էին ունեցել։ Ես հուզված էի, տեսնելով, որ երիտասարդ կանայք Տեխասում և Ֆլորիդայում «Մորմոնների օգնող ձեռքերը» շապիկները հագին, շատերի հետ միասին օգնում էին աղբից մաքրել տները վերջին փոթորիկից հետո։ Հազարավոր մարդիկ ևս ուրախ կլինեին գնալ կարիքի կենտրոններ օգնելու, եթե դրանք հեռու չլինեին։ Փոխարենը, դուք առաջարկել եք շռայլ նվիրատվություններ ավելի փոքր կարիքների համար։ Ձեր առատաձեռնությունն ու կարեկցանքը ոգեշնչող են և Քրիստոսանման։

Այսօր ես ցանկանում եմ նշել ծառայության մի ոլորտ, որը ես զգում եմ, կարևոր է բոլորի համար, անկախ այն բանից, թե մենք որտեղ ենք գտնվում։ Մեզանից նրանք, ովքեր դիտել են իրադարձությունների մասին նորությունները և անօգնական են զգացել իրենց, չիմանալով ինչ անել, պատասխանը կարող են տեսնել ուղիղ մեր առջևում։

Փրկիչն ուսուցանել է. «Որովհետև ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կկորցնէ նորան. և ով որ իր անձն կորցնէ ինձ համար՝ նա կապրեցնէ նորան»։[1] Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է այս սուրբ գրության մասին. «Կարծում եմ, Փրկիչն ասում է մեզ, որ եթե մենք չկորցնենք ինքներս մեզ ուրիշներին ծառայելու մեջ, մեր անձնական կյանքն այնքան էլ նպատակասլաց չի լինի։ Ովքեր միայն իրենց համար են ապրում, ի վերջո, չորանում են, այլ կերպ ասած, կորցնում են իրենց կյանքը, մինչդեռ նրանք, ովքեր կորցնում են իրենց մյուսներին ծառայելու մեջ, աճում ու ծաղկում են, արդյունքում պահպանելով իրենց կյանքը»։[2]

Մենք ապրում ենք այնպիսի մշակույթում, որտեղ մարդիկ ավելի ու ավելի շատ կենտրոնանում են իրենց ձեռքերում գտնվող փոքր էկրանների վրա, քան թե իրենց շրջապատում գտնվող մարդկանց վրա։ Մենք գերադասում ենք սոցիալական կայքերի միջոցով շփվել և ուղերձներ ուղարկել, քան թե նայել ինչ-որ մեկի աչքերի մեջ և ժպտալ, կամ շատ հազվադեպ՝ դեմ առ դեմ զրուցել։ Մենք հաճախ ավելի շատ մտահոգված ենք նրանով, թե քանի մարդ է «հետևում» կամ «սիրում» մեզ, քան ձեռքը ընկերոջ ուսին դնելով և սեր, մտահոգություն և իսկական հետաքրքրություն ցուցաբերելով։ Չնայած ժամանակակից տեխնոլոգիաները կարող են հրաշալի եղանակ լինել Հիսուս Քրիստոսի ավետարանի ուղերձի տարածման համար և օգնել մեզ կապի մեջ լինել ընտանիքի ու բարեկամների հետ, սակայն եթե մենք աչալուրջ չենք անձնական սարքերն օգտագործելիս, մենք ևս կարող ենք սկսել կենտրոնանալ ինքներս մեզ վրա և մոռանալ, որ ավետարանով ապրելու էությունը ծառայությունն է։

Ես մեծ սեր ու հավատ ունեմ նրանց հանդեպ, ովքեր դեռահաս են և չափահաս երիտասարդ։ Ես տեսել ու զգացել եմ ծառայելու և աշխարհում փոփոխություն առաջ բերելու ձեր ցանկությունը։ Ես հավատում եմ, որ անդամների մեծ մասը ծառայությունը համարում են իրենց ուխտերի և աշակերտության կենտրոնը։ Բայց ես նաև կարծում եմ, որ երբեմն հեշտ է բաց թողնել ուրիշներին ծառայելու հրաշալի հնարավորությունների

մի մասը, քանի որ մենք ցրված ենք կամ որովհետև մենք փնտրում ենք աշխարհը փոխելու մեծագույն եղանակներ և չենք տեսնում, որ ամենակարևոր կարիքները, որոնց մենք հանդիպում ենք, մեր ընտանիքներում են, մեր բարեկամների շրջապատում, մեր ծխերում և մեր համայնքներում: Մենք հուզվում ենք, երբ տեսնում ենք մեզանից հեռու գտնվող աշխարհում սփռված մարդկանց տառապանքներն ու մեծ կարիքները, բայց թերանում ենք նկատել դասարանում անմիջապես մեր կողքին նստած մեկին, ով մեր ընկերության կարիքն ունի:

Քույր Լինդա Կ. Բըրթընը պատմեց մի ցցի Սփոփող Միության նախագահի պատմությունը, ով, 1990-ականներին ուրիշների հետ աշխատելով, վերմակներ էր հավաքում կարիքավոր մարդկանց համար: Նա իր դստեր հետ վերմակներով բեռնավորված մեքենան քշեց Լոնդոնից Կոսովո: Ուղևորությունից վերադառնալիս նա մի ակնհայտ հոգևոր տպավորություն ստացավ, որը խորապես տպավորվեց նրա սրտում: Այդ տպավորությունը հետևյալն էր. «Ինչ որ կատարեցիր, շատ լավ է: Այժմ գնա տուն, քայլիր փողոցի դիմացի մայթով և ծառայիր քո հարևանին»:[3]

Դա ի՞նչ օգուտ է տալիս աշխարհին փրկելու գործին, եթե մենք անտեսում ենք նրանց կարիքները, ովքեր մեզ մոտիկ են կամ ում մենք ամենաշատն ենք սիրում: Ի՞նչ արժեք ունի վերափոխել աշխարհը, եթե մեր շուրջը գտնվող մարդիկ մաքառումների մեջ են, և մենք չենք նկատում: Երկնային Հայրը, հավանաբար, մեզ շրջապատել է այն մարդկանցով, ովքեր մեր կարիքն ունեն, իմանալով, որ մենք լավագույնս կարող ենք բավարարել նրանց կարիքները:

Բոլորը կարող են ճանապարհներ գտնել առաջարկելու Քրիստոսանման ծառայություն: Իմ խորհրդական Քույր Կարոլ Մակքոնկիին վերջերս պատմեց ինձ իր 10-ամյա թոռնուհի Սառայի մասին, ով որոշեց ինքնուրույն օգնել մորը, երբ հասկացավ, որ նա հիվանդ է: Նա օգնեց, որ փոքր քույրն արթնանա, հագնվի, լվանա ատամները և նախաճաշի, որպեսզի մայրը կարողանա հանգստանալ: Նա լուռ կատարում էր այս պարզ ծառայությունը, չնայած իրեն չէին խնդրել, քանի որ տեսավ կարիքը և ցանկացավ օգնել: Սառան ոչ միայն օրհնեց իր մայրիկին, այլև, ես համոզված եմ, որ նաև մեծ ուրախություն զգաց, իմանալով, որ թեթևացրեց իր սիրելիներից մեկի բեռը և միաժամանակ ամրապնդեց իր հարաբերությունները կրտսեր քրոջ հետ: Նախագահ Ջեյմս Ի Ֆաուստն ասել է. «Ուրիշներին ծառայելը կարող է սկսվելցանկացած տարիքում: . . . Պարտադիր չէ, որ այն լինի շատ մեծ և հրաշալի է, երբ կատարվում է ընտանիքի սահմաններում»:[4]

Երեխանե՛ր, դուք հասկանում եք, թե ինչ մեծ նշանակություն ունի ձեր ծնողների և ընտանիքի անդամների համար, երբ դուք ուղիներ եք փնտրում ծառայել տանը: Դեռահասնե՛ր, ձեր ընտանիքի անդամներին զորակցելն ու ծառայելը պիտի լինի ձեր գլխավոր առաջնահերթությունների թվում, մինչ դուք աշխարհը փոխելու ձևեր եք փնտրում: Ձեր հարազատ քույրերի ու եղբայրների հանդեպ բարություն և մտահոգություն ցուցաբերելն օգնում է տանը ստեղծել միասնության մթնոլորտ և հրավիրում է Հոգուն: Աշխարհը փոխելը սկսվում է ձեր ընտանիքի ամրապնդումից:

Մեր ծառայությունը կենտրոնացնելու մեկ այլ վայր կարող են լինել մեր ծխի ընտանիքները: Երբեմն մեր զավակները կարող են հարց տալ. «Ես ինչո՞ւ պիտի գնամ Հոգևոր երեկոյի: Իրականում, ես դրանից ոչ մի օգուտ չեմ ստանում»:

Եթե ես լավ ծնող լինեի, այդ պահին կասեի. «Ինչն է քեզ ստիպում մտածել, որ դու գնում ես Հոգևոր երեկոյի, որպեսզի *դու* որևէ օգուտ ստանաս դրանից»:

Իմ երիտասա՛րդ ընկերներ, ես կարող եմ երաշխավորել, որ Եկեղեցու յուրաքանչյուր ժողովում, որին դուք մասնակցում եք, միշտ էլ կգտնվի մեկը, ով մենակ է, ով դժվարություններ ունի և ընկերոջ կարիք ունի, կամ մեկը, ով զգում է, որ չի պատկանում այդ միջավայրին: Յուրաքանչյուր ժողովին կամ միջոցառմանը դուք ներդրում ունեք կատարելու, և Տերը ցանկանում է, որ դուք նայեք ձեր շուրջը, ձեր հասակակիցներին, իսկ հետո ծառայեք՝ ինչպես Նա կծառայեր:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է. «Տիրոջ հիմնական նպատակներից մեկը Սրբերի այնպիսի համայնքի ստեղծումն է, որտեղ նրանք կաջակցեն մեկը մյուսին «այս նեղ և անձուկ արահետի վրա, որը տանում է դեպի հավերժական կյանք»: Նա շարունակում է, ասելով. «Այս կրոնը կենտրոնացած չէ միայն իր վրա. ավելի շուտ մենք բոլորս ենք կանչված ծառայելու: Մենք Քրիստոսի մարմնի աչքերն ենք, ձեռքերը, գլուխը, ոտքերը և այլ անդամները»:[5]

Հիրավի, մենք հաճախում ենք Եկեղեցու շաբաթական ժողովներին արարողություններին մասնակցելու, վարդապետություն սովորելու և ոգեշնչվելու, բայց մասնակցության մեկ այլ շատ կարևոր պատճառն այն է, որ որպես ծխի ընտանիք և Փրկիչ Հիսուս Քրիստոսի աշակերտներ, մենք հսկում ու խրախուսում ենք մեկս մյուսին և ուղիներ փնտրում

ծառայելու և զորացնելու միմյանց: Մենք պարզապես վերցնողները ու տվողները չենք այն ամենի, ինչն առաջարկվում է Եկեղեցում, մենք պիտի լինենք տվողներ և հոգացողներ: Երիտասա՛րդ տղամարդիկ և երիտասա՛րդ կանայք, հաջորդ անգամ, երբ դուք գնաք Հոգևոր երեկոյի, ձեր հեռախոսը վերցնելու փոխարեն, որպեսզի տեսնեք, թե ձեր ընկերներն ինչով են զբաղված, կանգ առեք, նայեք ձեր շուրջը և հարցրեք ինքներդ ձեզ. «Այսօր ո՞վ ունի իմ կարիքը»: Դուք կարող եք լինել այն բանալին, որը կհասնի և կազդի հասակակիցների կյանքի վրա կամ կխրախուսի ընկերոջը, որը լուռ տառապում է:

Խնդրեք ձեր Երկնային Հորը ցույց տալ շրջապատի այն մարդկանց, ովքեր ունեն ձեր կարիքը և ոգեշնչի ձեզ՝ լավագույնս ծառայել նրանց: Հիշե՛ք, որ Փրկիչը շատ հաճախ ծառայում էր նրանց մեկ առ մեկ:

Մեր ավագ թոռ Էթանը 17 տարեկան է: Իմ վրա խորը ազդեցություն ունեցավ այն, որ այս ամառ նա ինձ ասաց, որ ոգեշնչվելով իր մայրիկի օրինակով, ամեն օր աղոթում է որևէ մեկին ծառայելու հնարավորություն ստանալու համար: Երբ մենք ժամանակ էինք անցկացնում նրա ընտանիքի հետ, ես հետևում էի, թե Էթանն ինչպիսի համբերությամբ, սիրով ու բարությամբ էր վերաբերվում իր եղբորն ու քույրերին, ինչպես էր օգնում իր ծնողներին, և ճանապարհներ փնտրում՝ հասնելու ուրիշներին: Ես տպավորված եմ այն հանգամանքից, որ նա տեղյակ է իր շրջապատողների կարիքների մասին և ձգտում է ծառայել նրանց: Նա օրինակ է ինձ համար: Վարվելով ինչպես Էթանը, եթե խնդրենք Տիրոջից օգնել մեզ ճանապարհներ գտնել ուրիշներին ծառայելու համար, ապա Սուրբ հոգին կբացի մեր աչքերը, որ տեսնենք մեր շուրջը գտնվող կարիքը, տեսնենք այն մեկին, ով մեր կարիքն ունի այդ օրը և իմանանք՝ ինչպես ծառայել նրան:

Բացի ձեր ընտանիքին ու ձեր ծխի անդամներին ծառայելուց, հնարավորություններ փնտրեք ծառայելու ձեր շրջակայքում և ձեր համայնքում: Մինչ մեզ երբեմն կոչ են անում օգնության հասնել մեծ աղետներից հետո, առօրյա կյանքում մեզ խրախուսվում է հնարավորություններ փնտրել մեր տարածքներում օգնելու բարձրացնելու կարիքավորներին: Վերջերս ես հրահանգ ստացա մի Տարածքային Նախագահից, ովծառայում է մի երկրում, որն ուներ մի շարք ժամանակավոր դժվարություններ, որ աշխարհի մեկ այլ մասում գտնվող կարիքավորներին օգնելու լավագույն եղանակն է՝ կատարել ծոմի շռայլ նվիրատվություն, նվիրաբերել Եկեղեցու Հումանիտար ֆոնդին և ուղիներ փնտրել ծառայելու կարիքավորներին ձեր համայնքում: Պատկերացրեք, թե աշխարհն ինչպես կօրհնվեր, եթե բոլորը հետևեին այս խորհրդին:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, և հատկապես երիտասարդնե՛ր, երբ դուք ձգտում եք ավելի շատ նմանվել Փրկիչ Հիսուս Քրիստոսին և ապրել համաձայն ձեր կապած ուխտերի, դուք կշարունակեք օրհնվել տառապանքը թեթևացնելու և կարիքավորների օգնելու ցանկությամբ: Հիշե՛ք, որ ամենամեծ կարիքներ ունեցող մարդիկ կարող են լինել հենց ձեր դիմաց: Սկսեք ձեր ծառայությունը

ձեր տներում և ձեր ընտանիքներից: Սրանք այն հարաբերություններն են, որ կարող են հավերժ լինել: Նույնիսկ, եթե, և հատկապես, եթե ձեր ընտանիքը գտնվում է կատարյալից հեռու իրավիճակում, դուք կարող եք ուղիներ գտնել ծառայելու, բարձրացնելու և զորացնելու: Սկսեք այնտեղից, որտեղ կանգնած եք, սիրեք նրանց, ինչպիսին կան և պատրաստվեք այն ընտանիքի համար, որը դուք ցանկանում եք ունենալ ապագայում:

Աղոթեք օգնության համար, որ ճանաչեք ձեր ծխի ընտանիքներին, որոնք սիրո և խրախուսանքի կարիք ունեն: Եկեղեցի հաճախելիս, «Ի՞նչ օգուտ ունեմ ես այս ժողովից» հարցի փոխարեն հարցրեք. «Այսօր ո՞վ ունի իմ կարիքը»: Ես ի՞նչ կարող եմ առաջարկել»:

Երբ դուք օրհնում եք ձեր ընտանիքները և ծխի անդամներին, ուղիներ փնտրեք օրհնելու նաև ձեր տեղական համայնքի անդամներին: Արդյոք դուք շատ ժամանակ եք տրամադրում ծառայելուն, թե ամսական ընդամենը մի քանի ժամ կարող եք ծառայել, ձեր ջանքերը կյանքեր կօրհնեն և կօրհնեն ձեզ այնպիսի ճանապարհներով, որ դուք չեք կարող պատկերացնել:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է. «Աստված իրոք նկատում է մեզ և հետևում է մեզ: Բայց, սովորաբար, մեկ այլ անձնավորության միջոցով է նա բավարարում է մեր կարիքները»:[6] Մեզանից յուրաքանչյուրը թող հասկանա, թե ինչ արտոնություն և օրհնությունը է մեր Երկնային Հոր գործի կատարմանը մասնակցելը, երբ մենք հանդիպում ենք Նրա զավակների կարիքներին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**


1. Ղուկաս 9.24:
2. Thomas S. Monson, “What Have I Done for Someone Today?” *Liahona,* Nov. 2009, 85.
3. Linda K. Burton, “I Was a Stranger,” *Liahona,* May 2016, 15.
4. James E. Faust, “Womanhood: The Highest Place of Honor,” *Liahona,* July 2000, 117.
5. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, “«Ինչո՞ւ Եկեղեցին»,”նոյեմբեր 2015, 108, 109.
6. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 82.

**Երեց Դալլին Հ. Օուքս**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Ծրագիրը և Հռչակագիրը

*Ընտանիքի հռչակագիրը Տիրոջ կողմից ավետարանի ճշմարտությունների վերաշեշտադրումն է, որոնք անհրաժեշտ են, որ ինքներս մեզ նեցուկ լինենք ընտանիքին սպառնացող ժամանակակից մարտահրավերների դարում։*

Ինչպեսակնհայտ է մեր Եկեղեցու Ընտանիքի հռչակագրում, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Սրբերն օրհնված են եզակի վարդապետությամբ նաշխարհընկալման այլ եղանակներով։ Մենք մասնակցում ենք, անգամ աչքի ենք ընկնում շատ աշխարհիկ միջոցառումներում, բայց որոշ թեմաներով միջոցառումներին մենք հրաժարվում ենք մասնակցել, քանի որ ձգտում ենք հետևել Հիսուս Քրիստոսի և Նրա հին ու նոր Առաքյալների ուսմունքներին։

I.

Առակում Հիսուսը նկարագրում է նրանց, ովքեր «խօսքը լսում (են)», բայց դառնում «անպտուղ», երբ այդ խոսքը «խեղդում են» «այս աշխարհքի հոգսերը, եւ հարստութեան խաբեբայութիւնը» (Մատթեոս 13.22)։ Ավելի ուշ, Հիսուսը դիտողություն է անում Պետրոսին, որ նա միտված է «ան(ել) (ոչ) Աստուծոյ՝ այլ մարդկանց բաները», հայտարարելով, «Որովհետեւ ի՞նչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհքն ստանայ եւ իր անձը կորցնէ» (Մատթեոս 16.23, 26)։ Մահկանացու կյանքի Իր վերջին ուսմունքներում, նա ասաց Իր Առաքյալներին. «Եթէ այս աշխարհիցը լինէիք, ապա աշխարհքն իրանը կ՚սիրէր.բայց որովհետեւ աշխարհքիցը չէք, . . . աշխարհքը ձեզ ատեց» (Հովհաննես 15.19, տես նաև Հովհաննես 17.14, 16)։

Նույն կերպ, Հիսուսի վաղ շրջանի Առաքյալներն իրենց գրվածքներում հաճախ օգտագործում են «աշխարհի» պատկերը, որպեսզի ներկայացնեն ավետարանի ուսմունքների հակադրությունը։ «Եւ մի կերպարանուիք այս աշխարհքի կերպարանքովը» (Հռովմայեցիս 12.2), ուսուցանել է Պողոս Առաքյալը։ «Որովհետեւ այս աշխարհքի իմաստութիւնը յիմարութիւն է Աստուծոյ առաջին» (1 Կորնթացիս 3.19)։ Եվ, «Զգոյշ կացէք՝ մի գուցէ մէկը յափշտակէ ձեզ . . . մարդկանց աւանդութեան պէս, աշխարհքիս սկզբունքների պէս եւ ոչ թէ Քրիստոսի պէս» (Կողոսացիս 2.8)։ Հակոբոս Առաքյալն ուսուցանել է, որ «աշխարհքիս սէրը թշնամութիւն է Աստուծոյ դէմ. Ով որ կարողանայ աշխարհքի բարեկամ լինել, իր անձն Աստուծոյ թշնամի կ՚անէ» (Հակոբոս 4.4)։

Մորմոնի Գիրքը հաճախ օգտագործում է «աշխարհի» հակադրության այս պատկերացումը։ Նեփին մարգարեացել է նրանց վերջնական կործանման մասին, «որոնք կառուցվել են՝ աշխարհի աչքում հանրաճանաչ դառնալու համար, և նրանք, որոնք ձգտում են . . . աշխարհի բաներին» (1 Նեփի 22.23, տես նաև 2 Նեփի 9.30)։ Ալման դատապարտում էր նրանց, ովքեր «կլանված են . . . աշխարհի ունայն բաներով» (Ալմա 31.27)։ Լեքիի երազը ցույց է տալիս, որ նրանք, ովքեր ջանում են հետևել երկաթյա ձողին, Աստծո խոսքին, կբախվեն աշխարհի ընդդիմությանը։ Լեքին տեսավ «ընդարձակ շենքում» գտնվողներին՝ «ծաղրելով և ցույց տալով» «արհամարհանքի մատը» (1 Նեփի 8.26–27, 33)։ Այս երազը մեկնաբանող իր տեսիլքում Նեփին իմացավ, որ այս ծաղրն ու ընդդիմությունը գալիս էր հետևյալից՝ «երկրի բազմությունները, . . . աշխարհը և դրա իմաստությունը, . . . աշխարհի հպարտությունը» (1 Նեփի 11.34–36)։

Ո՞րն է հետևյալ սուրբ գրային նախազգուշացումների և պատվիրանների իմաստը՝ չլինես «աշխարհից» կամ ժամանակակից պատվիրանը՝ «թողնես աշխարհը» (ՎևՈւ 53.2)։ Նախագահ Թոմաս

Ս. Մոնսոնը ամփոփել է այս ուսմունքները. «Մենք պետք է աչալուրջ լինենք աշխարհում, որն այնքան հեռացել է հոգևորից: Կարևոր է, որ մենք մերժենք ցանկացած բան, որը չի համապատասխանում մեր չափանիշներին, չմոռանալով այն, ինչը մենք ամենաշատն ենք ցանկանում՝ հավերժական կյանք Աստծո արքայությունում»:[1]

Աստված ստեղծեց այս երկիրը համաձայն Իր ծրագրի, որպեսզի Իր հոգևոր զավակներին տրամադրի մի վայր, որտեղ նրանք կապրեն մահկանացու կյանքով՝ որպես անհրաժեշտ քայլ դեպի այն փառքերը, որոնք Ինքն է ցանկանում Իր զավակների համար: Թեև կան տարբեր արքայություններ և փառքեր, մեր Երկնային Հոր վերջնական նպատակն Իր զավակների համար այն է, ինչ Նախագահ Մոնսոնը անվանել է «հավերժական կյանք Աստծո արքայությունում», որը ընտանիքների վեհացումն է: Սա ավելին է, քան փրկությունը: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հիշեցրել է մեզ. «Աստծո հավերժական ծրագիրը՝ փրկությունը, անհատական խնդիր է, (բայց) վեհացումը ընտանեկան խնդիր է»:[2]

Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը և Ընտանիքի ոգեշունչ հռչակագիրը, որը ես քննարկեմ ավելի ուշ, կարևոր ուսմունքներ են, որպեսզի մահկանացու կյանքում ուղղորդեն և պատրաստեն մեզ վեհացման համար: Չնայած մենք պիտի ապրենք համաձայն ամբարիշտ աշխարհի ամուսնության կանոնների և այլ ավանդույթների, բայց նրանք, ովքեր ձգտում են վեհացման, պետք է անձնական ընտրություններ կատարեն ընտանեկան կյանքում՝ ըստ Տիրոջ ճանապարհի, որը տարբերվում է աշխարհիկ ճանապարհից:

Այս մահկանացու կյանքում մենք չենք հիշում, թե ինչ է նախորդել մեր ծնունդին, և հիմա մենք ընդդիմանում ենք: Մենք աճում ենք ու ձեռք ենք բերում հոգևոր հասունություն, ընտրելով հնազանդվել Աստծո պատվիրաններին՝ միմյանց հաջորդող ճիշտ ընտրությունների

արդյունքում: Սա ներառում է ուխտերը, արարողություններն ու ապաշխարությունը, երբ մեր ընտրությունները սխալ են: Ի տարբերություն այս ամենի, եթե մենք հավատի պակաս ունենք Տիրոջ ծրագրի հանդեպ և անհնազանդ ենք կամ դիտավորությամբ չենք անում այն, ինչ պահանջվում է, մենք բաց ենք թողնում այդ աճի ու հասունության հնարավորությունը: Մորմոնի գիրքն ուսուցանում է. «Մարդկանց համար այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպել Աստծուն» (Ալմա 34.32):

II.

Վերջին Օրերի Սրբերը, ովքեր հասկանում են Աստծո ծրագիրը, ունեն յուրօրինակ աշխարհընկալում, որն օգնում է նրանց տեսնել Աստծո պատվիրանների պատճառը, Նրա պահանջվող արարողությունների անփոփոխ բնույթը և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հիմնական դերը: Մեր Փրկիչի Քավությունը ճանապարհ է պատրաստում մեզ համար՝ հաղթահարելու մահը, և եթե մենք ապաշխարենք, Փրկիչի Քավությունը փրկում է մեզ մեղքից: Այս աշխարհընկալումով հանդերձ, Վերջին Օրերի Սրբերն ունեն բնորոշ առաջնահերթություններ ու սովորույթներ և օրհնված են մահկանացու կյանքի հուսահատությունն ու ցավերը համբերությամբ տանելու զորությամբ:

Նրանք, ովքեր փորձում են հետևել Աստծո փրկության ծրագրին, իրենց գործողություններով անխուսափելիորեն կարող են թյուրիմացության, երբեմն էլ հակասության պատճառ դառնալ իրենց ընտանիքի անդամների ու ընկերների հետ հարաբերություններում, ովքեր չեն հասկանում փրկության ծրագրի սկզբունքները: Այս հակասությունները միշտ էլ կլինեն: Բոլոր սերունդները, որոնք ձգտել են հետևել Աստծո ծրագրին, միշտ էլ դժվարություններ են ունեցել: Շատ վաղուց Եսայիա մարգարեն ուժ էր տալիս իսրայելացիներին, ում կոչում էր «արդարութիւն ճանաչողներ, . . . որ իմ օրէնքն ունիս սրտումդ», հայտարարելով՝ «Մի վախեցեք մարդկանց նախատինքից, ոչ էլ վախեցեք նրանց հայհոյանքներից (Եսայիա 51.7, նաև 2 Նեփի 8.7): Տերն ասաց նրանց. «Մի վախենաք մարդկանց նախատինքից» (Եսայիա 51.7, տես նաև 2 Նեփի 8.7): Բայց ինչ էլ որ լինի հակասության պատճառը նրանց հետ, ովքեր չեն հասկանում կամ չեն հավատում Աստծո ծրագրին, նրանց, ովքեր իրոք հասկանում են այդ ծրագիրը, միշտ պատվիրվում է ընտրել Տիրոջ ճանապարհը՝ աշխարհիկ ճանապարհի փոխարեն:

III.

Ավետարանի ծրագիրը, որին յուրաքանչյուր ընտանիք պիտի հետևի հավերժական կյանքին պատրաստվելու համար, տրված է 1995թ.-ի Եկեղեցու հռչակագրում՝ «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին»[3] Դրա հայտարարություններն ակնհայտորեն տարբերվում են աշխարհիկ որոշ ընթացիկ օրենքներից ու սովորույթներից: Ներկայումս տարբերություններն ավելի ցայտուն են՝ առանց ամուսնության գրանցման համատեղ կյանքը, նույնասեռ ամուսնությունը և այդպիսի հարաբերություններում երեխաներ մեծացնելը: Նրանք, ովքեր չեն հավատում կամ չեն ձգտում վեհացմանը և ապրում են աշխարհի օրենքներով, ընտանիքի այս հռչակագիրը պարզապես համարում են քաղաքական ուղղություն, որը պետք է փոփոխության ենթարկվի: Ի հակադրություն սրա, Վերջին Օրերի Սրբերը հաստատում են, որ Ընտանիքի հռչակագիրը սահմանում է ընտանեկան այնպիսի հարաբերություններ, որոնցում կարող է տեղի ունենալ մեր հավերժական զարգացման կարևորագույն մասը:

Մենք ականատես ենք եղել, թե հասարակությունն ինչպիսի աճող արագությամբ է ընդունում առանց ամուսնության գրանցման համատեղ կյանքը և նույնասեռ ամուսնությունը: Համապատասխան զանգվածային լրատվամիջոցների աջակցությունը, կրթությունը և անգամ մասնագիտական պահանջները դժվարին մարտահրավերներ են ստեղծում Վերջին Օրերի Սրբերի համար: Մեր անձնական կյանքում և ուսմունքներում մենք պիտի փորձենք հավասարակշռել ավետարանի օրենքին հետևելու մրցակցային պահանջները, չնայած մենք ձգտում ենք մեր սերը ցուցաբերել բոլորի հանդեպ:[4] Վարվելով այդպես, մենք երբեք չպիտի վախենանք այն բանից, ինչը Եսայիան կոչում էր «մարդկանց նախատինք»:

Դարձի եկած Վերջին Օրերի Սրբերը հավատում են, որ Ընտանիքի հռչակագիրը, որը հաստատվել է մոտ քառորդ դար առաջ և այժմ թարգմանված է շատ լեզուներով, Տիրոջ կողմից ավետարանի ճշմարտությունների վերաշեշտադրումն է, որոնք անհրաժեշտ են, որ ինքներս մեզ նեցուկ լինենք ընտանիքին սպառնացող ժամանակակից մարտահրավերների դարում: Դրա երկու օրինակներն են նույնասեռ ամուսնությունը և համատեղ կյանքը առանց ամուսնության գրանցման: Ընտանիքի հռչակագրի հրապարակումից 20 տարի անց Միացյալ Նահանգների գերագույն դատարանը թույլատրեց նույնասեռ ամուսնությունը, բեկանելով հազարավոր տարիներ գոյություն ունեցող ամուսնության մոդելը տղամարդու և կնոջ միջև: Միայնակ մայրերից ծնված երեխաների տոկոսը Միացյալ Նահանգներում աճում է ապշեցուցիչ արագությամբ. 5 տոկոսով՝ 1960թ.-ին,[5] 32 տոկոսով՝ 1995թ.-ին,[6] իսկ այժմ՝ 40 տոկոսով:[7]

IV.

Ընտանիքի հռչակագիրը սկսվում է հայտարարությամբ, «որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար»: Այն նաև հաստատում է, որ «սեռն անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի»: Այն նաև հայտարարում է, որ «Աստված պատվիրել է, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին»:

Հռչակագիրը հաստատում է կնոջ և տղամարդու պարտականությունը՝ բազմանալ և լցնել երկիրը, իսկ նրանց «սուրբ պարտականությունն է սիրել և հոգ տանել միմյանց և իրենց զավակների մասին». «Երեխաները պետք է ծնվեն ամուսնացած ծնողներից և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր ընդունում են ամուսնության խոստումը և հնազանդվում դրան ողջ հավատարմությամբ»: Այն հանդիսավոր կերպով նախազգուշացնում է ողջախոհության ուխտերի խախտման դեմ և հաստատում է, որ «ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա»: Ի վերջո, այն նաև կոչ է անում կառավարության պաշտոնյաներին «միջոցառումներ անցկացնել ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու ամրապնդմանը»:

1995թ.-ին Եկեղեցու Նախագահը և Տիրոջ 14 Առաքյալները հրապարակեցին այս կարևոր վարդապետական հայտարարությունները: Որպես մեկը այդ յոթ Առաքյալներից, ով դեռևս ապրում է, ես պարտավորված եմ զգում կիսվել այն հանգամանքով, թե ինչը հանգեցրեց ընտանիքի հռչակագրի հրապարակմանը:

23 տարի առաջ Եկեղեցու ղեկավարությունը ոգեշնչում ստացավ Ընտանիքի հռչակագիր գրելու անհրաժեշտության վերաբերյալ: Այն անակնկալ էր նրանց համար, ովքեր կարծում էին, որ ամուսնության մասին վարդապետական ճշմարտությունները և ընտանիքը լավ հասկացված է առանց վերահաստատման:[8] Այնուամենայնիվ, մենք զգում էինք հաստատման կարիքը և սկսեցինք աշխատել: Համարյա



մեկ տարի թեմաները հաստատվեցին և քննարկվեցին Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից: Տեքստը առաջարկվեց, վերանայվեց և վերամշակվեց: Անընդհատ աղոթելով, մենք դիմում էինք Տիրոջը Նրա ոգեշնչման համար այն մասին, թե մենք ինչ պիտի ասենք և ինչպես պիտի ասենք: Մենք բոլորս սովորեցինք «տող առ տող, ցուցում առ ցուցում», ինչպես Տերը խոստացել էր (ՎԿՈ 98.12):

Բացահայտման գործընթացի ժամանակ առաջարկվող տեքստը ներկայացվեց Առաջին Նախագահությանը, որի անդամները վերահսկում և հայտարարում են Եկեղեցու ուսմունքներն ու վարդապետությունը: Երբ նախագահությունը կատարեց լրացուցիչ փոփոխությունները, Ընտանիքի հռչակագիրը հայտարարվեց Եկեղեցու Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողմից: 1995թ.-ի սեպտեմբերի 23-ին կայացած կանանց ժողովում նա ներկայացրեց հռչակագիրը հետևյալ բառերով. «Այդքան մեծ չափերով մոլորեցնող փաստարկների հետ մեկտեղ, որոնք մատուցվել են որպես ճշմարտություն, չափանիշների և արժեքների վերաբերյալ խաբեության, աշխարհի խավար կողմը բռնելու գրավչության և գայթակղության պայմաններում, մենք անհրաժեշտ ենք համարել զգուշացնել և նախազգուշացնել»:[9]

Ես վկայում եմ, որ Ընտանիքի հռչակագիրը հավերժական ճշմարտության հաստատումն է և Տիրոջ կամքը Իր զավակներին, ովքեր հավերժական կյանք են փնտրում: Այն եղել է Եկեղեցու ուսմունքների և գործունեության հիմքը վերջին 22 տարիների ընթացքում և այդպիսով կշարունակվի ապագայում: Համարեք այն Եկեղեցու ուսմունքների և գործունեության հիմքը, ուսուցանեք այն, ապրեք դրանով և դուք կօրհնվեք, երբ առաջընթանաք դեպի հավերժական կյանք:

Քառասուն տարի առաջ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ուսուցանել է, որ «յուրաքանչյուր սերունդ ունի իր քննությունը ու հնարավորությունները՝ կանգնելու և ինքն իրեն հաստատելու համար»:[10] Ես կարծում եմ, որ Ընտանիքի հռչակագրի հանդեպ մեր վերաբերմունքը և դրա օգտագործումը այս սերնդի քննություններիցմեկն է: Ես աղոթում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը հաջողությամբ հանձնեն այդ քննությունը:

Ես ավարտում եմ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի խոսքերով, որոնք նա ասել է ընտանիքի հռչակագրի հրապարակումից երկու տարի անց: Նա ասել է. «Ես տեսնում եմ մի հրաշալի ապագա այս անհաստատ աշխարհում: Եթե մենք կառչենք մեր արժեքներից, եթե մենք կառուցենք մեր ժառանգության վրա, եթե մենք ապրենք Տիրոջ խոսքին հնազանդվելով, եթե մենք պարզապես ապրենք ավետարանով, մենք օրհնված կլինենք հրաշալի ձևով: Մեզ կվերաբերվեն որպես մի հատուկ ժողովրդի, որը գտել է յուրահատուկ երջանկության բանալին»:[11]

Ես վկայում եմ Ընտանիքի հռչակագրի ճշմարտացիության և կարևորության մասին, որը հայտնությամբ տրվել է Տեր Հիսուս Քրիստոսի կողմից Իր Առաքյալներին՝ Աստծո զավակների վեհացման համար (տես Վարդապետություն և Ուխտեր 131.1–4), Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Թոմաս Ս. Մոնսոն,«Կանգնեք սուրբ տեղերում», *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 83:
2. Ռասսել Մ. Նելսոն, «Փրկություն և վեհացում», *Լիահոնա,* մայիս 2008, 10.
3. Տես «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյեմբեր 2010, 129:
4. Տես Dallin H. Oaks, “Love and Law,” *Liahona,* Nov. 2009, 26–29.
5. Տես “‘Disastrous’ Illegitimacy Trends,” *Washington Times,* Dec. 1, 2006, washingtontimes.com.
6. Տես Stephanie J. Ventura and others, “Report of Final Natality Statistics, 1996,” *Monthly Vital Statistics Report,* June 30, 1998, 9.
7. Տես Brady E. Hamilton and others, “Births: Provisional Data for 2016,” *Vital Statistics Rapid Release,* June 2017, 10
8. Երիտասարդ կանանց Գերագույն Նախագահն այսպես է արտահայտվել այդ մասին 20 տարի անց. «Այն ժամանակ մենք քիչ էինք գիտակցում, թե որքան անհետաձգելիորեն մենք կունենայինք այս հիմնական հայտարարությունների կարիքը ժամանակակից աշխարհում որպես չափանիշներ, որոնցով մենք կկարողանայինք կարծիք կազմել յուրաքանչյուր նոր քամու բերած աշխարհիկ անառարկելի պնդումների մասին, որոնք թափվում են մեզ վրա լրատվամիջոցների, համացանցի, գիտնականների, հեռուստատեսության, ֆիլմերի և նույնիսկ օրենսգետների կողմից: Ընտանիքին վերաբերող հայտարարությունը դարձել է մեր չափանիշը աշխարհի փիլիսոփայությունների շուրջ կարծիք կազմելու հարցում, և ես վկայում եմ, որ այս հայտարարության մեջ ներկայացված սկզբունքները նույնքան ճշմարիտ են այսօր, որքան այն ժամանակ, երբ դրանք տրվեցին մեզ Աստծո մարգարեի կողմից գրեթե 20 տարի առաջ» “Defenders of the Family Proclamation,” *Liahona,* May 2015, 14–15):
9. Gordon B. Hinckley, “Stand Strong against the Wiles of the World,” *Ensign,* Nov. 1995, 100.
10. Ezra Taft Benson, “Our Obligation and Challenge” (address given at the regional representatives’ seminar, Sept. 30, 1977), 2; in David A. Bednar, “On the Lord’s Side: Lessons from Zion’s Camp,” *Liahona,* July 2017, 19.
11. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Գորդոն Բ. Հինքլի* (2016), 186, տես նաև “Look to the Future,” *Ensign,* Nov. 1997, 69:

**Երեց Ջոն Ք. Փինգրի Կրտսեր**
Յոթանասունի Քվորումից

# «Ես աշխատանք ունեմ քեզ համար»

*Մեզանից յուրաքանչյուրը իմաստալից դեր ունի Աստծո աշխատանքն առաջ մղելու գործում։*

Աստված ասաց Մովսեսին. «Ես աշխատանք ունեմ քեզ համար» (Մովսես 1.6)։ Երբևէ ցանկացե՞լ եք իմանալ՝ արդյո՞ք Երկնային Հայրն աշխատանք ունի ձեզ համար։ Արդյոք կա՞ն կարևոր բաներ, որոնք Նա պատրաստել է, որ հատկապես դուք կատարեք։ Ես վկայում եմ՝ պատասխանը «այո՛» է։

Դիտարկենք Գիրիշ Գիմիրին, ով ծնվել ու մեծացել է Նեպալում։ Պատանեկության տարիներին նա ուսանում էր Չինաստանում, որտեղ մի համադասարանցի նրան ցույց տվեց Հիսուս Քրիստոսի ավետարանը։ Ի վերջո Գիրիշը եկավ Բրիգամ Յանգ Համալսարան ավարտական աշխատանքի համար և հանդիպեց իր ապագա կնոջը։ Նրանք բնակություն հաստատեցին Սոլթ Լեյքի Հովտում և երկու զավակ որդեգրեցին Նեպալից։

Տարիներ անց, երբ Նեպալի փախստականների ճամբարից ավելի քան 1500 փախստականներ տեղափոխվեցին Յուտա,[1] Գիրիշը հուշում ստացավ, որ պիտի օգնի նրանց։ Քանի որ Գիրիշը սահուն խոսում էր մայրենի լեզով և հասկանում մշակույթը, նա ծառայում էր որպես թարգմանիչ, ուսուցիչ և դաստիարակ։ Համայնքում վերաբնակվելուց հետո մի քանի նեպալցի փախստականներ հետաքրքրություն ցուցաբերեցին ավետարանի հանդեպ։ Նեպալերենով խոսողների մի ճյուղ կազմավորվեց, և Գիրիշը ավելի ուշ սկսեց ծառայել որպես այդ ճյուղի նախագահ։ Նա նաև ակտիվորեն մասնակցեց նեպալերենով Մորմոնի Գրքի թարգմանության գործում։

Տեսնու՞մ եք, թե Երկնային Հայրն ինչպես պատրաստեց և ինչպես է օգտագործում Գիրիշին։

**Աստված աշխատանք ունի մեզանից յուրաքանչյուրի համար։**

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, Աստված կարևոր աշխատանք ունի յուրաքանչյուրիս համար։ Խոսելով քույրերի հետ և ուսուցանելով այնպիսի ճշմարտություններ, որոնք կիրառելի են բոլորի համար, Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է. «Նախքան (երկիր գալը մեզ) տրվել են որոշակի հանձնարարություններ։ . . . Նույնիսկ եթե մենք հիմա չենք հիշում մանրամասները, սա չի փոխում փառահեղ իրողությունը այն բանի, ինչին մենք մի ժամանակ համաձայնվել ենք։»[2] Ինչպիսի՜ վեհացնող ճշմարտություն։ Մեր Երկնային Հայրը հատուկ ու կարևոր գործեր ունի իմ և ձեզ համար (տես Եփեսացիս 2.10)։

Այս աստվածային հանձնարարությունները չեն պահվում մի քանի արտոնյալ մարդկանց համար, դրանք բոլորիս համար են՝ անկախ սեռից, ռասայից, ազգությունից, եկամտից, սոցիալական կարգավիճակից կամ Եկեղեցում ունեցած կոչումից։ Մեզանից յուրաքանչյուրը իմաստալից դեր ունի Աստծո աշխատանքն առաջ մղելու գործում (տես Մովսես 1.39)։

Մեզանից շատերը հարցնում են, արդյոք Երկնային Հայրը

կարող է օգտագործել *մեզ*կարևոր ներդրումներ կատարելու համար: Բայց հիշեք, նա միշտ օգտագործում էր սովորական մարդկանց՝ կատարելու անսովոր գործեր (տես 1 Կորնթացիս 1.27–28, ՎևՈւ 35.13, 124.1):«[Մենք] գործակալներ ենք» և «զորություն կա [մեր] մեջ», որ «շատ արդարություն գործենք» (ՎևՈւ 58.27–28):[3]

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը բացատրել է.

«Տերն իր մտքում ավելի շատ բան է նախատեսել ձեզ համար, քան դուք ինքներդ եք նախատեսել ձեզ համար: Ձեզ պահել ու պահպանել են այս ժամանակի և այս տեղի համար: . . .

Տերը ձեր կարիքն ունի աշխարհը փոխելու համար: Երբ դուք ընդունեք ու հետևեք Նրա կամքին, դուք կկարողանաք անհնարինն իրականացնել»:[4]

Ուստի, մենք ինչպե՞ս կարող ենք հասկանալ և կատարել աշխատանքը, որը Տերն է նախատեսել մեզ համար: Թույլ տվեք կիսվել չորս սկզբունքներով, որոնք կօգնեն մեզ:

#### Կենտրոնացեք ուրիշների վրա

Նախ՝ կենտրոնացեք ուրիշների վրա: Մենք կարող ենք հետևել Քրիստոսին, «որ ման եկավ բարի անելով» (Գործք 10.38, տես նաև 2 Նեփի 26.24):

Լիաժամկետ միսիայից վերադառնալուց հետո ես կորցրի ամենօրյա նպատակը, որից ես բավականություն էի ստանում: Անշուշտ, ես պիտի պահեի իմ պատվիրանները, ստանայի կրթություն, ընտանիք կազմեի և վաստակեի իմ ապրուստը: Բայց ես ցանկանում էի իմանալ, արդյոք էլի ինչ-որ բան կա, նույնիսկ հատուկ որևէ բան, որ Տերը ցանկանում է, որ ես կատարեմ: Մի քանի ամիս խորհելուց հետո ես պատահաբար կարդացի այս հատվածը. «Եթե դու ցանկանաս, դու կլինես այն միջոցը, որով շատ բարիք կգործվի այս սերնդի մեջ» (ՎևՈւ 11:8): Հոգին օգնեց ինձ հասկանալ, որ աստվածային հանձնարարությունների հիմնական նպատակն է օրինել ուրիշներին և «շատ բարիք գործել»:

Մեր կյանքում մենք կարող ենք ունենալ որոշումներ կայացնելու կարևոր պահեր, ինչպես օրինակ՝ ինչ ուսանել, ինչ անել աշխատանք գտնելու համար, որտեղ ապրել, բայց այս ամենը՝ ուրիշներին օգնելու համատեքստում:

Մի ընտանիք տեղափոխվեց նոր քաղաք: Փոխանակ տուն գտնելու հարուստների թաղամասում, նրանք զգացին, որ պիտի տեղավորվեն այնպիսի տարածքում, որտեղ կային նշանակալի սոցիալական ու տնտեսական կարիքներ: Տարիների ընթացքում Տերն օգտագործեց այդ ընտանիքը շատ մարդկանց աջակցելու և նրանց ծուխն ու ցիցը կառուցելու համար:

Մի արհեստավարժ բժիշկ զբաղվում էր իր բժշկական պրակտիկայով, բայց ուղղորդում ստացավ, որ շաբաթվա մեջ մեկ աշխատանքային օր պիտի հատկացնի անվճար բուժելու այն մարդկանց, ովքեր չունեն առողջապահության ապահովագրություն: Ուրիշներին օրինելու պատրաստակամության շնորհիվ Տերը ճանապարհ պատրաստեց այս տղամարդու և նրա կնոջ համար, որ նրանք աջակցեն հարյուրավոր կարիքավոր հիվանդների, մինչ մեծացնում էին իրենց մեծ ընտանիքը:

#### Բացահայտեք ու զարգացրեք հոգևոր պարգևներ

Երկրորդ՝ բացահայտեքու զարգացրեք հոգևոր պարգևներ: Երկնային Հայրը մեզ տվել է այս պարգևները, որպեսզի օգնի մեզ ճանաչել, կատարել և բավականություն ստանալ աշխատանքից, որը Նա ունի մեզ համար:

Մեզանից ոմանք հարցնում են. «Ես ունե՞մ *որևէ* պարգև»: Կրկին պատասխանն է՝ «այո՛»: «*Ամեն* մարդու մի պարգև է տրված Աստծո Հոգուց . . . որպեսզի բոլորն այդպիսով օգտվեն» (ՎևՈւ 46.11–12, շեշտադրումն ավելացված է):[5] Մի քանի հոգևոր պարգևներ գրանցված են սուրբ գրություններում (տես Ա Կորնթացիս 12.1–11, 31, Մորոնի 10.8–18, ՎևՈւ 46.8–26), բայց կան նաև շատ ուրիշ հատվածներ:[6] Մի

քանիսը կարող են ներառել՝ գթություն ունենալ, հույս արտահայտել, լավ վերաբերվել մարդկանց, արդյունավետ կազմակերպել, համոզիչ խոսել ու գրել, ուսուցանել հստակ և աշխատել տքնաջան:

Ուրեմն ինչպե՞ս կարող ենք ճանաչել մեր պարգևները: Մենք կարող ենք անդրադառնալ մեր հայրապետական օրհնությանը, հարցնել նրանց, ովքեր լավ են ճանաչում մեզ և անձամբ հայտնաբերել, թե ինչն է մեզ մոտ լավ ստացվում և ինչից ենք բավականություն ստանում: Եվ որ ամենակարևորն է, մենք կարող ենք հարցնել Աստծուն (տես Հակոբոս 1.5, ՎևՈւ 112.10): Նա գիտե մեր պարգևները, քանի որ Նա է մեզ դրանք տվել (տես ՎևՈւ 46.26):

Երբ բացահայտում ենք մեր պարգևները, մենք պարտավոր ենք զարգացնել դրանք (տես Մատթեոս 25.14–30): Նույնիսկ Հիսուս Քրիստոսը «լիությունը չստացավ սկզբում, այլ շարունակեց՝ շնորհից շնորհ, մինչև որ ստացավ լիությունը» (ՎևՈւ 93.13):

Մի երիտասարդ տղա պատկերազարդումներ էր կատարում, որպեսզի բարձրացնի կրոնական արժեքները: Իմ սիրելի նկարը Փրկիչի նկարն է, որի օրինակը

ցուցադրված է մեր տանը: Այս եղբայրը զարգացրել և օգտագործում էր իր նկարչական տաղանդը: Օգտագործելով նրան, Երկնային Հայրը ոգեշնչեց ծխի անդամներին բարելավել իրենց աշակերտությունը:

Երբեմն մենք զգում ենք, որ չունենք որևէ հատուկ կարևոր պարգև: Մի օր մի հուսալքված քույր դիմեց Տիրոջը. «Տեր, ո՞րն է իմ անձնական ծառայությունը»: Նա պատասխանեց. «Նկատի՛ր ուրիշներին»: Դա հոգևոր պարգև էր: Այդ ժամանակից ի վեր նա ուրախություն գտավ, նկատելով նրանց, ում հաճախ մոռացության են մատնում, և Աստված աշխատեց նրա միջոցով շատերին օրհնելու համար: Մինչ մեր հոգևոր պարգևներից մի քանիսը աշխարհիկ չափանիշներով աչքի ընկնող չեն, բայց դրանք կարևոր են Աստծո և Նրա աշխատանքի համար:[7]

### Օգուտներ քաղեք անհաջողություններից

Երրորդ՝ օգուտներ քաղեք անհաջողություններից Մեր փորձությունները օգնում են մեզ բացահայտել և պատրաստվել այն աշխատանքին, որ Երկնային Հայրն ունի մեզ համար: Ալման բացատրել է. «Շատ նեղություններից հետո Տերը . . . ինձ իր ձեռքում մի գործիք է դարձրել» (Մոսիա 23.10):[8] Ինչպես Փրկիչի քավիչ զոհաբերությունը Նրան հնարավորություն է տալիս աջակցել մեզ (տես Ալմա 7.11–12), մենք ևս կարող ենք օգտագործել գիտելիքը, որը ձեռք է բերվել դժվարին փորձառությունից՝ ոգեշնչելու, զորացնելու և օրհնելու ուրիշներին:

Երբ մարդկային ռեսուրսների գործադիր բաժնում աշխատող հրաշալի մասնագետին ազատեցին աշխատանքից, նա կարդաց իր հայրապետական օրհնությունը և ոգեշնչում ստացավ հիմնել մի ընկերություն, որպեսզի օգնի արհեստավարժ մասնագետներին աշխատանք գտնել: (Նա նույնիսկ օգնեց ինձ աշխատանք գտնել, երբ մեր ընտանիքը վերադարձավ միսիայից:) Տերն օգտագործեց նրա փորձությունը որպես մի կամուրջ ուրիշներին օրհնելու համար, միաժամանակ ապահովելով նրան ավելի կարևոր աշխատանքով:

Երիտասարդ զույգի երեխան մահացած էր ծնվել: Կոտրված սրտով, նրանք որոշեցին մեծարել իրենց դստերը, խորհրդակցելով և նյութական օգնություն ցույց տալով այն ծնողներին, ովքեր հայտնվել էին նմանատիպ իրավիճակներում: Տերն աշխատեց այս զույգի միջոցով, օգտագործելով նրանց յուրահատուկ կարեկցանքը, որը բացահայտվել էր փորձության միջոցով:

### Ապավինեք Աստծուն

Եվ չորրորդ՝ ապավինեք Աստծուն: Երբ մենք խնդրում ենք հավատով, անկեղծ միտումով, Նա մեզ կբացահայտի մեր աստվածային հանձնարարությունները:[9] Երբ դրանք բացահայտվեն, Նա կօգնի մեզ կատարել այդ հանձնարարությունները: «Քանզի (Նրա) աչքի առաջ բոլոր բաները ներկա են» (ՎԵՈՒ 38.2, տես նաև Աբրահամ 2.8) և ճիշտ ժամանակին Նա կբացի մեզ անհրաժեշտ դռները (տես Հայտնություն 3.8): Նա նույնիսկ ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որպեսզի մենք կարողանանք ապավինել Նրա զորությանը, ինչը վեր է մեր բնական կարողություններից (տես Փիլիպպեցիս 4.13, Ալմա 26.12):

Մի եղբայր, մտահոգված տեղական կառավարության որոշումներից, ոգեշնչում ստացավ մասնակցել ընտրություններին պետական պաշտոն ստանալու համար: Չնայած դժվարին նախընտրական պայքարին, նա գործադրեց իր հավատքը և միջոցներ հավաքեց ընտրվելու համար: Չնայած նա չհաղթեց, բայց զգաց, որ Տերն իրեն ուղղորդել էր և զորացրել, որ բարձրացնի այնպիսի հարցեր, որոնք կարևոր են համայնքի համար:

Մի միայնակ մայր, ով մեծացնում էր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներ, հետաքրքրվում էր, արդյոք ինքը կարող էր համապատասխան կերպով բավարարել իր ընտանիքի կարիքները: Չնայած դժվար էր, բայց Տերը ուժեղացնում էր նրան, որպեսզի հաջողությամբ կատարեր իր ամենակարևոր առաքելությունը:

### Նախազգուշացնող ձայն

Մինչ Աստված օգնում է մեզ կատարել աստվածային հանձնարարությունները, միևնույն ժամանակ փորձություններն աշխատում են, որպեսզի շեղեն և հետ պահեն մեզ կյանքի իմաստից:

Մեղքը, հավանաբար, մեր մեծագույն որոգայթն է, որը թուլացնում է մեր զգայունությունը Սուրբ Հոգու նկատմամբ և սահմանափակում է հոգևոր ուժին մոտենալու մեր հնարավորությունը: Որպեսզի կատարենք Երկնային Հոր գործը, մենք պիտի ձգտենք մաքուր լինել (տես 3 Նեփի 8.1): Արդյո՞ք մենք ապրում ենք այնպես, որ Աստված կարող է աշխատել մեր միջոցով:

Սատանան նույնպես ձգտում է շեղել մեզ պակաս կարևոր հարցերով: Տերը զգուշացնում էր Եկեղեցու վաղ շրջանի ղեկավարներին. «Բայց քո միտքն ավելի շատ եղել է երկրային բաների վրա, քան այն բաների, որոնք ինձանից են . . . և այն ծառայության, որի համար դու կանչվել ես» (ՎԵՈՒ 30.2): Մի՞թե մենք այնքան ենք կլանված աշխարհիկ բաներով, որ շեղվում ենք մեր աստվածային հանձնարարություններից:

Բացի այդ, սատանան հուսահատեցնում է մեզ

անհամապատասխանության զգացումով: Նա ստիպում է, որ մեր աշխատանքը թվա շատ դժվար կամ վախեցնող: Սակայն մենք կարող ենք վստահել Աստծուն: Նա սիրում է մեզ: Նա ցանկանում է, որ մենք հաջողենք: Նա է «առաջից գնացողը, նա [մեզ] հետ է լինելու, նա [մեզ] չի թողնիլ» (Երկրորդ Օրինաց 31.8, տես նաև Սաղմոս 32.8, Առակաց 3.5–6, Մատթեոս 19.26, ՎԼՈ 78.18):

Սատանան կարող է նաև համոզել մեզ պակաս արժեքավոր համարել մեր աշխատանքը, քան ուրիշներին հանձնարարված գործը: Բայց Աստծո հանձնարարած ցանկացած գործ կարևոր է, և մենք բավարարված կզգանք, երբ «հրճվենք նրանով, ինչ Տերը պատվիրել է (մեզ)» (Ալմա 29.9):

Երբ Աստված աշխատում է մեր միջոցով, հակառակորդը կարող է գայթակղել մեզ, որ մեզ վերագրենք ցանկացած ձեռքբերում: Սակայն մենք կարող ենք հետևել Փրկիչի խոնարհությանը, շեղվելով մեզ գովաբանելուց և փոխարենը փառաբանենք Հորը (տես Մատթեոս 5.16, Մովսես 4.2): Երբ մի լրագրող փորձում էր գնահատել Մայր Թերեզային՝ աղքատներին օգնելու նրա կյանքի առաքելության համար, նա կտրուկ պատասխանեց. «Դա Աստծո աշխատանքն է: Ես, կարծես, մատիտ լինեմ նրա ձեռքում: . . . Նա է մտածում: Նա է գրում: Մատիտը կապ չունի դրա հետ: Մատիտին միայն թույլ է տրվում աշխատել»:[10]

### Վերջաբան

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին՝ «ներկայացրեք [ձեր] անդամներն՝ արդարության գործիք Աստծուն» (Հռովմայեցիս 6.13): Ներկայացնել ինքներս մեզ՝ նշանակում է իմաց տալ Նրան, որ մենք ցանկանում ենք, որ մեզ օգտագործեն, նշանակում է՝ փնտրել Նրա ուղղորդումը և հասնել Նրա զորությանը:

Ինչպես միշտ, մենք կարող ենք նայել Հիսուս Քրիստոսին՝ որպես կատարյալ օրինակի: Նախաերկրային Կյանքում Երկնային Հայրը հարցրեց. «Ու՞մ ուղարկեմ»:



Եվ Հիսուսը պատասխանեց. «Ահա ես, ինձ ուղարկիր» (Աբրահամ 3.27, տես նաև Եսայիա 6.8):

Հիսուսն ընդունեց, պատրաստվեց և կատարեց Իր նախորոշված դերը որպես Փրկիչ և Քավիչ: Նա կատարեց Հոր կամքը (տես Հովհաննես 5.30, 6.38, 3 Նեփի 27.13) և ավարտեց Իր աստվածային հանձնարարությունները:

Եթե մենք հետևենք Քրիստոսի օրինակին և ներկայացնենք ինքներս մեզ Աստծուն, ես վկայում եմ, որ Նա ևս կօգտագործի մեզ՝ առաջ մղելով Իր աշխատանքը և օրհնելով ուրիշներին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Refugee Processing Center, "Admissions and Arrivals," ireports.wrapsnet.org/Interactive-Reporting
2. Spencer W. Kimball, "The Role of Righteous Women," *Ensign,* Nov. 1979, 102.
3. Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նշել է. «Հավատացեք ինքներդ ձեզ: Հավատացեք, որ դուք ունեք մեծ ու բարի . . . գործեր անելու կարողություն: . . . Դուք Աստծո զավակն եք և անսահման կարողություններ ունեք» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքներ. Գորդոն Բ Հինքլի* [2016], 77):
4. Russell M. Nelson, *Accomplishing the Impossible: What God Does, What We Can Do* (2015), 147.
5. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆն ուսուցանել է.

   «Մեր Երկնային Հայրը տեսնում է մեր իրական ներուժը: Նա գիտե բաներ մեր մասին, որոնք մենք ինքներս չգիտենք: Նա հուշում է մեզ մեր կյանքի ընթացքում իրականացնել մեր ստեղծման նպատակը: . . .

   Եկեք վճռենք հետևել Փրկչին և աշխատել ջանասիրաբար՝ դառնալու այն մարդը, որ մենք նախատեսված էինք դառնալ: Եկեք լսենք և հնազանդվենք Սուրբ Հոգու հուշումներին: Երբ այդպես վարվենք, Երկնային Հայրը հայտնի կդարձնի մեզ այն բաները, որոնք մենք երբեք չէինք իմացել մեր մասին: Նա նախապես կլուսավորի ճանապարհը և կբացի մեր աչքերը՝ տեսնելու մեր անհայտ և հավանաբար, աներևակայելի տաղանդները» («Ափսոսանքների և վճիռների մասին», *Լիահոնա,* նոյեմբեր 2012, 22, 23):
6. Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Բրյուս Ռ Մակքոնկին բացատրել է. «Հոգևոր պարգևներն անվերջ են թվով և անսահման են բազմազանությամբ: Հայտնի դարձված խոսքում թվարկվածները պարզապես պատկերումն են աստվածային շնորհի անսահման զեղման, որ ողորմած Աստվածը տալիս է նրանց, ովքեր սիրում ու ծառայում են նրան» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 371):
7. Երեց Մարվին Ջ. Էշթոնն ուսուցանել է.

   «Պատահական սկզբունքով ընտրելով, թույլ տվեք մի քանի պարգևների մասին խոսել, որոնք միշտ չէ, որ ակնհայտ են կամ աչքի ընկնող, բայցշատ կարևոր են. Սրանց թվում կարող են լինել պարգևներ, որոնք այնքան ակնհայտ չեն, այնուամենայնիվ իրական են ու արժեքավոր:

   «Եկեք ամփոփենք այդ ավելի քիչ տեսանելի պարգևները.խնդրելու պարգևը, լսելու պարգևը, ականջ դնելու և մեղմ, ցածր ձայնով խոսելու պարգևը, լաց լինելու պարգևը, հակառակությունից խուսափելու պարգևը, ընդունել կարողանալու պարգևը, ունայն կրկնություններից խուսափելու պարգևը, պարգև՝ փնտրելու այն, ինչը արդար է, չդատելու պարգևը, Աստծո առաջնորդությունը փնտրելու պարգևը, առաքյալ լինելու պարգևը, մյուսների մասին հոգ տանելու պարգևը, խորհելու ընդունակություն ունենալու պարգևը, աղոթք ասելու պարգևը, հզոր վկայություն բերելու պարգևը և Սուրբ Հոգին ստանալու պարգևը» ("There Are Many Gifts," *Ensign,* Nov. 1987, 20):
8. Պողոսը նույնպես ասել է. «(Աստված) մխիթարում է մեզ մեր ամեն նեղութիւնում, որ մենք կարող լինենք մխիթարել նորանց որ ամեն տեսակ նեղութիւնում են՝ այն մխիթարութիւնովն որով մենք Աստուածանից մխիթարվում ենք»: (2 Կորնթացիս 1.4):
9. Երեց Ռիչարդ Գ. Սքոթը մեկնաբանել է. «Աստված առանձնահատուկ ծրագիր ունի ձեր կյանքի համար: Նա ձեզ հայտնի կդարձնի այդ ծրագրի մասերը, երբ դուք փնտրեք այն հավատով և հաստատուն հնազանդությամբ» ("How to Live Well amid Increasing Evil," *Liahona,* May 2004, 102):
10. Mother Teresa, in Edward W. Desmond, "Interview with Mother Teresa: A Pencil in the Hand of God," *Time,* Dec. 4, 1989, time.com.

**Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն**
Տասներկու Առաքյալների Քվորում

# Կենդանի հացը, որն իջնում է երկնքից

*Եթե մենք ձգտում ենք ապրել Քրիստոսում և որ Նա ապրի մեզանում, ուրեմն սրբությունն այն է, ինչ մենք փնտրում ենք։*

Երբ Հիսուսը Գալիլեայում հրաշքով կերակրեց 5000 մարդու «հինգ գարիէ հաց(ով) եւ երկու փոքր ձկ(ով)»,[1] հաջորդ օրը Նա կրկին խոսեց ժողովրդի հետ Կափառնայումում։ Փրկիչը հասկացավ, որ շատերին այնքան էլ չէին հետաքրքրում իր ուսմունքները, այլ կրկին կերակրվելու համար էին եկել։[2] Հետևաբար, նա փորձեց նրանց բացատրել չափազանց մեծ արժեքը «այն կերակուրի, որ մնացող է յաւիտենական կեանքի մէջ. Որ մարդի Որդին կտայ ձեզ»։[3] Հիսուսը հայտարարեց.

«Ես եմ կյանքի հացը։

Ձեր հայրերը անապատում մանանան կերան, սակայն մեռան։

Այս է երկնքից իջած հացը, որպէսզի, ով որ սրանից ուտի, չմեռնի։

Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. թէ մէկն այս հացից ուտի, յաւիտենապէս կ՚ապրի. եւ այն հացը, որ ես կը տամ, իմ մարմինն է, որը ես կը տամ, որպէսզի աշխարհը կեանք ունենայ»։[4]

Փրկիչի խոսքերի նախատեսված իմաստը միանգամայն սխալ ընկալվեց նրան լսողների կողմից, քանի որ նրանք միայն բառացիորեն հասկացան։ Վախեցած արձագանքելով այս մտքին, նրանք հարցրին. «Սա ի՞նչպէս կարող է իր մարմինը տալ մեզ ուտելու համար»։[5] Հիսուսը լրացուցիչ բացատրություն տվեց այս սկզբունքին.

«Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, եթե մարդի Որդու մարմինը չուտէք եւ նորա արյունը չխմէք, կեանք չունիք ձեր անձերումը։

Իմ մարմինը ուտողը եւ իմ արյունը խմողը յաւիտենական կեանք ունի. եւ ես յետին օրումը կյարուցանեմ նորան։

Որովհետեւ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնը ճշմարիտ խմելիք է»։[6]

Ապա Նա արտահայտեց այս փոխաբերության իմաստը.

«Իմ մարմինն ուտողը և իմ արյունը խմողը մնում է ինձանում, և ես նրանում»։

«Ինչպէս ինձ ուղարկեց կենդանի Հայրը, եւ ես կենդանի եմ Հօր համար. Այնպէս էլ նա որ ինձ ուտում է, կենդանի կ՚լինի ինձ համար»։[7]

Այնուամենայնիվ, Նրա ունկնդիրները չըմբռնեցին Հիսուսի ասածը, և «շատերը, . . . երբ որ լսեցին, ասեցին. Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել դորան։ . . . (Եվ) սորանից հետո նորա աշակերտներից շատերը ետ գնացին և այլևս ման չէին գալի Նորա հետ»։[8]

Ուտել Նրա միսը և խմել Նրա արյունը անսովոր եղանակ է, որով արտահայտում ենք, որ Փրկիչին ամբողջապես պիտի բերենք մեր կյանք ու մեր գոյություն, որ «մէկ լինեն ինչպէս մենք»։ Դա ինչպես է տեղի ունենում։

Նախ, մենք հասկանում ենք, որ զոհաբերելով Իր միսն ու արյունը, Հիսուսը քավեց մեր մեղքերը և հաղթահարեց թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր մահը։[9] Իսկ հետո մենք ճաշակում ենք Նրա մարմնից ու արյունից, երբ Նրանից ստանում ենք Քավության զորությունն ու օրհնությունները։

Քրիստոսի վարդապետությունը արտահայտում է, թե մենք ինչ պիտի անենք քավիչ շնորհը ստանալու համար։ Դրանք են՝ հավատալ և հավատ ունենալ Քրիստոսի հանդեպ, մկրտվել և ստանալ Սուրբ Հոգին, «ապա գալիս է ձեր մեղքերի թողությունը՝ կրակով և Սուրբ Հոգով»։[10] Սա է դարպասը, մեր մուտքը դեպի Փրկիչի քավիչ շնորհը, դեպի նեղ ու անձուկ արահետը, որը տանում է հավերժական կյանք։

«Ուստի, եթե դուք առաջ մղվեք (արահետով), սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք»։

«Եվ այժմ, ահա, սա է Քրիստոսի վարդապետությունը՝ միակ և ճշմարիտ վարդապետությունը Հոր և Որդու և Սուրբ Հոգու, որը մեկ Աստված է՝ առանց վերջի»։[11]

Խորհենք Տիրոջ Ընթրիքի հաղորդության գեղեցիկ խորհրդանշանակության մասին: Հացը և ջուրը ներկայացնում են Նրա միսն ու արյունը, ով Կյանքի հացն է և Կենդանի ջուրը,[12] նրբանկատորեն հիշեցնելով մեզ այն գինը, որը Նա վճարեց մեր քավության համար: Հացը կտրելիս մենք հիշում ենք Փրկիչի տանջահար եղած մարմինը: Երեց Դալլին Հ. Օուքսը մի անգամ նկատել է, որ «քանի որ հացը կտրտվում է, յուրաքանչյուր կտորը նույնքան յուրահատուկ է, որքան այն մարդիկ, ովքեր ճաշակում են այն: Մենք բոլորս տարբեր մեղքեր ունենք ապաշխարելու: Մենք բոլորս ունենք տարբեր կարիքներ, որոնք պիտի զորացվեն Տեր Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, ում մենք հիշում ենք այս արարողության մեջ»:[13] Երբ մենք խմում ենք ջուրը, մտածում ենք արյան մասին, որը նա հեղեց Գեթսեմանիում և խաչի վրա, ինչպես նաև մտածում ենք դրա սրբագործող զորության մասին:[14] Իմանալով, որ «ոչ մի անմաքուր բան չի կարող մտնել նրա արքայությունը», մենք վճռում ենք լինել նրանց թվում, «ովքեր լվացել են իրենց հանդերձները (Փրկիչի) արյունով՝ իրենց հավատքի, և բոլոր իրենց մեղքերից ապաշխարության, և մինչև վերջ իրենց հավատարմության շնորհիվ»:[15]

Ես խոսեցի Փրկիչի քավիչ շնորհը ստանալու մասին, որը վերցնում է մեր մեղքերը և դրանց հետևանքները, որոնք մեր մեջ են: Բայց փոխաբերականորեն նրա մարմինն ուտելը և Նրա արյունը խմելը ունի լրացուցիչ իմաստ, այն է՝ անձնավորել Քրիստոսի հատկանիշներն ու բնավորությունը, հանելով բնական մարդուն և դառնալով Սուրբ «Տեր Քրիստոսի քավության միջոցով»:[16] Երբ ամեն շաբաթ մենք ճաշակում ենք հաղորդության ջուրն ու հացը, լավ կլինի ուշադրություն դարձնենք, թե որքան լիարժեք և ամբողջությամբ ենք միավորումՆրա բնավորությունը և Նրա անմեղ կյանքի օրինակը մեր կյանքի ու մեր գոյության հետ: Հիսուսը չէր կարողանա քավել ուրիշների մեղքերը, եթե Ինքն անմեղ չլիներ: Քանի որ արդարադատությունը ոչ մի հայց չուներ Նրան ներկայացնելու, Նա կարող էր առաջարկել Իրեն մեր փոխարեն՝ բավարարելով արդարադատությունը, իսկ հետո նաև առաջարկել կարեկցանք: Երբ մենք հիշում ու պատվում ենք Նրա քավիչ զոհաբերությունը, մենք պիտի նաև խորհենք Նրա անմեղ կյանքի մասին:

Սա նշանակում է, որ մենք պիտի տքնաջան մաքառենք մեր բաժինը կատարելու համար: Մենք չենք կարող զոհ լինել, մնալով այնպիսին, ինչպիսին կանք, այլ պիտի մշտապես առաջ գնանք «և կատարեալ մարդ լինենք Քրիստոսի կատարեալ հասակի չափովը»:[17] Ինչպես Թագավոր Լամոնիի հայրը Մորմոնի Գրքում, մենք պիտի պատրաստ լինենք հրաժարվել մեր մեղքերից[18] և կենտրոնանալ այն բանի վրա, թե Տերն ինչ է ակնկալում մեզանից, անհատապես և միասին:

Վերջերս ընկերներիցս մեկը պատմեց ինձ մի փորձառության մասին, որ ունեցել էր որպես միսիայի նախագահ: Նրան վիրահատել էին, որից հետո մի քանի շաբաթ նա ապաքինվում էր: Մինչ նա վերականգնվում էր, ժամանակը նվիրում էր սուրբ գրությունների ուսումնասիրությանը: Մի անգամ կեսօրից հետո, երբ նա խորհում էր Փրկիչի խոսքերի շուրջ 3 Նեփի 27-րդ գլխում, ննջեց: Նա պատմում է.

«Ես երազ տեսա, որում ինձ ցույց տրվեց իմ կյանքի հստակ և մանրամասն ամփոփումը: Ինձ ցույց տրվեցին իմ մեղքերը, սխալ ընտրությունները և այն ժամանակները, . . . երբ ես անհամբերությամբ էի վերաբերվել մարդկանց, ցույց տրվեցին նաև իմ բաց թողած լավ խոսքերն ու գործերը, որոնք պիտի ասեի կամ անեի: . . . Մի քանի րոպեում ինձ ցույց տրվեց իմ կյանքի համապարփակ պատկերը, բայց այն ինձ ավելի երկար թվաց: Ես վախեցած արթնացա և . . . անմիջապես ծնկի իջա մահճակալիս կողքին ու սկսեցի աղոթել, ներում խնդրելով, արտահայտելով իմ սրտի զգացմունքները, ինչպես երբեք չէի արել նախկինում:



Նախքան այդ երազը, ես չգիտեի, որ այդքան մեծ կարիք ունեի ապաշխարելու: Իմ թուլություններն ու թերությունները հանկարծ այնքան պարզ դարձան ինձ, որ անդունդը իմ անձի ու Աստծո սրբության ու բարության միջև թվում էր միլիոնավոր մղոններ: Այդ օրվա իմ աղոթքում ես ամբողջ սրտով իմխորագույն երախտագիտությունն արտահայտեցի Երկնային Հոր և Փրկիչի հանդեպ այն ամենի համար, ինչ Նրանք արել էին ինձ համար, իմ կնոջ ու զավակներիս հետ հարաբերությունների համար, որոնք ես շատ բարձր եմ գնահատում: Մինչ ես ծնկաչոք աղոթում էի, զգացի նաև Աստծո սերն ու գթությունը, որոնք շատ խորն էին, չնայած անարժան լինելու իմ զգացումին: . . .

Կարող եմ ասել, որ ես նույնը չեմ այդ օրից ի վեր: . . . Իմ սիրտը փոխվեց: . . . Այս փորձառության արդյունքում ես իմ մեջ զարգացրի ավելի շատ կարեկցանք ուրիշների հանդեպ, սիրելու ավելի մեծ կարողություն՝ ավետարանը քարոզելու անհետաձգելի ցանկությամբ: . . . Ինչպես երբեք նախկինում, ես կարողացա հասկանալ Մորմոնի Գրքի հավատքի, հույսի և ապաշխարության պարգևի ուղերձները»:[19]

Կարևոր է հասկանալ, որ այս բարի մարդու մեղքերի ու

թերությունների հստակ բացահայտումը չհիասթափեցրեց նրան և չհանգեցրեց հուսահատության: Այո, նա ցնցված էր և խղճի խայթ զգաց: Նա խորապես զգաց ապաշխարության կարիքը: Նա խոնարհվեց, այնուամենայնիվ երախտագիտություն, խաղաղություն և հույս, իրական հույս զգաց շնորհիվ Հիսուս Քրիստոսի, ով «կենդանի հացն է, որ երկնքիցն է իջել»:[20]

Իմ ընկերը խոսեց այն անդունդի մասին, որը գտնվում էր երազում իր կյանքի և Աստծո սրբության միջև: Սրբությունը ճիշտ բառ է: Ուտելով Քրիստոսի միսը և խմելով Քրիստոսի արյունը մենք ձգտում ենք սրբության: Աստված պատվիրում է. «Սուրբ եղէք, որ ես սուրբ եմ»:[21]

Ենովսը խորհուրդ է տվել մեզ. «Ուստի ուսուցանեք ձեր երեխաներին, որ բոլոր մարդիկ, ամենուրեք, պետք է ապաշխարեն, այլապես նրանք ոչ մի կերպ չեն ժառանգի Աստծո արքայությունը, քանզի ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել այնտեղ, կամ բնակվել նրա ներկայության մեջ. քանզի Ադամի լեզվով, Սրբության Մարդ է նրա անունը, և նրա Միածնի անունն է՝ Մարդու Որդի, այսինքն՝ Հիսուս Քրիստոս»:[22] Երբ ես պատանի էի, ցանկանում էի իմանալ, թե Նոր Կտակարանում Հիսուսին ինչու են հաճախ հիշատակում (և նույնիսկ Ինքն է Իրեն հիշատակում) որպես Մարդու Որդի, երբ Նա իրականում Աստծո զավակն է, բայց Ենոքի հայտարարությունը հստակեցնում է, որ այս վկայակոչումներն իրականում նրա աստվածության և սրբության ճանաչումն են. Նա Սրբության Մարդու Որդին է, Հայր Աստվածը:

Եթե մենք ձգտում ենք ապրել Քրիստոսում, և որ Նա ապրի մեզանում,[23] ուրեմն սրբությունն այն է, ինչ մենք փնտրում ենք թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես:[24] Մենք սրբության ենք ձգտում տաճարում, որտեղ փորագրված է՝ «Սրբություն Տիրոջը»: Մենք այն փնտրում ենք ամուսնության մեջ, ընտանիքում և տանը: Մենք փնտրում ենք այն ամեն շաբաթ, երբ բերկրանք ենք զգում Տիրոջ սուրբ օրը:[25] Մենք նույնիսկ փնտրում ենք այն առօրյա կյանքի մանրուքներում. մեր ելույթներում, մեր հագուստի մեջ ու մեր խոհերում: Ինչպես նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն է ասել, «մենք արդյունքն ենք այն ամենի, ինչ կարդում ենք, ինչ տեսնում ենք և ինչ մտածում ենք»:[26] Մենք սրբություն ենք փնտրում, երբ ամեն օր վերցնում են մեր խաչը:[27]

Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին ասել է. «Մենք գիտակցում ենք, որ կան բազմաթիվ փորձություններ, գայթակղություններ և տառապանքներ, որոնք կարող են մեզ հեռացնել այն ամենից, ինչն առաքինի է և գովեստի արժանի Աստծո առաջ: Սակայն մահկանացու կյանքում ունեցած մեր փորձառությունները մեզ հնարավորություն են տալիս ընտրելու սրբությունը: Շատ հաճախ մեր ուխտերը պահելու համար կատարած զոհաբերություններն են, որ սրբագործում են մեզ և դարձնում սուրբ»:[28] Եվ «մեր կատարած զոհաբերություններին» ես կավելացնեի ծառայությունը, որը մենք կատարում ենք:

Մենք գիտենք, որ երբ «(մենք) մերձավորների ծառայության մեջ ենք, (մենք) սոսկ (մեր) Աստծո ծառայության մեջ ենք»:[29] Եվ Տերը հիշեցնում է մեզ, որ այդպիսի ծառայությունը կենտրոնական է Իր կյանքում և բնավորության մեջ. «Որովհետեւ մարդիՈրդին էլ չ'եկաւ, որ իրան ծառայեն, այլ նա ծառայէ, եւ իր անձը փրկանք տայ շատերի տեղ»:[30] Ինչպես Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին է ուսուցանել. «Ծառայությունը ինչ-որ բան չէ, որը մենք պետք է ստիպված կատարենք, որպեսզի սելեստիալ արքայությունում ապրելու համար իրավունք վաստակենք: Ծառայությունը հենց այն մանրաթելն է, որից սելեստիալ արքայության մեջ վեհացած կյանքն է հյուսվում»:[31]

Զաքարիան մարգարեացավ, որ Տիրոջ հազարամյակի թագավորության ժամանակ նույնիսկ ձիերի սանձերի զարդերի վրա լինելու է մակագրություն «Սրբություն Տիրոջը»:[32] Այդ գիտելիքով զինված, ռահվիրա Սրբերը այս հովիտներում փակցրել էին այդ հիշեցումը. «Սրբություն Տիրոջը» սովորական թվացող կամ աշխարհիկ իրերի վրա, ինչպես նաև այնպիսի իրերի վրա, որոնք անմիջականորեն կապված էին կրոնական գործունեության հետ: Այն գրված էր հաղորդության բաժակների ու ափսեների վրա, տպված էր Յոթանասունականների վկայականների վրա, ինչպես նաև Սփոփող Միության դրոշի վրա: «Սրբություն Տիրոջը» գրությունը նաև հայտնվեց «Սիոնի Վաճառականների Կոոպերատիվ Միություն» խանութի ցուցափեղկերի վրա: Գրությունը կարելի էր տեսնել մուրճի գլխիկի և թմբուկի վրա: «Սրբություն Տիրոջը» մակագրությունը փորագրված էր Նախագահ Բրիգամ Յանգի տան դռների




մետաղական բռնակների վրա: Սրբության այս վկայակոչումները թվացյալ անսովոր և անսպասելի տեղերում կարող են տարօրինակ թվալ, բայց դրանք ցույց են տալիս, թե որքան ամբողջական և հաստատուն պիտի լինի մեր կենտրոնացումը սրբության վրա:

Ճաշակել Փրկիչի միսը և խմել Նրա արյունը նշանակում է մեր կյանքից վանել ամեն բան, ինչն անհամապատասխան է Քրիստոսանման հատկանիշներին, և Նրա հատկանիշները դարձնել մերը: Սա ապաշխարության ավելի ընդարձակ իմաստ է. ոչ միայն հեռանալ անցյալի մեղքերից, այլև «դարձնել սիրտն ու կամքը դեպի Տերը»[33] և շարժվել առաջ: Ինչպես բացահայտվեց իմ ընկերոջ երազում, Աստված մեզ ցույց կտա մեր թերություններն ու թուլությունները, բայց Նա նաև կօգնի մեզ մեր թուլությունները վերածել ուժի:[34] Եթե մենք անկեղծորեն հարցնենք. «Էլ ի՞նչ բանով եմ պակաս»:[35] Նա չի թողնի, որ մենք կռահենք, բայց նա սիրով կպատասխանի հանուն մեր երջանկության: Եվ Նա մեզ հույս կտա:

Սա անհաղթահարելի գործողություն է և շատ վախեցնող է, եթե սրբության ձգտելու մեր ջանքերում մենք մենակ լինենք: Փառահեղ ճշմարտությունն այն է, որ մենք մենակ չենք: Մենք ունենք Աստծո սերը, Քրիստոսի շնորհը, Սուրբ Հոգու սփոփանքն ու ուղղորդումը և մեր ընկերակից Սրբերի ընկերակցությունն ու քաջալերանքը Քրիստոսի մարմնում: Մենք չպիտի բավարարվենք այն տեղով, որտեղ հիմա ենք, բայց նաև չպիտի հուսահատվենք: Ինչպես մի պարզ, բայց խոհուն օրհներգ հորդորում է մեզ.

*Ժամանակ զտիր սուրբ լինելու,*
*աշխարհը շտապում է,*
*Շատ ժամանակ անցկացրու Հիսուսի հետ մենակ:*
*Նայելով Հիսուսին, նմանվիր Նրան,*
*Քո ընկերները քո օգնությամբ կտեսնեն Նրա նմանությունը:*[36]

Ես բերում եմ իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին, «կենդանի հացն, որ երկնքիցն է իջել»,[37] և որ այն «Իմ մարմինը ուտողը եւ իմ արիւնը խմողը յաւիտենական կեանք ունի»,[38] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 6.9
2. Տես Հովհաննես 6.26
3. Հովհաննես 6.27
4. Հովհաննես 6.48-51
5. Հովհաննես 6.52
6. Հովհաննես 6.53-55
7. Հովհաննես 6.56-57
8. Հովհաննես 6:60, 66 Այդ ժամանակ Փրկիչը հարցրեց Իր Առաքյալներին. «Մի՞թէ դուք էլ ուզում էք գնալ» (Հովհաննես 6.67): Պատասխանելով Տասներկուսի փոխարեն, Պետրոսը «Տեր ո՞ւմ մոտ գնանք. հավիտենական կյանքի խոսքերն ունիս դու: Եվ մենք հաւատացինք և ճանաչեցինք, թե դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին» (Հովհաննես 6.66–69): Ես չգիտեմ, արդյոք այդ պահին Պետրոսն ու նրա Եղբայրները հասկացան, թե Տերն ինչ էր ուսուցանում ավելի լավ, քան աշակերտները, ովքեր չէին լքում Տիրոջը, բայց Պետրոսը իրոք գիտեր Հոգու հատուկ վկայությամբ, որ Հիսուսը Քրիստոսն էր, կենդանի Աստծո Որդին (տես նաև Մատթեոս 16.15–17), իսկ այդ փրկությունը հնարավոր չէր գտնել որևէ այլ տեղ: Ուստի նա լիարժեք հանձնառություն ուներ հետևել Հիսուսին, անկախ ամեն բանից: Եթե նա հարցեր ուներ, դրանք կարող էին լուծվել իրենց ժամանակին, բայց նա այլևս հավատարիմ էր Աստծո Որդուն, օրինակ ծառայելով մեզ բոլորիս:
9. Տես Ղուկաս 22.44, Եբրայեցիս 13.12, Մոսիա 3.7, 15.7–8, Ալմա 7.13, Վարդապետություն և Ուխտեր 19.18, 38.4, 45.4–5:
10. 2 Նեփի 31.17
11. 2 Նեփի 31.20-21
12. Տես Հովհաննես 4.10
13. Տես Dallin H. Oaks, “Testimony” (address given at the seminar for new mission presidents, June 25, 2014), 12
14. Տես Մովսես 6.60
15. 3 Նեփի 27.19, տես նաև Մորոնի 10.32–33
16. Մոսիա 3.19
17. Եփեսացիս 4.13
18. Տես Ալմա 22.18
19. Անձնական նամակագրություն
20. Հովհաննես 6.51
21. Ա Պետրոս 1.15
22. Մովսես 6.57
23. Տես Հովհաննես 6.56
24. Տես Հռովմայեցիս 12:1
25. Տես Եսայիա 58.13
26. *Teachings of Thomas S. Monson,* comp. Lynne F. Cannegieter (2011), 267.
27. Տես Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Մատթեոս 16.25–26 ( Մատթեոս 16.24, ծանոթագրություն ե), Ղուկաս 9.23, 14.27–30, Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ղուկաս 14.27–28 (Ղուկաս 14.27, ծանոթագրություն բ), Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ղուկաս 14.31 (Ղուկաս 14.30, ծանոթագրություն ա):
28. Carol F. McConkie, “The Beauty of Holiness,” *Liahona,* May 2017, 10.
29. Մոսիա 2.17
30. Մարկոս 10.45, տես նաև Ալմա 34.28
31. Marion G. Romney, “The Celestial Nature of Self-Reliance,” *Liahona,* Mar. 2009, 19.
32. Զաքարիա 14.20
33. Տես Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Ապաշխարություն»
34. Տես Եթեր 12.27
35. Մատթեոս 19.20
36. William D. Longstaff, “Take Time to Be Holy,” *The United Methodist Hymnal* (1989), no. 395.
37. Հովհաննես 6.51
38. Հովհաննես 6.54

**Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Արդ դուք կատարեալ եղիք, ի վերջո

*Եթե մենք հաստատակամ շարունակենք, հավերժության մեջ մեր զտումը կավարտվի ու կամբողջացվի։*

Սուրբ գրությունները գրվել են, որ մեզ օրհնեն ու խրախուսեն, և դրանք իրոք իրագործում են դա։ Մենք շնորհակալ ենք երկնքին սուրբ գրության յուրաքանչյուր գլխի և հատվածի համար, որ տրվել է մեզ։ Բայց դուք նկատո՞ւմ եք, որ ժամանակ առ ժամանակ որևէ հատված է հայտնվում, որը հիշեցնում է մեզ, որ մենք *չենք անում* այն, ինչ պիտի անենք։ Օրինակ, Լեռան Քարոզը սկսվում է հանգստացնող, նուրբ երանիներով, բայց դրան հաջորդող հատվածներում մեզ ասվում է, որ ոչ միայն չպիտի սպանենք, այլև նույնիսկ, չպիտի բարկանանք։ Մեզ ասվում է, որ ոչ միայն չպիտի շնանանք, այլև նույնիսկ, անմաքուր մտքեր չպիտի ունենանք։ Ով որ խնդրի, մենք պիտի տանք մեր շապիկը, իսկ հետո մեր վերարկուն։ Մենք պիտի սիրենք մեր թշնամիներին, օրհնենք մեզ անիծողներին և բարություն անենք նրանց, ովքեր ատում են մեզ։[1]

Եթե սա է սուրբ գրությունների ձեր առավոտյան ուսումնասիրությունը, և այս ամենը կարդալուց հետո դուք համոզված եք, որ լավ գնահատական չեք ստանալու ավետարանի ձեր օրագրում, ապա վերջին պատվիրանն այս շղթայում անշուշտ ավարտում է աշխատանքը. «Արդ դուք կատարեալ եղիք, ինչպես ձեր Հայրը որ երկնքումն է, կատարեալ է»։[2] Այդ եզրափակիչ հրամայականով մենք ցանկանում ենք անկողին մտնել և ծածկել մեր գլուխը։ Այսպիսի սելեստիալ նպատակները մեր հասանելիության սահմաններից դուրս են։ Սակայն, անշուշտ, Տերը

մեզ երբեք այնպիսի պատվիրան չէր տա, եթե իմանար, որ չենք կարող այն պահել։ Եկեք տեսնենք, թե մեզ ուր կտանի այս տարակուսանքը։

Եկեղեցում ես լսում եմ, թե շատերն ինչպես են մաքառում այս խնդրի հետ. «Ես բավականաչափ լավը չեմ»։ «Ես շատ հեռու եմ կատարյալ լինելուց»։ «Ես երբեք բավականաչափ արժանավոր չեմ լինի»։ Ես սա լսում եմ անչափահասներից։ Ես սա լսում եմ միսիոներներից։ Ես սա լսում եմ նորադարձներից։ Ես սա լսում եմ ուխտի մեջ ծնվածներից։ Վերջին Օրերի Սուրբ քույր Դարլա Իսակսոնը նկատել է, որ սատանային ինչ-որ կերպ հաջողվել է ստեղծել ուխտեր ու պատվիրաններ, ինչպես օրինակ՝ անեծքն ու դատապարտումը։ Որոշ մարդկանց համար ավետարանի իդեալներն ու ոգեշնչումները նա վերածել է ինքնատելության և թշվառության զգացումի։[3]

Այն, ինչ ես հիմա ասում եմ, ոչ մի կերպ չի հերքում կամ թուլացնում Աստծո տված պատվիրանների կարևորությունը։ Ես հավատում եմ, որ Նա կատարյալ է, և ես գիտեմ, որ մենք Նրա հոգևոր որդիներն ու դուստրերն ենք և ունենք աստվածային ներուժ՝ դառնալ, ինչպիսին Նա է։ Ես նաև գիտեմ, որ որպես Աստծո զավակներ, մենք չպիտի ստորացնենք կամ վատաբանենք ինքներս մեզ, ասես պատժելով մեզ, կարծելով, թե սա ինչ-որ ձևով մեզ կդարձնի այն անձնավորությունը, որ Աստված է ցանկանում, որ մենք դառնանք։ Ոչ։ Ապաշխարելու պատրաստակամությամբ և մեր սրտերում արդարակեցության միշտ աճող ցանկությամբ հանդերձ, ես հուսով եմ, որ մենք հետամուտ կլինենք անհատական կատարելագործմանը մի եղանակով, որը չի ներառում խոց կամ անոռեքսիա ձեռք բերելը, ընկճվածությունը և մեր սեփական ինքնագնահատականի արժեզրկումը։ Սա այն *չէ*, ինչ Աստված ցանկանում է Երեխաների խմբի կամ մեկ ուրիշի համար, ովքեր անկեղծորեն երգում են. «Ես փորձում եմ լինել Հիսուսի նման»։[4]

Որպեսզի այս հարցը դիտարկենք համատեքստում, կարո՞ղ եմ ես հիշեցնել մեզ բոլորիս, որ մենք

ապրում ենք ընկած աշխարհում, և այժմ մենք ընկած ժողովուրդ ենք: Մենք թելեստիալ արքայությունում ենք, որը գրվում է «թ» տառով, ոչ թե «ս»: Ինչպես Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն է ուսուցանել, այստեղ՝ մահկանացու կյանքում, կատարելությունը դեռ «առկախ» է:[5]

Ուստի, ես կարծում եմ, որ Հիսուսը չէր նախատեսել, որ Իր Լեռան Քարոզը բառային մուրճ լիներ՝ նախատելու մեզ մեր թերությունների համար: Ոչ, ես կարծում եմ, որ Նա նախատեսել էր այն տուրք լինի այն բանին, թե ով և ինչ է Հավերժական Հայրը, և մենք ինչի կարող ենք հասնել հավերժության մեջ: Ամեն դեպքում, ես երախտապարտ եմ իմանալով, որ, չնայած իմ շատ թերություններին, զոնե Աստված կատարյալ է, և զոնե Նա կարողէ սիրել իր թշնամիներին, քանի որ շատ հաճախ մեր մեջ գտնվող «բնական տղամարդու»[6] և կնոջ պատճառով ես և դուք երբեմն այդ թշնամին ենք: Որքան երախտապարտ եմ ես, որ զոնե Աստված կարող է օրհնել նրանց, ովքեր չարամտորեն օգտագործում են Իրեն, քանի որ առանց այդպես վարվելու ցանկության, մենք *բոլորս* երբեմն չարամտորեն օգտագործում ենք Նրան: Ես երախտապարտ եմ, որ Աստված ողորմած է ու խաղաղարար, քանի որ ես կարիք ունեմ ողորմածության, իսկ աշխարհը՝ խաղաղության: Իհարկե, այն ամենը, ինչ մենք ասում ենք Հոր արժանիքների մասին, նաև ասում ենք Նրա Միածին Որդու մասին, ով ապրեց ու մահացավ նույն կատարելությամբ:

Ես շտապում եմ ասել, որ ավելի շատ կենտրոնանալով Հոր և Որդու նվաճումների վրա, քան մեր ձախողումների վրա, նվազագույնս չի արդարացնում անգամ անկառավարելի կյանքը կամ չափանիշների նշաձողի իջեցումը: Ոչ, ի սկզբանե ավետարանը եղել է «Սուրբերի կատարելութեանը համար, . . . մինչեւ որ ամենքս . . . կատարեալ մարդ լինենք Քրիստոսի կատարեալ հասակի չափովը»:[7] Ես պարզապես առաջարկում եմ, որ երբեմն որևէ սուրբ գրության կամ պատվիրանի առնվազն մեկ նպատակն է հիշեցնել մեզ, թե իրականում ինչ հոյակապ է «Քրիստոսի կատարյալ հասակի չափը»,[8] որը մեզ ավելի մեծ սեր ու հիացմունք է ներշնչում Նրա հանդեպ և Նրան նմանվելու ավելի մեծ ցանկություն առաջացնում:

«Այո, եկեք դեպի Քրիստոսը և կատարելագործվեք նրանում . . . », - Մորոնին խնդրում է: «Սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով, ապա . . . *նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում»*:[9] Ճշմարիտ կատարելագործման համար մեր միակ հույսը այն որպես պարգև երկնքից ստանալն է. մենք չենք կարող «վաստակել» այն: Ուստի, Քրիստոսի ողորմությունը մեզ առաջարկում է ոչ միայն փրկություն վշտից, ցավից ու մահից, այլև փրկություն մեր մշտական ինքնաքննադատությունից:

Թույլ տվեք օգտագործել Փրկիչի առակներից մեկը այս միտքը մի փոքր այլ կերպ արտահայտելու համար: Մի ծառա իր թագավորին պարտք էր 10000 քանքար: Լսելով ծառայի խնդրանքը համբերության ու գթության մասին, «Տէրն էլ գթաց այն ծառայի վերայ՝ նորան արձակեց, եւ . . . պարտքն էլ շնորհեց . . . նորան»: Բայց հետո այդ նույն ծառան չներեց իր ծառայակիցներից մեկին, որն իրեն պարտք էր 100 դահեկան: Այդ մասին լսելով, թագավորը շատ վշտացավ և ասաց նրան, ում ներեց. «Պէտք չէ՞ր որ դու էլ քո ծառայակցին ողորմէիր՝ ինչպէս որ ես էլ քեզ ողորմեցի»:[10]

Գիտնականների շրջանում գոյություն ունեն տարբեր կարծիքներ այստեղ նշված դրամական արժեքների վերաբերյալ, և ներեցեք ԱՄՆ-ի դրամական միավորին հղում կատարելու համար, բայց որպեսզի հաշվարկը հեշտացնենք, ապա ավելի փոքր պարտքը՝ չներված 100 դահեկանը, ներկայումս 100 դոլար է, իսկ 10000 քանքարը, որն այդքան հեշտությամբ ներվեց, հիմա կազմում է 1 միլիարդ դոլար կամ ավելի:

Որպես անձնական պարտք, սա աստղաբաշխական թիվ է, ամբողջովին վեր մեր ըմբռնումից: (Ոչ ոք չի կարող այդքան գումար ծախսել:) Դե, ինչ վերաբերում է այս

առակի նպատակին, այն *ենթադրաբար* պիտի անըմբռնելի լինի, այն ենթադրաբար պիտի դուրս լինի մեր հասկացողության կարողությունից, չասենք նաև մեր վերավճարելու կարողությունից: Պատճառն այն է, որ սա երկու ծառաներիպատմությունը չէ, ովքեր վիճում էին Նոր Կտակարանում: Սա պատմություն է մեր մասին, ընկած մարդկային ընտանիքի մասին՝ բոլոր մահկանացու պարտատուների, օրինախախտների և բանտարկյալների մասին: Մեզանից յուրաքանչյուրը պարտատու է, և դատավճիռը ազատազրկումն է բոլորիս համար: Եվ մենք բոլորս այնտեղ կմնայինք, եթե չլիներ Թագավորի ողորմածությունը, ով մեզ ազատ է արձակում, պարզապես, քանի որ Նա սիրում է մեզ և «կարեկցանքից գալարվում մեր հանդեպ»:[11]

Հիսուսն այստեղ օգտագործում է անըմբռնելի չափ, քանի որ Նրա Քավությունը անըմբռնելի պարգև է՝ տրված անըմբռնելի գնով: Ինձ թվում է դա առնվազն մի մասն է այն իմաստի, որը կանգնած է Հիսուսի կողմից տրված կատարյալ լինելու հրամանի հետևում: Մենք երևի դեռևս չկարողանանք ցուցադրել 10000 քանքարին համարժեք կատարելություն, որին հասել են Հայրն ու Որդին, բայց Նրանց կողմից չափազանց շատ

չէ, եթե խնդրեն, որ մենք մի քիչ ավելի շատ աստվածանման լինենք փոքր բաներում, որ խոսենք և գործենք, սիրենք ու ներենք, ապաշխարենք ու կատարելագործվենք առնվազն 100 դահեկանի մակարդակի կատարելությամբ, ինչը հստակ մեր կարողությունների սահմաններում է:

Իմ եղբայրներ և քույրեր, մեր երկրային ճամփորդության ճանապարհին չի եղել ոչ մի անթերի կյանք Հիսուսից բացի, ուստի այս մահկանացու կյանքում եկեք ձգտենք կայուն կատարելագործման, բայց չսևեռվենք այն բանի վրա, ինչը վարքագծի խնդիրներով զբաղվող գիտնականներն անվանում են «վնասակար կատարելություն»:[12] Մենք պիտի խուսափենք այս վերջին չափազանց մեծ ակնկալիքներից մեր և ուրիշների համար, և ես կուզեի ավելացնել նաև նրանց, ովքեր կանչված են ծառայելու Եկեղեցում, ինչը Վերջին Օրերի Սրբերի համար նշանակում է բոլորը, քանի որ մենք բոլորս կանչվում ենք ծառայելու ինչ-որ տեղ:

Այս առումով Լև Տոլստոյը գրել երբեմնի մի քահանայի մասին, ում նրա համայնքից մի մարդ քննադատում էր ոչ այնքան վճռական լինելու համար, որքան նա պիտի լիներ. քննադատությունը եզրափակվում էր նրանով, որ եթե քարոզիչը մոլորված է, հետևաբար նրա ուսուցանած սկզբունքները ևս սխալ են:

Այդ քննադատությանն ի պատասխան, քահանան ասում է. «Նայիր իմ կյանքին հիմա և համեմատիր այն իմ նախկին կյանքի հետ: Դու կտեսնես, որ ես փորձում եմ ապրել այն ճշմարտությամբ, որը հռչակում եմ»: Սակայն, չկարողանալով հասնել իր ուսուցանած բարձր իդեալներին, քահանան ընդունում է իր ձախողումը: Բայց նա բացականչում է.

«Քննադատեք ինձ, (եթե կամենում եք) ես ինքս եմ այդպես վարվում, բայց (մի) քննադատեք . . . այն ճանապարհը, որին ես հետևում եմ: . . . Եթե ես իմանայի տուն տանող ճանապարհը, որով ես հարբած քայլում եմ. մի՞թե դա նույն ճիշտ ճանապարհը չէ, պարզապես ես քայլելիս օրորվում եմ մի կողմից մյուսը:

. . . Հրճվանքով մի զոռացեք. «Նայեք նրան: . . . Տեսե՛ք, նա սողում է դեպի ճահիճը: Ոչ, թաքուն մի ուրախացեք, այլ . . . օգնեք ինձ (և ցանկացած մեկին, ով փորձում է այդ ճանապարհով ետ քայլել դեպի Աստված)»:[13]

Եղբայրներ և քույրեր, մեզանից յուրաքանչյուրը ձգտում է ապրել ավելի Քրիստոսանման կյանքով, քան մեզ սովորաբար հաջողվում է ապրել: Եթե մենք անկեղծորեն ընդունում ենք սան փորձում կատարելագործվել, ուրեմն մենք կեղծավորներ չենք, մենք մարդիկ ենք: Եկեք թույլ չտանք, որ մեր մահկանացու հիմար սխալներն ու անխուսափելի թերությունները, որ ունեն անգամ մեզ շրջապատող լավագույն տղամարդիկ ու կանայք, մեզ թերահավատ դարձնեն ավետարանի ճշմարտությունների, Եկեղեցու ճշմարտացիության, մեր ապագայի հույսի և աստվածության հնարավորության հանդեպ: Եթե մենք հաստատակամ շարունակենք, հավերժության մեջ մեր զտումը կավարտվի ու կամբողջացվի, ինչը *կատարելություն* բառի նշանակությունն է Նոր Կտակարանում:[14]

Ես վկայում եմ այդ հոյակապ ճակատագրի մասին, որը մեզ հասանելի դարձավ Տեր Հիսուս Քրիստոսի Քավությամբ, ով շարունակեց «շնորհից շնորհ»,[15] մինչև Իր անմահության մեջ[16] Նա ստացավ սելեստիալ փառքի կատարյալ լիությունը:[17] Ես վկայում եմ, որ այս և ամեն ժամ, Նա մեխերի սպիներով պատված իր ձեռքերով մեզ է մեկնում այդ նույն ողորմությունը, առանց անձնատուր լինելու, քաջալերելով մեզ, հրաժարվելով արձակել մեզ, մինչև մենք մի օր ապահով տուն կվերադառնանք Նրա հետ՝ մեր Երկնային Ծնողների գիրկը: Ես շարունակում եմ ձգտել այդ կատարյալ պահին, սակայն անճարակ կերպով: Այսպիսի կատարյալ պարգևի համար ես շարունակում եմ շնորհակալություն հայտնել, սակայն անհամապատասխան: Ես այդպես եմ վարվում Կատարելության անունով՝ Նրա, ով երբեք անճարակ ու անհամապատասխան չի եղել, այլ սիրում է մեզ բոլորիս, ինչպիսին կանք, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Տես Մատթեոս 5.1-47
2. Մատթեոս 5.48
3. Տես Darla Isackson, “Satan’s Counterfeit Gospel of Perfectionism,” *Meridian Magazine,* June 1, 2016, ldsmag.com.
4. “I’m Trying to Be Like Jesus,” *Children’s Songbook,* 78–79.
5. See Russell M. Nelson, Perfection Pending,” *Ensign,* Nov. 1995, 86–88.
6. Մոսիա 3.19
7. Եփեսացիս 4.12–13
8. Եփեսացիս 4.13
9. Մորոնի 10.2, շեշտադրումն ավելացված է
10. Տես Մատթեոս 18.24-33
11. Վարդապետություն և Ուխտեր 121.4
12. Տես Joanna Benson and Lara Jackson, “Nobody’s Perfect: A Look at Toxic Perfectionism and Depression,” *Millennial Star,* Mar. 21, 2013, millennialstar.org.
13. “The New Way,” *Leo Tolstoy: Spiritual Writings,* sel. Charles E. Moore (2006), 81–82.
14. For an enlightening examination of the meaning of the Greek word used in the New Testament for *perfect* (“teleios”), see President Russell M. Nelson’s October 1995 general conference address “Perfection Pending” (*Ensign,* Nov. 1995, 86–87).
15. Վարդապետություն և Ուխտեր 93.13
16. Տես Ղուկաս 13.32
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.13

**Ներկայացնող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ**
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

# Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Եղբայրներ և քույրեր, այժմ ես ձեր հաստատմանը կներկայացնեմ Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորներին, Տարածքային Յոթանասունականներին և օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահություններին։

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Հենրի Բենյոն Այրինգը՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա։

Առաջարկվում են հաստատման Ռասսել Մ. Նելսոնը՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և հետևյալ անձիք՝ որպես այդ քվորումի անդամներ. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Ի. Ստիվենսոն և Դեյլ Գ. Ռենլանդ։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել։

Առաջարկվում է, որ հաստատենք Առաջին Նախագահության խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել։

Եթե կան դեմ քվեարկողներ, արտահայտեք նույն նշանով։

Երեց Դոնալդ Լ. Հոլստրոմը և Ռիչարդ Ջ. Մայնզը ազատվել են Յոթանասունի նախագահության ծառայությունից։

Բոլորը, ովքեր երախտապարտ են այս եղբայրներին իրենց ծառայության համար, կարող են արտահայտել ձեռքի բարձրացումով։

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Երեց Ժուան Ա. Ուսեդային և Պատրիկ Քեարոնին, ովքեր կանչվել են ծառայելու որպես Յոթանասունի նախագահության անդամ։

Ովքեր ցանկանում են հաստատել այս եղբայրներին իրենց նոր նշանակման մեջ, խնդրում ենք բարձրացնել ձեռքը։

Ովքեր դեմ են, կարող եք արտահայտել նույն նշանով։

Առաջարկվում է, որ մենք իրենց նշանակալից ծառայության համար խորին երախտագիտությամբ ազատենք Երեցներ Ստենլի Գ. Էլիսին, Լարրի Լ. Լորենսին և Վ. Քրեգ Ցվիկին որպես Յոթանասունի Բարձրագույն Իշխանավորների և շնորհել նրանց պատվավոր անդամի կոչում։

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը

հայտնել այս եղբայրներին իրենց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է, որ մենք ազատենք հետևյալ տարածքային Յոթանասունականներին. Պեդրո Վ. Ադուրու, Դետլեֆ Հ. Ադլեր, Անխել Հ. Ալարկոն, Վինսոր Բալդերամա, Ռոբերտ Մ. Քոլ Քրիստոֆեր Չարլզ, Ջեն Ռ. Քիդեստեր, Ռալֆ Լ. Դյուզնուպ, Անգել Ա. Դուարտե, Պիտեր Ֆ. Էվանս, Ֆրանցիսկո Դ. Բ. Գրանժա, Յուրի Ա. Գուշչին, Քլիֆորդ Թ. Հերբերտսոն, Անիֆիոկ Ուդո Ինյոն, Լուիզ Մ. Լեյլ, Ալեխանդրո Լոպես, Լ. Ժան Կլոդ Մաբայա, Դեկլան Օ. Մադու, Ալեքսանդր Թ. Մեստրե, Ջարեդ Ռ. Օկամպո, Էնդրյու Մ. Օրիորդան, Խեսուս Ա. Օրտիս, Աբենիր Վ. Պաժարո, Միու Հոնգ Պոն, Ռոբերտ Ս. Ռիհեն, Ջորջ Լուիս Ռեմոռ, Խորխե Լ. Սալդիվվար, Կիրո Շմեյլ, Ալին Սպանոս, Մորոնին Բ. Տորգան, Սթիվեն Լ. Տորոնտո և Ռիկարդո Վալլադարես:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել նրանց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է, որ հաստատենք Թորբան Էնգբերգին որպես Տարածքային Յոթանասունական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանավորները, Տարածքային Յոթանասունականները և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Եթե կան դեմ քվեարկողներ, արտահայտեք նույն նշանով:

Ովքեր դեմ քվեարկեցին որևէ առաջադրմանը, խնդրում ենք զրուցել ձեր ցցի նախագահի հետ:

Եղբայրներ և քույրեր, երախտապարտ ենք ձեզ Եկեղեցու ղեկավարների համար ձեր շարունակական հավատքի և աղոթքների համար: ■

**Երեց Գարի Ի. Սթիվենսոն**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Հոգևոր խավարում

*Թույլ մի տվեք, որ կյանքի հոգսերը ստվերեն երկնային լույսը:*

Այս տարվա օգոստոսի 21-ին երկու եզակի իրադարձություններ տեղի ունեցան, որոնք աշխարհումշատ մարդկանց ուշադրությունը գրավեցին: Առաջինը՝ սիրելի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի 90-ամյա տարեդարձի տոնակատարությունն էր: Այդ ժամանակ ես հանձնարարությամբ Խաղաղ օվկիանոսի տարածքում էի և հուզմունք ապրեցի, որ Ավստրալիայի, Վանուատուի, Նոր Զելանդիայի և Ֆրանսիական Պոլոնեզիայի Սրբերը ոչ միայն տեղյակ էին մարգարեի հոբելյանից, այլև տոնում և ուրախանում էին: Ես բախտավոր էի, որ մասնակցեցի լ այդ փառահեղ անձի հանդեպ նրանց հավատքի ջերմ արտահայտությանը: Ինչ ոգեշնչումէ տեսնել, թե ինչպես են Վերջին Օրերի Սրբերը կապված իրենց մարգարեի հետ:

Նախագահ Մոնսոնը, իհարկե, երախտապարտ լինելով բոլորին, ովքեր ցանկանում են շնորհավորել իր ծնունդը, նկարագրել է ծննդյան տարեդարձի լավագույն նվերը. «Գտեք մի մարդու, ով նեղության մեջ է, հիվանդ է կամ միայնակ և մի լավ բան արեք նրա համար: Իմ խնդրանքը սա է»:[1] Մենք սիրում և աջակցում ենք Ձեզ, Նախագա՛հ Մոնսոն:

### Արևի խավարում

Այդ նույն օրը տեղի ունեցած մյուս հազվադեպ ու երկնային իրադարձությունը, որ աշխարհումգրավել էր միլիոնավոր մարդկանց ուշադրությունը, արևի ամբողջական խավարումն էր: Վերջին 99 տարիներին առաջին անգամ էր նման խավարում անցնում ողջ Միացյալ Նահանգներով:[2] Երբևէ տեսե՞լ եք արևի խավարում: Գուցե մի քիչ մանրամասն նկարագրեմ այդ երևույթը:

Ամբողջական խավարում տեղի է ունենում այն ժամանակ, երբ լուսինը հայտնվում է երկրագնդի և արևի միջև, գրեթե ամբողջությամբ խոչընդոտելով արևից արտացոլվող լույսի թափանցումը:[3] Ինձ համար զարմանալի է նման փաստի հնարավորությունը: Համեմատության համար, եթե պատկերացնենք, թե արևը սովորական հեծանիվի անիվի չափ է, ապա լուսինը, մի փոքր խճաքարի չափ հազիվ թե լինի:

Որքանո՞վ է հնարավոր, որ ջերմության, լույսի ու կյանքի այդ աղբյուրըամբողջությամբ խավարիայդքան աննշան չափի մի բանից:

Թեև արևը լուսնից 400 անգամ մեծ է, այն նաև 400 անգամ հեռու է երկրից:[4] Այդ երկրաչափությունը երկրի տեսանկյունից արևը և լուսինը գրեթե մեկ չափսի է դարձնում: Եվ երբ երկուսը մի հավասար գծի վրա են հայտնվում, լուսինը, կարծես, ամբողջությամբ խավարեցնում է արևը: Ամբողջական խավարման գոտում եղած իմ ընկերներն ու ընտանիքի

անդամները նկարագրում էին, թե ինչպես էր լույսը փոխվել խավարով, ինչպես էին աստղեր հայտնվել ու թռչունները դադարել էին երգել: Սկսել էր ցրտել, քանի որ խավարման ժամանակ օդի ջերմաստիճանը Ֆարենհեյթի սանդղակով կարող է իջնել ավելի քան 20 աստիճանով (11 աստիճան Ցելսիուսով):[5]

Նրանք նկարագրում էին, որ ունեիներկյուղածության զգացում, զարմանք, անգամ անհանգստություն, գիտենալով, որ խավարումը իր հետ վտանգներ էբերում: Ինչևէ, նրանք բոլորը զգուշություն էին դրսևորել, որպեսզի խուսափեն տեսողության անդառնալի վնասներից ու այսպես կոչված «արևի խավարման կուրությունից»: Անվտանգությունն ապահովել էր ակնոցը, որն ուներ հատուկ զտված ոսպնյակներ, որոնք աչքերը պաշտպանում են հավանական վնասից:

**Նմանություն**

Ինչպես որ չափսերով շատ փոքր լուսինը կարող է փակել հսկայականարևը, մարելով նրանից բխող լույսն ու ջերմությունը, նմանապես կարող է *հոգևոր* խավարում տեղի ունենալ, եթե թույլ տանք, որ մեր հայացքը այնքան մոտենա կյանքի ամենօրյա փոքրիկ խոչընդոտող անախորժություններին, որ այլևս տեսանելի չլինի Հիսուս Քրիստոսից բխող լույսի ու Նրա ավետարանի մեծությունը, պայծառությունն ու ջերմությունը:

Երեց Նիլ Ա. Մաքսվելը այս համանմանությանն ավելի խորություն է տվել, երբ ասել է. «մարդու բթամատի պես անգամ փոքր բանը աչքին շատ մոտեցնելիս կարող է տեսողությունից ծածկել չափազանց մեծ արևը: Սակայն արևը դեռ իր տեղում է: Մարդն ինքն է իրեն կուրացնում: Երբ այլ բաների վրա չափից շատ ուշադրություն ենք դարձնում ու նրանց դնում ենք առաջին պլանում, մենք չենք կարողանում տեսնել երկնային բաները»:[6]

Հասկանալի է, որ մեզանից ոչ ոք գիտակցաբար չի ցանկանա փակել երկնքի մեր տեսողությունը կամ թույլ տալ, որ մեր կյանքում հոգևոր խավարում տեղի ունենա: Թույլ տվեք կիսվել մի քանի մտքով, որ հնարավոր է օգնի կանխել մեզ անդառնալի հոգևոր վնաս պատճառող հոգևոր խավարումը:

**Ավետարանի դասարաններ. պահպանեք ավետարանի հեռանկարը**

Հիշո՞ւմ եք հատուկ ակնոցների իմ նկարագրությունը, որն օգտագործվում է արևի խավարումը դիտող մարդկանց պաշտպանելու կամ նույնիսկ խավարման կուրությունից պաշտպանվելու համար: Հոգևոր խավարմանը Հոգու պաշտպանիչ ու մեղմացուցիչ ոսպնյակների միջով նայելը մեզ օգնում է տեսնել ավետարանի տեսանկյունից, ինչը մեզ պաշտպանում է հոգևոր կուրությունից:

Եկեք դիտարկենք մի քանի օրինակներ: Մարգարեների խոսքերը սրտում և Սուրբ Հոգու խորհուրդներն ականջներում, մենք կարող ենք նայել մասամբ արգելափակված երկնային լույսին «ավետարանի ակնոցների» միջով՝ խուսափելով հոգևոր խավարման վնասից:

Այդպիսով, ինչպե՞ս ենք դնում ավետարանի մեր ակնոցը: Ահա մի քանի օրինակ. Ավետարանի դասարանները մեզ տեղեկացնում են, որ Տիրոջ ցանկությունն է, որ մենք ամեն շաբաթ ճաշակենք հաղորդությունից, ուսումնասիրենք սուրբ գրությունները և ամեն օր աղոթենք: Մեզ տեղեկացնում են նաև, որ սատանան մեզ կգայթակղի չկատարել Տիրոջ այդ ցանկությունները: Գիտենք, որ նրա օրակարգն է՝ շեղումներով ու աշխարհիկ գայթակղություններով փորձել սահմանափակել ընտրելու մեր կարողությունը: Անգամ Հոբի ժամանակներում, հավանաբար, կային մարդիկ, որ հոգևոր խավարի մեջ էին՝ այսպես նկարագրված. «Նրանք ցերեկով մութի են հանդիպում, եւ ինչպէս թէ գիշերով խարխափում են կէսօրին»:[7]

Եղբայրներ և քույրեր, խոսելով ավետարանի ակնոցների մասին, խնդրում եմ նկատեք. ես չեմ առաջարկում, որ անտեսենք այն դժվարությունները, որոնց հանդիպում ենք աշխարհում ու չխոսենք դրանց մասին կամ երանությամբ քայլենք՝

անտեսելով առջևում եղած հակառակորդի թակարդներն ու չարիքները: Ես չեմ խոսում աչքակալներ կրելու մասին, այլ ընդհակառակը: Ես առաջարկում եմ, որ կյանքի մարտահրավերներին նայենք ավետարանի ոսպնյակների միջով: Երեց Դալլին Հ. Օուքսը նկատել է, որ «հեռանկար ունենալը բոլոր համապատասխան տեղեկությունները իմաստալից հարաբերությունների մեջ տեսնելու կարողությունն է»:[8] Ավետարանի հեռանկարը բացում է հավերժական բնապատկերի մեր տեսադաշտը:

Երբ դնում ես ավետարանի ակնոցը, տեսնում ես, որ առաջնահերթություններին, խնդիրներին, գայթակղություններին ու անգամ սխալներին նայելու քո կիզակետն ու տեսողությունը ընդլայնվում է: Դու ավելի պայծառ լույս ես տեսնում, որ առանց ակնոցների չէիր տեսնում:

Հեգնական է, բայց ոչ միայն բացասականն է հոգևոր խավարում առաջացնում մեր կյանքում: Հիացմունքի արժանի և դրական նախաձեռնությունները, որոնց նվիրվում ենք, նույնպես կարող են չափից շատ կլանել մեր ուշադրությունը և փակել ավետարանի լույսն ու խավար առաջացնել: Այդ վտանգների ու շեղումների թվում կարող են լինելկրթությունն ու բարգավաճումը, իշխանությունն ու հեղինակությունը, փառասիրությունը, անգամ՝ տաղանդներն ու շնորհները:

Նախագահ Դիտեր Ֆ Ուխդորֆը ուսուցանել է, որ «ցանկացած

արժանիք, եթե հասնում է ծայրահեղության, կարող է չարիքի վերածվել: . . . Կա մի աստիճան, որից հետո նվաճումը պարծանք չէ ու փառքի պսակը այլևս բեռ է»:[9]

Թույլ տվեք ավելի մանրամասն օրինակներ բերել, որոնք կարող են խթան հանդիսանալ, որ խուսափենք մեր հոգևոր խավարումներից:

**Սոցիալական ցանցեր**

Մի քանի ամիս առաջես ելույթ ունեցա ԲՅՀ կանանց համաժողովի ժամանակ:[10] Ես նկարագրեցի, թե հաղորդակցականտեխնոլոգիաները, ներառյալ սոցիալական ցանցերը, ինչպես են նպաստում «Փրկիչի մասին գիտելիքը . . . բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների և մարդկանց մեջ» տարածելու գործին:[11] Այդ տեխնոլոգիաների թվում են Եկեղեցու նմանատիպ կայքերը՝ LDS.org և Mormon .org, շարժական կապի նմանատիպ ծրագրերը՝ Gospel Library, Mormon Channel, LDS Tools և Family Tree և սոցիալական ցանցերի նման հարթակները՝ Facebook, Instagram, Twitter և Pinterest: Այդ հարթակներում ծնվել են հարյուր միլիոնավոր հավանումներ, կիսվելու ցանկություններ, դիտումներ, թվիտների (կարճ հաղորդագրությունների) փոխանցումներ ու կապակցումներ և դարձել են ավետարանը ընտանիքի անդամների, ընկերների ու գործընկերների հետ կիսելու շատ արդյունավետ ու որակյալ միջոցներ:

Սակայն այդ տեխնոլոգիաների լավ կողմերի ու պատշաճ օգտագործման հետ մեկտեղ, կա վտանգ, որ դրանց չափից շատ մոտենալը հոգևոր խավարում կառաջացնի, և հնարավոր է, արգելափակի ավետարանի պայծառ լույսն ու ջերմությունը:

Սոցիալական ցանցերի, շարժական կապի ծրագրերի ու խաղերի օգտագործումը կարող է չափից շատ ժամանակ խլել և քչացնել դեմ առ դեմ շփումը: Անհատական շփման այդ կորուստը կարող է ազդել ամուսնությունների վրա, գրավել արժեքավոր հոգևոր փորձառությունների տեղը և խոչընդոտել սոցիալական հմտությունների զարգացմանը, հատկապես երիտասարդների շրջանում:

Երկու վտանգ կա սոցիալական ցանցերում, որոնցից մեկը իդեալականացված իրականությունն է, մյուսը անզորություն ներշշող համեմատությունները:

Սոցիալական ցանցերում հրապարակված շատ նկարներ (գրեթե մեծամասամբ) միտված են կյանքը ներկայացնել լավագույն, հաճախ անիրականգույներով: Բոլորիս էլ հանդիպել են տան կահավորանքի գեղեցիկ պատկերներ, հիասքանչ հանգստավայրեր, ժպտացող ինքնալուսանկարներ, ընտիր ճաշատեսակների պատրաստում ու անթերի կազմվածքի անհասանելի թվացող նկարներ:

Ահա, օրինակ, դուք կարող եքնման մի նկար տեսնել սոցիալական ցանցի ինչ-որ մեկի էջում: *Ինչևէ, այն*




*Հասարակական լրատվամիջոցներում տեղադրված նկարը չէր արտացոլում լիարժեք պատկերը նրա, ինչը տեղի էր ունենում իրական կյանքում:*

*ցույց չի տալիս* իրական *կյանքում տեղի ունեցողի* ամբողջական պատկերը:

Սեփական միջակ թվացող ապրելակերպը սոցիալական ցանցերում ներկայացվող՝ լավ մշակված, հիանալի ձևավորված ուրիշների կյանքի հետ համեմատությունը կարող է մեզ հուսալքության, նախանձի և նույնիսկ ձախողումների զգացում հաղորդել:

Մի կին, որ կիսվել է իր բազմաթիվ գրառումներով, թերևս մասամբ կատակելով, գրել է. «Ո՞րն է երջանիկ լինելու իմաստը, եթե չես պատրաստվում այն ի ցույց դնելուրիշներին»:[12]

Ինչպես քույր Բոննի Լ. Օսկարսոնը հիշեցրեց մեզ այս առավոտ, հաջողությունը կյանքում կախված չէ նրանից, թե որքան շատ են հավանում քո նկարները, ոչ էլ նրանից, թե որքան ընկերներ կամ հետևորդներ ունես սոցիալական ցանցերում: Ինչևէ, հաջողությունը կապված է մարդկանց հետ իմաստալից շփմանու նրանց կյանքին մի լույս ավելացնելուհետ:

Հուսով եմ, կարող ենք սովորել ավելի իրական լինել, ավելի շատ հումորով մոտենալ և ավելի քիչ հուսահատվել, երբ հանդիպում ենք նկարների, որոնք իրականությունը իդեալականացնում են և շատ հաճախ հուսահատեցնող համեմատությունների են մղում:

Համեմատությունը, ակնհայտորեն, միայն մեր ժամանակների նշաններից չէ, այն եղել է նախնախկինում: Պողոս Առաքյալը իր ժամանակակիցներինզգուշացրել է, որ «իրանցով իրանց անձերը չափելով, եւ իրանց անձերը իրանց հետ բաղդատելով»,[13] մարդիկ իմաստուն չեն վարվում:

Հաղորդակցականտեխնոլոգիաների պատշաճու ոգեշնչված այդքան շատ հնարավորություններն իմանալով, եկեք դրանքօգտագործենք ուսուցանելու, ոգեշնչելու, վեհանալու և մարդկանց կատարելագործման քաջալերելու նպատակով, ոչ թե մեր իդեալականացված անիրական կերպարները ներկայացնելու նպատակով: Եկեք նաև ուսուցանենք և ցուցադրենք տեխնոլոգիաների

արդար օգտագործումը աճող սերնդին և նախազգուշացնենք դրա հետ կապված վտանգների և դրանց կործանարար օգտագործման մասին: Սոցիալական լրատվամիջոցներինավետարանի ոսպնյակներով նայելը կարող է կանխել մեր կյանքի հոգևոր խավարումը:

### Հպարտություն

Այժմ եկեք անդրադառնանք հպարտության դարավոր գայթակղության քարին: Հպարտությունը հակադիր է խոնարհությանը, որը Տիրոջ «կամքին հնազանդվելու ցանկությունն է»:[14] Երբ հպարտ ենք, մենք միտում ունենք փառքը մեզ վերագրելու, ոչ թե ուրիշներին կամ Տիրոջը: Հպարտությունը մրցակցական է. այն ձգտում է ձեռք բերել ավելին և ենթադրում է, որ մենք ավելի լավն ենք, քան ուրիշները: Հպարտությունը հաճախ առաջացնում է բարկության և ատելության զգացում. այն դրդում է ոխ պահել կամ չներել: Ինչևէ, հպարտությունը կարելի է հաղթահարել Քրիստոսանման հատկանիշով՝ խոնարհությամբ:

Ընտանիքի անմիջական անդամների ու հարազատների միջև, *հատկապե՛ս* ընտանիքի անմիջական անդամների ու հարազատների միջև, նույնիսկ ամուսինների ու կանանց միջև կապերը, խոնարհության դեպքում զարգանում են, իսկ հպարտության դեպքում՝ փակուղում հայտնվում:

Տարիներ առաջ մանրածախ վաճառքի մեծ ցանցի մի գործադիր տնօրեն ինձ կանչեց, որպեսզի խոսի իր ընկերության մասին, որը վաճառում էին իր մրցակիցներից մեկին: Նա և գլխավոր գրասենյակի աշխատակազմից շատերը չափազանց անհանգստացած էին, որ կարող էին կորցնել իրենց աշխատանքը: Իմանալով, որ ես լավ ծանոթ եմ ձեռք բերող ընկերության ղեկավարության հետ, նա հարցրեց, թե արդյոք չէի ներկայացնի ու երաշխավոր կանգնեի նրա համար, նույնիսկ նրա համար հանդիպում կազմակերպեի: Ապա ավարտեց հետևյալ կատակով. «Գիտե՞ս ասացվածքը: Հեզերը տեղ չունեն արևի տակ»:

Ես հասկացա, որ նրա ասածը ավելին էր, քան հումորը: Ես ընդունեցի հումորը: Սակայն կար մի կարևոր սկզբունք, ինչը զգացի, որ կիրառելի էր տվյալ դեպքում: Ես պատասխանեցի. «Իրականում այդպես չի ասված: Փաստորեն, ամենևին հակառակն է: «Հեզերը կժառանգեն երկիրը»[15], – այդպես է ասված»:

Եկեղեցում ունեցած իմ փորձառության, ինչպես նաև մասնագիտական ողջ կարիերայի ընթացքում իմացած ամենավսեմ, առավել արդյունավետ մարդկանցից ոմանք եղել են ամենահեզ ու խոնարհ մարդիկ:

Խոնարհությունն ու հեզությունը տեղավորվում են մի ձեռնոցում: Եկեք հիշենք, որ «ոչ մեկն ընդունելի չէ Աստծո առաջ, բացի հեզից և սրտով խոնարհից»:[16]

Աղոթում եմ, որ ընդունելով խոնարհության առաքինությունը, մենք ջանանք խուսափել հպարտության հոգևոր խավարումից:

### Վերջաբան

Ամփոփելով՝ արևի խավարումը, իրոք, բնության զարմանալի երևույթ է, որի ժամանակ համեմատաբար չնչին չափսի մի առարկա կարող է լիովին մարել արևի գեղեցկությունը, ջերմությունը և լույսը՝ առաջացնելով խավար ու սառնություն:

Նմանատիպ երևույթ կարող է տեղի ունենալ հոգևոր իմաստով, երբ փոքր ու աննշան հարցերը գրավում են մեր ուշադրությունն ու արգելափակում են Հիսուս Քրիստոսի ավետարանի գեղեցկությունը, ջերմությունն ու երկնային լույսը՝ փոխարինելով այն սառը մթությունով:

Արևի խավարման գոտում գտնվողների տեսողությունը պաշտպանելու համար նախատեսված ակնոցը կարող է կանխել հարատև վնասից և նույնիսկ կուրությունից:[17] Ավետարանի սկզբունքների ու արարողությունների մասին գիտելիքից ու վկայությունից բաղկացած ավետարանի ակնոցը ցույց է տալիս ավետարանի մի հեռանկար, ինչը կարող է պաշտպանություն ապահովել մի մարդու, ով հոգևոր խավարում է ապրում:

Եթե դուք հայտնաբերել եք մի բան, որը սահմանափակում է ավետարանի լույսն ու ուրախությունը *ձեր* կյանքում, ես հրավիրում են նայել նրան ավետարանի հեռանկարով: Նայեք նրան ավետարանի ոսպնյակներով և աչալուրջ եղեք, թույլ չտալով, որ կյանքի աննշան ու անկարևոր բաները փակեն երջանկության մեծ ծրագրի ձեր հավերժական տեսադաշտը: Մի խոսքով՝ թույլ մի տվեք, որ կյանքի հոգսերը ստվերեն երկնային լույսը:

### Վկայություն

Բերում եմ իմ վկայությունը, որ անկախ նրանից, թե ինչն է մեզ խանգարում տեսնել ավետարանի լույսը, լույսը դեռ իր տեղում է: Ջերմության, ճշմարտության ու պայծառ լույսի այդ աղբյուրը Հիսուս Քրիստոսի ավետարանն է: Ես վկայում եմ սիրառատ Երկնային Հոր, Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի և Նրա Որդու դերի մասին՝ որպես մեր Փրկիչ ու Քավիչ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

### ՀՂՈՒՄՆԵՐ


1. Thomas S. Monson, in Sarah Jane Weaver, “What Gift Does President Monson Want for His 90th Birthday?” *Deseret News,* Aug.17, 2017, deseretnews.com.
2. Տես Christina Zdanowicz and Judson Jones, “An Eclipse Will Cross the US for the First Time in 99 Years,” July 24, 2017, cnn.com.
3. Տես «Eclipse: Who? What? Where? When? and How?» eclipse2017.nasa.gov.
4. Տես EarthSky in Space, “Coincidence That Sun and Moon Seem Same Size?” earthsky.org.
5. Տես Brian Lada, “5 Surprising Effects the Total Solar Eclipse Will Have besides Darkness,” accuweather.com.
6. Neal A. Maxwell, *Of One Heart: The Glory of the City of Enoch* (1975), 19.
7. Հոբ 5.14
8. Dallin H. Oaks, speech presented at Salt Lake Bonneville Young Single Adult Stake fireside, Salt Lake City, Utah, Feb. 8, 2015.
9. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Ամենակարևոր բաների մասին», *Լիահոնա,* նոյ. 2010, 20:
10. Տես Gary E. Stevenson, “The Knowledge of a Savior” (Brigham Young University Women’s Conference, May 5, 2017).
11. Մոսիա 3.20
12. Jade, “The Obsession of Creating a Picture-Perfect Life on Social Media.”
13. Բ Կորնթացիս 10.12
14. Տես*Քարոզիր Իմ Ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց (2004), 135:*
15. Մատթեոս 5.5, 3 Նեփի 12.5
16. Մորոնի 7.44
17. Տես “Solar Eclipse and Your Eyes,” preventblindness.org.

**Ստեֆեն Վ. Օուենն**
Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահ

# Ապաշխարությունը միշտ դրական է

*Այն պահին, երբ մենք ոտք ենք դնում ապաշխարություն տանող ուղու վրա, մեր կյանք ենք հրավիրում Փրկիչի քավիչ զորությունը։*

Տարիներ առաջ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիններկա գտնվեց մի համալսարանի ֆուտբոլային խաղին։ Նա այնտեղ էր, որպեսզի հայտարարեր, որ մարզադաշտն անվանակոչվելու էսիրելի մարզիչի անունով, ով երկար տարիներ աշխատել էր թիմի հետ և թոշակի պետք է անցներ։ Ի պատիվ իրենց մարզիչի, բոլոր ջանքերը գործի դնելով, թիմը ցանկանում էր հաղթել այդ խաղը։ Նախագահ Հինքլիին հրավիրեցին այցելել նրանց հանդերձարան ևմի քանի խրախուսական խոսքեր ասել։ Նրա խոսքերից ոգեշնչված, թիմն այդ օրը դաշտ մտավխաղը հաղթելու մտադրությամբ, և մրցաշարն ավարտեց հաղթական ցուցանիշով։

Այսօր ես կկամենայի խոսել այն մարդկանց հետ, ովքեր անհանգստանում են, որ իրենք «չեն հաղթում այս» կյանքում։ Իհարկե, ճշմարտությունն այն է, որ «ամենքը մեղանչեցին, և Աստուծո փառքիցը պակասուած են»։[1] Չնայած, հնարավոր է, որ սպորտի մեջ անպարտելի մրցաշարերլինեն, բայց կյանքում միշտ չէ, որ այդպես է։ Սակայն, ես վկայում եմ, որ Փրկիչ Հիսուս Քրիստոսն իրականացրեց կատարյալ Քավություն և շնորհեց մեզ ապաշխարության պարգևը՝ դեպի հույսի կատարյալ պայծառություն և հաջողակ կյանք տանող հետադարձ ուղին։

### Ապաշխարությունը երջանկություն է բերում

Շատ հաճախ ապաշխարությունը համարում ենք ինչ-որ տխուր ու ճնշող մի երևույթ։ Բայց Աստծո ծրագիրը երջանկության ծրագիր է, այլ ոչ տխրության ծրագիր։ Ապաշխարությունը վեհացնում և ազնվացնում է։ Մեղքն է, որ ծնում է դժբախտություն։[2] Ապաշխարությունը դրանից խուսափելու մեր ճանապարհն է։ Ինչպես Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն է բացատրել. «Առանց ապաշխարության կյանքում իրական առաջխաղացում չի լինի։ . . . Միայն ապաշխարության միջոցով է մեզ համար հասանելի դառնում Հիսուս Քրիստոսի քավիչշնորհը և փրկությունը։ Ապաշխարությունը . . . ուղղորդում է դեպի ազատություն, վստահություն և խաղաղություն»։[3] Իմ ուղերձը բոլորին, հատկապես երիտասարդներին, այն է, որ ապաշխարությունը միշտ դրական է։

Երբ մենք խոսում ենք ապաշխարության մասին, մենք չենք խոսում պարզապես ինքնազարգացման ջանքերի մասին։ Ճշմարիտ ապաշխարությունն ավելին է քան դա, այն ոգեշնչված է Տեր Հիսուս Քրիստոսիև մեր մեղքերը ներելու Նրա զորության հանդեպ հավատքով։ Ինչպես ուսուցանել է Երեց Դեյլ Գ. Ռենլանդը. «Առանց Քավիչի, . . . ապաշխարությունը դառնում է պարզապես վարքի ողորմելի փոփոխություն»։[4] Մենք կարող ենք մեր վարքն ինքնուրույն փոխել, բայց միայն Փրկիչը կարող է մաքրել մեզ և բարձրացնել մեր բեռները, հնարավորություն տալով մեզ վստահությամբ ու զորությամբ հետամուտ լինել հնազանդության ուղուն։

Ապաշխարության ուրախությունն ավելին է, քան արժանապատիվ կյանքով ապրելու ուրախությունը: Դա ներելու ուրախություն է, կրկին-մաքուր լինելու և Աստծուն մոտենալու ուրախություն: Եթե դուք զգաք այդպիսի ուրախություն, ապա դրանից հետոոչ մի զգացում չի կարող փոխարինել այդ ուրախությանը:

Ճշմարիտ ապաշխարությունը ոգեշնչում է մեզ, որպեսզի մեր հնազանդությունը դարձնենքպարտավորվածություն՝ մի ուխտ, որը սկսվում է մկրտությամբ և ամեն շաբաթ թարմացվում է Տիրոջ ընթրիքի՝ հաղորդության շնորհիվ: Ապա, մենք ստանում ենք խոստում, որ մենք կարող ենք «Նրա Հոգին միշտ [մեզ] հետ ունենալ»,[5] այն ուրախության և խաղաղության հետ միասին, որը ստանում ենք Նրա մշտական ընկերակցության շնորհիվ: Դա է ապաշխարության պտուղը և դա է ապաշխարությունը դարձնում բերկրալի:

### Ապաշխարությունը պահանջում է հաստատակամություն

Սիրում եմ անառակ որդու առակը:[6] Ինչ-որ մի նշանակալից իմաստ կա այդ վերջին պահին, երբ անառակ որդին «ինքն իրան եկավ»: Խոզաբնում նստած, նա ցանկանում էր «իր փորը լցնել այն եղջյուրներով, որ խոզերն ուտում էին», երբի վերջո հասկացավ, որվատնել էր ոչ միայն իր հոր ժառանգությունը, այլև իր կյանքը: Հավատք ունենալով, որ իր հայրն իրեն հետ կընդունի, եթե ոչ որպես որդի, այլ գոնե որպես ծառա, նա որոշեց իր ապստամբ կյանքը թողնել անցյալում և գնալ տուն:

Ես երկար եմ մտածել դեպի տուն տանող որդու երկար ճանապարհի մասին: Կայի՞ն պահեր, երբ նա կասկածում ու մտածում էր. «Ինչպե՞ս իմ հայրը կընդունի ինձ»: Միգուցե, նա մի քանի քայլ է արելիետ՝ դեպի խոզաբունը տանող ուղին: Պատկերացրեք, թե պատմությունն ինչպիսիավարտ կունենար, եթե նա հանձնվեր: Բայց հավատքը ստիպեց նրան առաջ շարժվել և հավատքը ստիպեց, որ հայրը համբերատար սպասի և նայի ճանապարհին, մինչև.

«Եվ դեռ որ նա հեռու էր, հայրը տեսավ նորան և գութը շարժեց. և վազեց՝ նորա վզովն ընկավ, և համբուրեց նորան:

Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առաջին, և այլևս արժանի չեմ քո որդի կոչվելու:

Հայրն էլ ասեց իր ծառաներին. Առաջի պատմուճանը հանեցէք եւ հագցրէք նորան, եւ մատանի դրէք նորա ձեռքին, եւ կօշիկներ նորա ոտներին. . . .

Որ այս իմ որդին մեռած էր, եւ կենդանացաւ. Եւ կորած էր, եւ գտնուեցաւ»:

### Ապաշխարությունը բոլորի համար է

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք բոլորս էլ նման ենք անառակ որդուն: Մենք բոլորս էլ ստիպված ենք «ինքներս մեզ գալ», սովորաբար մեկից ավել անգամներ և ընտրելտուն տանող հետադարձճանապարհը: Դա մի ընտրություն է, որը մենք կատարում ենք ամեն օր մեր կյանքի ընթացքում:

Հաճախ ապաշխարությունը համեմատում ենք վշտալից մեղքերի հետ, որոնք պահանջում են «հզոր փոփոխություն»:[7] Բայց ապաշխարությունը բոլորի համար է, ովքեր մոլորվել են «արգելված ուղիներում և [կորել] են»,[8] ինչպես նաև նրանց համար, ովքեր «ներս են մտել նեղ և անձուկ արահետը» և այժմ կարիք ունեն «առաջ շարժվելու»:[9] Ապաշխարությունը բերում է մեզ ճշմարիտ ուղու վրա և օգնում է մեզ մնալ ճշմարիտ ուղու վրա: Դանրանց համար է, ովքեր նոր են սկսում հավատալ և նրանց համար է, ովքեր երկար են հավատացել, ինչպես նաև նրանց համար, ովքեր պետք է նորից հավատան: Ինչպես ուսուցանել է Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը. «Մեզանից շատերը հստակ հասկանում են, որ Քավությունը մեղավորների համար է: Այնուամենայնիվ, ես այնքան էլ վստահ չեմ, որ մենք գիտենք և հասկանում ենք, որ Քավությունը նաև սրբերի համար է՝ լավ տղամարդկանց և կանանց համար, ովքեր հնազանդ են, արժանի ու . . . ձգտում են դառնալ ավելի լավը»:[10]

Վերջերս այցելեցի միսիոներների վերապատրաստման կենտրոն, երբ նորակոչ միսիոներների խումբ էր ժամանել: Ես խորապես հուզվեցի, երբ նայեցի և լույս նկատեցինրանց աչքերում: Նրանք այնքան լուսավոր, երջանիկ էին ու խանդավառությամբ էին լցված: Ապա գլխումս մի միտք ծագեց. «Նրանք հավատք են գործադրել ապաշխարության հանդեպ: Դրա շնորհիվ է, որ նրանք ուրախ են ու հույսով լեցուն»:

Ես չեմ կարծում, որ իրենց անցյալում նրանք լուրջ մեղքեր են գործել, բայց կարծում եմ, որ նրանք գիտեն՝ինչպես ապաշխարել. նրանք

հասկացել են, որ ապաշխարությունը դրական սկզբունք է նպատրաստ էին ու ցանկանում էին այդ ուրախալի ուղերձով կիսվել աշխարհի հետ:

Ահա թե ինչ է պատահում, երբ մենք զգում ենք ապաշխարության ուրախությունը: Հիշեք Ենովսի օրինակը: Նա «իր հետ գալու» իր պահերն ունեցավ, իսկ երբ նրա «հանցանքը սրբվեց», նա ի սրտե ցանկացավ բարիք անել ուրիշներին: Ենովսն իր մնացած կյանքում բոլոր մարդկանց հրավիրեց ապաշխարության և «հրճվեց դրանում առավել, քան այն, ինչ աշխարհիկ է»:[11] Ապաշխարությունը կարող է դա անել. այն մեր սրտերը շրջում է դեպի մեր մերձավորները, քանի որ մենք հասկանում ենք, որ ուրախության զգացումը բոլորի համար է:

**Ապաշխարությունն անհրաժեշտ է ողջ կյանքի ընթացքում**

Ես մի ընկեր ունեմ, ով մեծացել էքիչ ակտիվ Վերջին Օրերի Սրբերի ընտանիքում: Պատանեկության տարիներին նա նույնպես «իր հետ եկավ» և որոշեց պատրաստվել միսիայի:

Նա դարձավ գերազանց միսիոներ: Տուն վերադառնալուն նախորդօրը միսիայի նախագահը հարցազրույց անցկացրեց նրա հետ և խնդրեց նրան վկայություն բերել: Նա բերեց իր վկայությունը, և արցունքախառը գրկախառնությունից հետո նախագահն ասաց. «Երեց, ամիսներ անց դու կարող ես մոռանալ կամ հերքել քո արտասանած վկայությունը, եթե չշարունակես անել այն նույն գործերը, որոնք առաջին հերթին ամրապնդել են քո վկայությունը»:

Ավելի ուշ այդ ընկերն ինձ հետ կիսվել է, որ միսիայիցտուն վերադառնալուց ի վեր նա ամեն օր աղոթել ու կարդացել է սուրբ գրությունները: Շարունակաբար «սնուցվելով Աստծո բարի խոսքով» նա մնացել է «ճշմարիտ ուղու վրա»:[12]

Նրանք, ովքեր պատրաստվում են լիաժամկետ միսիայի և նրանք, ովքեր վերադառնում են միսիայից, գրի առե՛ք: Բավարար չէ միայն վկայություն ստանալ, դուք պետք է պահպանեքև ամրապնդեք այն: Յուրաքանչյուր միսիոներ հասկանում է, որ հեծանիվի ոտնակը չպտտելու դեպքում այն կընկնի, իսկ եթե դուք դադարեք սնուցել ձեր վկայությունը, այն կթուլանա: Այդ նույն սկզբունքը կիրառելի է ապաշխարության պարագայում. այն կյանքի ողջ ընթացքում կիրառվող սկզբունք է, այլ ոչ թե կյանքում մեկ անգամ կիրառվող սկզբունք:

Բոլոր նրանց, ովքեր ներում են փնտրում՝ երիտասարդնե՛ր, երիտասարդ ամուրինե՛ր, ծնողնե՛ր, տատիկ ու պապիկնե՛ր և այո, նույնիսկ, նախապապե՛ր ու նախատատե՛ր, ես հրավիրում եմ գալ տուն: Հիմա է սկսելու ժամանակը: Մի հետաձգեք ապաշխարության ձեր օրը:[13]

Ապա, երբ այդ որոշումը կայացնեք, շարունակեք հետևել այդ ուղուն: Մեր Հայրը սպասում է և անհամբեր ցանկանում է դիմավորել ձեզ: Նրա ձեռքերը«ողջ օրվա ընթացքում» պարզված են ձեզ համար:[14] Այդ պարգևի համար արժե ջանք գործադրել:

Հիշեք Նեփիի այս խոսքերը. «Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք»:[15]

Երբեմն ճամփորդությունը երկար կթվա, բայց ի վերջո, դա հավերժական կյանք տանող ճամփորդություն է: Բայց դա կարող է լինել հաճելի ճամփորդություն, եթե մենք ձգտենք դրան՝ Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ հույսով: Ես վկայում եմ, որ այն պահին, երբ մենք ոտք ենք դնում ապաշխարություն տանող ուղու վրա, մեր կյանք ենք հրավիրում Փրկիչի քավիչ զորությունը: Այդ զորությունը կամրապնդի մեր ոտքերը, կընդլայնի մեր տեսլականը և քայլ առ քայլ կուժեղացնի առաջ մղվելու մեր վճռականությունը մինչև այն փառահեղ օրը, երբ մենք վերջնականապես կվերադառնանք

մեր երկնային տուն և կլսենք մեր Երկնային Հոր ձայնը, ով կասի մեզ. «Կեցցե՛ք»:[16] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Հռովմայեցիս 3.23
2. Տես Ալմա 41.10
3. Դ. Թոդ Քրիստոֆերսոն. «Ապաշխարության աստվածային պարգևը», *Լիահոնա,* նոյ. 2011, 38
4. Դեյլ Գ. Ռենլանդ «Ապաշխարություն՝ ուրախալի ընտրություն», *Լիահոնա,* նոյ. 2016, 122
5. Վարդապետություն և Ուխտեր 20.77
6. Տես Ղուկաս 15.11–32
7. Ալմա 5.12
8. 1 Նեփի 8.28
9. 2 Նեփի 31.19, 20
10. Դեյվիդ Ա. Բեդնար, «Քավությունը և մահկանացու ճամփորդությունը», *Լիահոնա,* ապր. 2012, 14
11. Տես Ենովս 1:
12. Մորոնի 6.4
13. Տես Ալմա 13.27
14. Հակոբ 6.4
15. 2 Նեփի 31.20
16. Մատթեոս 25.21

**Երեց Քվենթին Լ. Քուք**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Հավերժական ամենօրը

*Խոնարհությունը մեր նկարագիրն է և Աստծո նպատակը մեզ համար էական նշանակություն ունի։*

Բրիտանական միսիայում երիտասարդ հասակումծառայելու տարիներից ի վերինձ դուր է գալիս բրիտանական հումորը։ Երբեմն այն բնութագրվում է կյանքի հանդեպ ինքնաքննադատական, համեստ, խոնարհ մոտեցմամբ։ Օրինակներից մեկն այն է, թե ամառն ինչպես է բնութագրվում։ Բրիտանական ամառները համեմատաբար կարճ ու անկանխատեսելի են։ Ինչպես մի գրող համեստորեն ասել է. «Ես սիրում եմ բրիտանական ամառը։ Տարվա իմ սիրելի *օրն* է»։[1] Բրիտանական մուլտֆիլմերի սիրված հերոսներից մեկը առավոտյան ուշ է արթնանում իր մահճակալում և ասում է իր շներին. «Ով օրինյալ, Կարծես թե քնով անցանք ու ամառը բաց թողեցինք»[2]

Այս հումորը կարելի է նմանեցնել մեր կյանքին այս գեղեցիկ երկրագնդի վրա։ Սուրբ գրությունները հստակ նկարագրում են, որ մահկանացու մեր թանկարժեք կյանքը շատ կարճ է տևում։ Կարելի է ասել, որ հավերժության տեսանկյունից երկրային մեր կյանքի տևողությունը նույնքան կարճ է, որքան բրիտանական ամառը։[3]

Երբեմն մարդու նպատակն ու գոյությունը նույնպես նկարագրվում է խոնարհ արտահայտություններով։ Մովսես մարգարեն մեծացել էր ինչպես այսօր մի քանիսը կասեին՝ արտոնյալ պայմաններում։ Ինչպես արձանագրված է Թանկագին Մարգարիտում, Տերը, նախապատրաստելով Մովսեսին իր մարգարեական նշանակմանը, աշխարհիու արարումից ի վեր ստեղծված մարդկանց բոլոր զավակների մասին մի տեսիլք ցույց տվեց նրան։[4] Մովսեսի

մի փոքր անակնկալ արձագանքը այսպիսին էր. «Այժմ . . . գիտեմ, որ մարդը ոչինչ է, մի բան, որը երբեք չէի ենթադրել»։[5]

Դրանից հետո, աննշան լինելու Մովսեսի զգացումներին ճիշտ հակառակ, Աստված հռչակեց Իր իրական նպատակը. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»։[6]

Մենք բոլորս հավասար ենք Աստծո առաջ։ Նրա վարդապետությունը պարզ է։ Մորմոնի Գրքում կարդում ենք. «բոլորը նույնն են Աստծո համար», այդ թվում՝ «սև և սպիտակ, ստրուկ և ազատ, այր թե կին»։[7] Ուստի, բոլորը հրավիրված են գալու Տիրոջ մոտ։[8]

Ցանկացած մարդ, ով իրեն ուրիշներից բարձր է դասում Հոր ծրագրումայնպիսի հատկանիշների շնորհիվ, ինչպիսիք են՝ ռասսան, սեռը, ազգությունը, լեզուն կամ տնտեսական պայմանները, բարոյապես սխալվում է և չի հասկանում Տիրոջ իրական նպատակները մեր Հոր բոլոր զավակների համար։[9]

Ցավոք սրտի, մեր օրերում հասարակության գրեթե ամեն հատվածում մենք տեսնում ենք, որ ինքնահավանությունն ու գոռոզությունը ցույց է դրվում, մինչդեռ խոնարհությունն ու Աստծո առաջ պատասխանատվությունըվարկաբեկվում է։ Հասարակության մեծ մասը կորցրել է իր կապերը և չի գիտակցում, թե ինչու ենք մենք այս երկրի վրա։ Իրական խոնարհությունը, որը էական է Տիրոջ կողմից մեզ համար նախատեսված նպատակներին հասնելու համար, հազվադեպ երևույթ է։[10]

Կարևոր է հասկանալ Քրիստոսի խոնարհության, արդարության, բնավորության և բանականության մեծությունը, որի օրինակը տրված է սուրբ գրություններում։ Քրիստոսանման այդ հատկություններին ու հատկանիշներին օր օրի անընդհատ ձգտելու անհրաժեշտությունը թերագնահատելը անխոհեմություն է։[11]

Սուրբ գրությունները պարզաբանում են, որ չնայած այս կյանքը համեմատաբար կարճ է, սակայնանսահմանկարևոր է։ Ամուղեկը,

որ Ալմայի գործընկերն էր Մորմոնի գրքում, ասել է. «Այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն. այո, ահա, մարդկանց համար այս կյանքի օրն է իրենց գործերը կատարելու օրը»:[12] Մուլտֆիլմի հերոսի պես մենք չենք ցանկանում քնով անցնել ու բաց թողել կյանքը:

Խոնարհության Փրկիչի օրինակն ու ողջ մարդկության համար զոհաբերությունը պատմության ամենանշանակալի իրադարձությունն է: Աստվածության անդամ լինելով, Փրկիչը պատրաստակամ էր երկիր գալ որպես խոնարհ մանուկ և սկսել երկրային գոյությունը, որը ներառում էր իր եղբայրներին ու քույրերին ուսուցանելն ու բժշկելը և, ի վերջո, աննկարագրելի ցավից տառապելը Գեթսեմանիում և խաչի վրա, որպեսզի կատարյալ դարձնի Իր Քավությունը: Միրո և խոնարհության այս քայլը Քրիստոսի կողմից Նրա բարեհաճության դրսևորումն է:[13] Նա արեց այդ հանուն յուրաքանչյուր տղամարդու և կնոջ, ում Աստված ստեղծել է կամ ստեղծելու է:

Մեր Երկնային Հայրը չի ցանկանում, որ իր զավակները հուսալքվեն կամ թողնեն սելեստիալ փառքի իրենց ձգտումները: Երբ իրապես մտորում ենք Հայր Աստծո և Քրիստոս Որդու մասին, թե ով են Նրանք և ինչ են իրականացրել մեր համար, մենք լցվում ենք պատկառանքով, երկյուղածությամբ, երախտագիտությամբ և խոնարհությամբ:

### Խոնարհությունը էական դեր ունի Տիրոջ Եկեղեցու հաստատմանն օգնելու գործում

Ալման իր օրերում մի հարց է տվել, որ տեղին է այսօր. «Եթե դուք զգացել եք սրտի մի փոփոխություն, և եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո երգը, ես կկամենայի հարցնել, այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում»:[14] Ալման շարունակել է. «Կկարողանայի՞ք դուք ասել . . . եթե դուք այս պահին կանչվեիք մեռնելու, որ եղել եք բավականին խոնարհ»:[15]

Ամեն անգամ, երբ կարդում եմ Ալմա Կրտսերի կողմից պետության ղեկավարի դերը զիջելու և Աստծո խոսքի քարոզմանը նվիրվելու մասին,[16] ես տպավորվում եմ: Ակնհայտ է, որ Ալման խորը վկայություն ուներ Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի մասին և ամբողջությամբ ու անվերապահ պատասխանատվություն էր զգում Նրանց հանդեպ: Նա ուներ ճիշտ առաջնահերթություններ և խոնարհություն՝ փոխելու իր կարգավիճակը և դիրքը, որովհետև գիտակցում էր, որ Տիրոջը ծառայելն ավելի կարևոր էր:

Եկեղեցու հաստատմանը օգնելու համար բավարար խոնարհություն ունենալը մեր կյանքում շատ արժեքավոր է: Եկեղեցու պատմության մեջ բացահայտ օրինակներ կան: 1837 թվականին Մարգարե Ջոզեֆը Կիրթլենդի տաճարում ոգեշնչում ստացավ կանչել Առաքյալ Հեբեր Չ. Քիմբալին, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը տանի «Անգլիա և բացի փրկության դռներն այդ ազգի համար»:[17] Օրսոն Հայդ Առաքյալն ու ևս մի քանի հոգի նշանակվեցին ուղեկցելու նրան: Երեց Քիմբալի պատասխանն ուշագրավ էր: «Նման կարևոր առաքելության նշանակվելու միտքը իմ ուժերից վեր էր թվում: . . . Քիչ էր մնում ես խեղդվեի իմ վրա դրված բեռի ծանրությունից»:[18] Չնայած դրան, նա հանձն առավ իր առաքելությունը բացարձակ հավատքով, նվիրվածությամբ ու խոնարհությամբ:

Երբեմն խոնարհությունը կոչումներ ընդունելն է, երբ մեզ անհամապատասխան ենք զգում: Երբեմն խոնարհությունը հավատարիմ ծառայելն է, երբ զգում ենք, որ ունակ ենք ավելի պատասխանատու հանձնարարություն կատարելու: Խոնարհ ղեկավարները խոսքով ու գործով հաստատում են, որ կարևորը ծառայության պաշտոնը չէ, այլ ծառայության հավատարմությունը:[19] Երբեմն խոնարհությունը վիրավորանքը հաղթահարելն է, երբ զգացում ունենք, թե ղեկավարները կամ այլ մարդիկ արդար չեն վարվել մեզ հետ:

1837թ. հուլիսի 23-ին Մարգարե Ջոզեֆը հանդիպեց Տասներկուսի Քվորումի նախագահ Երեց Թոմաս Բ. Մարշին: Երեց Մարշը, ըստ երևույթին, վիրավորվել էր, որ Մարգարեն առանց իր հետ խորհրդակցելու իր քվորումի երկու անդամներին կանչել էրԱնգլիա մեկնելու: Երբ Ջոզեֆը հանդիպեց Երեց Մարշին, վիրավորանքն ամբողջությամբ հաղթահարվեց, և Մարգարեն ստացավ ուշագրավ մի հայտնություն: Այն ներկայացնում է Վարդապետություն և Ուխտերի 112-րդ բաժինը:[20] Այն անհավանական երկնային ուղղություն է տալիս խոնարհության և միսիոներական աշխատանքի վերաբերյալ: 10-րդ հատվածում կարդում ենք. «Եղիր *խոնարհ.* և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին»:[21]

Այդ հայտնությունը եկավ ճիշտ այն օրը, երբ Երեցներ Քիմբալը, Հայդը և Ջոն Գուդսոնը, խոնարհությամբ լի, հռչակում էին Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնումը Անգլիայի Պրեստոն քաղաքի Վոքսհոլ ժողովարանում:[22] Առաջին անգամարդի տնտեսության ժամանակաշրջանում միսիոներները Հյուսիսային Ամերիկայից դուրս հռչակում էին վերականգնված ավետարանը: Նրանց միսիոներական ջանքերը անմիջապես արդյունք տվեցին և բազմաթիվ հավատարիմ անդամներ մկրտվեցին:[23]

Հայտնության մյուս մասերն առաջնորդում են մեր օրերի միսիոներական աշխատանքը: Մաս-մաս կարդում ենք. «Ում որ դուք ուղարկեք իմ անունով . . . զորություն կունենան՝ բացելու իմ արքայության դուռը, որ ազգի համար էլ որ դուք նրանց ուղարկած լինեք . . . որքան որ նրանք *կխոնարհեցնեն* իրենց իմ առաջ, և կմնան իմ խոսքի մեջ, և ականջ կդնեն իմ Հոգու ձայնին»:[24]

Խոնարհությունը, որ ուղեկցում էր այդ միսիոներական ջանքերին, Տիրոջը թույլ տվեց նշանակալից ձևով հաստատել Իր Եկեղեցին:

Հաճելի է, որ մենք շարունակում ենք տեսնել դաԵկեղեցում այսօր: Անդամները, ներառյալ աճող սերունդը, զոհաբերում են իրենց ժամանակը և հետաձգում կրթությունն ու աշխատանքը, որպեսզի ծառայեն միսիայում: Տարեց միսիոներներից

շատերը թողնում են աշխատանքը և այլ զոհաբերություններ են անում, որպեսզի ծառայեն Աստծուն այն կոչումներում, որտեղկկանչվեն: Աստծո նպատակներն իրականացնելու գործում մենք թույլ չենք տալիս, որ անձնական խնդիրները խոչընդոտեն կամ շեղեն մեզ:[25] Եկեղեցական ծառայությունը խոնարհություն է պահանջում: Որևէ կոչում ստանձնելիս, մենք խոնարհությամբ ծառայում ենք մեր ողջ ուժով, մտքով և զորությամբ: Եկեղեցու բոլոր մակարդակներում կարևոր է հասկանալ խոնարհության Քրիստոսանման հատկանիշը:

**Ամենօրյա խոնարհությունն էական է, որպեսզի օգնի մարդկանց հանդիպել Աստծուն**

Տիրոջը փառավորելու և մեր կամքը Նրան ենթարկելու նպատակը[26] արդի հասարակությունում այնքան չի արժեվորվում, որքան նախկինում էր: Քրիստոնեական այլ դավանանքների որոշ առաջնորդներ հավատացած են, որ մենք ապրում ենք հետ-քրիստոնեական աշխարհում:[27]

Մերունդներ շարունակ կրոնական առաքինություն համարվող խոնարհությունը և քաղաքացիական առաքինություն համարվող համեստությունն ու զսպվածությունը գերակայող չափանիշներ են եղել:

Այսօրվա աշխարհում մեծ շեշտադրում կա հպարտության, ինքնամեծարանքի ու այսպես կոչված «ճշտախոսության» վրա, որոնք իրական խոնարհության պակաս են առաջացնում: Ոմանք ենթադրում են, որ երջանկության բարոյական արժեքները ներկայումս ասում են. «եղիր ինպիսին կաս, եղիր ուժեղ, եղիր արդյունավետ, և ամենակարևորը՝ հույսդ մի դիր ուրիշների վրա . . . քանի որ քո բախտը . . . քո սեփական ձեռքերում է»:[28]

Սուրբ գրությունները կողմնակից են մեկ այլ մոտեցման: Նրանք առաջարկում են, որ մենք դառնանք Հիսուս Քրիստոսի իրական հետևորդներ: Արդյունքը Աստծո հանդեպ պատասխանատվության զորավոր զգացում ձևավորելն է և կյանքի հանդեպ խոնարհ մոտեցում ունենալը: Բենիամին թագավորն ուսուցանել է, որ բնական մարդը թշնամի է Աստծուն և քարոզել է, որ ենթարկվենք «Սուրբ Հոգու հորդորներին»: Նա բացատրել է, որ դրա համար մյուս բաների շարքում, անհրաժեշտ է նաև դառնալ «ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար [և] սիրով լի»:[29]

Ոմանք *ճշտախոսությունը* սխալմամբ գործածում են որպես բնական մարդու փառք ու որակ, որը հակառակ է խոնարհությանը, բարությանը, ողորմությանը, ներողամտությանն ու քաղաքավարությանը: Մենք կարող ենք, որպես Աստծո զավակ, մեր եզակի անհատականությունը փառաբանել և ճշտախոսության տակ չդրսևորել քրիստոնյային ոչ վայել պահվածք:

Խոնարհության ձգտելու ճանապարհին ժամանակակից համացանցը հպարտությունից խուսափելու դժվարություններ է ստեղծում: Օրինակներից մեկը «նայեք ինձ» ինքնագոհ մոտեցումն է կամ սոցիալական ցանցերում փքուն խոսքերով մարդկանց վրա հարձակվելը: Մյուս օրինակը «խոնարհաբանությունն է»: Այն բացատրվում է որպես «ակնհայտ համեստ կամ ինքնադատապարտող պնդում [կամ նկար], որի իրական նպատակը մի բանի վրա ուշադրություն հրավիրելն է, որով մարդ հպարտանում է»:[30] Մարգարեները միշտ զգուշացրել են, որ չհպարտանանք և ուշադրությունը չկենտրոնացնենք աշխարհի ունայն բաների վրա:[31]

Քաղաքակիրթ քննարկումների համընդհանուր քայքայումը նույնպես մտահոգիչ է: Ազատ ընտրության հավերժական սկզբունքը պահանջում է, որ մենք հարգալից վերաբերվենք այն ընտրություններին, որոնց հետ համաձայն չենք: Ընդհարումներն ու հակառակությունները այժմ հաճախ անցնում են «պարկեշտության ընդունված սահմանները»:[32] Մենք համեստության ու խոնարհության ավելի մեծ կարիք ունենք:

Ալման զգուշացրել է. «ձեր սրտերի հպարտությամբ չփքվել», «չենթադրել, որ դուք ավելի լավն եք, քան մեկ

ուրիշը» և չհալածել խոնարհ մարդկանց, ովքեր «քայլում են ըստ Աստծո սուրբ կարգի»:[33]

Ես անկեղծ բարություն եմ տեսել բոլոր հավատքների մարդկանց մեջ, ովքեր խոնարհ են և պատասխանատվության զգացում ունեն Աստծո առաջ: Նրանցից շատերը համապատասխանում են Հին Կտակարանի մարգարե Միքիայի խոսքերին, որ հայտարարել է. «Տերը ի՞նչ է ուզում քեզանից, այլ միայն իրաւունք անել, ողորմութիւն սիրել, և խոնարհութեամբ վարվիլ քո Աստուծոյ հետ»:[34]

Երբ իրապես խոնարհ ենք, մենք աղոթում ենք ներման համար և ներողամիտ ենք ուրիշների հանդեպ: Ինչպես կարդում ենք Մոսիայի գրքում, Ալման ուսուցանել է՝որքան հաճախ ապաշխարենք, Տերը կների մեր զանցանքները:[35] Մյուս կողմից էլ, ինչպես նշվում է Տիրոջ աղոթքում,[36] երբ չենք ներում ուրիշների զանցանքները, դատապարտություն ենք բերում մեր վրա:[37] Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ ապաշխարության միջոցով մեր մեղքերը ներվում են: Երբ չենք ներում նրանց, ովքեր մեր դեմ զանցանք են գործել, մենք ինչ-որ իմաստով մերժում ենք Փրկիչի Քավությունը: Ոխ պահելը և չներելը, ինչպես նաև մեր հարաբերություններին խոնարհությամբ ու Քրիստոսանման ձևով չմոտենալը իրավ դատապարտության տակ է դնում մեզ: Ոխ պահելը թունավոր է մեր հոգու համար:[38]

Թույլ տվեք զգուշացման խոսք ասել նաև գոռոզության տարբեր ձևերի մասին: Մորոնի մարգարեի միջոցով Տերը ցույց է տալիս գոռոզ և խոնարհ մարդկանց միջև բացարձակ տարբերությունը. «Հիմարներն են ծիծաղում, բայց նրանք կսգան. և իմ շնորհը բավական է հեզերի համար»: Այնուհետև Տերը հայտարարել է. «Ես մարդկանց թույլություն եմ տալիս, որպեսզի նրանք *խոնարհ* լինեն. և իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց *խոնարհեցնում* են իմ առջև. քանզի, եթե նրանք *խոնարհեցնեն* իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ»:[39]

Խոնարհությունը ենթադրում է, որ երախտապարտ լինենք բազում օրհնությունների և աստվածային օգնության համար: Խոնարհությունը ինչ-որ նկատելի հաջողություն չէ, ոչ էլ անգամ մեծ խնդիրների հաղթահարում է: Այն հոգևոր ուժի նշան է: Այն վստահություն ունենալն է, որ օր օրի և ժամ ժամի մենք կարող ենք ապավինել Տիրոջը, ծառայել Նրան և հասնել Նրա նպատակներին: Ես աղոթում եմ, որ այս մրցակցական աշխարհումամեն օր մենք շարունակ ձգտենք իրական խոնարհության: Սիրված մի բանաստեղծ ասել է.

*Մեծ լինելու փորձությունը*
*նրանում է,*
*Թե ինչպես է մարդ դիմավորում*
*հավերժական Ամենօրը:*[40]

Ես իմ վստահ վկայությունն եմ տալիս Փրկիչի և Նրա Քավության մասին և ամեն օր Նրան խոնարհությամբ ծառայելու չափազանց կարևորության մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Kathy Lette, in “Town and Country Notebook,” ed. Victoria Marston, *Country Life,* June 7, 2017, 32; emphasis added.
2. Annie Tempest, “Tottering-by-Gently,” *Country Life,* Oct. 3, 2012, 128.
3. ՏեսՍաղմոս 90.4: Երկրային կյանքիկարճ, թե երկար մեր տարիները միևնույն է շատ կարճ են հավերժական հեռանկարում: «Աստծո համար բոլորը մեկ օրվա պես է, և ժամանակը չափվում է միայն մարդու համար»: (Ալմա 40.8): Պետրոս Առաքյալը հայտարարել է. «Բայց այս մէկն էլ ձեզանից ծածուկ չ’լինի, սիրելիներ, որ Տիրոջ մօտ մէկ օրը հազար տարուայ պէս է, եւ ի հազար տարին ինչպէս մէկ օր»: (Բ Պետրոս 3.8):
4. Տես Մովսես 1.6–9: Այստեղ Քրիստոսն է խոսում աստվածային իշխանությամբ (տես *Teachings of Presidents of the Church: Joseph Fielding Smith* [2013], 47, ծանոթագրություն 11):
5. Մովսես 1.10
6. Մովսես 1.39
7. 2 Նեփի 26.33. տես նաև Վարդապետություն և Ուխտեր 1.34–35, 38.16, Պաշտոնական հայտարարություն 2
8. Վարդապետություն և Ուխտեր 20.37 հատվածը սկսում է այսպես. «Բոլոր նրանք, ովքեր իրենց խոնարհեցնում են Աստծո առաջ»: Մորոնին սահմանում է մկրտության պահանջները Տես նաև Մատթեոս 11.28:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.37:
10. Մենք գիտենք, որ եթե չենք ապաշխարում, չենք ընդունում արարողությունները ու չենք հետևում հավերժությանը պատրաստող ուխտերի ուղուն, ապա գալիս է «խավարի գիշերը, որի ժամանակ ոչ մի գործ չի կարող կատարվել», (Ալմա 34.33):
11. Տես 3 Նեփի 27.27
12. Ալմա 34.32
13. Տես 1 Նեփի 11.26–33, 2 Նեփի 9.53, Հակոբ 4.7, Վարդապետություն և Ուխտեր 122.8:
14. Ալմա 5.26
15. Ալմա 5.27
16. Տես Ալմա 4.19
17. Joseph Smith, in Heber C. Kimball, “History of Heber Chase Kimball by His Own Dictation,” ca. 1842–1856, Heber C. Kimball Papers, 54, Church History Library; see also Orson F. Whitney, *Life of Heber C. Kimball, an Apostle; the Father and Founder of the British Mission* (1888), 116.
18. Heber C. Kimball, “History of Heber Chase Kimball by His Own Dictation,” 54; see also Orson F. Whitney, *Life of Heber C. Kimball,* 116.
19. Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը ուսուցանել է. «Տիրոջ ծառայության մեջ կարևորը այն չէ, թե որտեղ ենք ծառայում, այլ թե ինչպես ենք ծառայում: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մարդը գրավում է այն տեղը, որտեղ նա պատշաճ կերպով կանչվում է, որին նա ոչ ձգտում է, ոչ էլ հրաժարվում»: (in Conference Report, Apr. 1951, 154).
20. Տես *The Joseph Smith Papers, Documents, Volume 5: October 1835–January 1838,* ed. Brent M. Rogers and others (2017), 412–17. Վիլետե Քիմբալը ամուսնուն՝ Հեբեր Չ. Քիմբալին գրած իր նամակում զեկուցել է, որ հայտնությունները նա արտագրել է «Երեց Մարշի գրքից, ինչպես որ վերջինս գրել է Ջոզեֆի բերանից»: (Vilate Murray Kimball to Heber C. Kimball, Sept. 6, 1837, in *The Joseph Smith Papers, Documents, Volume 5: October 1835–January 1838,* 412).
21. Վարդապետություն և Ուխտեր 112.10, շեշտադրումն ավելացված է:
22. See Orson F. Whitney, *Life of Heber C. Kimball,* 136–37.
23. See Orson F. Whitney, *Life of Heber C. Kimball,* –37.
24. Վարդապետություն և Ուխտեր 112.21–22, շեշտադրումն ավելացված է:
25. “While we do not ask to be released from a calling, if our circumstances change it is quite in order for us to counsel with those who have issued the call and then let the decision rest with them” (Boyd K. Packer, “Called to Serve,” *Ensign,* Nov. 1997, 8).
26. Տես *Քարոզիր Իմ Ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց (2004), 135:*
27. Տես Charles J. Chaput, *Strangers in a Strange Land* (2017), 14–15; see also Rod Dreher, *The Benedict Option* (2017).
28. Carl Cederstrom, “The Dangers of Happiness,” *New York Times,* July 19, 2015, SR8.
29. Մոսիա 3.19
30. *English Oxford Living Dictionaries,* “humblebrag,” oxforddictionaries.com.
31. Ինչ-որ առումով այն արձագանքում է Ալմայի գրքի նկարագրած մարդկանց, ովքեր հասել էին «ամեն ձևի թանկարժեք բաների, որոնք նրանք ձեռք էին բերել իրենց աշխատասիրության միջոցով. . . [սակայն] . . . նրանք հպարտությունից բարձրացել էին իրենց աչքում» (Ալմա 4.6): It has been noted that a “humblebrag” is still a brag.
32. David Brooks, “Finding a Way to Roll Back Fanaticism,” *New York Times,* Aug. 15, 2017, A23.
33. Ալմա 5.53, 54
34. Միքիա 6.8
35. Տես Մոսիա 26.30
36. Տես Մատթեոս 6.12, 15
37. Տես Մոսիա 26.31
38. As Nelson Mandela said, “Resentment is like drinking poison and then hoping it will kill your enemies” (in Jessica Durando, “15 of Nelson Mandela’s Best Quotes,” *USA Today,* Dec. 5, 2013, usatoday.com).
39. Եթե 12.26, 27, շեշտադրումն ավելացված է:
40. Edmund Vance Cooke, “The Eternal Everyday,” *Impertinent Poems* (1907), 21.

**Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Աստվածային ծրագրի համաձայն

*Տիրոջ ձեռքն առաջնորդում է ձեզ: «Աստվածային ծրագրի» համաձայն Նա վերահսկում է մեր կյանքի յուրաքանչյուր դրվագը, ինչպես նաև կարևոր իրադարձությունները:*

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, կանգնելով այստեղ՝ այս ոգեշնչող համաշխարհային գերագույն համաժողովին, և զգալով ձեր ուժն ու հոգին, ես չեմ կարողչիիշել Պետրոս Առաքյալի խոսքերը.«[Տեր], լավ է մեզ համար այստեղ մնալ»:[1]

Դա այն չէր, ինչ Ալման արտասանեց Ամմոնիայի ժողովրդին ուսուցանելուց հետո: Ալման հեռացավ քաղաքից մարդկանց ամբարշտության պատճառով: Շուտով մի հրեշտակ մոտեցավ Ալմային ու պատվիրեց նրան «վերադառնալ Ամմոնիա քաղաքը և նորից քարոզել քաղաքի ժողովրդին»:[2]

Ալման «շուտով» վերադարձավ և մտավ «քաղաք մեկ այլ ճանապարհով»:[3]

«Երբ նա մտավ քաղաք, նա անոթի էր, և նա ասաց մի մարդու. Կտա՞ս Աստծո խոնարհ ծառային որևէ բան ուտելու:

Եվ մարդն ասաց նրան. Ես Նեփիացի եմ, և ես գիտեմ, որ դու Աստծո մի սուրբ մարգարե ես, քանի որ դու ես այն մարդը, ում մասին հրեշտակն ասաց տեսիլքում»:[4]

Այդ մարդը Ամուղեկն էր:

Այսպիսով, արդյո՞ք Ալմայի ու Ամուղեկի հանդիպումը զուգադիպություն էր: Ոչ, պատահականություն չէր, որ նա քաղաք մտավ այն ճանապարհով, որը կբերեր նրան Ամուղեկի մոտ, ով կդառնար նրա միսիոներական զուգընկերը:

Երեց Նիլ Ա. Մաքսվելը մի անգամ մեկնաբանել է. «Մեզանից ոչ ոք լիովին չի օգտագործում այն պոտենցիալ հնարավորությունները, որոնք մեզ են տրվում մեր ընկերական շրջապատի կողմից: Ես և դուք այդ հանդիպումներն անվանում ենք «պատահականություն»: Այդ բառը հասկանալի է մահկանացուների համար, բայց *պատահականությունը* պատշաճ բառ չէ ամենագետ Աստծո գործերը նկարագրելու համար: Նրա գործերը «պատահականության» արդյունք չեն, այլ՝ «Աստվածային ծրագրի» արգասիք:[5]

Մեր կյանքը նման է շախմատի տախտակի և Տերը մեզ տեղաշարժում է մի տեղից մյուս տեղը, եթե մենք արձագանքում ենք հոգևոր հուշումներին: Հետ նայելով, մենք տեսնում ենք Նրա ձեռքը մեր կյանքում:

Մենք ականատես ենք լինում նման երկնային միջամտության, երբ Նեփին վերադառնում է Լաբանի թիթեղները ստանալու համար: Նա «առաջնորդվում էր Հոգու կողմից՝ նախապես չիմանալով բաները, որոնք պետք է [նա] աներ»:[6] Շուտով Լաբանը կանգնեց նրա առաջ հարբած ու անզգավիճակում, և Նեփին սպանեց նրան, վերցրեց թիթեղները և փախավ հետ՝ իր եղբայրների մոտ: Արդյո՞ք Լաբանի հետ նրա հանդիպումը երջանիկ պատահականություն էր: Թե այն ըստ «Աստվածային ծրագրի» էր:

Զգալի իրադարձություններ տեղի ունեցան ավետարանում և Եկեղեցում, որոնք խթանեցին Աստծո արքայությունը Երկրի վրա: Դրանք պատահական չեն, այլ Աստծո ծրագրի համաձայն են: Նա, ով այս աշխարհը ձևավորել է, կարող է Իր խոսքով հանդարտեցնել ծովերը և առաջնորդել Ալմային ու Ամուղեկին, Նեփիին ու Լաբանին,

որպեսզի նրանք լինեն ճիշտ ժամանակին և ճիշտ վայրում:

Նմանապես, իրադարձություններն ու շփումները մեր կյանքում տեղի են ունենում այնպես, որ խթանում են Աստծո աշխատանքը Երկրի վրա:

Սիրելի Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը պատմել է, թե ինչպես է մի առիթով Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել նրան. «Կա մի առաջնորդող ձեռք բոլորից վեր: Հաճախ, երբ որևէ բան է տեղի ունենում, դա պատահականություն չէ: Մի օր, երբ հետ նայենք մեր կյանքի այդ թվացյալ զուգադիպություններին, մենք կհասկանանք, որ միգուցե, դրանք այդքան էլ պատահականչեն եղել»:[7]

Շատ հաճախ մեր բարի գործերը միայն մի քանիսին են հայտնի լինում: Սակայն, դրանք բոլորը գրանցված են երկնքում: Մի օր մենք կկանգնենք որպեսարդարգործերինլիակատար նվիրվածվկա: Ոչ մի փորձություն կամ դժբախտություն չի կարող կործանել Աստծո երջանկության ծրագիրը: Ճշմարիտ է ասված, որ ըստ «Աստվածային ծրագրի» «ուրախությունը գալիս է լուսաբացին»:[8] «Ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը»,[9] ուսուցանեց Հիսուսը: Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, այդպես էլ մենք պիտի անենք:

Իմ կյանքի ուղու փորձառությունների շնորհիվ ես հասկացել եմ, որ Տերն Իր աշխատանքը կատարելու նպատակով կտեղաշարժի մեզ շախմատի երևակայական տախտակի վրայով: Իրականում, ինչը թվում է զուտ պատահականություն, վերահսկվում է սիրող Երկնային Հոր կողմից, ով կարող է հաշվել յուրաքանչյուր գլխի մազերը:[10] Ոչ մի ճնճղուկ գետնին չի ընկնում առանց մեր Հոր իմացության:[11] Տերը վերահսկում է մեր կյանքի յուրաքանչյուր դրվագ, և այդ միջադեպերն ու հնարավորությունները նախապատրաստում են մեզ, որպեսզի մենք բարձրացնենք մեր ընտանիքները՝ Աստծո արքայությունը Երկրի վրա կառուցելիս: Հիշեք, թե Տերն ինչ էասել Աբրահամին. «Ես ի սկզբանե գիտեմ վերջը. ուստի, իմ ձեռքը կլինի քո վրա»:[12]

Տերը շնորհել է ինձ այնպիսի ընտանիք, որտեղ կան սիրող ծնողներ: Բայց աշխարհիկ չափանիշներով նրանք շատ սովորական մարդիկ էին. իմ հայրը՝մի նվիրված մարդ, բեռնատարի վարորդ էր, իմ հրեշտակ մայրը՝ տնային տնտեսուհի: Տերն օգնեց ինձ գտնելու իմ սիրելի կնոջը՝ Մելանիին: Նա հուշեց մի գործարարի, ով հետո դարձավ իմ հարազատ ընկերը, աշխատանքի հնարավորություն ընձեռել ինձ: Տերը կանչեց ինձ ծառայելու միսիայում, ինչպես երիտասարդ ժամանակ, այնպես էլ հետագայում՝ որպես միսիայի նախագահ: Նա կանչեց ինձ Յոթանասունի Քվորում, իսկ այժմ Նա կանչել է ինձ Առաքյալ: Նայելով անցյալին, ես տեսնում եմ, որ չէի ծրագրել այդ քայլերից որևէ մեկը, այլ Տերն էր ծրագրել, ինչպես ործրագրել է կարևոր քայլերը ձեզ և ձեր հարազատների համար:

Ի՞նչ պետք էինտրեք ձեր կյանքում: Որո՞նք են Աստծո հրաշքները, որոնք կհուշեն ձեզ, որ Նա մոտ է, ասելով՝ «Ես այստեղ եմ»: Հիշեք այդ պահերը, այդ օրերը, երբ Տերը ներգործել է ձեր կյանքի վրա բազմաթիվ անգամներ: Գնահատեք այն պահերը, երբ Տերը վստահություն է ցուցաբերել ձեր և ձեր ընտրությունների հանդեպ: Բայց թույլ տվեք, որ Նա ձեզ ավելի լավ մարդ դարձնի, քան դուք ինքներդ կարող եք դա անել: Գնահատեք Նրա դերը: Երբեմն, մեր ծրագրերի փոփոխությունները համարում ենք սխալներ մեր կյանքում: Մտածեք դրանց մասին որպես «Տիրոջը ծառայելու» առաջին քայլերի:[13]

Ամիսներ առաջ մեր թոռնուհին միացավ երիտասարդների խմբին՝ այցելելու Եկեղեցու որոշ պատմական վայրեր: Ըստ վերջնական երթուղու նա, պետք է անցներ այն տարածքով, որտեղ նրա եղբայրը՝ մեր թոռը, ծառայում էր այդ պահին: Մեր թոռնուհին մտադրություն չուներ տեսնելուեղբորը նրա ծառայության ընթացքում: Սակայն, երբ ավտոբուսը մտավ այն քաղաքը որտեղ նրա եղբայրը ծառայում էր, նրանք տեսան երկու միսիոներների, ովքեր քայլում էին ճանապարհով: Միսիոներներից մեկը նրա եղբայրն էր:

Ավտոբուսում տիրում էր սպասողական մթնոլորտ, և երիտասարդները խնդրեցին ավտոբուսի վարորդին կանգնել, որպեսզի նա կարողանար տեսնելեղբորը: Միրոպե տևած արցունքներից ու սիրալիր խոսքերից հետո նրա եղբայրը շարունակեց ճանապարհը՝ կատարելու իր միսիոներական պարտականությունները: Ավելի ուշ մենք իմացանք, որ նրա եղբայրն այդ փողոց էր հասել հինգ րոպե առաջ և ունկնդրի հետ հանդիպումից հետո քայլում էր դեպի իր մեքենան:

Երկնային Հայրը կարող է մեզ դնել այնպիսի իրավիճակներում, որոնք հատուկ մտադրություն են ենթադրում: Նա այդպես է վարվել իմ կյանքում, Նա անում է դա ձեր կյանքում, ինչպեսարեց դա իմ սիրելի թոռների կյանքում:

Տերը սիրում և գնահատում է մեզանից յուրաքանչյուրին. Նա հոգ է տանում, շշնջում է և հետևում է մեզ՝ յուրաքանչյուրիս համար յուրօրինակ եղանակներով: Նա անսահման իմաստուն և ավելի զորեղ է, քան մահկանացու տղամարդիկ և կանայք: Նա գիտի մեր մարտահրավերները, մեր հաղթանակները և մեր սրտի արդար ցանկությունները:

Մոտ մեկ տարի առաջ, երբ քայլում էի Տաճարային Հրապարակով, քույր միսիոներներից մեկը մոտեցավ ինձ ու հարցրեց. «Դուք հիշո՞ւմ եք ինձ: Ես Ֆլորիդայից եմ»: Նա ասաց ինձ իր անունը՝ Քույր Միդա Չիլան: Այո, ես հիշեցի նրան և նրա ընտանիքը: Նրա ցցի նախագահն առաջարկեց մեզ այցելել այդ աղջկա ընտանիքին: Պարզվեց, որ մենք այնտեղ էինք նրանց դստեր՝ Միդայի համար, ով չէր մկրտվել: Մեր այցելությունից հետո Միդանմեկ տարուց ավել ուսուցանվեց և մկրտվեց:

Տաճարային Հրապարակում հանդիպելուց հետո Միդան ինձ նամակ գրեց: Նա ասաց. «Ես իմ ողջ սրտով գիտեմ, որ Երկնային Հայրը ճանաչում է մեզանից յուրաքանչյուրին և, ունենալով նպատակ դրա համար, Նա շարունակում է մեզ դնել նույն ուղու վրա: Շնորհակալություն, իմ միսիոներներից մեկը լինելուինձ հինգ տարի առաջզտնելու համար»:[14] Միդան ուղարկեց նաև իր

դարձի գալու պատմությունը, որտեղ գրվածէր «Աստվածային պատահականությունների» մասին, որը տեղի էր ունեցել իր կյանքում, որը հանգեցրել էր մկրտության, Տաճարային Հրապարակում ծառայության և վերջերս տեղի ունեցած նրա տաճարային ամուսնությանը:[15]

Արդյո՞ք դա զուտ պատահականություն էր, որ ցցի նախագահն ուղղորդեց մեզ դեպի Չիլանների տուն նայն, որ մենք կհանդիպեինք Տաճարային Հրապարակում: Միդայիգրի առած վկայության մեջ ասվում էր, որ այս բոլորն Աստծո «Աստվածային ծրագրի» մասն էին:

Տերը սիրում է լինել մեր կողքին: Պատահականություն չէ, որ երբ զգում եք Նրա Հոգին և գործում եք ըստ առաջին հուշումների, դուք զգում եք Նրան այնպես, ինչպես խոստացել էր. «Ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[16]

Մենք բոլորս էլ նմանատիպ փորձառություններ ենք ունենում կյանքում: Մենք կարող ենք հանդիպել մարդու, ով կարող է ծանոթ թվալ, հանդիպել նոր ծանոթների կամ գտնել ընդհանուր եզրեր օտարականի հետ: Երբ դա տեղի է ունենում, հավանաբար, Տերը հիշեցնում է մեզ, որ իսկապես մենք բոլորս էլեղբայրներ և քույրեր ենք: Մենք իսկապես կանչված ենք նույն գործին, որը Ջոզեֆ Սմիթն անվանել է «Քրիստոսի գործ»:[17]

Այսպիսով, որտե՞ղ է գտնվում մեր ազատ կամքը «Աստվածային ծրագրում»: Մենք ունենք ընտրություն՝ հետևելու կամ չհետևելու մեր Փրկիչին և Նրա ընտրված ղեկավարներին: Այդ օրինաչափությունը հստակ երևում է Մորմոնի Գրքի մեջ, երբ Նեփիացիները շրջվում են Տիրոջից: Մորմոնը ողբում էր.

«Եվ նրանք տեսան, . . . որ Տիրոջ Հոգին այլևս չէր պահպանում իրենց. այո, այն ետ էր քաշվել նրանցից, որովհետև Տիրոջ Հոգին չի բնակվում անսուրբ տաճարներում,

Հետևաբար, Տերը դադարեց պահպանել նրանց իր հրաշագործ և անզուգական զորությամբ, քանզի նրանք ընկել էին անհավատության մի վիճակի և սոսկալի ամբարշտության մեջ»:[18]

Այն, ինչ Տերը խնդրում է մեզանից, հետևանք չէ մեր ներկայիս ուժի, մեր հավատարմության կամ մեր ունեցած գիտելիքի: Հիշեք Սավուղին, ում Տերը կանգնեցրեց Դամասկոս տանող ճանապարհին: Նա գնում էր սխալ ուղիով և այդ ուղին հյուսիս կամ հարավ տանող ճանապարհը չէր: Սավուղը հոգևոր առումով փոխեց ուղին: Հետագայում կոչվելով Պողոս, նրա առաքելական ծառայությունը ցույց տվեց, որ Տերն արդեն գիտեր, որ նա ունակ է և կարող է դառնալ ավելին նոչ թե այն, ինչ կարող էր անել Սավուղ եղած ժամանակ: Նույն ձևով, Տերը գիտի, թե մեզանից յուրաքանչյուրը ինչ կարող է անել և ինչ կարող է դառնալ: Ի՞նչ է ուսուցանել Պողոս Առաքյալը: «Եվ մենք գիտենք, որ Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին նորանց՝ որ նախասահմանելովը կանչված են:»[19]

Երբ մենք արդար ենք, պատրաստ և ունակ, երբ ձգտում ենք լինել արժանի և որակավորում ունեցող, մենք աճում ենք մինչ այն սահմանները, որոնք երբեք չէինք պատկերացրել և դառնում ենք Երկնային Հոր «Աստվածային ծրագրի» մի մասը: Մեզանից յուրաքանչյուրն Աստծուց մի փոքր մասնիկ ունի իր մեջ: Երբ տեսնում ենք, որ Աստված գործում է մեր միջոցով և մեզ համար, մենք խրախուսվում և, նույնիսկ, երախտապարտ ենք լինում այդ առաջնորդության համար: Երբ մեր Երկնային Հայրն ասաց, որ «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»,[20] Նա խոսում էր Իր բոլոր զավակների մասին, հատկապես՝ ձեր մասին:

Տիրոջ ձեռքն առաջնորդում է ձեզ: «Աստվածային ծրագրի» համաձայն Նա վերահսկում է մեր կյանքի յուրաքանչյուր դրվագը, ինչպես նաև կարևոր իրադարձությունները: Ինչպես ասվում է Առակաց գրքում, «Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը; . . . և Նա կուղղի քո

ճանապարհները»:[21] Ես վկայում եմ, որ Նա կօրհնի ձեզ, կաջակցի ձեզ և կտխաղաղություն: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Ղուկաս 9:33
2. Ալմա 8.16
3. Ալմա 8.18
4. Ալմա 8.19-20
5. Նիլ Ա. Մաքսվել «Brim with Joy» (Բրիգամ Յանգ Համալսարան, հուն. 23, 1996), 2, speeches.byu.edu:
6. 1 Նեփի 4.6
7. Ջոզեֆ Բ. Վիրթլին «Lessons Learned in the Journey of Life», *Լիահոնա,* մայիս 2001, Բրիգամ Յանգի Համալսարանում Եկեղեցու Կրթական համակարգի հավաքի ժամանակ Երեց Վիրթլինի ելույթից հատվածներ, նոյ. 7, 1999թ.:
8. Սաղմոս 30.5
9. 3 Նեփի 27.13
10. Տես Ղուկաս 12.7:
11. Տես Մատթեոս 10.29:
12. Աբրահամ 2.8
13. Վարդապետություն և Ուխտեր 64.29
14. Միդա Չիլանից նամակ, 20 ապրիլի, 2017թ.
15. Միդա Չիլանից նամակ, 30 ապրիլի, 2017թ.
16. Վարդապետություն և Ուխտեր 84.88
17. Տես *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 349–57:
18. Հելաման 4.24–25
19. Հռովմայեցիս 8.28
20. Մովսես 1.39
21. Առակաց 3.5–6



**Երեց Օ. Վինսենթ Հալեք**
Յոթանասունի Քվորումից

# Այրի կնոջ սիրտը

*Եկեք անենք այն ամենը, ինչ անհրաժեշտ է այրի կնոջ սիրտն ունենալու համար, իրապես ուրախանալովայն օրհնություններով, որոնք արդյունքում կբավարարեն մեր «ամեն ինչը»։*

Իմ չափահաս կյանքի մեծ մասը ես օրհնվել եմ, ծառայելովԽաղաղ օվկիանոսիկղզիների Սրբերին։ Այդ նվիրված Սրբերի հավատքը, սերը և զարմանահրաշ զոհաբերությունները լցնում են հոգիս ոգեշնչումով, երախտագիտությամբ և ուրախությամբ։ Նրանց պատմությունները ձեր պատմությունների նման են։

Ես մտածում եմ, որ այդ Սրբերը շատ ընդհանուր բան ունեն այն այրի կնոջ հետ, ում Փրկիչը նայում էր, երբ Նա «նստած մտիկ էր անում, թէ ժողովուրդն ինչպէս էր փող գցում գանձանակը, եւ շատ հարուստներ շատ բաներ էին գցում։

Եվ մի աղքատ որբեւայրի եկավ երկու լումայ գցեց։

Եւ իր աշակերտներին իրան մօտ կանչեց, եւ ասեց նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ այս աղքատ որբեւայրին գանձանակը գցողների ամենից ավելի գցեց։

Որովհետեւ ամենքն իրանց աւելորդիցը գցեցին. Բայց սա իր չքաւորութիւնիցը ամեն ինչ որ ունէր գցեց, իր կեանքի բոլոր ապրուստը»։[1]

Չնայած նրա երկու լուման աղքատիկ ներդրում էր, Փրկիչի համար նրա ընծան մեծ արժեք ուներ, քանի որ նա տվեց ամեն ինչ։ Այդ պահին Փրկիչը լիովին ճանաչեց այրուն, քանի որ կնոջընծան նրա սիրտը ցույց տվեցՓրկիչին։ Նրա սիրո և հավատքիտեսակն ու խորությունն այնպիսին էին, որ նա ընծայեց՝ իմանալով, որ իր «ամեն ինչը» կբավարարվի։

Նմանատիպ սիրտ ես տեսել եմ Խաղաղ օվկիանոսիկղզիների Սրբերի մոտ։ Այդ կղզիներից մեկի վրա գտնվող փոքր գյուղերից մեկում մի մարդ ու կին ընդունեցին միսիոներների հրավերը՝ անկեղծորեն հարցնելովՏիրոջը, թե արդյոք իրենց

սովորած դասերը ճշմարիտ էին։ Այդ գործընթացի ժամանակ նրանք նաև մտածեցին պարտավորություններ ստանձնելու հետևանքների մասին, որոնք պետք է վերցնեին իրենց վրա, եթե իրենց ստացած պատասխանի արդյունքում ընդունեին վերականգնված ավետարանը։ Նրանք ծոմ պահեցին և աղոթեցին, որպեսզի իմանային Եկեղեցու և Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին։ Նրանց աղոթքների պատասխանը եկավ քաղցր և հստակ հաստատման ձևով. «Այո՛։ Դա ճշմարիտ է»։

Այդ վկայությունը ստանալուց հետո նրանք որոշեցին մկրտվել։ Այդ որոշման համար նրանք հատուցեցին կյանքում։ Իրենց որոշման ու մկրտության համար նրանք թանկ գին վճարեցին։ Նրանք կորցրին աշխատանքը, զոհաբերեցին սոցիալական կարգավիճակը, կորցրին կարևոր ընկերներին և ընտանիքի աջակցությունը, սերն ու հարգանքը։ Այժմ, նրանք յուրաքանչյուր կիրակի քայլում էին դեպի եկեղեցի՝դիմացից քայլող ընկերների ու հարևաններիտարօրինակ հայացքներն իրենց վրա հառած։

Այդ դժվարին հանգամանքներում այդ լավ եղբորը հարցրին, թե ինչպիսի զգացում ունի Եկեղեցուն միանալուց հետո։ Նա պարզորոշ և աներեր պատասխանումէր. «Այն ճշմարիտ է, այդպես չէ՞։ Մեր որոշումը պարզէր»։

Այդ նորադարձ Սրբերն իսկապես ունեին այրի կնոջ սիրտը։ Նրանք այրի կնոջ նման «գցեցին» այն ամենը, ինչ կարող էին տալ, գիտակցաբար տալով իրենց «ամեն ինչը»։ Այդ դժվարին ժամանակներում նրանց հավատացյալ սրտի և անմար հավատքի շնորհիվ նրանց բեռը թեթևացավ։ Նրանց օժանդակում էին Եկեղեցու անդամները, ովքեր ծառայում ու աջակցում էին նրանց, և ամուսիններնամրապնդվեցին Եկեղեցում հատկապես իրենց ունեցածծառայությունների շնորհիվ։

Երբ նրանք տվեցին իրենց «ամեն ինչը», այդ հրաշալի օրը եկավ, և նրանք կնքվեցին տաճարում որպես հավերժական ընտանիք։ Ալմայի ղեկավարության ներքո գտնվող նորադարձների նման

«Տերն ուժեղացրեց նրանց, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին»:[2] Այրի կնոջ նմանհոգի ունեցայդ հրաշալի զույգը:

Թույլ տվեք պատմել մեկ այլ փորձառություն, երբ այրի կնոջ սիրտը հստակերևում է: Սամոայում մենք աշխատում էինք մի գյուղի խորհրդի հետ, որպեսզի միսիոներները թույլտվություն ստանային քարոզելու ավետարանն այնտեղ: Մի քանի տարի առաջ ես զրույց ունեցա մի գյուղի գյուղապետի հետ, որտեղ միսիոներներին երկար տարիներ արգելվում էր քարոզել ավետարանը: Իմ զրույցը տեղի ունեցավ մի որոշ ժամանակ անց, երբ գյուղի ավագ ղեկավարը աջակցեցԵկեղեցու բացմանը՝ թույլ տալով մեր միսիոներներին ուսուցանել այն մարդկանց, ովքեր ցանկանում էին սովորել ավետարանի և նրա վարդապետությունների մասին:

Այս հրաշալի իրադարձությունների փոփոխությունից շատ տարիներ անց ես ցանկացա իմանալ, թե ինչ տեղի ունեցավ, երբավագ ղեկավարը այդ որոշումը կայացրեց: Ես հարցրի նրան այդ մասին և ղեկավարըպատասխանեց. «Մարդը կարող է խավարում ապրել միայն մի որոշ ժամանակ, բայց կգա ժամանակը, երբ նա կցանկանա գալ դեպի լույսը»:

Բացելով գյուղը միսիոներների առաջ, ավագ ղեկավարը ցույց տվեց այրի կնոջ սիրտը՝ սիրտ, որը փափկում է, երբ ճշմարտության ջերմությունը և լույսը հայտնվում են: Այդ ղեկավարը պատրաստ էր հրաժարվել տարիների ընթացքում պահպանած ավանդույթներից, դիմակայել մեծ ընդդիմության և հաստատուն կանգնել, որպեսզի ուրիշներն օրհնվեին: Դա մի ղեկավար էր, ում սիրտը կենտրոնացած էր իր ժողովրդի բարեկեցության և երջանկության վրա, այլ ոչ թե ավանդույթի, մշակույթի և անձնական իշխանության բավարարման վրա: Նա մի կողմ դրեց այդ մտահոգությունները՝ի շահ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ուսուցանած խոսքերի. «Երբ մենք հետևենք Փրկիչի օրինակին, մերը կլինիուրիշների կյանքում լույս լինելու հնարավորությունը»:[3]

Վերջապես, թույլ տվեք կիսվել ևս միփորձառությամբ, որը տեղի է ունեցել Խաղաղ օվկիանոսիկղզիների Սրբերին ծառայելու ժամանակ, որը խորը և հոգևոր արմատներ է թողել իմ հոգում: Մի քանիտարիառաջ ես եպիսկոպոսի երիտասարդ խորհրդական էի Ամերիկյան Սամոայի ծխերից մեկում: Մենք ունեինք 99 անդամներ, որոնց թվում էին փոքր ֆերմերները, պահածոների գործարանի աշխատողները, կառավարության աշխատողները և նրանց ընտանիքները: Երբ 1977թ.-ին Առաջին Նախագահությունը հայտարարեց, որ պետք է տաճար կառուցվի Սամոայում, բոլորս արտահայտեցինք մեր ուրախությունն և երախտագիտությունը: Այդ ժամանակ Ամերիկյան Սամոայիցտաճար գնալու համար պետք էր գնալ Հավայան կղզիներ կամ Նոր Զելանդիա: Դա ծախսատար ճամփորդություն էր, և Եկեղեցու բազմաթիվ հավատարիմ անդամների համար անմատչելի:

Այդ ընթացքում անդամներին հորդորվում էր նվիրաբերել կառուցապատման ֆոնդին, որպեսզի օգնեին տաճարների կառուցմանը: Այդ պատճառով մեր եպիսկոպոսությունը խնդրեց ծխի անդամներին աղոթքով խորհել, թե ինչ կարող են նվիրաբերել: Նշանակվեց հատուկ օր նվիրատվությունները հավաքելու համար: Ավելի ուշ, երբ այդ նվիրատվությունները գաղտնի կերպով բացվեցին, մեր եպիսկոպոսության անդամները զգացվածէին մեր ծխի հրաշալի անդամների հավատքից և առատաձեռնությունից:

Ճանաչելով բոլոր ընտանիքներին և նրանց պայմանները, ես հարգանքի ու խոնարհության խորը և անմոռացորդ զգացում ունեցա: Բոլոր իմաստներով դրանք ժամանակակից այրի կնոջ լումաներն էին, որոնք ուրախությամբ և կամավոր տրվել էինիրենց «ամեն ինչից», որպեսզի ստանային Սամոայում Տիրոջ սուրբ տաճարի կառուցման խոստումը: Այդ ընտանիքները նվիրաբերել են

Տիրոջն այն ամենը, ինչ կարող էին՝ հավատքով, որիրենք չէին ունենա որևէ կարիք: Նրանց պարգևը ցույց է տվել այրի կնոջ նրանց սրտերը: Բոլոր նվիրաբերողներն արել էին դա ինքնակամ և ուրախությամբ, քանի որ այրի կնոջ նրանց սրտերը կարող էին հավատքի աչքերով տեսնել այն մեծագույն օրհնությունները, որոնքսպասվում էին նրանց ընտանիքներին և Սամոայի ու Ամերիկյան Սամոայի ապագա բոլոր սերունդներին: Ես գիտեմ, որ նրանց նվիրատվությունները՝ նրանց այրի կնոջ լուման, նկատվել և ընդունվել էր Տիրոջ կողմից:

Երկու լուման նվիրաբերած այրի կնոջ սիրտն այնպիսի սիրտ է, որը զոհաբերությունների գնով կտա ամեն ինչ՝ տանելով չարչարանքներ, հալածանքներ, անտեսում և կրելով բազմաթիվ բեռներ: Այրի կնոջ սիրտն այնպիսի սիրտ է, որը հասկանում, զգում և ճանաչում է ճշմարտության լույսը և կտա ամեն ինչ այդ ճշմարտությունը ստանալու համար: Այն նաև օգնում է մյուսներին տեսնելու այդ լույսը և հասնելու հավերժական երջանկության և ուրախության նույն աստիճանին: Վերջապես, այրի կնոջ սիրտը չափվում է ամեն ինչ տալու պատրաստակամությամբ, որպեսզի կառուցի Աստծո արքայությունը Երկրի վրա:

Աշխարհասփյուռ Սրբերով եկեք միանանք և անենք այն ամենն, ինչ

անհրաժեշտ է այրի կնոջ սիրտն ունենալու համար, որպեսզի իրոք ուրախանանք այն օրհնություններով, որոնք կբավարարեն «ամեն ինչը»: Աղոթում և աղաչում եմ, որպեսզի մեզանից յուրաքանչյուրն այնպիսի սիրտ ունենա, որը կտանի մեր բեռները, կկատարի անհրաժեշտ զոհաբերություններ և կցանկանա գործել ու տալ: Ես խոստանում եմ, որ Տերը չի թողնի ձեզ կարիքի մեջ: Այրի կնոջ սիրտը լցված է երախտագիտությամբ, որ Փրկիչը «վշտերի մի մարդ [էր], և ցավերի հետ ծանոթ [էր]»,[4] որպեսզի մենք չճաշակենք «դառը բաժակից»:[5] Մեր թուլությունների և սխալների պատճառով ու նաև դրանց շնորհիվ Նա շարունակում է պարզել Իր ձեռքերը, որոնք խոցվել են մեզ համար: Նա մեզ կբարձրացնի, եթե մենք ցանկություն ունենանք գալու դեպի Իր ավետարանի լույսը, ընդունել Նրան և թույլ տալ Նրան իրականացնելու մեր «ամեն ինչը»:

Ես բերում եմ իմ վկայությունն այն մեծ սիրո մասին, որով մենք կարող ենք կիսվել իրար հետ՝ որպես Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտներ և հետևորդներ: Ես սիրում և սատարում եմ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին՝ որպես Աստծո մարգարե Երկրի վրա: Աշխարհի համար Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին և ես հրավիրում եմ բոլորին կարդալ այն և բացահայտել դրա ուղերձը ձեզ համար: Բոլոր նրանք, ովքեր ընդունում են Տիրոջը մոտենալու Նրա հրավերը, կգտնեն խաղաղություն, սեր և լույս: Հիսուս Քրիստոսը մեր մեծ Օրինակն ու Քավիչն է: Միայն Հիսուս Քրիստոսի և Նրա անսահման Քավության հրաշքի միջոցով է, որ կարող ենք ստանալ հավերժական կյանք: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Մարկոս 12.41–44
2. Մոսիա 23.15
3. Թոմաս Ս. Մոնսոն, «Օրինակ և լույս եղեք աշխարհի համար», *Լիահոնա*, նոյ. 2015, 88:
4. Եսայիա 53.3
5. 3 Նեփի 11.11



**Նախագահ Ռասսել Մ. Նելսոն**
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

# Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլիներ ձեր կյանքն առանց Նրա

*Իմ ողջ հոգով ես վկայում եմ, որ հրաշալի ու եզակի ձևով Մորմոնի Գիրքն ուսուցանում է մեզ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին:*

1986թ.-ին ինձ հրավիրեցին մի հատուկ դասախոսություն կարդալ Ակկրայի համալսարանում (Գանա): Այնտեղ ես հանդիպեցի մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների, ներառյալ՝ աֆրիկյան մի ցեղի թագավորի: Երբ մենք այցելեցինք նրան նախքան դասախոսությունը, թագավորը խոսեց ինձ հետ միայն իր թարգմանչի միջոցով, ով հետո թարգմանում էր ինձ համար: Ես պատասխանում էի թարգմանչին, որից հետո վերջինս իմ պատասխանները թարգմանում էր թագավորին:

Իմ դասախոսությունից հետո թագավորն անմիջապես մոտեցավ ինձ, բայց այս անգամ առանց իր թարգմանչի: Ի զարմանս ինձ, նա խոսում էր կատարյալ անգլերենով, ես կասեի գրական անգլերենով:

Թագավորը շփոթված տեսք ուներ: «Ո՞վ եք դուք», - հարցրեց նա:

Ես պատասխանեցի. «Ես Հիսուս Քրիստոսի կարգված Առաքյալ եմ»:

Թագավորը հարցրեց. «Դուք ի՞նչ կարող եք ուսուցանել ինձ Հիսուս Քրիստոսի մասին»:

Ես հարցին հարցով պատասխանեցի. «Կարո՞ղ եմ ես հարցնել, դուք ի՞նչ գիտեք Նրա մասին»:

Թագավորի պատասխանը ցույց տվեց, որ նա լրջորեն ուսումնասիրում էր Աստվածաշունչը և շատ էր սիրում Տիրոջը:

Հետո ես հարցրի, արդյո՞ք նա որևէ բան գիտեր հնագույն Ամերիկայի ժողովրդին Հիսուս Քրիստոսի մատուցած ծառայության մասին:

Ինչպես ես ակնկալում էի, նա չգիտեր:

Ես բացատրեցի, որ Իր Խաչելությունից և Հարությունից հետո Փրկիչը եկավ հնադարյան Ամերիկայի ժողովրդի մոտ, որտեղ Նա ուսուցանեց Իր ավետարանը: Նա կազմավորեց Իր Եկեղեցին և խնդրեց Իր աշակերտներին գրառումներ կատարել նրանց համար կատարած Իր ծառայության մասին:

«Այդ հիշատակարանը,- շարունակեցի ես,- այն է, ինչը մենք գիտենք որպես Մորմոնի Գիրք: Այն ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Այն ուղեկից սուրբ գրություն

է Աստվածաշնչի հետ միասին»:

Այդ պահին թագավորը *շատ* հետաքրքրվեց: Ես դիմեցի միսիայի նախագահին, ով ուղեկցում էր ինձ, և հարցրի, արդյոք նա ուներ Մորմոնի Գրքի հավելյալ օրինակ: Նա իր պայուսակից հանեց մի օրինակ:

Ես բացեցի 3 Նեփի 11 գլուխը և թագավորի հետ կարդացի Փրկիչի քարոզը նեփիացիներին: Հետո ես Մորմոնի Գրքի մի օրինակ նվիրեցի նրան: Նրա պատասխանը ընդ-միշտ տպավորվեց իմ մտքում ու սրտում. «Դուք կարող էիք ինձ տալ ադամանդ ու սուտակ, բայց ոչինչ ավելի թանկ չէ ինձ համար, քան այս լրացուցիչ գիտելիքը Տեր Հիսուս Քրիստոսի մասին»:

Նեփիի 3-րդ գլխում գրված խոսքերի ուժը զգալուց հետո թագավորը հայտարարեց. «Եթե ես դարձի գամ և միանամ Եկեղեցուն, ես կբերեմ իմ ողջ ցեղը ինձ հետ»:

«Օ՜, թագավոր,- ասացի ես,- դարձը այդպես չի լինում»: Դարձը անհատական գործ է: Փրկիչը ծառայեց նեփիացիներից յուրաքանչյուրին մեկ առ մեկ: Յուրաքանչյուրը անհատապես ստանում է վկայություն Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին»:[1]

Իմ եղբայրնե՜ր և քույրե՜ր, որքանո՞վ է թանկ Մորմոնի գիրքը ձեզ համար: Եթե ձեզ առաջարկեին ադամանդ ու սուտակ *կամ* Մորմոնի Գիրքը, ո՞րը կընտրեիք: Անկեղծ ասեք, ո՞րը ավելի մեծ արժեք *ունի* ձեզ համար:

*Ռիլեյը կարդում է Մորմոնի Գիրքը «Աստծո զավակն եմ» էջանշանի օգնությամբ:*

*Նախագահ Նելսոնը հետևում է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խորհրդին, տրված 2017թ. ապրիլի գերագույն համաժողովին, այն մասին, որ ամեն օր պետք է աղոթքով ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը և խորհենք դրա շուրջ:*

Հիշե՜ք, 2017թ.-ի ապրիլի գերագույն համաժողովի կիրակի առավոտյան նիստին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խնդրեց, որ «յուրաքանչյուրս աղոթքով ուսումնասիրենք և խորհենք Մորմոնի Գրքի շուրջ ամեն օր»:[2] Շատերն արձագանքեցին մեր մարգարեի խնդրանքին:

Թույլ տվեք ասել, որ ո՜չ ես, ո՜չ էլ ութամյա Ռիլեյը չգիտեինք, որ ինչ-որ մեկը լուսանկարում է մեզ: Նկատեք, որ Ռիլեյը կարդում է Մորմոնի Գիրքը «Աստծո զավակն եմ» էջանշանի օգնությամբ:

Ինչ-որ զորավոր բան է պատահում, երբ Աստծո որևէ զավակ ջանում է ավելին իմանալ Նրա և Նրա Սիրելի Որդու մասին: Ուրիշ ոչ մի տեղ այդ ճշմարտությունները չեն ուսուցանվում այդքան հստակ ու զորեղ, որքան Մորմոնի Գրքում:

Վեց ամիս առաջ արված նախագահ Մոնսոնի հրավերից ի վեր ես փորձել եմ հետևել նրա խորհրդին: Այլ քայլերի հետ միասին ես կազմել եմ ցուցակներ այն մասին, թե ինչ *է* Մորմոնի Գիրքը, ինչ է այն *հաստատում*, ինչ է *հերքում*, ինչ է *կատարում*, ինչ է *հստակեցնում* և ինչ է *բացահայտում*: Մորմոնի Գիրքն այս տեսապակիների միջով քննելը խորը թափանցող և ոգեշնչող վարժանք էր: Ես ձեզանից յուրաքանչյուրին խորհուրդ եմ տալիս կարդալ այն:

Այս վեց ամիսների ընթացքում ես հրավիրել եմ տարբեր խմբերի, ներառյալ Տասներկու Առաքյալների Քվորումի իմ եղբայրներին, Չիլիի միսիոներներին և Արգենտինայի միսիայի նախագահներին ու նրանց կանանց, քննարկելու այն երեք հարցերը, որոնց մասին ես խորհուրդ եմ տալիս ձեզ մտածել այսօր.

Նախ՝ ինչպիսի՞ն կլիներ ձեր կյանքն *առանց* Մորմոնի Գրքի: Երկրորդ՝ դուք ի՞նչ *չէիք իմանա:* Եվ երրորդ՝ դուք ի՞նչ *չէիք ունենա:*

Խանդավառ պատասխանները այս խմբերից գալիս էին անմիջապես

նրանց սրտից: Ահա այդ մեկնաբանություններից մի քանիսը:

«Առանց Մորմոնի Գրքի ես կկարողանայի *շատ* երևույթների վերաբերյալ գոյություն ունեցող հակասական ուսմունքների և կարծիքների մեջ: Ես կլինեի ճիշտ այնպիսին, ինչպիսին նախքան Եկեղեցուն միանալը, երբ փնտրում էի գիտելիք, հավատ և հույս»:

Մեկ ուրիշն ասաց. «Ես չէի իմանա այն դերի մասին, որը Սուրբ հոգին կարող է ունենալ իմ կյանքում»:

Իսկ մեկ այլ անդամ ասաց. «Ես պարզ չէի հասկանա իմ նպատակը այստեղ՝ Երկրի վրա»:

Ապա մեկ ուրիշը շարունակեց. «Ես չէի իմանա, որ այս կյանքից հետո տեղի է ունենում անընդհատ առաջընթաց: Մորմոնի գրքի շնորհիվ ես գիտեմ, որ իրոք կյանք կա մահից հետո: Դա այն բարձրագույն նպատակն է, ինչի համար մենք աշխատում ենք»:

Այս վերջին մեկնաբանությունն ինձ ստիպեց մտածել իմ կյանքի մասին տասնյակ տարիներ առաջ, երբ ես երիտասարդ էի և ուսանում էի վիրաբույժ դառնալու համար: Վիրաբույժներն ունեն մի լուրջ պարտականություն, այն է՝ տեղեկացնել ընտանիքին, որ իրենց սիրելին մահացել է վիրահատական միջամտության ժամանակ: Ես աշխատում էի մի հիվանդանոցում, որտեղ կար մի հատուկ սենյակ, որի պատերը պաստառված էին թաղիքով, և որտեղ ընտանիքի անդամները կարող էին լսել այդպիսի նորությունները: Այնտեղ մարդիկ դրսևորում էին իրենց վիշտը՝ գլուխները խփելով այդ թաղիքապատված պատերին: Որքան շատ էի ես ցանկանում ուսուցանել այդ մարդկանց, որ մահը, որքան էլ այն դժվար լինի ապրողների համար ընդունել, հանդիսանում է մեր մահկանացու կյանքի անհրաժեշտ մասը: Մահը թույլ է տալիս մեզ առաջ ընթանալ դեպի հաջորդ աշխարհ:[3]

Մեկ այլ պատասխանող ասաց. «Իմ կյանքը իմաստ և նպատակ չուներ նախքան Մորմոնի Գրքի ընթերցումը: Չնայած ես ամբողջ կյանքում աղոթել էի և հաճախել Եկեղեցի, Մորմոնի Գիրքն ինձ օգնեց առաջին անգամ իրապես հաղորդակցվել Երկնային Հոր հետ»:

Մեկ ուրիշն ասաց. «Առանց Մորմոնի Գրքի ես չէի հասկանա, որ Փրկիչը ոչ միայն տառապել է մեր մեղքերի համար, այլև Նա կարող է ամոքել իմ ցավերն ու վշտերը»:[4]

Իսկ մի ուրիշն ասաց. «Ես չէի իմանա, որ մենք ունենք մարգարե, ով առաջնորդում է մեզ»:

Մորմոնի Գրքի ճշմարտությունների խորը և կանոնավոր ուսումնասիրությունը կարող է դառնալ կյանք փոխող փորձառություն: Մեր միսիոներ թոռնուհիներից մեկը՝ քույր Օլիվիա Նելսոնը, մի ունկնդրի խոստացել էր, որ եթե նա ամեն օր կարդա Մորմոնի Գիրքը, ապա համալսարանում նրա քննությունների միավորները կբարձրանան: Նա իրոք կարդաց Մորմոնի Գիրքը, և նրա միավորներն իսկապես բարձրացան:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքն իրոք Աստծո խոսքն է: Այն պատասխաններ է տալիս կյանքի ամենակարևոր հարցերին: Այն ուսուցանում է Քրիստոսի վարդապետությունը:[5] Այն պարունակում է և հստակեցնում է շատ «պարզ ու արժեքավոր»[6] ճշմարտություններ, որոնք կորսվել էին դարերի ընթացքում և Աստվածաշնչի բազմաթիվ թարգմանությունների մեջ:

Հիսուս Քրիստոսի Քավության մասին Մորմոնի Գիրքը տրամադրում է ամբողջական և ամենահեղինակավոր հասկացողությունը, որը

*Նախագահ Նելսոնի թոռնուհի Օլիվիան:*

երբևէ եղել է մինչ այդ: Այն ուսուցանում է, թե ինչ է նշանակում վերստին ծնվել: Մորմոնի Գրքից մենք սովորում ենք ցրված Իսրայելի հավաքման մասին: Մենք իմանում ենք, թե մենք ինչու ենք այստեղ՝ Երկրի վրա: Սա և այլ ճշմարտություններ ավելի հզոր ու համոզիչ են ուսուցանվում Մորմոնի Գրքում, քան որևէ այլ գրքում: Հիսուս Քրիստոսի ավետարանի ողջ զորությունն է պարունակվում Մորմոնի գրքում: Իրոք:

Մորմոնի Գիրքը պարզաբանում է Տիրոջ ուսմունքները և բացահայտում է հակառակորդի մարտավարությունը:[7] Մորմոնի Գիրքն ուսուցանում է ճշմարիտ վարդապետություն այն մասին, թե ինչպես հաղթահարել կրոնական կեղծ ավանդույթները՝ ինչպես օրինակ մանուկների մկրտության սխալ սովորույթը:[8] Մորմոնի Գիրքը նպատակ է տալիս կյանքին, հորդորելով մեզ խորհել հավերժական կյանքի ներուժի և «երբեք չվերջացող երջանկության վիճակի» մասին:[9] Մորմոնի Գիրքը մերժում է այն կեղծ համոզմունքները, որ երջանկություն կարելի է գտնել ամբարշտության մեջ,[10] և որ անձնական բարությունը այն ամենն է, ինչ պահանջվում է Աստծո ներկայություն վերադառնալու համար:[11] Այն ընդմիշտ վերացնում է կեղծ հասկացողություններն այն մասին, որ հայտնությունն ավարտվել է Աստվածաշնչի հետ և երկնքի հետ այլևս հաղորդակցություն գոյություն չունի:

Երբ ես մտածում եմ Մորմոնի Գրքի մասին, միշտ հիշում եմ *զորություն* բառը: Մորմոնի Գրքի ճշմարտությունները զորություն ունեն բժշկելու, սփոփելու, վերականգնելու, սատար կանգնելու, զորացնելու, մխիթարելու և քաջալերելու մեր հոգիները:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես խոստանում եմ, որ եթե դուք *ամեն օր* աղոթքով ուսումնասիրեք Մորմոնի Գիրքը, դուք ավելի լավ որոշումներ կկայացնեք ամեն օր: Ես խոստանում եմ, որ մինչ դուք խորհում եք ձեր ուսումնասիրած նյութի շուրջ, երկնքի պատուհանները կբացվեն, և դուք կստանաք ձեր հարցերի պատասխանները և

ուղղորդում՝ ձեր կյանքի համար: Ես խոստանում եմ, որ եթե դուք ամեն օր խորասուզվեք Մորմոնի Գրքի ընթերցանության մեջ, դուք կարող եք պաշտպանվել օրվա չարիքից, պոռնոգրաֆիայիանհաղթահարելի ժանտախտից և միտքն անզգայացնող կախվածություններից:

Ամեն անգամ, երբ ես լսում եմ, թե ինչպես ինչ-որ մեկը, ներառյալ ես, ասում է. «Ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է», ես ցանկանում եմ բացականչել. «Դա շատ լավ է, բայց բավարար չէ»: Մենք պիտի զգանք, «սրտի ամենախորքից»,[12] որ Մորմոնի Գիրքը միանշանակ Աստծո խոսքն է: Մենք պիտի զգանք այն այնքան խորը, որ երբևէ չցանկանանք նույնիսկ մեկ օր ապրել առանց նրա: Ես կկամենայի վերապատմել Նախագահ Բրիգամ Յանգի ասածը. (1801–77) «Երանի ես ունենայի յոթ ամպրոպների ձայնը, որ արթնացնեի մարդկանց»,[13] որպեսզի նրանց հասներ Մորմոնի Գրքի ճշմարտությունն ու զորությունը:

Մենք պիտի նմանվենք Եվրոպայում ծառայող այս երիտասարդ միսիոներին, ով այնքան խորն էր հասկանում Մորմոնի Գրքի ճշմարտությունը, որ այս սուրբ գրությունը ձեռքին զբոսայգում բառացիորեն վազում էր դեպի այն մարդը, ում նա և իր զուգընկերը հենց նոր էին գտել:

Ես վկայում եմ, որ Ջոզեֆ Սմիթը կար և մնում է այս վերջին տնտեսության *մարգարեն:* Աստծո զորությամբ ու պարգևով նա թարգմանեց այս սուրբ գիրքը: Սա է *այն* գիրքը, որը կօգնի նախապատրաստել աշխարհը Տիրոջ Երկրորդ Գալուստի համար:

*Երիտասարդ միսիոները շտապում է կիսվել Մորմոնի Գրքով պուրակում հանդիպած տղամարդու հետ:*

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը ապրող Աստծո ապրող Որդին է: Նա է մեր Փրկիչն ու Քավիչը, մեր հրաշալի Օրինակը և մեր Պաշտպանը Հոր մոտ: Նա խոստացված Մեսիան էր, մահկանացու Մեսիան և կլինի հազարամյակի Մեսիան: Իմ ողջ հոգով ես վկայում եմ, որ հրաշալի ու եզակի ձևով Մորմոնի Գիրքն ուսուցանում է մեզ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին:

Ես գիտեմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Աստծո մարգարեն է այժմ Երկրի վրա: Ես սիրում եմ նրան իմ ամբողջ սրտով: Ես վկայում եմ այս ամենը Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

*Նախագահ Նելսոնի կազմած Մորմոնի Գրքի ցուցակները*

**Մորմոնի Գիրքը *հանդիսանում է.***
- Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին Դրա հիմնական գրողները՝ Նեփին, Հակոբը, Մորմոնը, Մորոնին և դրա թարգմանիչ Ջոզեֆ Սմիթը, բոլորը Տիրոջ վկաներն էին:
- Նրա ծառայության մասին հիշատակարանն այն ժողովրդին, որն ապրում էր Ամերիկայում:
- Ճիշտ է այնպես, ինչպես հաստատվել է Տիրոջ կողմից:

**Մորմոնի Գիրքը *հաստատում է.***
- Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի անհատական ինքնությունը:
- Ադամի Անկման և Եվայի իմաստության անհրաժեշտությունը, որպեսզի մարդիկ կարողանան ուրախանալ:

**Մորմոնի Գիրքը *հերքում է,* որ.**
- Հայտնությունն ավարտվեց Աստվածաշնչով:
- Մանուկները պիտի մկրտվեն:
- Երջանկությունը կարելի է գտնել ամբարշտության մեջ:
- Անձնական բարությունը բավարար է վեհացման համար (արարողությունները և ուխտերը անհրաժեշտություն են):
- Ադամի անկումը վարակեց մարդկությանը «սկզբնական մեղքով»:

**Մորմոնի Գիրքն *իրականացնում է աստվածաշնչյան մարգարեությունները,* որ.**
- «Ուրիշ ոչխարներ» էլ կլսեն Նրա ձայնը:
- Աստված կսկսի կատարել «զարմանալի և սքանչելի գործ», խոսելով «փոշու միջից»:
- «Հուդայի գավազանը» և «Հովսեփի գավազանը» կմիավորվեն:
- «Վերջին օրերում» ցրված Իսրայելը կհավաքվի և ինչպես դա կկատարվի:
- Ժառանգության երկիրը Հովսեփի տոհմագծի համար Արևմտյան Կիսագունդն է:

**Մորմոնի Գիրքը *խտակենտրոնում է հասկացողությունը՝.***
- Մեր նախամահկանացու գոյության մասին:
- Մահվան մասին: Այն Աստծո երջանկության հրաշալի ծրագրի անհրաժեշտ բաղադրիչն է:
- Հետմահկանացու գոյության մասին, որը սկսվում է դրախտում:
- Թե ինչպես է հարություն առած մարմինը՝ իր հոգու հետ միավորված դառնում անմահ հոգի:
- Տերն ինչպես է դատելու մեզ՝ համաձայն մեր գործերի և մեր սրտերի ցանկությունների:
- Արարողությունները, օրինակ՝ մկրտությունը, հաղորդությունը, Սուրբ Հոգու շնորհումը, ինչպես են կատարվում պատշաճ կերպով:
- Հիսուս Քրիստոսի Քավության մասին
- Հարության մասին
- Հրեշտակների կարևոր դերի մասին
- Քահանայության հավերժական էության մասին
- Մարդկային վարքագիծն ինչպես է ազդեցության ենթարկվում ավելի շատ խոսքի զորությամբ, քան թրի զորությամբ:

**Մորմոնի Գիրքը *բացահայտում է նախկինում անհայտ տեղեկություններ.***
- Մկրտություններ էին կատարվում նախքանՀիսուս Քրիստոսի ծնունդը:
- Տաճարներ կառուցվեցին և օգտագործվեցին հնադարյան Ամերիկայի ժողովրդի կողմից:
- Հովսեփը՝ Իսրայելի 11-րդ որդին, կանխագուշակեց Ջոզեֆ Սմիթի մարգարեական դերի մասին:
- Նեփին (600–592 Ք.Ա.) կանխագուշակեց Ամերիկայի հայտնաբերումն ու գաղութացումը:
- Աստվածաշունչի պարզ և արժեքավոր մասեր կորսվել են:
- Քրիստոսի Լույսը տրված է յուրաքանչյուր մարդու:
- Անհատի կամքի ազատության կարևորության և հակադրության անհրաժեշտությունը բոլոր բաներում:
- Նախազգուշացումներ «գաղտնի համակցությունների» մասին:

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Տես 3 Նեփի 17.9–12
2. Thomas S. Monson, “The Power of the Book of Mormon,” *Liahona,* May 2017, 87.
3. Տես Ալմա 42.8
4. Տես Ալմա 7.11–12
5. Տես օրինակ՝ 2 Նեփի 31.2–21
6. Տես 1 Նեփի 13.29–33
7. Տես 2 Նեփի 26–33
8. Տես Մորոնի 8.11–15
9. Մոսիա 2.41, տես նաև Ալմա 28.12
10. Տես Ալմա 41.10–11
11. Պահանջվում են նաև հատուկ սուրբ արարողություններ և ուխտեր:
12. Տես Ալմա 13.27:
13. Տես *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 299 Նա անդրադառնում էր տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի կարևորությանը:

**Երեց Դեյլ Գ. Ռենլանդ**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Քահանայությունը և Փրկիչի քավիչ զորությունը

*Երկնային Հոր ծրագրի իրականացման համար Քրիստոսի քավիչ զորությունը պետք է հասանելի լինի Աստծո զավակների համար: Քահանայությունը հասանելի է դարձնում այդ հնարավորությունները:*

Մի պահ պատկերացրեք մի հրթիռ, որը գործարկման շարժումներ է կատարում, որպեսզի պատրաստվի թռիչքի: Այժմ պատկերացրեք բռնկումը: Վառելիքը, վերահսկվող այրման փուլում, վերածվում է տաք գազի, որը դուրս է ժայթքում, հրման ուժ առաջացնելով, որպեսզի հրթիռը թռչի դեպի տիեզերք: Ի վերջո, պատկերացրեք մի ուղեբեռ կամ ծանրոց, որը կցված է հրթիռին: Ուղեբեռի արժեքը լիովին գիտակցվում է միայն այն ժամանակ, երբ այն հասնում է նշանակման վայրը և կատարում է իր գործառույթը: Պարտադիր չէ հրթիռների մասնագետ լինել՝ գնահատելու համար, որ անգամ համաշխարհային հեռահաղորդակցման թանկարժեք արբանյակը, եթե պահեստում է դրված, մեծ արժեք չունի: Հրթիռի միսիան ուղղակի ուղեբեռը տեղ հասցնելն է:

*Քահանայությունը, որ մենք կրում ենք,* այս երեկո ես կցանկանայի համեմատել հրթիռի հետ, իսկ *Փրկիչի քավիչ զորությունից օգտվելու հնարավորությունը*՝հրթիռի հասցրած ուղեբեռի հետ:

Իր քավիչ զոհաբերության շնորհիվ Հիսուս Քրիստոսը զորություն և իշխանություն ունի փրկագնելու ողջ մարդկությունը: Իր քավիչ

զորությունը հասանելի դարձնելու համար Նա իր զորության ու իշխանության մի բաժին լիազորությամբ տվել է երկրի վրա գտնվող մարդկանց: Լիազորությամբ տրված այդ զորությունն ու իշխանությունը կոչվում է *քահանայություն:* Լիազորումը քահանայություն կրողներին թույլ է տալիս օգնել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին Իրենց աշխատանքում, որն է՝ իրականացնել Աստծո զավակների փրկությունն ու վեհացումը: Քահանայությունն օգնում է, հնարավորություն տալով Նրա զավակներին ստանալ Փրկիչի քավիչ զորության օրհնությունները:

Հիսուս Քրիստոսի քավիչ զորությունը էական է, որովհետև մեզանից ոչ ոք առանց օգնության չի կարող վերադառնալ երկնային տուն: Մահկանացու կյանքում մենք անխուսափելիորեն սխալներ ենք գործում և խախտում ենք Աստծո օրենքները: Մեղքը մեզ արատավորում է և թույլ չի տալիս, որ վերադառնանք ապրելու Աստծո ներկայության մեջ: Մենք ունենք Փրկիչի քավիչ զոհաբերության կարիքը, որպեսզի հաշտվենք Երկնային Հոր հետ: Հիսուս Քրիստոսը քանդել է ֆիզիկական մահվան կապանքները՝ հարությունը հնարավոր դարձնելով բոլորի համար: Նա մեղքերից ներում է առաջարկում, եթե հնազանդվենք Նրա ավետարանի օրենքներին ու արարողություններին: Նրա շնորհիվ վեհացում է առաջարկվում: Փրկիչի քավիչ զորությունից օգտվելու հնարավորությունը ամենակարևոր ուղեբեռն է արարման ժամանակներից ի վեր:

Երկնային Հոր ծրագրի իրականացման համար Քրիստոսի քավիչ զորությունը պետք է հասանելի լինի Աստծո զավակների համար:[1] Քահանայությունը հասանելի է դարձնում այդ հնարավորությունները: Քահանայությունը հասանելի դարձնող հրթիռն է: Քահանայությունը էական է, որովհետև երկրի վրա անհրաժեշտ արարողություններն ու ուխտերը սպասավորվում են միայն նրա իշխանությամբ: Եթե քահանայությունը թերանա հասանելի դարձնել Փրկիչի քավիչ զոհաբերությունից օգտվելու հնարավորությունը, ուրիշ

ի՞նչ գործառույթ կունենային: Մի՞թե այն նախատեսված է ուշադրություն գրավող հրավառության համար: Աստված նախատեսել է, որ քահանայությունը օգտագործվի ավելի շատ բաների համար, քան Կիրակնօրյա դասարանում հրահանգներ տալն է կամ ծառայություն կատարելը: Այն նախատեսված է Նրաուղեբեռը տեղ հասցնելու համար:

Հրթիռի փոքրիկթերությունների դեպքում միսիան կարող է ավարտին չհասնել: Փխրուն միացումներն ու դյուրաբեկ նյութերը կարող են հրթիռի խափանման պատճառ դառնալ: Փոխաբերական իմաստով, որպեսզիքահանայությանը պաշտպանի փխրուն միացումներից և նյութերի մաշվածությունից, Աստված պաշտպանում է քահանայության և՛ շնորհումը, և՛ գործածությունը:[2] Քահանայության շնորհումը պաշտպանվում է քահանայության բանալիներով, որոնք մարդուն տրված նախագահական իրավունքներն են:[3] Քահանայության գործածումը նույնպես պաշտպանվում է քահանայության բանալիներով, բայց նաև ուխտերով, որ քահանայություն կրողները կապում են: Այսպիսով, քահանայության գործածումը պաշտպանվում է քահանայության և՛ բանալիներով, և՛ ուխտերով: Քահանայության լիազորություններըտրվում են անհատապես և քահանայությունից անկախ չեն գործում.[4] քահանայությունը ինքնավար զորության անկերպար աղբյուր չէ:

Եվ՛ Ահարոնյան, և՛ Մելքիսեդեկյան Քահանայությունը ստանում ենք ուխտով:[5] Աստված որոշում է պայմանները, իսկ մարդը ընդունում է դրանք: Ընդհանուր առմամբ՝ քահանայություն կրողները ուխտ են կապում օգնել Աստծուն Իր աշխատանքում: Արդի տնտեսության ավելի վաղ ժամանակաշրջանում Հիսուս Քրիստոսը բացատրել է, որ քահանայության ուխտը «հաստատվել է ձեր վրա՝ ի սեր ձեզ, և ոչ միայն ի սեր ձեզ, այլ ի սեր ողջ աշխարհի . . . քանի որ նրանք չեն գալիս ինձ մոտ»:[6]

Սա ուսուցանում է, որ քահանայության նպատակը մարդկանց հրավիրելն է, որ գան Քրիստոսի մոտ՝ օգնելով նրանց ընդունել վերականգնված ավետարանը: Քահանայությունը տրվել է մեզ, որպեսզի օգնենք Երկնային Հոր զավակներին ազատվել մեղքի բեռից և նմանվել Նրան: Քահանայության միջոցով աստվածայնության զորությունն է բացահայտվում բոլոր նրանց կյանքում, ովքեր կապում և պահում են ավետարանի ուխտերը և ստանում են ուղեկից արարողությունները:[7] Այդպես է մեզանից յուրաքանչյուրը գալիս Քրիստոսի մոտ, մաքրագործվում և հաշտվում Աստծո հետ: Քրիստոսի քավիչ զորությունը հասանելի է քահանայության միջոցով, որը ուղեբեռի փոխադրողն է:

Աստծո հետ ուխտերը լուրջ են և հանդիսավոր: Տղամարդը պետք է նախապատրաստվի, սովորի և այդ ուխտերի մեջ մտնի դրանքպատվելու մտադրությամբ: Ուխտը դառնում է մարդու գրավը: Անգլիական թատերագիր Ռոբերտ Բոլտի բառերը խմբագրած ասում են. մարդը ուխտ է կապում միայն, երբ ցանկանում է բացառիկ պարտավորության խոստում տալ: Իր խոստումին հավատարիմ մնալը նա նույնականացնում է իր արժանապատվության հետ: Երբ մարդը ուխտ է կապում, նա իրեն պահում է ինչպես ջուրը բռի մեջ: Եվ գիտի, որ եթե մատները բացի, ապա այլևս իրեն գտնելու հույս չկա: Ուխտը դրժողը կորցնում է ինքնությունը, որով կարող է պարտավորվել և երաշխիք չունի, որ առաջարկի:[8]

Ահարոնյան քահանայություն կրողը ուխտ է կապում խուսափել չարից, օգնել ուրիշներին հաշտվել Աստծո հետ և նախապատրաստվել ստանալու Մելքիսեդեկյան Քահանայությունը:[9] Այդ սրբազան պարտականությունները կատարվում են, երբ նա ուսուցանում է, մկրտում է, ամրապնդում է Եկեղեցու անդամներին և մարդկանց հրավիրում է ընդունել ավետարանը: Այդ բոլորը նրա «հրթիռային» գործառույթներն են: Փոխարենը՝ Աստված խոստանում է հույս, ներում, հրեշտակների սպասավորում և ապաշխարության ավետարանի ու մկրտության բանալիները:[10]

Մելքիսեդեկյան Քահանայություն կրողը ուխտ է կապում կատարել Ահարոնյան Քահանայությանն առնչվող պարտականությունները և մեծարել Մելքիսեդեկյան Քահանայության իր կոչումը:[11] Նա մեծարում է իր կոչումը՝ պահելով ուխտի հետ կապված պատվիրանները: Այդ պատվիրանների թվում են՝ «ուշք դարձնել հավերժական կյանքի խոսքերին», ապրել Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով,[12] վկայություն բերել Հիսուս Քրիստոսի ու Նրա վերջին օրերի աշխատանքի մասին,[13] խուսափել պարծենկոտությունից,[14] և Փրկչին բարեկամ դառնալ՝ վստահելով Նրան ընկերոջ պես:[15]

Փոխարենը՝ Աստված խոստանում է, որ Մելքիսեդեկյան Քահանայություն կրողը կստանա Աստծո խորհուրդները ըմբռնելու բանալիները: Նա կդառնա կատարյալ, որպեսզի կարողանա կանգուն մնալ Աստծո ներկայության մեջ: Նա ի վիճակի կլինի կատարել իր դերը փրկության աշխատանքում: Հիսուս Քրիստոսը ճանապարհ կպատրաստի

քահանայություն կրողի առաջ և նրա հետ կլինի: Սուրբ Հոգին կլինի քահանայություն կրողի սրտում, իսկ հրեշտակները կբարձրացնեն նրան: Նրա մարմինը ուժ կստանա և կնորանա: Նա կդառնա Աբրահամի օրհնությունների ժառանգորդը և իր կնոջ հետ միասին կդառնա Հիսուս Քրիստոսի ժառանգակիցը Երկնային Հոր արքայությունում:[16] Այդ բոլորը «ամենամեծ եւ պատուական խոստմունքներ են»: 17 Ավելի մեծ խոստումներ հնարավոր չէ պատկերացնել:

Մելքիսեդեկյան Քահանայություն ստացող յուրաքանչյուր տղամարդուն Աստված հաստատում է իր ուխտի խոստումները երդումով:[18] Այդ երդումը պատկանում է միայն Մելքիսեդեկյան Քահանայությանը,[19] և Աստված էերդումտալիս, ոչ թե քահանայություն կրողը:[20] Քանի որ այդ եզակի իրադարձությունը ներառում է Նրա աստվածային զորությունը և իշխանությունը, Աստված օգտագործում է երդում բառը՝ խոսքի հնարավոր ամենազորեղ ձևը, որպեսզի մեզ հավաստիացնի Իր խոստումների հաստատ և անդառնալի բնույթը:

Քահանայության ուխտերը դրժելը և դրանցից ամբողջությամբ հրաժարվելը լուրջ հետևանքներ ունի:[21] Քահանայության կոչմանը անփույթ վերաբերվելը կամ անտարբեր լինելը նման է հրթիռային բաղադրիչի մեջ դյուրաբեկ նյութի օգտագործմանը: Այն վտանգի տակ է դնում քահանայության ուխտը, որովհետև կարող է միսիան ավարտին չհասցնել: Աստծո պատվիրանների հանդեպ անհնազանդությունը նույնպես ուխտի դրժում է: Շարունակ ուխտը դրժող ու չապաշխարող մարդկանցից խոստումները ետ են պահվում:

«Քահանայության» հրթիռիու «Փրկիչի քավիչ զոհաբերությունից օգտվելու հնարավորության» ուղեբեռիմիջև եղած կապը ես լիարժեք սկսել եմ հասկանալ տարիներ առաջ: Հանգստյան օրերին ես երկու հանձնարարություն ունեի: Մեկը ցից հիմնադրելն էր մի երկրում, իսկ մյուսը առանձնազրույց անցկացնելն էր մի երիտասարդի հետ և, ամեն ինչ կարգին լինելու դեպքում, նրա քահանայության և տաճարային օրհնությունները վերականգնելը: 30-ամյա այդ տղամարդը միացել էր եկեղեցուն իր պատանեկության տարիներին: Նա պատվով ավարտել էր միսիայի ծառայությունը: Սակայն, տուն վերադառնալուց հետո նա կորցրել էր իր ճանապարհը և Եկեղեցու իր անդամությունը: Տարիներ անց նա «ինքն իրեն եկավ»[22] և սիրառատ քահանայության ղեկավարների ու բարի անդամների օգնությամբ ապաշխարեց և մկրտությամբ վերընդունվեց Եկեղեցի:

Ավելի ուշ, նա խնդրեց, որ քահանայության և տաճարային իր օրհնությունները վերականգնվեն: Մենք հանդիպում նշանակեցինք ժողովատանը՝ շաբաթ առավոտյան՝ ժ. 10-ին: Երբ ես ժամանեցի ավելի վաղ առանձնազրույցների համար, նա արդեն ժողովատանն էր: Նա մեծ հուզմունքով անհամբեր սպասում էր, որ կրկին քահանայություն ստանա:

Առանձնազրույցի ժամանակ ես նրան ցույց տվեցի նամակը, բացատրելով, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը անձամբ էր նայել նրահայցադիմումը և լիազորելառանձնազրույցը: Այդ ամբակազմ երիտասարդը արտասվեց: Ապա ես ասացի, որ մեր հարցազրույցի ամսաթիվը պաշտոնական նշանակություն չուներ նրա կյանքում: Նա զարմացած ինձ նայեց: Ես նրան տեղեկացրի, որ օրհնությունները վերականգնելուց հետո նրա անդամության գրանցումը ցույց կտա միայն իր առաջին մկրտության, հաստատման, քահանայության կարգման և օժտման օրերը: Նա կրկին արտասվեց:

Ես խնդրեցի նրան կարդալ Վարդապետություն և Ուխտերի այս հատվածը.

«Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք:

Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից, – ահա նա կխոստովանի և կթողնի դրանք»:[23]

Նա արտասվեց երրորդ անգամ: Այնուհետև ես դրեցի իմ ձեռքերը նրա գլխին և Հիսուս Քրիստոսի անունով, Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ և Եկեղեցու նախագահի լիազորությամբ, ես վերականգնեցի քահանայության և տաճարային նրա օրհնությունները:

Մեզ վրա իջավ խորհրդաստվի ուրախություն: Նա գիտեր, որ կրկին լիազորված էր կրելու և գործածելու Աստծո քահանայությունը: Նա գիտեր, որ իր տաճարայինօրհնությունները կրկին լիակատար ուժ ունեին: Նա ցատկում էր քայլելիս և լույսի արտացոլանք ուներ իր դեմքին: Ես այնքան հպարտ էին նրանով և զգում էի, որ Երկնային Հայրը նույնպես հպարտ է նրանով:

Դրանից հետո ցիցը կազմավորվեց: Ժողովները լի էին խանդավառ անդամներով, հավատարիմ Սրբերով

և հրաշալի ցցի նախագահություն հաստատվեց: Չնայած այդ երկրում առաջին ցցի ձևավորման պատմական իրադարձությանը, ուրախությունը, որ ես զգացի այդ երիտասարդի օրհնությունները վերականգնելիս, ավելի նշանակալի էր թվում:

Ես սկսեցի գիտակցել, որ ցցի ձևավորման նպատակը կամ Աստծո քահանայության օգտագործումը նախատեսված է օգնելու Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին Իրենց աշխատանքում, որպեսզի փրկագնում և վեհացում ձեռք բերելու հնարավորությունը հասանելի դարձվիԱստծո բոլոր զավակներին: Հրթիռի նման, որի նպատակը ուղեբեռը տեղ հասցնելն է, քահանայությունը տեղ է հասցնում Հիսուս Քրիստոսի ավետարանը, բոլոր մարդկանց հնարավորություն տալով ուխտեր կապել և ստանալ ուղեկից արարողությունները: «Քրիստոսի քավիչ արյունը»[24] կարող է այդպես գործել մեր կյանքում, երբ մենք զգում ենք Սուրբ Հոգու սրբագործող ազդեցությունը և ստանում ենք Աստծո խոստացած օրհնությունները:

Բացի ավետարանի օրենքներին ու արարողություններին հնազանդվելուց, ես հրավիրում եմ ձեզ քահանայության ուխտեր կապել և պահել այդ ուխտերը: Ընդունեք Աստծո երդումը և Նրա խոստումը: Մեծարեք քահանայության ձեր պարտականությունները, որպեսզի օգնեք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Գործածեք քահանայությունը, որպեսզիՓրկիչի քավիչ զոհաբերությունից օգտվելու հնարավորությունը հասանելի դարձնեք ևս մեկ անհատի: Եթե դուք անեք այդ, մեծ օրհնություններ կգան ձեզ և ձեր ընտանիքներին: Ես վկայում եմ, որ Քավիչը ապրում է և ղեկավարում է այս աշխատանքը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 1 Նեփի 11.31, 2 Նեփի 2.8
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.36
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 42.11, տես նաև Դալլին Հ. Օուքս, «Քահանայության բանալիները և իշխանությունը», *Լիահոնա,* մայիս 2014, 49–52:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 124.95, 130, 132 Քահանայությունը, որը մարդը ստանում է, անկախ չէ մարդուց, ինչպես որ Քրիստոսի քավիչ զորությունըանկախ չէ Քրիստոսից:
5. Ցածր քահանայությանն առնչվող ուխտի մասին սուրբ գրություններ կարելի է գտնել հետևյալ հատվածներում Թվոց 25.10–13, Նեեմիա 13.29, և Մաղաքիա 2.2–8: Մելքիսեդեկյան Քահանայությանն առնչվող ուխտի մասին սուրբ գրություններ կարելի է գտնել Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 14.26–37 (Սուրբ գրությունների ուղեցույցում), Սաղմոս 110.1, 4 և Վարդապետություն և Ուխտեր 84.39–42: Տես նաև Bruce R. McConkie, “The Doctrine of the Priesthood,” *Ensign,* May 1982, 32–34:
6. Վարդապետություն և Ուխտեր 84.48, 50
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.19–21
8. Տես Robert Bolt, *A Man for All Seasons: A Play in Two Acts* (1990), xiii–xiv, 140
9. Տես Թվոց 25.12–13, Նեեմիա 13.29, Եզեկիել 34.2–6, Մաղաքիա 2.2–9, Վարդապետություն և Ուխտեր 13.1, 20.46–59, 84.33–40
10. Տես Եբրայեցիս 7.19, Վարդապետություն և Ուխտեր 84.26–27:
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.33
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.43–44
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.61–62
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.73
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.77–88
16. Տես Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 14.26–37 (Սուրբ գրությունների ուղեցույց), Եբրայեցիս 7.11, Վարդապետություն և Ուխտեր 84.19, 33–34, 38, 42, 77–88:
17. Բ Պետրոս 1.4
18. Տես Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 14.26–31 (Սուրբ գրությունների ուղեցույց), Սաղմոս 110.1, 4, Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Եբրայեցիս 7.19–21 (Սուրբ գրությունների ուղեցույց), Վարդապետություն և Ուխտեր 84.33–40, 48:
19. Տես *The Teachings of Ezra Taft Benson* (1988), 223; Joseph Fielding Smith, in Conference Report, Apr. 1970, 59; *Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith (1976), 323:
20. Սուրբ գրություններում արձանագրված հատվածներ չկան այն մասին, որ Մելքիսեդեկյան Քահանայության ուխտ կապողը երդում է տալիս: Փոխարենը, հետևյալ հատվածներում, Աստվածերդում է տալիս, երբ ուխտ է կապում ստացողի հետ. Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 14.27–31 (Սուրբ գրությունների ուղեցույց), Սաղմոս 110.1, 4, Եբրայեցիս 7.21, Վարդապետություն և Ուխտեր 84.40: Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին ասել է. «Տերը երդվում է իր անունով . . . որ բոլորը, ովքեր պահում են Մելքիսեդեկյան Քահանայության ուխտերը, կժառանգեն, կստանան և կտիրապետեն բոլոր բաներին իր հավիտենական թագավորության մեջ: . . . Աստված երդումով ուխտել էր, որ Քրիստոսը վեհացում կստանա և նա կրկին երդվում է, երբ մենք ստանում ենք Մելքիսեդեկյան Քահանայությունը, որ մենք նմանապես վեհացում կունենանք, եթե ճշմարիտ ու հավատարիմ լինենք բոլոր բաներում» (“The Doctrine of the Priesthood,” 33):
21. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.41–42 Ապաշխարությունը միշտ հասանելի է նրանց համար, ովքեր կամենում են փոխվել: Տես, օրինակ, Դեյլ Գ. Ռենլանդ «Ապաշխարություն՝ ուրախալի ընտրություն», *Լիահոնա,* նոյ. 2016, 121–124:
22. Ղուկաս 15.17
23. Վարդապետություն և ուխտեր 58.42–43
24. Մոսիա 4.2

**Երեց Դեյվիդ Ֆ. Էվանս**
Յոթանասունից

# Բոլոր բաների ճշմարտությունը

*Մենք բոլորս անձնական պատասխանատվություն ունենք անելու ամեն բան, որպեսզի ձեռք բերենք և պահպանենք ամուր վկայություն։*

Այս երեկո հավաքվել ենք այն հույսով և հավատքով, որմենք այստեղից կհեռանանք ինչ-որ չափով զորացված և օրհնված Սուրբ Հոգու կողմից, ով ուսուցանում է ճշմարտությունը։[1] Ես ցանկանում եմ խոսելճշմարտության մեր անձնական որոնումների մասին։

Երբ երիտասարդ էի, շատ հարցեր ունեի Եկեղեցու վերաբերյալ։ Իմ հարցերից մի քանիսնանկեղծ էին։ Մյուսները՝ անկեղծ չէին և արտացոլում էին ուրիշների կասկածները։

Հաճախ իմ հարցերը քննարկում էի մորս հետ։ Վստահ եմ, որ նա զգում էր, որ իմ հարցերից մի քանիսն անկեղծ էին և բխում էին իմ սրտից։ Կարծում եմ, նա մի փոքր մտահոգվում էր այն հարցերի պատճառով, որոնք պակասանկեղծ էին և ավելի շատ վիճելի։ Այնուամենայնիվ, նա երբեք ինձ վատ դրության մեջ չէր դնում հարցադրումներիս պատճառով։ Նա լսում էր ու փորձում էր պատասխանել դրանց։ Երբ զգում էր, որ պատասխանել էր իր կարողությունների չափով, իսկես դեռ հարցեր ունեի, նա այսպիսի մի արտահայտությունն էր ասում. «Դեյվիդ, դա լավ հարց է»։ Մինչ *դու* փնտրում, կարդում և աղոթում ես պատասխանի շուրջ, ինչո՞ւ *դու* չես անում այնպիսի քայլեր, որոնք դու գիտես, պիտի անես և չանես քայլեր, որոնք գիտես, որ չպիտի անես։ Դա դարձավ ճշմարտությունը որոնելու իմ օրինաչափությունը։ Ուսումնասիրության, աղոթքի և պատվիրանները պահելու շնորհիվ ես հասկացա, որբոլոր իմ կարևոր հարցերին կան պատասխաններ։ Ես




նաև հասկացա, որ որոշ հարցերի համար պահանջվում է շարունակվող հավատք, համբերություն և հայտնություն։[2]

Հավատքը զարգացնելու և պատասխանները գտնելու պատասխանատվությունը մայրս դրել է ինձ վրա։ Նա գիտեր, որ կարևոր պատասխանները կստանամ, եթե փնտրեմ ճշմարտությունն այն ձևով, ինչպես Երկնային Հայրն է սահմանել։ Նա գիտեր, որ ինձ անհրաժեշտ է իմանալ ճշմարտությունը։ Նա գիտեր, որ ես պետք է անկեղծ լինեի իմ հարցադրումներում և ցանկանայի կատարել այն, ինչն արդեն գիտեի, որ ճշմարիտ է։ Նա գիտեր, որ ես կարիք ունեի աղոթքի ևուսումնասիրության,, և որ ես պիտիզարգացնեիմեծ համբերութուն, երբ փնտրում էի պատասխաններ Տիրոջից։ Համբերատար լինելու ցանկությունը ճշմարտության մեր որոնումների մի մասն է և ճշմարտությունը հայտնելու Տիրոջ օրինաչափության մի մասը։[3]

Ժամանակի ընթացքում ես հասկացա, որ մայրս ինձ ուսուցանում էճշմարտությունը փնտրելու Երկնային Հոր օրինակը։ Հավատքսաճեց, պատասխանները սկսեցին գալ, և ես ընդունեցի միսիայի կանչը։

Ապահմ միսիայի սկզբում եկավ մի ժամանակ, երբ հասկացա, որ պետք է իմանամ, թե արդյոք Եկեղեցին ճշմարիտ է, և Ջոզեֆ Սմիթն իսկապես եղել է Աստծո մարգարեն։ Ես հիշեցի, թե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ինչ է այդքան պարզորոշ ասել մեր վերջին գերագույն համաժողովի ժամանակ. «Եթե դուք դեռևս չունեք ամուր վկայություն այդ բաների վերաբերյալ, արեք, ինչանհրաժեշտ էայն ձեռք բերելու համար։ Կարևոր է, որ դուք ձեր վկայությունն ունենաք այս դժվարին ժամանակներում, քանզի ուրիշների վկայությունները ձեզ շատ քիչ կօգնեն»։[4] Ես գիտեի, թե ինչն է անհրաժեշտ։ Ես պետք է Մորմոնի Գիրքը կարդայիանկեղծ սրտով, անկեղծ միտումով և հարցնեի Աստծուն, թե արդյոք այն ճշմարիտ է։

Լսեք Երկնային Հոր ուշագրավ խորհուրդը, որը տվել է Մորոնի

մարգարեի միջոցով. «Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»:[5]

Որպեսզի ստանայի Մորմոնի Գրքում պարունակվող ճշմարտությունները, ես պետք է կարդայի այն: Ես սկսեցի գրքի սկզբից և կարդացի ամեն օր: Որոշ մարդիկ շատ շուտ են վկայություն ստանում: Ոմանցիամար կպահանջվի ավելի շատ ժամանակ, ավելի շատ աղոթքներ և միգուցե կպահանջվի գիրքն ընթերցել մի քանի անգամ: Ես պետք է կարդայի մինչև վերջ, որպեսզի ստանայի խոստացված վկայությունը: Այնուամենայնիվ, Աստված գրքումպարունակվող ճշմարտությունն ինձ հայտնեց Սուրբ Հոգու զորությամբ:

Իմ միսիոներական օրագրում նկարագրեցի ճշմարտությունն իմանալու իմ ուրախությունը, ինչպես նաև նկարագրեցի նվիրվածության և իմ ստացած ճշմարտության համաձայն անկեղծ միտումով գործելու իմ իսկ խոսքերը: Ես գրեցի. «Ես երդվեցի իմ Երկնային Հոր և իմ առաջ, որ կանեմ ամեն ինչ ուժերիս սահմաններում, որպեսզի իմ ողջ կյանքի ընթացքում ներդնեմ բոլորջանքերս կատարելու համար այն, ինչ ինձանից կպահանջվի: Բայց այժմ իմ առջևում միսիան է, և ես պատրաստվում եմմիսիան հրաշալի ծառայել, որի համար ես վատ չեմ զգա, բայց ոչ ինձ համար, այլ՝ Տիրոջ: Ես սիրում եմ Տիրոջը և սիրում եմ աշխատանքը ու պարզապես աղոթում եմ, որ այդ զգացումը երբեք չլքի ինձ»:

Ես հասկացա, որ այդ զգացումը մշտապես ունենալու համար պետք է անընդհատ սնուցել և ջանքեր գործադրել ապաշխարելու և պատվիրանները պահելու համար: Նախագահ Մոնսոնն ասել է. «Վկայությունը պետք է կենդանի և վառ պահել, շարունակ հնազանդվելով Աստծո պատվիրաններին, ամեն օր աղոթելով և սուրբ գրություններն ուսումնասիրելով»:[6]

Տարիների շարունակես աշխարհիբոլոր միսիոներներին և երիտասարդներին հարցրել եմ, թե ինչպես են նրանք սկսել ճշմարտությունը փնտրելու և վկայություն ստանալու իրենց ջանքերը: Գրեթե առանց բացառության նրանք պատասխանել են, որ անձնական վկայություն ստանալու իրենց ջանքերը սկսվել են, երբ որոշել են կարդալ Մորմոնի Գիրքը սկզբից և հարցնել Աստծուն, թե արդյոք այն ճշմարիտ է: Անելով դա, նրանք որոշում են կայացրել «գործել», ոչ թե «ներգործվել»[7] ուրիշների կասկածներից:

Ճշմարտությունն իմանալու համար մենք պետք է ապրենք ավետարանով[8] և «փորձարկենք»[9] խոսքը: Մեզ զգուշացվել է չհակառակվել Տիրոջ Հոգուն:[10] Ապաշխարությունը՝ պատվիրանները պահելու վճռականության հետ միասին, կարևոր մասն է ճշմարտությունը գտնելու անհատի որոնումներում:[11] Ի դեպ, մենք պետք է պատրաստ լինենք «հրաժարվելու բոլոր մեղքերից», որպեսզի ճանաչենք ճշմարտությունը:[12]

Մեզ պատվիրել են «ուսում փնտրենք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով» և «իմաստության խոսքեր փնտրեք լավագույն գրքերից»:[13] Ճշմարտության որոնումներում մենք պետք է կենտրոնանանք «լավագույն գրքերի» և լավագույն աղբյուրների վրա: Լավագույնների մեջ են սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերը:

Նախագահ Մոնսոնը խնդրել է մեզ «անել, [ինչ] անհրաժեշտ է», որպեսզի ձեռք բերենք և պահպանենք ամուր վկայություն:[14] Ի՞նչ է անհրաժեշտ ձեր վկայությունը զորացնելու և ամրապնդելու համար: Մենք բոլորս անձնական պատասխանատվություն ունենք անելու ամեն բան, որպեսզի ձեռք բերենք և պահպանենք ամուր վկայություն:

Համբերատար պահելով մեր ուխտերը և «անելով, [ինչ] անհրաժեշտ է» Տիրոջից պատասխաններ ստանալու համար, հանդիսանում

է ճշմարտությունը սովորելու Աստծո օրինակի մասը: Հատկապես, երբ ամեն բան դժվար է, մեզանից պահանջվում է «զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվել Տիրոջ ողջ կամքին»:[15] Մեր ուխտերը համբերատար պահելու արդյունքում մեծանում է մեր խոնարհությունը, մեծանում է ճշմարտությունն իմանալու մեր ցանկությունը և հնարավորություն է տալիս Սուրբ Հոգուն «առաջնորդելու մեզ իմաստության ուղիներով, որ մենք կարողանանք լինել օրհնված, բարգավաճ և պահպանված»:[16]

Ես և կինս շատ ենք սիրում մի անձնավորության, ով իր կյանքի մեծ մասը պայքարել է Եկեղեցու որոշ տեսակետների դեմ: Նա սիրում է ավետարանը և սիրում է Եկեղեցին, բայց դեռ ունի հարցեր: Նա կնքվել է տաճարում, ակտիվ է Եկեղեցում, կատարում է իր կոչումները և հրաշալի մայր ու կին է: Տարիների ընթացքում նա փորձել է անել այն բաները, որոնք ըստ նրաճշմարիտ են և չի արել այն բաները, որոնքսխալ են: Նա պահել է ուխտերը և շարունակել է փնտրել: Երբեմն նա շնորհակալ է եղել, որ կարողացել է հիմնվել ուրիշների հավատքի վրա:

Վերջերս նրա եպիսկոպոսը ցանկացավ զրուցել նրա և նրա

ամուսնու հետ: Նա խնդրեց, որ-ռանք տաճարում փոխարինող-ներ հանդիսանան և կատարեն տաճարային արարողություններն այն մարդկան համար, ովքեր դրա կարիքն ունեին: Այդ կոչումը զարմացրեց նրանց, բայց նրանք ընդունեցին այնն սկսեցին իրենց ծառայությունը Տիրոջ տանը: Նրանց պատանի որդին վերջերս կատա-րել էր ընտանեկան պատմության հետազոտություն և գտել ընտանի-քից մեկին, ում համար տաճարային արարողությունները չէին արվել: Ի վերջո, նրանք ծառայեցին փոխարի-նողներ և կատարեցին տաճարային արարողություններն այդ մարդու և նրա ընտանիքի համար: Երբ ծնկի իջան զոհասեղանի առաջ և կնք-ման արարողությունը մատուցվեց, այդ հրաշալի, համբերատար կինը, ով երկար ժամանակ փնտրում էր ճշմարտությունը, ունեցավ անձ-նական հոգևոր փորձառություն, որի շնորհիվ նա հասկացավ, որ տաճարն ու նրանում կատարվող արարողությունները ճշմարիտ և իրական են: Նազանգեցմորն ու պատմեց իր փորձառության մասին և ասաց, որ դեռևս ունի որոշ հար-ցեր, բայց նա գիտի, որ տաճարը ճշմարիտ է, որ տաճարային արա-րողությունները ճշմարիտ են, և որ Եկեղեցին ճշմարիտ է: Նրա մայրն արտասվեց երախտագիտության զգացումը սրտում՝ սիրող, համբե-րատար Երկնային Հոր և իր դստեր հանդեպ, ով համբերությամբ շարու-նակում է փնտրել:

Համբերությամբ ուխտեր պահելու արդյունքում երկնքի օրհնություններ-ը թափվում են մեր կյանք:[17]

Մեծ սփոփանք եմ գտել Տիրոջ այս խոստման մեջ, որ «Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմա-նալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:[18] Առանց բոլոր բաների մասին իմացության մենք կարող ենք իմանալ ճշմարտությունը: Մենք կարող ենք իմանալ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Ի դեպ, ինչպես Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն է ուսուցանել այսօր, մենք կարող ենք մեր սրտի «ամենախորքից զգալ» [տես Ալմա 13.27], որ Մորմոնի Գիրքը միանշանակ Աստծո խոսքն է»: Եվ մենք կարող ենք «զգալ այն այնքան խորը, որ երբևէ չցանկանանք նույ-նիսկ մեկ օր ապրել առանց նրա»:[19]

Մենք կարող ենք իմանալ, որ Աստված մեր Հայրն է, ով սիրում է մեզ և Նրա Որդին՝ Հիսուս Քրիս-տոսը, մեր Փրկիչն ու Քավիչն է: Մենք կարող ենք իմանալ, որ Նրա Եկեղեցու անդամակցությու-նը պետք է փայփայել, և որ ամեն կիրակի հաղորդությունից ճաշակելը օգնում է մեզ և մեր ընտանիքին ապահովության մեջ գտնվել: Մենք կարող ենք իմանալ, որ տաճարա-յին արարողությունների շնորհիվ ընտանիքներն իսկապես կարող են հավերժ միասին լինել: Մենք կարող ենք իմանալ, որ Հիսուս Քրիստոսի Քավությունն և ապաշխարության ու ներման օրհնությունները ճշմարիտ են և իրական: Մենք կարող ենք իմանալ, որ մեր սիրելի մարգարե, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Տիրոջ մարգարեն է և նրախորհրդա-կաններն ու Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները առաքյալներ են, մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ես գիտեմ, որ այս ամենը ճշմա-րիտ է և իմ վկայությունն եմ բերում Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Տես Մորոնի 10.5
2. Այդ հարցերից մեկը բոլոր արժանավոր տղամարդկանց քահանայություն շնորհելու հարցն էր: Այդ հարցը լուծվել է հայտնության միջոցով, որը 1978թ.-ի հունիսին մեկին տրվել էր Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին, նրա խորհրդականներին և Տասներկուսի անդամներին: Այդ հայտնությունը գրվել է Վարդապետություն և Ուխտերում, որպես Պաշտոնական հայտարարություն-2:
3. Օրինակի համար տես՝ Ղուկաս 21.15, Հռովմայեցիս 8.5, Ալմա 32.41–43, Եթեր 12.19, Վարդապետություն և Ուխտեր 21.5, 101.38, 107.30–31:
4. Թոմաս Ս. Մոնսոն, «Մորմոնի Գրքի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2017, 87:
5. Մորոնի 10.4
6. Թոմաս Ս. Մոնսոն, «Մորմոնի Գրքի զորությունը», 87:
7. 2 Նեփի 2.14, տես նաև Երեց Դեյվիդ Ա. Բեդնար «Հավատքով փնտրեք ուսումնառություն», *Լիահոնա,* սեպտ. 2007, 19–21:
8. Օրինակի համար տես՝ Հովհաննես 7.17, որտեղ Տերը խոստանում է «Եթե մեկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանա այս վարդապետության համար, թե արդյոք Աստուածանի՞ց է, կամ եթե ես իմ անձիցն եմ»: Տես նաև Ալմա 32:
9. Տես Ալմա 32.27:
10. Տես Ալմա 32.28:
11. Տես Ալմա 22.18, Վարդապետություն և Ուխտեր 93.27–28:
12. Ալմա 22.18
13. Վարդապետություն և Ուխտեր 88.118
14. Թոմաս Ս. Մոնսոն, «Մորմոնի Գրքի զորությունը», 87:
15. Մոսիա 24.15, տես նաև Մոսիա 24.13–14, Դեյվիդ Ա. Բեդնար, «Իրենց բեռները հեշտությամբ տանեին», *Լիահոնա,* մայիս 2014, 87–90:
16. Մոսիա 2.36
17. Տես Ջեֆրի Ռ. Հոլլանդ «An High Priest of Good Things to Come», *Լիահոնա,* հունվար. 2000, 45: Այս ելույթի մեջ Երեց Հոլլանդը նշել է. «Որոշ օրհնություններ շուտ են գալիս, մյուսները գալիս են ուշ, իսկմի մասն էլ չեն գալիս, քանի դեռ երկնքում չենք, բայց նրանց համար, ովքեր ընդունում են Հիսուս Քրիստոսի ավետարանը, *դրանք գալիս են»:*
18. Մորոնի 10.5
19. Ռասսել Մ. Նելսոն. «Վկայություն Մորմոնի Գրքի մասին. Ինչի՞ նման կլինի ձեր կյանքն առանց նրա»: *Լիահոնա,* նոյ. 2017, 63:

# Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները

## ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

## ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ


Ռասսել Մ. Նելսոն

Դալլին Հ. Օուքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Գարի Ի. Սթիվենսոն

Դեյլ Գ. Ռենլանդ

## ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Լ. Ուիթնի Քլեթոն

Քրեյգ Ս. Քրիչլենսեն


Ուլիսես Սոարես

Լին Գ. Ռոբինս

Ջերիթ Վ. Գոնզ

Խուան Ա. Ուսեդա

Պատրիկ Քիրոն

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻԵԽԱՆԱՎՈՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ

## ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



Դին Մ. Դեյվիս
Առաջին Խորհրդական

Ջերալդ Կոսե
Նախագահող Եպիսկոպոս

Վ. Քրիսթոֆեր Վաղել
Երկրորդ Խորհրդական

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

### ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Դեյվին Գ. Դյուրան
Առաջին Խորհրդական

Թեդ Ռ. Քալիսթեր
Նախագահ

Բրայըն Ք. Էշթոն
Երկրորդ Խորհրդական

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Բոնսի Լ. Օսկարսոն
Նախագահ

Նիլ Ֆ. Մերիոթ
Երկրորդ Խորհրդական

### ՍԳՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Շարոն Յուբանք
Առաջին Խորհրդական

Ջին Բ. Բինգհեմ
Նախագահ

Ռեյնա Ի. Սբուրտո
Երկրորդ Խորհրդական

### ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Բոնսի Հ. Քորդոն
Առաջին Խորհրդական

Ջոյ Դ. Ջոնս
Նախագահ

Քրիստինա Բ. Ֆրանկո
Երկրորդ Խորհրդական

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Դուգլաս Դ. Հոլմս
Առաջին Խորհրդական

Ստիվեն Վ. Օուեն
Նախագահ

Մ. Ջոզեֆ Բրոու
Երկրորդ Խորհրդական

Հոկտեմբեր 2017

**Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզ**
Յոթանասունից

# Արժանանալ Տիրոջ և ձեր ընտանիքի վստահությանը

*Մարդիկ, ովքեր ունեն «սրտի շիտակություն», այն մարդիկ են, որոնց կարելի է վստահել, քանի որ վստահության հիմքը շիտակ լինելն է։*

Եղբայրնե՛ր, հավանաբար չկա ավելի մեծ գովասանք, որ կարող ենք ստանալ Տիրոջից, քան իմանալ այն, որ Նա վստահում է մեզ որպեսքահանայության արժանի կրողներ, հրաշալի ամուսիններ և հայրեր։

Մի բան հաստատ է. Տիրոջ վստահությանն արժանանալն օրհնություն է, որ տրվում է մեզ մեր մեծ ջանքերի շնորհիվ։ Վստահությունն օրհնություն է, որը հիմնված է Աստծո օրենքներին հնազանդվելու վրա։ Տիրոջ վստահությանն արժանանալը գալիս է մկրտության ջրերում և սուրբ տաճարում կապած ուխտերին հավատարիմ լինելու արդյուքում։ Երբ մենք պահում ենք Տիրոջը տված խոստումները, մեր հանդեպ ունեցած Նրա վստահությունը մեծանում է։

Ես սիրում եմ հինև մեր ժամանակների սուրբ գրությունները, որոնցում օգտագործվում է «սրտի շիտակություն» արտահայտությունը, երբ նկարագրվում է արդար մարդու էությունը։[1] Շիտակությունը կամ շիտակության պակասը մարդու էության հիմնական մաս է հանդիսանում։ Մարդիկ, ովքեր ունեն «սրտի շիտակություն», այն մարդիկ են, որոնց կարելի է վստահել, քանի որ վստահության հիմքը շիտակ լինելն է։

Շիտակ մարդ լինելը պարզապես նշանակում է, որ ձեր մտադրությունները, ինչպես նաև ձեր գործերը, մաքուր և արդար են ձեր կյանքի բոլոր բնագավառներում՝ թե հասարակության մեջ, և՛ թե անձնական կյանքում։ Մեր կայացրած յուրաքանչյուր որոշմամբ մենք կամ ավելի շատ ենք արժանանում Աստծո վստահությանը, կամ կորցնում ենք

Նրա վստահությունը։ Այս սկզբունքը թերևս ամենապարզ ձևով շարադրվում է որպես ամուսիններ և հայրեր Աստծո կողմից մեզ տրված պարտականություններում։

Որպես ամուսիններ և հայրեր, ժամանակակից մարգարեների, տեսանողների և հայտնողների միջոցով Աստված մեզ տվել է պարտականություններ, որոնք շարադրված են «Ընտանիք. հայտարարություն աշխարհին» փաստաթղթում։ Այս փաստաթուղթը մեզ սովորեցնում է, որ (1) «հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ», (2) հայրերը պետք է «պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքները», և (3) հայրերը պետք է պատասխանատու լինեն պաշտպանելու իրենց ընտանիքները։[2]

Աստծո վստահությանն արժանանալու համար մենք պետք է Տիրոջ ձևով մեր ընտանիքներում կատարենք Նրա կողմից տրված այս երեք պարտականությունները։ Ինչպես նշվում է ընտանիքի մասին հռչակագրում, Տիրոջ ձևը նշանակում է՝ կատարել այդ պարտականությունները մեր կնոջ հետ միասին «որպեսհավասար գործընկերներ»։[3] Իմ կարծիքով, դա նշանակում է, որ մենք չենք կայացնում որևէ կարևոր որոշում՝ կապված այդ երեք պարտականությունների հետ, առանց մեր կնոջ հետ լիարժեք համաձայնության գալու։

Տիրոջ վստահությանն արժանանալու առաջին քայլը Նրան ապավինելն է։ Նեփի մարգարեն նման օրինակ է մեզ տվել, մինչ աղոթում էր. «Ո՜վ Տեր, ես քեզ եմ ապավինել, և ես քեզ եմ ապավինելու հավիտյան։ Ես իմ վստահությունը չեմ դնի մարմնի բազկի վրա»։[4] Նեփին լուրջ որոշում էր կայացրել կատարելու Տիրոջ կամքը։ Բացի նրանից, որ նա *ասաց*՝ «կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է», Նեփին անսասան էր իր որոշման մեջ *իրագործելու* իր հանձնարարությունը, ինչպես նշվում է այս հայտարարության մեջ. «Ինչպես կենդանի է Տերը, և ինչպես կենդանի ենք մենք, մենք ետ չենք գնա անապատ մեր հոր մոտ, մինչև



չիրագործենք այն, ինչ Տերը պատվիրել է մեզ»։[5]

Քանի որ առաջինը Նեփին ապավինեց Աստծուն, Աստված մեծապես վստահեց Նեփիին։ Տերն առատորեն օրհնեց նրան Հոգով, ինչն էլ օրհնեց նրա կյանքը, նրա ընտանիքի կյանքը և նրա ժողովրդի կյանքը։ Քանի որ Նեփին ղեկավարում էր սիրով և առաքինությամբ, ապահովում և պաշտպանում էր իր ընտանիքին ու ժողովրդին, նա գրում է. «Մենք ապրեցինք երջանիկ»։[6]

Այս հարցի շուրջ կանանց տեսակետը ներկայացնելու համար ես խնդրեցի իմ երկու ամուսնացած դուստրերին օգնել ինձ։ Ես խնդրեցի նրանց մեկ կամ երկու նախադասությամբ ներկայացնել, թե իրենց կարծիքով ինչ կարևորություն ունի վստահությունն իրենց ամուսնության և ընտանեկան կյանքի համար։ Ահա Լարա Հարիսի և Քրիստինա Հանսենի մտքերը։

Առաջինը Լարան. «Ինձ համար կարևոր բաներից մեկն է իմանալ, որ իմ ամուսինը օրվա ընթացքում կատարում է ընտրություններ, որոնք հարգանք և սեր են ցուցաբերում իմ հանդեպ։ Երբ մենք կարողանում ենք վստահել միմյանց նման կերպ, այն խաղաղություն է բերում մեր տուն, որտեղ մենք կարողանում ենք միասին վայելել մեր ընտանեկան կյանքը»։

Այժմ Քրիստինայի մտքերը. «Մեկին վստահելը նման է մեկին հավատալուն։ Այդ վստահության և հավատի բացակայությունն առաջ կբերի վախ և կասկած։ Ինձ համար ամենամեծ օրհնություններից մեկը, որ բխում է իմ ամուսնու հանդեպ լիարժեք վստահությունից, խաղաղությունն է. մտքի խաղաղությունը, իմանալով, որ նա իսկապես անում է այն, ինչ ասում է, որ կանի։ Վստահությունը բերում է խաղաղություն, սեր և մթնոլորտ, որտեղ այդ սերը կարող է մեծանալ»։

Լարան և Քրիստինան երբեք չեն տեսել միմյանց գրածները։ Ինձ համար շատ հետաքրքիր է, որ նրանք երկուսն էլ, իրարից անկախ, տան խաղաղության օրհնությունը համարել են վստահելի ամուսին ունենալու անմիջական հետևանք։ Ինչպես տեսնում ենք իմ դուստրերի օրինակներից, վստահության սկզբունքը չափազանց կարևոր դեր

է խաղում քրիստոսակենտրոն տուն ձևավորելու հարցում։

Ես նաև հնարավորություն եմ ունեցել վայելելու այդ նույն Քրիստոսակենտրոն մշակույթը, մեծանալով մի տան մեջ, որտեղ հայրս պատվում էր իր քահանայությունը և ձեռք էր բերել ողջ ընտանիքի վստահությունը՝ «իր սրտի շիտակության համար»։[7] Թույլ տվեք կիսվել ձեզ հետ երիտասարդ տարիների փորձառությամբ, որը ցույց է տալիս դրական երկարատև ազդեցությունը, որ հայրը, ով հասկանում և ապրում է շիտակության վրա կառուցված վստահության սկզբունքով, կարող է ունենալ իր ընտանիքի վրա։

Երբ ես շատ երիտասարդ էի, հայրս հիմնադրեց մի ընկերություն, որը մասնագիտացած էր գործարանի ավտոմատացման մեջ։ Այս բիզնեսը նախագծում, պատրաստում և տեղադրում էր ավտոմատացված հոսքագծերողջ աշխարհում։

Երբ ես սովորում էի միջնակարգ դպրոցում, հայրս ցանկացավ, որ ես սովորեմ աշխատել։ Նա նաև ցանկացավ, որ ես հիմնովին ուսումնասիրեմ մեր բիզնեսը։ Իմ առաջին աշխատանքը ներառում էր հանրության լայն շերտերի համար շինության անտեսանելի տարածքների վերանորոգումը ներկումը։

Երբ ես սկսեցի սովորել ավագ դպրոցում, ինձ հնարավորություն տվեցին աշխատելու գործարանում։ Ես սկսեցի սովորել գծագրեր կարդալ և աշխատեցնել ծանր պողպատյա մեքենաները։ Ավագ դպրոցն ավարտելուց հետո ես գնացի համալսարան, ապա միսիա։ Երբ միսիայից վերադարձա, ես անմիջապես վերադարձա աշխատանքի։ Ես պիտի գումար վաստակեի հաջորդ տարվա ուսման համար։

Միսիայից տուն վերադառնալուց կարճ ժամանակ անց, մինչ ես աշխատում էի գործարանում, մի օր հայրս կանչեց ինձ իր գրասենյակ և հարցրեց, թե արդյոք կկամենայի գնալ նրա հետ գործնական ուղևորության Լոս Անջելես։ Սա առաջին անգամն էր, որ հայրս հրավիրում էր ինձ ուղեկցել նրան գործնական ուղևորության ժամանակ։ Նա նաև

ինձ թույլ էր տալիս հասարակության մեջ ներկայացնել ընկերությունը:

Նախքան ուղևորության մեկնելը նա ինձ որոշ մանրամասներ հայտնեց այդ նոր պոտենցիալ հաճախորդի մասին: Առաջինը, հաճախորդը բազմազգ ընկերություն էր: Երկրորդը, նրանք թարմացնում էին իրենց ողջ արտադրանքն ամբողջ աշխարհում՝ վերջին ավտոմատացված տեխնոլոգիաներով: Երրորդը, մեր ընկերությունը նախկինում երբեք չէր մատակարարել նրանց ինժեներական ծառայություններ կամ տեխնոլոգիաներ: Եվ ի վերջո, նրանց լավագույն կորպորատիվ գործընկերը, ով պատասխանատու էր գնումների համար, հրավիրել էր այս հանդիպումը՝ վերանայելու նոր նախագծի վերաբերյալ մեր հայտը: Այս հանդիպումը ներկայացնում էր նոր և պոտենցիալ կարևոր հնարավորություն մեր ընկերության համար:

Լոս Անջելես հասնելուց հետո ես և հայրս գնացինք գործադիր տնօրենի գրասենյակ հանդիպման: Բիզնեսի առաջին պատվերը վերաբերում էր նախագծի տեխնիկական առանձնահատկությունները քննարկելուն և վերլուծելուն: Քննարկման հաջորդ կետը վերաբերում էր օպերատիվ մանրամասներին, ներառյալ՝ կազմակերպչական գործողությունները և առաքման ժամկետները: Օրակարգի եզրափակիչ կետը վերաբերում էր գներին և պայմաններին: Ահա այս պահից ամեն բան ավելի հետաքրքիր դարձավ:

Այս կորպորատիվ գործընկերը բացատրեց մեզ, որ մեր առաջարկած գինն ամենացածրն էր ծրագրի համար առաջարկված մնացած գներից: Ապա նա, ի զարմանս մեզ, ասաց առաջարկված գներից հաջորդ ամենացածր գինը: Այնուհետև նա հարցրեց մեզ, թե արդյոք կցանկանայինք հետ վերցնել մեր առաջարկը և նորը ներկայացնել: Նա նշեց, որ մեր նոր գինը պետք է պարզապես մի փոքր ցածր լիներ հաջորդ առաջարկված ցածր գնից: Ապա նա բացատրեց, որ մենք իրար մեջ հավասար կկիսենք այդ ավելացած գումարը: Նա հիմնավորեց սա, ասելով, որ բոլորի համար էլ այն շահավետ կլինի: Մեր ընկերության համար շահավետ կլիներ, քանի որ մենք ավելի շատ գումար կվաստակեինք, քան առաջին պայմանագրի դեպքում: Նրա ընկերության համար շահավետ կլիներ, քանի որ նրանք ավելի շատ գումար կվաստակեին, քան նախորդ առաջարկի դեպքում: Եվ, իհարկե, նրա համար շահավետ կլիներ վերցնել այդ տարբերությունը, քանի որ նա էր այս հրաշալի գործարքի կազմակերպիչը:

Ապա նա տվեց մեզ փոստի համարը, ուր կարող էինք ուղարկել նրա պահանջած գումարը: Այս ամենից հետո նա նայեց հորս և հարցրեց. «Այսպիսով, պայմանավորվեցի՞նք»: Ի զարմանս ինձ, հայրս կանգնեց, սեղմեց նրա ձեռքն ու ասաց, որ մենք կվերադառնանք նրա մոտ:

Ժողովից հեռանալուց հետո մենք նստեցինք վարձու մեքենան, հայրս շրջվեց դեպի ինձ և հարցրեց. «Այսպիսով, քո կարծիքով մենք ի՞նչ պետք է անենք»:

Ես պատասխանեցի, ասելով, որ չէի կարծում, որ մենք պետք է ընդունենք այդ առաջարկը:

Այնուհետև հայրս հարցրեց. «Չե՞ս կարծում, որ մենք պարտավորություն ունենք մեր բոլոր աշխատակիցների առաջ՝ պահպանելու աշխատանքի գումարի չափը»:

Մինչ ես խորհում էի նրա հարցի շուրջ և նախքան կկարողանայի պատասխանել, նա պատասխանեց իր իսկ հարցին: Նա ասաց. «Լսիր, Ռի՛կ, եթե դու երբևէ կաշառք վերցնես կամ հրաժարվես շիտակությունից, շատ դժվար կլինի այլևսվերագտնել այն: Երբեք չանես նման բան, նույնիսկ մեկ անգամ»:

Փաստը, որ ես կիսվում եմ այս փորձառությամբ, նշանակում է, որ ես երբեք չեմ մոռացել այն, ինչ հայրս սովորեցրեց ինձ մեր առաջին գործնական ճամփորդության ժամանակ: Ես կիսվում եմ այդ փորձառությամբ, որպեսզի ցույց տամ հարատև ազդեցությունը, որն ունենք որպես հայրեր: Դուք կարող եք պատկերացնել վստահությունը, որ ես ունեի իմ հոր հանդեպ՝ շնորհիվ նրա սրտի շիտակության: Նա

ապրում էր այդ նույն սկզբունքներով իրանձնական կյանքում իմ մոր, իր երեխաների և բոլոր նրանց հետ, ում հետ շփվում էր:

Եղբայրնե՛ր, այս երեկո ես աղոթում եմ, որ մենք բոլորս կարողանանք առաջինը ապավինել Տիրոջը, ինչպես արեց Նեփին, ապա, մեր սրտերի շիտակության միջոցով արժանանանք Տիրոջ վստահությանը, ինչպես նաև մեր կնոջ և զավակների վստահությանը: Եթե մենք հասկանանք և կիրառենք շիտակության վրա կառուցված վստահության այս սուրբ սկզբունքը, մենք հավատարիմ կլինենք մեր սուրբ ուխտերին: Մենք նաև հաջողության կհասնենք մեր ընտանիքներում սիրով և առաքինությամբ ղեկավարելու գործում, ապահովելով ընտանիքի կենսական կարիքները և պաշտպանելով մեր ընտանիքներն աշխարհի չարիքներից: Այդ ճշմարտությունների մասին ես խոնարհաբար վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Տես, օրինակ, Ա Թագավորաց 9.4, Վարդապետություն և Ուխտեր 124.15
2. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129
3. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», 129
4. 2 Նեփի 4.34
5. 1 Նեփի 3.7, 15
6. 2 Նեփի 5.27
7. Վարդապետություն և Ուխտեր 124.15

**Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ**
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

# Երկնային լույսի կրողները

*Որպես Աստծո քահանայության կրող և որպես Հիսուս Քրիստոսի աշակերտ, դուք լույսի կրող եք:*

Մի տարեց մարդ հերթ էր կանգնել փոստատանը սպասարկման բաժնից նամականիշեր գնելու համար: Մի երիտասարդ կին նկատեց, որ նա դժվարությամբ էր քայլում և առաջարկեց ցույց տալ նրան, թե ինչպես գնել նամականիշերսարքից օգտվելով՝ ժամանակ խնայելու համար: Տարեց տղամարդն ասաց. «Շնորհակալություն, բայց ես նախընտրում եմ սպասել: Մեքենան ինձ չի հարցնի իմ հոդացավի մասին»:

Երբեմն օգնում էխոսել նրա հետ, ում մտահոգում են մեր դժվարությունները:

Ցավը, վիշտը և հիվանդությունը փորձառություններ են, որ բոլորս ենք ունենում. մեր մտքերը երբեմն կարող են հիմնականում կենտրոնանալ ձախորդ, թշվառ և անհաջող պահերի վրա:

Երբ խոսքը վերաբերում է մեր ֆիզիկական բարօրությանը, ծերանալը և հիվանդությունը մենք ընդունում ենք որպես մեր մահկանացու ճամփորդության մաս: Մենք փնտրում ենք մասնագետների խորհուրդը, ովքեր գիտակ են ֆիզիկական մարմնի հետ կապված հարցերում: Երբտառապում ենք հուզականլարվածության կամ հոգեկան հիվանդության պատճառով, մենք փնտրում ենք օգնություն մասնագետների կողմից, ովքեր բուժում են նման հիվանդություններ:

Մահկանացու կյանքումմենքբախվում ենք ոչ միայն ֆիզիկական նհուզական խնդիրների, այլնհանդիպում ենք հոգևոր մարտահրավերների: Մեզանից յուրաքանչյուրի կյանքում լինում են ժամանակներ, երբ մեր վկայությունը շատ ամուր է: Գուցե եղել են նաև ժամանակներ, երբ մեր

Երկնային Հայրը հեռու է թվացել: Լինում են ժամանակներ, երբ մենք մեր ողջ սրտով գնահատում ենք Հոգու բաները: Գուցե լինեն նաև ժամանակներ, երբ կթերագնահատվեն դրանց արժեքն ու նշանակությունը:

Այսօր ես ցանկանում եմ խոսել հոգևոր բարօրության մասին. ինչպես կարող ենք ապաքինում գտնել լճացած վիճակից և լինել կենսունակ, հոգևորապես առողջ:

### Հոգևոր հիվանդություն

Երբեմն հոգևոր հիվանդությունը արդյունք է մեղքի կամ հուզականվերքերի: Երբեմն հոգևոր անկումն այնքան դանդաղ է տեղի ունենում, որ մենք դժվարանում ենք նկատել, թե ինչ է կատարվում: Նստվածքային ապարների նման, հոգևոր ցավը և վիշտը կարող են գոյանալ ժամանակի ընթացքում, ծանրանալով մեր հոգու վրա այնքան ժամանակ, մինչև որ չափազանց ծանր է լինում դրանքկրելը: Դա կարող է պատահել, օրինակ, երբ աշխատավայրում, տանը և եկեղեցում մեր ունեցած պարտականությունները դառնում են այնքան ճնշող, որ մենք կորցնում ենք ավետարանի բերած ուրախության մասին մտածելու ունակությունը: Մենք կարող ենք նույնիսկ համարել, որ ավելին չունենք տալու կամ ավետարանով ապրելըմեր ուժերից վեր է:

Սակայն հոգևոր փորձությունների իրական լինելը դեռ չի նշանակում, որ դրանք անհաղթահարելի են:

Մենք կարող ենք բուժվել հոգևորապես:

Նույնիսկ ամենախոր հոգևոր վերքերը, այո, նույնիսկ անբուժելի թվացողները, կարող են բուժվել:

Իմ թանկագի՛ն ընկերներ, Հիսուս Քրիստոսի բժշկող զորությունը չի բացակայում մեր օրերում:

Փրկիչի բժշկող հպումը կարող էկյանքեր փոխել մեր ժամանակներում, ճիշտ, ինչպես Նա արել է անցած դարերում: Եթե մենք լոկ հավատ ունենանք, Նա կարող է բռնել մեր ձեռքը, լցնել մեր հոգին երկնային լույսով ու բժշկությամբ և ասել մեզ օրհնյալ բառերը՝ «Վեր կաց, մահիճդ առ եւ ման եկ»:[1]

### Խավար և լույս

Ինչ էլ որ լինիմեր հոգևոր հիվանդությունների պատճառը, դրանք բոլորն էլ ունեն մեկ ընդհանուր բան՝ աստվածային լույսի բացակայություն:

Խավարը նվազեցնում է հստակ տեսնելու մեր ունակությունը: Այն մշուշում է մեր տեսլականն այն բաների վերաբերյալ, որոնք մի ժամանակ պարզ ու հստակ էին: Երբ մենք խավարի մեջ ենք, ավելի հավանական է, որ սխալ ընտրություններ կատարենք, քանի որ չենք տեսնում մեր ճանապարհին առկա վտանգները: Երբ մենք խավարի մեջ ենք, ավելի հավանական է, որ կորցնենք մեր հույսը, քանի որ չենք կարողանում տեսնել սպասվելիք խաղաղությունը և ուրախությունը, եթե մենք միայն շարունակենք առաջ գնալ:

Մյուս կողմից, լույսը մեզ թույլ է տալիս տեսնել իրերն այնպես, ինչպես իրականում կան: Այն մեզ թույլ է տալիս տարբերել ճիշտը սխալից, կարևորն անկարևորից: Երբ մենք լույսի մեջ ենք, մենք կարող ենք կատարել արդար ընտրություններ՝ հիմնված ճշմարիտ սկզբունքների վրա: Երբ մենք լույսի մեջ ենք, մենք ունենք «հույսի կատարյալ պայծառություն»,[2] քանի որ կարողանում ենք նայել մեր մահկանացու կյանքի փորձություններին հավերժության տեսանկյունից:

Մենք կգտնենք հոգևոր բժշկություն, եթե հեռանանք աշխարհի ստվերներից դեպի Քրիստոսի հավիտենական լույսը:

Որքան շատ ենքհասկանում և կիրառում լույսի վարդապետական հասկացությունը, այնքան ավելի պաշտպանված ենք հոգևոր հիվանդություններից, որոնք ազդում կամ անհանգստացնում են մեզ ամեն կողմից և ավելի լավ կարող ենք ծառայել որպես եռանդուն, խիզախ, հոգատար և խոնարհ քահանայություն կրողներ՝ մեր սիրելի և հավիտենական Թագավորի ճշմարիտ ծառաներ և աշակերտներ:

### Աշխարհի լույսը

Հիսուս Քրիստոսն ասել է. «Ես եմ աշխարհքի լոյսը. ով որ իմ ետեւից գայ, նա խաւարումը չի գնալ, այլ կեանքի լոյսը կընդունի»:[3]

Ի՞նչ է դա նշանակում:

Պարզապես հետևյալը. նա, ով խոնարհաբար հետևում է Հիսուս Քրիստոսին, կունենա Նրա լույսը: Եվ այդ լույսը կտարածվի այնքան, մինչև ի վերջո կցրի ամենամեծ խավարը:

Դա նշանակում է, որ կա մի զորություն, ուժգին ազդեցություն, որ բխում է Փրկիչից: Այն «դուրս է գալիս Աստծո ներկայությունից, որ լցնի տարածության անսահմանությունը»:[4] Քանի որ այդ զորությունը լուսավորում, վեհացնում է մեր կյանքը, սուրբ գրություններում այն հաճախ կոչվում է լույս, սակայն այն նաև կոչում են հոգի և ճշմարտություն:

Վարդապետություն և Ուխտերում մենք կարդում ենք. «Տիրոջ խոսքը ճշմարտություն է, և այն ինչ ճշմարտություն է՝ լույս է, և այն ինչ լույս է՝ Հոգի է, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Հոգին»:[5]

Այս խորը գաղափարը, որ լույսը հոգի է, որը ճշմարտություն է, և այդ լույսը շողում է յուրաքանչյուր ոգու վրա, ով գալիս է աշխարհ, նույնքան կարևոր է, որքան հուսադրող: Քրիստոսի լույսը լուսավորում և լցնում է բոլորի հոգիները, ովքեր ականջ են դնում Հոգու ձայնին:[6]

Քրիստոսի լույսը լցնում է տիեզերքը:

Այն լցնում է երկիրը:

Եվ այն կարող է լցնել յուրաքանչյուր սիրտ:

«Աստված անաչառ է»:[7] Նրա լույսը մատչելի է բոլորին՝ մեծ ու փոքր, հարուստ կամ աղքատ, արտոնյալ կամ անապահով:

Եթե դուք բացեք ձեր միտքն ու սիրտը Քրիստոսի լույսը ստանալու համար և խոնարհաբար հետևեք Փրկիչին, դուք ավելի շատ լույս կստանաք: Տող առ տող, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ, ձեր հոգում դուք կունենաք ավելի շատ լույս և ճշմարտություն, մինչև որ խավարը կցրվի ձեր կյանքից:[8]

Աստված կբացի ձեր աչքերը:

Աստված կտա ձեզ նոր սիրտ:

Աստծո սիրո, լույսի և ճշմարտության շնորհիվ կբացահայտվեն

թաքնված բաները, և դուք կվերածնվեք Հիսուս Քրիստոսում կյանքի նորոգության մեջ:[9]

Տերը խոստացել է. «Եվ եթե ձեր աչքն ուղղված լինի միայն իմ փառքին, ձեր ամբողջ մարմինը լցված կլինի լույսով, և ձեր մեջ չի լինի խավար. և այն մարմինը, որը լցված է լույսով, ըմբռնում է բոլոր բաները»:[10]

Սա հոգևոր հիվանդության լիարժեք բուժումն է: Խավարը ցրվում է լույսի առկայությամբ:

### Փոխաբերություն հոգևոր խավարի վերաբերյալ

Այնուամենայնիվ, Աստված մեզ չի ստիպի ընդունել Իր լույսը:

Եթե մենք սկսենք հարմարվել խավարին, մեր սրտերի փոփոխությունանհավանական կդառնա:

Որպեսզի փոփոխություն տեղի ունենա, մենք պետք է թույլ տանք, որ լույսն առատորեն հորդի մեր մեջ:

Որպես ավիաընկերության կապիտան, Երկիր մոլորակի վրայով իմ թռիչքների ընթացքում ես միշտ հիացել եմ Աստծո ստեղծագործության գեղեցկությամբ և կատարելությամբ: Ինձ համար հատկապես գրավիչ էր երկրի և արևի միջև եղած կապը: Ես դա համարում եմ խավարի և լույսի գոյության մեծ խորհրդանիշ:

Ինչպես բոլորս գիտենք, յուրաքանչյուր 24 ժամվա ընթացքում տեղի է ունենում գիշեր-ցերեկ հերթափոխը:

Այսպիսով, ի՞նչ է գիշերը:

Գիշերը ոչ ավելին է, քան ստվերը։

Նույնիսկ գիշերվա խավարում արևը չի դադարում ճառագել իր լույսը։ Այն շարունակվում է շողալ նույնքան վառ, որքան երբևէ շողացել է։ Սակայն երկրի կեսը խավարի մեջ է։

Լույսի բացակայությունն առաջ է բերում խավար։

Երբ ընկնում է մութ գիշերը, մենք չենք հուսահատվում կամ անհանգստանում, որ արևը մարել է։ Մենք չենք մտածում, որ արևն այնտեղ չէ կամ մահացել է։ Մենք հասկանում ենք, որ մենք ստվերում ենք, որ երկիրը կշարունակի պտտվել և, ի վերջո, արևի ճառագայթները կրկին կհասնեն մեզ։

Խավարը չի նշանակում, որ լույս չկա։ Հաճախ դա պարզապես նշանակում է, որ մենք ճիշտ տեղում չենք լույս ստանալու համար։ Վերջերս տեղի ունեցած խավարման ժամանակ շատերը մեծ ջանքեր գործադրեցին մոտենալու համար լուսնի առաջացրած ստվերի նեղ շերտին՝ մի պայծառ օրվա կեսին։

Ճիշտ նույն ձևով, հոգևոր լույսը շարունակ շողում է Աստծո յուրաքանչյուր զավակի վրա։ Սատանան ջանք չի խնայի ստվեր ստեղծելու կամ մեզ ստվերում պահելու համար, որը մենք ենք ստեղծում։ Նա կստիպի մեզ ստեղծել մեր սեփական խավարումը. նա կմղի մեզ դեպի իր մեծ քարանձավի խավարը։

Հոգևոր խավարը կարող է մոռացության վարագույր սփռել նույնիսկ նրանց շուրջը, ովքեր ժամանակին քայլել են լույսի մեջ և հրճվել Տիրոջով։ Այնուամենայնիվ, նույնիսկ ամենամեծ խավարի պահերին Աստված լսում է մեր խոնարհ աղերսանքները, մինչ մենք աղոթում ենք. «Հավատում եմ, Տէր, իմ անհաւատութեանն օգնիր»։[11]

Ալմայի ժամանակներում կային շատերը, ովքեր դժվարանում էին ընդունել հոգևոր բաները, և «իրենց անհավատության պատճառով» Աստծո լույսը և ճշմարտությունը չէին կարողանում մտնել նրանց հոգիները, «և նրանց սրտերը կարծրացած էին»։[12]



### Մենք լույսի կրողներն ենք

Եղբայրնե՛ր, մեզանից է կախված ճիշտ տեղում լինելը, որ տեսնենքՀիսուս Քրիստոսի ավետարանի աստվածային լույսը և ճշմարտությունը։ Նույնիսկ, երբ հասել է գիշերը և աշխարհը թվում է խավար, մենք կարող ենք ընտրել քայլել Քրիստոսի լույսով, պահել Նրա պատվիրանները և խիզախաբար վկայել Նրա իրական լինելու և Նրա վեհության մասին։

Որպես Աստծո քահանայության կրող և որպես Հիսուս Քրիստոսի աշակերտ, դուք լույսի կրող եք։ Շարունակեք անել բաներ, որոնք կմեծացնեն Նրա աստվածային լույսը։ «Բարձր պահեք ձեր լույսը»[13] և «այսպէս լուսաւորէ [այն] մարդկանց առաջին—որ ոչ թե նրանք տեսնեն և հիանան ձեզանով, այլ «որ ձեր բարի գործերը տեսնեն, և փառաւորեն ձեր Հօրը որ երկնքումն է»։[14]

Իմ թանկագին եղբայրներ, դուք գործիքներ եք Տիրոջ ձեռքում, նպատակ ունենալով լույս և բժշկություն բերելու Երկնային Հոր զավակների հոգիներին։ Հավանաբար դուք ձեզլիազորված չեք զգում բժշկելու նրանց, ում հոգին հիվանդ է, և ոչ ավելի շատ, քան փոստատան աշխատողն է լիազորված օգնելու հոդացավով տառապողին։ Գուցե դուք ինքներդ ունեք ձեր իսկ հոգևոր խնդիրները։ Այնուամենայնիվ, Տերը կանչել է ձեզ։ Նա տվել է ձեզ իշխանություն և պարտականություն՝ հասնելու կարիքավորներին։ Նա օժտել է ձեզ Իր սուրբ քահանայության զորությամբ, որ լույս բերեքխավարում և բարձրացնեքու օրհնեքԱստծո զավակներին։ Աստված վերականգնել է Իր Եկեղեցին և Իր թանկագին ավետարանը, «որը ամոքում է վիրավոր հոգին»։[15] Նա պատրաստել է հոգևոր բարօրության ուղին, որ ապաքինում գտնեքլճացածվիճակից և շարժվեքդեպի կենսունակ, հոգևորապես առողջ վիճակը։

Ամեն անգամ, երբ դուք դարձնում եք ձեր սրտերն առ Աստված խոնարհ աղոթքի միջոցով, դուք զգում եք Նրա լույսը։ Ամեն անգամ, երբ սուրբ գրություններում փնտրում եք Նրա խոսքը և կամքը, լույսն ավելի է պայծառանում։ Ամեն անգամ, երբ նկատում եք կարիքի մեջ գտնվողին և զոհաբերում եք ձեր իսկ հարմարավետությունը՝ սիրով օգնության հասնելու համար, լույսը տարածվում և բոցավառվում է։ Ամեն անգամ, երբ դուք դիմակայում եք գայթակղությանը և ընտրում մաքուր լինելը, ամեն անգամ, երբ փնտրում կամ շնորհում եք ներում, ամեն անգամ, երբ խիզախաբար վկայում եք ճշմարտության մասին, լույսը ցրում է խավարը և գրավում ուրիշների, ովքեր նույնպես փնտրում են լույս և ճշմարտություն։

Մտածեք ձեր սեփական փորձառությունների, Աստծուն և մերձավորներին մատուցած ծառայությունների մասին, երբ աստվածային լույս է շողացել ձեր կյանքում՝ սուրբ տաճարում, հաղորդության սեղանի մոտ, աղոթքովմտորելու լուռ պահին, ընտանեկան հավաքների կամ քահանայության ծառայությունների ընթացքում։ Կիսվեք այդ պահերով ձեր ընտանիքի, ընկերների և հատկապես մեր երիտասարդների հետ, ովքեր լույս են փնտրում։ Նրանք կարիք ունեն ձեզանից լսելու, որ այդ լույսի հետ գալիս է հույս և բժշկում՝ նույնիսկ խավարով լցված աշխարհում։

Քրիստոսի լույսը բերում է հույս, երջանկություն և հոգու ցանկացած վերքի կամ տկարության բուժում։[16] Նրանք, ովքեր զգում են այդ կատարելագործող ազդեցությունը, գործիքներ են դառնում Աշխարհի Լույսի ձեռքում՝

լույս տալով ուրիշներին:[17] Նրանք կարող են զգալ այն, ինչ թագավոր Լամոնին զգաց. «Այդ լույսը նրա հոգուն այնպիսի ուրախություն էր ներշնչել, որ ցրել էր խավարի ամպը, և . . . հավիտենական կյանքի լույսն էր վառվել նրա հոգում»:[18]

Իմ թանկագի՛ն եղբայրներ, իմ թանկագի՛ն ընկերներ, մեր նպատակն է փնտրել Տիրոջը, մինչև Նրա հավերժական կյանքի լույսը վառ շողա մեր մեջ և մեր վկայությունը լինի հաստատուն ու ամուր՝ նույնիսկ խավարի մեջ:

Ես աղոթում և օրհնում եմ, որ դուք հաջողությամբ իրագործեք ձեր ճակատագիրը՝ որպես Ամենազոր Աստծո քահանայության կրողներ և միշտ լինեք Նրա երկնային լույսի ուրախ կրողներ: Մեր Վարդապետի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Հովհաննես 5.8
2. 2 Նեփի 31.20
3. Հովհաննես 8.12
4. Վարդապետություն և Ուխտեր 88.12, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 88.6–7
5. Վարդապետություն և Ուխտեր 84.45
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.46
7. Գործք Առաքելոց 10.34
8. Վարդապետություն և Ուխտեր 88.40 հատվածում ուսուցանվում է, որ «լույսը հարում է լույսին»: Այլ կերպ ասած, որքան շատ լույս, ճշմարտություն, իմաստություն և առաքինություն մենք ստանանք, այնքան դրանք կավելանան մեր կյանքում: «Նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում» (Վարդապետություն և Ուխտեր 50.24):
9. Սա մկրտության խոստումներից մեկն է, որ երբեթաղում ենք մեր մահկանացու, մարմնական կյանքը, մենք դուրս ենք գալիս մկրտության ջրերից կենդանի Քրիստոսում: Մենք դուրս ենք գալիս որպես նոր արարածներ, ովքեր քայլում են կյանքի նորոգության մեջ (տես Հռովմայեցիս Զ.4, Բ Կորնթացիս 5.17):
10. Վարդապետություն և Ուխտեր 88.67, տես նաև Մատթեոս Զ.22
11. Մարկոս 9.24
12. Մոսիա 26.3
13. 3 Նեփի 18.24
14. Մատթեոս 5.16
15. Հակոբ 2.8
16. Տես Ա Հովհաննես 1.7, Ալմա 7.11–13
17. Տես Մատթեոս 5.14
18. Ալմա 19.6

**Նախագահ Հենրի Բ. Այրինգ**
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

# Տերն առաջնորդում է Իր Եկեղեցին

*Իր Եկեղեցին ղեկավարելու համար Տերը պահանջում է մեծ և հաստատուն հավատք այն մարդկանց կողմից, ովքեր ծառայում են Նրան Երկրի վրա:*

Իմ սիրելի՛ եղբայրներ, որ կրում եք Աստծո քահանայությունը, այսօր ես ցանկանում եմ խոսել այն հրաշալի եղանակների մասին, որով Տերն առաջնորդում է Իր արքայությունը երկրի վրա: Դուք արդեն գիտեք հիմունքները: Ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին հաստատի այդ հիմունքները:

Առաջին, Հիսուս Քրիստոսը Եկեղեցու ղեկավարն է ողջ երկրի երեսին:

Երկրորդ, այսօր Նա ղեկավարում է Իր Եկեղեցին, խոսելով տղամարդկանց հետ, ովքեր կանչված են մարգարեներ, և Նաանում է դա հայտնության միջոցով:

Երրորդ, տարիներ առաջ Նա հայտնություն է շնորհել Իր մարգարեներին, դեռ շնորհում է և կշարունակի շնորհել:

Չորրորդ, Նա շնորհում է վավերացնող հայտնություն այն մարդկանց, ովքեր ծառայում են Իր մարգարեների ղեկավարման ներքո:

Այս հիմունքներից մենք հասկանում ենք, որ Իր Եկեղեցին ղեկավարելու համար Տերը պահանջում

է մեծ և հաստատուն հավատք այն մարդկանց կողմից, ովքեր ծառայում են Նրան Երկրի վրա:

Օրինակ, հավատք է անհրաժեշտ հավատալու համար, որ հարություն առած Տերը հետևում է ամենօրյա մանրամասներին Իր արքայությունից: Հավատք է անհրաժեշտ հավատալու համար, որ Նա անկատար մարդկանց է կանչում վստահելի կոչումներում: Հավատք է անհրաժեշտ հավատալու համար, որ Նա կատարյալ կերպով ճանաչում է այն մարդկանց, ում Նա կանչում է՝ ճանաչում էնրանց ունակություններն ու ներուժը և այդպիսով սխալներ չի կատարում Իր կոչումներում:

Դա կարող է ժպիտ կամ գլխի բացասական շարժումներ առաջացնել այս լսարանում նստած որոշ մարդկանց մոտ՝ թե՛ նրանց, ովքեր մտածում են, որ իրենց ծառայությունները սխալմունք են եղել, և թե՛ նրանց, ովքեր հիշում են իրենց ծանոթ մարդկանց և մտածում, որ նրանց տեղը Տիրոջ արքայության մեջ սխալմունք է եղել: Իմ խորհուրդն այդ երկու խմբի մարդկանց այն է, որ նրանք չշտապեն դատողություններ անել, մինչև որ կարողանան ավելի լավ տեսնել այն, ինչ Տերն է տեսնում: Փոխարենը, դուք պետք է դատողություն անեք, որ *դուք* կարող եք հայտնություն ստանալ և անվախ կերպով գործել ըստ այդ հայտնության:

Դա անելու համար հավատք է պահանջվում: Նույնիսկ, ավելի շատ հավատք է անհրաժեշտ հավատալու համար, որ Տերը կանչել է անկատար ծառաների, որպեսզի նրանք առաջնորդեն ձեզ: Այս երեկո իմ նպատակն էամրապնդել ձեր հավատքն առ այն, որ հանուն Նրակատարած ձեր ծառայության մեջ Տերը ղեկավարում է ձեզ: Եվ որ ավելի կարևոր է, հուսով եմ, որ կարող եմ ամրապնդել ձեր հավատքն առ այն, որ Տերը ոգեշնչում է այն անկատար մարդկանց, ում Նա կանչել է ձեզ ղեկավարներ:

Առաջին հայացքից դուք կարող եք մտածել, որ այդպիսի հավատքը կարևոր չէ Տիրոջ Եկեղեցու և արքայության առաջխաղացման համար: Սակայն, անկախ քահանայության ձեր պաշտոնից՝ լինի դա Տիրոջ մարգարե, թե Ահարոնյան Քահանայություն նոր կրող, դուք գուցե բացահայտեք, որ հավատքն էական է:

Եկեք սկսենք նրանից, թե ինչ է հավատքը ուսուցիչների կամ սարկավագների քվորումի նախագահի համար: Կարևոր է, որ նա հավատա, որ Տերը իրենանձամբ է կանչել, իմանալով այդ ուսուցիչի թուլություններն ու ուժեղ կողմերը: Նա պետք է հավատք ունենա, որ կանչը փոխանցող այդ մարդը ստացել է հայտնություն Աստծո Հոգու կողմից: Նրա խորհրդականներն ու իր քվորումի անդամները պետք է ունենան նույն հավատքը՝ անվախ վստահությամբ նրան հետևելու համար:

Ես այդպիսի վստահության ականատես եմ եղել, երբ մի կիրակի առավոտմի տղա իր սարկավագների քվորումի նախագահության հետ մասնակցում էր հավաքի: Նա այդ նախագահության նոր կանչված քարտուղարն էր: Այդ երիտասարդ նախագահությունը խորհուրդ էր անում միասին: Նրանք խոսում էին, թե ինչ տարբերակներով կարող էին իրականացնել եպիսկոպոսի խնդրանքը և քիչ ակտիվ մի տղայի հետ բերեին եկեղեցի: Աղոթքից և քննարկումից հետո նրանք հանձնարարեցին քարտուղարին գնալ այն տղայի տուն, ով ժողովի չէր հաճախում և հրավիրեր նրան:

Քարտուղարը չէր ճանաչում այդ տղային, բայց գիտեր, որ այդ տղայի ծնողներից մեկը քիչ ակտիվ էր, իսկ մյուսը՝ եկեղեցու անդամ չէր և բարյացակամ չէր: Քարտուղարը լարվածություն էր զգում, սակայն ոչ վախ: Նա գիտեր, որ Աստծո մարգարեն խնդրել էր քահանայության ղեկավարներին հետ բերել կորած ոչխարին: Եվլսել էրնախագահության աղոթքը: Նա լսել էր, թե ինչպես էին նրանք մտածել այդ տղայի և իր անվան շուրջ:

Ես նայում էի, թե ինչպես էր այդ քարտուղարը բարձրանում փողոցով և գնում այդ քիչ ակտիվ անդամի տուն: Նա դանդաղ քայլում էր, կարծես գնում էր մեծ վտանգին ընդառաջ: Բայց կես ժամ չանցած, նա ուրախ ժպիտով ցած իջավայդ տղայի հետ: Ես չգիտեմ, թե նա հասկանում էր դա այն ժամանակ, բայցգնաց հավատքով, որ գտնվում էր Տիրոջ ծառայության մեջ: Նա պահեց այդ հավատքը և տարիների ընթացքում աճեց որպես միսիոներ, հայր, երիտասարդների ղեկավար և եպիսկոպոս:

Եկեք խոսենք, թե այդպիսի հավատքն ինչ է նշանակում եպիսկոպոսի համար: Երբեմն, եպիսկոպոսը կանչվում է ծառայելու այն մարդկանց, ում նա լավ է ճանաչում: Երբեմն, ծխի անդամները ճանաչում են նրա թույլ կողմերը և հոգևոր ուժը, և նրանք գիտեն, որ ծխի ուրիշանդամներ կարող էին կանչվել. նրանք, ովքեր ավելի կրթված էին, ավելի փորձառու, ավելի հաճելի կամ նույնիսկ ավելի լավ տեսք ունեն:

Այդ անդամները պետք է իմանան, որ եպիսկոպոս ծառայելու կանչը գալիս է հայտնության միջոցով, Աստծո կողմից: Առանց նրանց հավատքի Աստծո կողմից կանչված եպիսկոպոսի համար դժվար կլինի ստանալ այն հայտնությունը, որն անհրաժեշտ է այդ անդամներին օգնելու համար: Նա հաջողության չի հասնի, եթե անդամները չհավատան և չհաստատեն իրեն:

Բարեբախտաբար, հակառակը նույնպես ճիշտ է: Հիշեք Տիրոջ ծառա Բենիամին Թագավորին, ով իր մարդկանց ապաշխարության բերեց: Մարդկանց սրտերը փափկեցին իրենց հավատքի շնորհիվ առ այն, որ նա կանչվել է Աստծո կողմից իր թուլություններով հանդերձ, և որ նրա խոսքերը բխում են Աստծուց: Դուք հիշում եք, թե մարդիկ ինչ ասացին. «Այո՛, մենք հավատում ենք բոլոր խոսքերին, որոնք դու ասել ես մեզ. . . . մենք գիտենք դրանց հավաստիության և ճշմարտացիության մասին՝ Ամենակարող Տիրոջ Հոգու շնորհիվ, որը մեր մեջ կամ մեր սրտերում մի զորեղ փոփոխություն է առաջացրել, այնպես որ մենք այլևս հակում չունենք չարիք անելու, այլ՝ շարունակ կատարելու բարիք» (Մոսիա 5.2):

Որպեսզի ղեկավարը հաջողության հասնի Տիրոջ աշխատանքում, մարդկանց վստահությունը, որ նա կանչված է Աստծո կողմից, պետք է գերազանցի նրա մարդկային թուլություններին: Հիշում եք, թե Բենիամին Թագավորն ինչպես մեկնաբանեց ղեկավարման իր դերը.

«Ես չեմ պատվիրել ձեզ հասնել այստեղ, որ դուք վախենաք ինձանից, կամ, որ դուք մտածեք, որ ես ինքս ավելին եմ, քան մի մահկանացու մարդ:

Այլ ես ձեզ պես ենթակա եմ ամեն ձևի թուլությունների՝ ի մարմնո և ի մտոք. սակայն ես ընտրվել եմ այս ժողովրդի կողմից, և նվիրաբերվել եմ իմ հոր կողմից, և թույլատրվել, Տիրոջ ձեռքով, որ կառավարիչ ու թագավոր լինեմ այս ժողովրդի վրա. և ես պահվել ու պահպանվել եմ նրա անզուգական զորությամբ՝ ծառայելու ձեզ ողջ զորությամբ, մտքով և ուժով, որը Տերը շնորհել է ինձ» (Մոսիա 2.10–11):

Տիրոջ Եկեղեցու ձեր ղեկավարը կարող է թույլ մարդ թվալ, իսկ միգուցե՝ ուժեղ ու ոգեշնչված մարդ: Փաստն այն է, որ ցանկացած ղեկավար ունի այդ և ուրիշ այլ հատկանիշներ: Մեզ առաջնորդելու կանչված Տիրոջ ծառաներին կարող է օգնել այն, որ մենք տեսնենք նրանց այնպես, ինչպես Տերը տեսավ նրանց կանչելիս:

Տերն Իր ծառաներին տեսնում է կատարելապես: Նա տեսնում է նրանց ներուժը և նրանց ապագան: Եվ Նա գիտի, թե ինչպես կարող է փոխվել նրանց էությունը: Նա նաև գիտի, թե նրանք ինչպեսկարող են փոխվել իրենց ղեկավարած մարդկանց հետ շփվելու արդյունքում:

Հնարավոր է, դուք ավելի ուժեղ եք դարձել այն մարդկանց շնորհիվ, ում ծառայել եք: Մի անգամ ես կանչվեցի ծառայելու որպես երիտասարդ ամուրիների ծխի եպիսկոպոս: Համոզված չեմ, թե Տերը ցանկանում էր, որ ես Նրա օգնությամբ փոփոխություն գործեի երիտասարդների կյանքում, թե Նա գիտեր, որ այդ երիտասարդները կփոխեն ինձ:

Իմ հասկացողությունից վեր էր, որ այդ ծխի երիտասարդներից շատերը վարվում էին այնպես, կարծես ես կանչվել եմ Աստծո կողմից՝ հատկապես նրանց համար: Նրանք տեսնում էին իմ թուլությունները, բայց թույլ չէին տալիս, որ դա փոխեր իրենց վերաբերմունքը:

Ես հիշում եմ մի երիտասարդ տղայի, ով իր կրթության ապագայի հետ կապված խորհուրդ էր հարցնում: Նա նոր էր ընդունվել մի լավ համալսարան: Իմ խորհուրդ տալուց մեկ շաբաթ անց նա տեսակցություն նշանակեց ինձ հետ:

Երբ մտավ իմ սենյակ, ի զարմանս ինձհարցրեց. «Եպիսկոպոս, կարո՞ղ ենք աղոթել մեր զրույցից առաջ: Եվ կարո՞ղ ենք ծնկի իջնել: Եվ կարո՞ղ եմ ես աղոթել»:

Նրա խնդրանքն ինձ զարմացրեց: Բայց նրա աղոթքն ինձ ավելի զարմացրեց: Այն այսպես էր հնչում. «Երկնային Հայր, դու տեղյակ ես, որ Նախագահ Այրինգն ինձ անցած շաբաթ խորհուրդ տվեց և դա չօգնեց: Խնդրում եմ ոգեշնչում տուր նրան, որ հասկանա, թե այժմ ես ինչպես պետք է վարվեմ»:

Այժմ դուք կարող եք ժպտալ, բայց ես այդպես չվարվեցի: Նա արդեն գիտեր, թե Տերն ինչ էր ցանկանում, որ ինքն աներ: Բայց նա հարգեց Տիրոջ Եկեղեցում եպիսկոպոսի կոչումը և, հավանաբար, ցանկանում էր, որ ես ավելի մեծ վստահությամբ հայտնություն ստանայի այդ կոչման մեջ:

Եվ դա օգնեց: Մեր ոտքի կանգնելուց և նստելուց հետո ես հայտնություն ստացա: Ես ասացի, որ զգացել եմ, թե ինչ է Տերը ցանկանում նրանից: Այդ ժամանակ նա դեռևս 18 տարեկան էր, բայց հոգևոր առումով հասուն էր:

Նա գիտեր, որ անհրաժեշտություն չկար դիմելու եպիսկոպոսին այդպիսի խնդրի դեպքում: Բայց նա սովորեց աջակցել Տիրոջ ծառային, նույնիսկ, իր մահկանացու թուլությունների առկայության դեպքում: Ի վերջո նա դարձավ ցցի նախագահ: Նա իր կյանքում հիշեց և կիրառեց իրար հետ սովորած դասերը. եթե հավատք ունեք, որ Տերն առաջնորդում է Իր Եկեղեցին հայտնության միջոցով, որոնք տրվում են Իր կանչած անկատար ծառաներին, ապա Տերը կբացի երկնքի պատուհանները նրա համար, ինչպես Նա կբացի այն ձեր համար:

Այդ փորձառությունից ի վեր ես կիրառում եմ այն դասը, որ այն մարդկանց հավատքը ում ծառայում

ենք, երբեմն ավելին է, քան մեր հավատքը, մեզ հայտնություն է պարգևում Տիրոջը ծառայելիս:

Մեկ այլ դաս ևս քաղեցի դրանից: Եթե այդ տղան ինձ դատապարտեր առաջին անգամ տված իմ սխալ խորհրդի համար, ապա նա այլևս չէր մոտենա ինձ: Եվ այսպիսով, որոշելով չդատել ինձ, նա ստացավ այն հաստատումը, որը ցանկանում էր:

Այդ փորձառությունից ևս մեկ դաս օգտակար է եղել ինձ: Որքանով որ ես եմ տեղյակ, նա ծխից ոչ ոքի չէր ասել, որ ես վատ խորհուրդ եմ տվել նրան առաջին անգամ: Եթե նա այդպես վարվեր, դա միգուցե նվազեցներ ծխի այլ անդամների հավատքը եպիսկոպոսի ոգեշնչման հանդեպ:

Ես փորձում եմ չդատել Տիրոջ ծառաներին կամ խոսել նրանց ակնհայտ թուլությունների մասին: Եվ իմ օրինակով փորձում եմ դա սովորեցնել իմ զավակներին: Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը կիսվել է մի սկզբունքով, որը ես փորձում եմ կիրառել իմ կյանքում: Եվ ես կիսվում եմ այն ձեզ հետ:

«Մենք . . . պետք է աջակցենք և հաստատենք մեր տեղի ղեկավարներին, քանի որ նրանք «կանչվել և ընտրվել» են . . . Այս Եկեղեցու ցանկացած անդամ կարող է խորհուրդ ստանալ եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից, ցցի կամ միսիայի նախագահից և Եկեղեցու Նախագահից ու նրա գործընկերներից: Այդ եղբայրներից ոչ մեկը չի խնդրել իր կոչման համար: Ոչ ոք կատարյալ չէ: Բայց նրանք Տիրոջ ծառաներն են, կանչված են Նրա կողմից այն մարդկանց միջոցով, որոնց ոգեշնչման իրավունք է տրվել: Այդ կանչված, հաստատված և ձեռնադրված մարդիկ իրավունք ունեն մեր հաստատող աջակցության:

«. . . Եկեղեցական առաջնորդների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը շատերին է պատճառել հոգևոր թուլություն և կործանում: Մենք պետք է անտեսենք ցանկացած ենթադրյալ սխալ կամ բացթողում այն մարդկանց մեջ, ովքեր կանչված են նախագահելու մեզ և կրելու այն կոչումը որին կանչված են» («Called and Chosen», *Լիահոնա*, նոյ. 2005, 54–55):

Այդ խորհուրդն ամեն անգամ օրհնում է Աստծո ծառաներին:

Տիրոջ Եկեղեցու վաղ օրերին Մարգարե Ջոզեֆ Սմիթին ընկերակից ղեկավարները սկսեցին խոսել նրա սխալների մասին: Չնայած նրանք տեսել էին շատ գործեր և տեղյակ էին Տիրոջ հետ ունեցած նրա կապի մասին, քննադատության և չարակամության նրանց ոգին տարածվեց ժանտախտի նման: Տասներկուսից մեկը ցույց տվեց հավատքի և նվիրվածության այն չափանիշները, որոնք մենք պետք է ունենանք, եթե պատրաստվում ենք ծառայել Տիրոջ արքայության մեջ:

Ահա հաշվետվությունը. «Մի քանի երեցներ ժողովիրավիրեցին տաճարում բոլոր նրանց համար, ովքեր մտածում էին, որ Ջոզեֆ Սմիթն ընկած մարգարե է: Նրանք ցանկանում էին Դեյվիդ Ուիթմերին նշանակել Եկեղեցու նոր նախագահ: . . . Մարգարեի հասցեին հնչեցրած փաստարկները լսելուց հետո, Բրիգամը [Յանգը] կանգնեց և վկայեց, «Ջոզեֆը մարգարե էր, և ես գիտեի դա, և որ նրանք կարող են հայհոյել ու զրպարտել նրան, որքան ցանկանում են, բայց նրանք չեն կարող ոչնչացնել Աստծո Մարգարեի նշանակումը, նրանքկարող էին ոչնչացնել միայն իրենց իշխանությունը, կտրել այն թելը, որը կապում է նրանց Մարգարեին ու Աստծուն և խորտակել իրենց դժոխքում» (*Church History in the Fulness of Times Student Manual* Եկեղեցու կրթական համակարգի ձեռնարկ, 2003], 2-րդ թող, 174, տես նաև *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Բրիգամ Յանգ* [1997], 79):

Կա մի թել, որը ծառայելու ընթացքում մեզ կապում է Տիրոջ հետ: Այն սկսվում է այն վայրից, որտեղ մենք կանչված ենք ծառայելու արքայությունում և հասնում է քահանայությունում մեզ նախագահող մարդկանց և մարգարեին, ով կապված է Տիրոջը: Հավատք և խոնարհություն է պահանջվում ծառայելու այնտեղ, որտեղ կանչված ենք և վստահել, որ Տերն է կանչել մեզ և այն մարդկանց, ովքեր նախագահում են մեզ և հաստատել նրանց ողջ հավատքով:

Կլինեն ժամանակներ, ինչպես Կիրթլանդի օրերին, երբ մեզանից կպահանջվի Բրիգամ Յանգի հավատքն ու նվիրվածությունը, որպեսզի կանգնենք այնտեղ, որտեղ Տերը կանչել է մեզ և լինենք հավատարիմ Նրա մարգարեին և ղեկավարներին, որոնց Նա կանչել է:

Ես բերում եմ իմ հանդիսավոր և ուրախ վկայությունը, որ Տեր Հիսուս Քրիստոսը ղեկի մոտ է: Նա առաջնորդում է Իր Եկեղեցին և Իր ծառաներին: Ես վկայում եմ, որ Թոմաս Ս. Մոնսոնը միակ տղամարդն է, ով կրում և գործադրում է Սուրբ քահանայության բոլոր բանալիները երկրի վրա այս պահին: Եվ օրհնություններ եմ խնդրում բոլոր խոնարհ ծառաների համար, ովքեր այդքան պատրաստակամ և լավ ծառայում են Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում, որոնց Նա անձամբ է առաջնորդում: Ես վկայում եմ, որ Ջոզեֆ Սմիթը տեսավ Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին: Նրանք խոսեցին նրա հետ: Քահանայության բանալիները վերականգնվեցին Երկնային Հոր բոլոր զավակներին օրհնելու նպատակով: Մեր առաքելությունն ու վստահությունն է ծառայել մեր տեղում՝ Տիրոջ գործի համար: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Կիրակի առավոտյան նիստ | 1 հոկտեմբերի, 2017թ.

**Ջին Բ. Բինգհեմ**
Սփոփող Միության Գերագույն Նախագահ

# Եւ ձեր ուրախությունը լցուած լինի

*Հիսուս Քրիստոսը ամենն բժշկության, խաղաղության և հավերժական առաջընթացի աղբյուրն է։*

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ուրախ եմ ձեզ հետ լինելու համար։ Եվ այս առավոտ ուզում եմ խոսել ձեզ հետ հենց այդ մասին՝ կատարյալ ուրախություն ունենալու մասին։

Վերջերս թերթում կարդացի մի վերնագիր. «Աղետները կործանում են ազգերը [և] աշխարհը»։[1] Փոթորիկներից և ջրհեղեղներից մինչև սաստիկ շոգեր ու երաշտներ, արագ տարածվող հրդեհներից և երկրաշարժերից մինչև պատերազմներ ու կործանարար հիվանդություններ. թվում է «ողջ երկրագունդը խառնաշփոթի մեջ» է։[2]

Միլիոնավոր մարդիկ տեղահանվել են և անթիվ կյանքեր են կործանվել այդ արհավիրքների արդյունքում։ Ընտանիքներում և համայնքներում առկա հակառակությունները, ինչպես նաև վախի, կասկածի և չիրականացած սպասելիքների հետ կապված ներքին պայքարը նույնպես մեզ ստիպում են ապրել տագնապի մեջ։ Դժվար է զգալայն ուրախությունը, որն ըստ Լեքիի ուսուցանածի, կյանքի իմաստն է։[3] Բոլորս էլ երբեմն հարցրել ենք. «Որտե՞ղ կարող եմ խաղաղություն գտնել։ Որտե՞ղէ իմ մխիթարությունը . . . »։[4] Մենք մտածում ենք՝ ինչպե՞ս ուրախություն գտնեմ՝ անկախ մահկանացու կյանքի դժվարություններից։

Պատասխանը կարող է չափազանց հասարակ թվալ, սակայն դրա ճշմարիտ լինելն ապացուցված է Ադամի օրերից։ Հարատև ուրախություն կարելի է գտնել, կենտրոնանալով մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի վրա, և ավետարանով ապրելով՝ ինչը ցուցադրվել և ուսուցանվել է Նրա կողմից։ Որքան շատ ենքՀիսուս Քրիստոսի մասին *սովորում, հավատում* և *նմանվում* Նրան, ավելի շատ ենք սկսում հասկանալ, որ Նա է ամեն բժշկության, խաղաղության և հավերժական առաջընթացի աղբյուրը։ Նա հրավիրում է մեզանից յուրաքանչյուրին գալ Իր մոտ,[5] հրավեր, որը Նախագահ Հենրի Բ. Այրինգը բնութագրել է որպես «ամենակարևոր հրավերը, որ որևէ մեկը կարող է ընդունել»։[6]

### Սովորել Հիսուս Քրիստոսի մասին

Ինչպե՞ս ենք մենք գալիս Նրա մոտ։ Անցած ապրիլին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը և Երեց Մ. Ռասսել Բալլարդը խրախուսեցին անդամներին ուսումնասիրել «Կենդանի Քրիստոսը»[7] փաստաթուղթը՝ որպես Փրկիչի մասին սովորելու մի մաս։ Շատերն ընդունեցին այդ հրավերը և օրհնվեցին։ Վերջերս մի թանկագին ընկեր իր չափահաս զավակներից յուրաքանչյուրին տվեց փաստաթղթի մեկական օրինակ ավետարանի նկարների հետ միասին, որոնք նկարագրում էին յուրաքանչյուր արտահայտությունը։ Նա խրախուսեց իր զավակներին օգնել իր թոռներին հասկանալ և անգիր սովորել այն։ Որոշ ժամանակ անց իմ ընկերը կիսվեց մի

տեսահոլովակով, որտեղ նրա վեցամյա թոռնուհի Լեյնին ոգևորությամբ և ոգեշնչմամբ փորձում էր արտասանել իր հիշած տարբերակը: Ես հասկացա, որ եթե վեցամյա աղջնակը կարող էր անել դա, ես նույնպես կարող եմ:

Երբ ես ուսումնասիրեցի Հիսուս Քրիստոսի կյանքը և ուսմունքներն ավելի մեծ ուշադրությամբ և փորձեցի անգիր սովորել «Կենդանի Քրիստոսը», Փրկիչի հանդեպ իմ երախտագիտությունն ու սերը մեծացան: Այդ ոգեշնչված փաստաթղթի յուրաքանչյուր նախադասությունը պարունակում է քարոզ և մեծացրել է իմ հասկացողությունը Նրա աստվածային դերերի և երկրային առաքելության վերաբերյալ: Այս ուսումնասիրության և մտորումների միջոցով իմ սովորածը և զգացածը հաստատում են, որ Հիսուսն իսկապես հանդիսանում է «լույսը, կյանքը և հույսն աշխարհի»:[8] Հնօրյա սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների խոսքերը, գրված կամ ասված ի զովք Նրան, վկայում են, որ «Նրա ուղին այն արահետն է, որը տանում է դեպի երջանկություն այս կյանքում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում»:[9]

**Հավատ ունենալ առ Հիսուս Քրիստոսը**

Մինչ դուք ուսումնասիրեք Քրիստոսի կյանքն անհամար ուղիներով, Նրա հանդեպ ունեցած ձեր հավատը կմեծանա: Դուք կգիտակցեք, որ Նա սիրում է ձեզ անհատապես և կատարելապես հասկանում է ձեզ: Մահկանացու կյանքի 33-րդ տարում Նա մերժվեց, տարավ հալածանքներ, քաղց, ծարավ և հոգնածություն,[10] միայնություն, խոսքի և ֆիզիկական բռնություն, և, ի վերջո, տանջալից մահ մեղավոր մարդկանց ձեռքով:[11] Գեթսեմանի պարտեզում և Գողգոթայի խաչի վրա Նա զգաց *մեր* բոլոր ցավերը, տառապանքները, գայթակղությունները, հիվանդությունները և թուլությունները:[12]

Անկախ այն բանից, թե ինչ տառապանքներ ենք մենք տարել, Նա է *բժշկության* աղբյուրը: Նրանք, ովքեր տարել են որևէ բռնություն, կործանարար կորուստ, խրոնիկական հիվանդություն կամ հնարավորությունները սահմանափակող տառապանք, անհիմն մեղադրանքներ, դաժան հալածանք կամ հոգևոր վնաս մեղքի ու թյուրըմբռնման արդյունքում, կարող են ամոքվել աշխարհի Քավիչի միջոցով: Այնուամենայնիվ, Նա սպասում է մեր հրավերին: Մենք պետք է զանք դեպի Նա և թույլ տանք Նրան գործելու Իր հրաշքները:

Գարնանային մի զեղեցիկ օր ես բաց թողեցի դուռը թարմ օդ վայելելու համար: Մի փոքրիկ թռչուն թռավ դռնից ներս և ապա գիտակցեց, որ սա այն վայրը չէր, որտեղ կուզեր լինել: Թռչնակը հուսահատ թռավ սենյակով մեկ՝ շարունակ բախվելով պատուհանին և փորձելով փախչել: Ես փորձեցի զգուշությամբ առաջնորդել նրան դեպի բաց դուռը, սակայն նա վախեցած էր և շարունակ խուսափում էր ինձանից: Նա, ի վերջո, ուժասպառ նստեց վարագույրին: Ես վերցրի ավելը և դանդաղ մոտեցրի այն նյարդայնացած թռչնակին: Երբ ես մոտեցրի ավելը նրա ոտքերին, թռչնակը զգուշանալով բարձրացավ ավելի վրա:

Դանդաղ, շատ դանդաղ ես մոտեցա բաց դռանը՝ փորձելով հնարավորինս անշարժ պահել ավելը: Հենց որ մենք հասանք բաց դռանը, թռչնակն արագ թռավ դեպի ազատություն:

Այդ թռչնակի նման երբեմն մենք վախենում ենք վստահել, քանի որ չենք հասկանում Աստծո կատարյալ սերը և մեզ օգնելու ցանկությունը: Սակայն երբ մենք ուսումնասիրում ենք Երկնային Հոր ծրագիրը և Հիսուս Քրիստոսի առաքելությունը, հասկանում ենք, որ Նրանց միակ նպատակը մեր հավիտենական երջանկությունը և զարգացումն է:[13] Նրանք հաճույքով օգնում են մեզ, երբ խնդրում, փնտրում և թակում ենք:[14] Երբ մենք հավատ ենք գործադրում և խոնարհաբար բացում մեր սիրտը Նրանց պատասխանների համար, մենք ազատվում ենք թյուրիմացությունների և ենթադրությունների առաջ բերած խոչընդոտներից, և մեզ կարող է ցույց տրվել առաջընթացիուղին:

Հիսուս Քրիստոսը նաև *խաղաղության աղբյուրն է:* Նա հրավիրում է մեզ «հենվել [Ն] ապահով ձեռքին»[15] և խոստանում է «խաղաղութիւնը, որ ամեն մտքից վեր է . . .»,[16] զգացում, որը գալիս է, երբ Նրա Հոգին «խաղաղություն է խոսում մեր հոգիներին»՝[17] անկախ մեզ շրջապատող խնդիրներից: Լինի դա անձնական պայքար, ընտանիքում առկա խնդիր կամ համայնքի ճգնաժամ, խաղաղությունը կգա, եթե մենք վստահենք, որ Աստծո Միածին Որդին զորություն ունի հանգստացնել մեր հիվանդ հոգին:

Մնիժանա Պոդվինսկին՝ Կարլովաց (Խորվաթիա) քաղաքի փոքրաթիվ Սրբերից մեկը, ապավինեց Փրկիչին, երբ նրա ամուսինը և ծնողները անցած տարի վեց ամիսների ընթացքում մահացան: Վշտահար, սակայն վկայություն ունենալով, որ ընտանիքները հավերժ են, նա օգտագործեց իր բոլոր խնայողությունները՝ ճամփորդելու դեպի տաճար, որտեղ նա կնքվել էր իր ամուսնու և ծնողների հետ: Նա կիսվել է, որ տաճարում անցկացրած օրերը կարևոր դեր խաղացին իր կյանքում: Առ Հիսուս

Քրիստոսը և Նրա Քավությունն ունեցած իր ամուր վկայության շնորհիվ նա խաղաղություն և ապաքինում զգաց, որը ուժ հաղորդեց նաև նրա շուրջըգտնվողներին:

Առ Հիսուս Քրիստոսն ունեցած հավատը բերում է նույնիսկ ավելի շատ պարգևներ, քան ամոքում և խաղաղություն: Ինչպես Նախագահ Հենրի Բ. Այրինգն է կիսվել. «Ես երախտապարտ եմ տարբեր եղանակների համար, որոնցով Տերն այցելել է ինձ Մխիթարիչի միջոցով, երբ ես խաղաղության կարիք եմ ունեցել: Սակայն մեր Երկնային Հորը մտահոգում է ոչ միայն մեր մխիթարությունը.նրան ավելի շատ մտահոգում է մեր առաջիկա զարգացումը»:[18]

Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ, որը ներառում է փրկագնման և հարության պարգևները, մենք կարող ենք ապաշխարել, փոխվել և *հավերժ զարգանալ:* Նրա տված զորության շնորհիվ, երբ հնազանդվում ենք, մենք կարողանում ենք դառնալ ավելին, քան երբևէ ինքնուրույն կկարողանայինք: Գուցե մենք լիովին չհասկանանք թե ինչպես, սակայն մեզանից յուրաքանչյուրը, ով զգացել է առ Քրիստոս ունեցած հավատի աճ, նաև ստացել է ավելի մեծ հասկացողություն մեր աստվածային էության և նպատակի մասին, որն առաջնորդել է մեզ կատարելու ընտրություններ՝ համաձայն այդ գիտելիքի:

Չնայած աշխարհը կփորձի իջեցնել մեզ մինչև «պարզապես կենդանական» մակարդակի,[19] սակայն իմանալով, որ Աստված մեր Հայրն է, կհավաստիանանք, որ մենք ունենք աստվածային ներուժ և արքայական խոստում: Չնայած աշխարհն ասում է մեզ, որ այս կյանքի վերջը մահն է, սակայն իմանալով, որ Աստծո Միածին Որդին հնարավոր դարձրեց մեզ համար փրկագնումը և հարությունը, մենք հավերժական առաջընթացի հույս ենք ստանում:

### Նմանվել Հիսուս Քրիստոսին

Մինչ ավելին ենք սովորում Հիսուս Քրիստոսի մասին, մենք ավելի մեծ հավատ ենք ձեռք բերում Նրա հանդեպ և բնականաբար ցանկանում ենք հետևել Նրա օրինակին: Մեր ամենամեծ ցանկությունն է դառնում պահել Նրա պատվիրանները: Մեր սրտերը փափագում են ազատել ուրիշներին տառապանքից, ինչպես Նա արեց, և ցանկանում ենք, որ նրանք զգան մեր գտած խաղաղությունը և երջանկությունը:

Ինչո՞ւ է Նրա օրինակին հետևելն այդքան զորեղ: Քանի որ երբ մենք գործողության մեջ ենք դնում մեր հավատը, Սուրբ Հոգին վկայում է հավերժական ճշմարտության մասին:[20] Հիսուսը հրահանգում է Իր աշակերտներին պահել Իր պատվիրանները, քանի որ Նա գիտի, որ երբ մենք հետևենք Նրա օրինակին, մենք կսկսենք զգալ ուրախություն, և երբ մենք շարունակենք քայլել Նրա ուղիով, մենք ձեռք կբերենք կատարյալ ուրախություն: Նա բացատրել է. «Բաները խօսեցի ձեզ հետ, որ իմ ուրախութիւնը ձեզանում մնայ, եւ ձեր ուրախութիւնը լցուած լինի»:[21]):

Արդյո՞ք մեր վկայությունները կառուցված են Հիսուս Քրիստոսին Նրա ավետարանի հիմքի վրա: Երբ հանդիպում ենք կյանքի փոթորիկներին, արդյո՞ք մենք խելահեղորեն չենք փնտրում օգնություն գրքերում կամ համացանցում: Հիսուս Քրիստոսի վերաբերյալ գիտելիք և վկայություն ձեռք բերելու և դրանք ամրացնելու համար ժամանակ հատկացնելը մեծ արդյունք կունենա դժվարությունների և փորձությունների ժամանակ: Այս հասարակ գործողություններից յուրաքանչյուրը հիմնաքար է դառնում մեր ուրախ կյանքի համար. ամեն օր կարդալ սուրբ գրությունները և խորհել ապրող մարգարեների խոսքերի շուրջ, անձնական իմաստալից աղոթքները, ամեն շաբաթ զգոնությամբ ճաշակել հաղորդությունը, ծառայել Փրկիչի նման:

Ի՞նչն է ձեզ ուրախություն պարգևում: Ձեր սիրելիների ներկայությո՞ւնը երկար օրվա ավարտին: Լավ կատարված աշխատանքից բխող գոհացո՞ւմը: Մեկի աչքերում առկա լո՞ւյսը, երբ կիսում եք նրանց բեռը: Մարդու խոսքե՞րը, որոնք խորը մխրճվում են ձեր սրտում: Մոտ ընկերոջ ձեռքսեղմո՞ւմը: Մի պահ անդրադարձեք ձեր օրհնություններին, ապա գտեքեղանակներ դրանցով կիսվելու համար: Եթե դուք ձեռք մեկնեք ձեր շրջապատում կամ մեծ խառնաշփոթի մեջ գտնվող աշխարհում ձեր եղբայրներին ու քույրերին ծառայելու և բարձրացնելու համար, դուք կզգաք ավելի մեծ խաղաղություն և ամոքում, նույնիսկ՝ առաջընթաց:

Եկեք Նրա մոտ Ես վկայում եմ, որ մինչ դուք կենտրոնացնեք ձեր կյանքը Հիսուս Քրիստոսի վրա, ուրախություն կգտնեք ցանկացած իրավիճակում: Իրականում «Նա, միայն Նա»[22] է պատասխանը: Ժամանակհատկացրեք, որճանաչեք Հիսուս Քրիստոսին ամենօրյա ուսումնասիրությունների, Նրա հանդեպ ավելի մեծ հավատ զարգացնելու և Նրան ավելի շատ նմանվելու ջանքերի շնորհիվ: Մինչ մենք կանենք դա, փոքրիկ Լեյնիի հետ մենք նույնպես կասենք. «Փառք Աստծուն Իր սուրբ Որդու անզուգական պարգևի համար»:[23] Հիսուս Քրիստոսի օրհնյալ և սուրբ անունով, ամեն: ■

### ՀՂՈՒՄՆԵՐ


1. Tamara Lush and Jay Reeves, “Disasters Rock the Nation, World,” *Deseret News,* Sept. 10, 2017, A1.
2. Վարդապետություն և Ուխտեր 45.26
3. Տես 2 Նեփի 2.25
4. “Where Can I Turn for Peace?” *Hymns,* no. 129.
5. Տես 3 Նեփի 9.14, 22
6. Henry B. Eyring, “Come unto Christ,” *Liahona,* Mar. 2008, 49.
7. Տես «Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը», *Լիահոնա,* ապրիլ 2000, 2–3:
8. «Կենդանի Քրիստոսը», 3
9. «Կենդանի Քրիստոսը», 3
10. Տես Մոսիա 3.7
11. Տես Ղուկաս 24.7
12. Տես Ալմա 7.11–12
13. Տես Մովսես 1.39
14. Տես Մատթեոս 7.7
15. “Lean on My Ample Arm,” *Hymns,* no. 120
16. Փիլիպպեցիս 4.7
17. Ալմա 58.11
18. Հենրի Բ. Այրինգ, «Իմ խաղաղությունն եմ թողում ձեզ», *Լիահոնա*, մայիս 2017, 17:
19. “Know This, That Every Soul Is Free,” *Hymns,* no. 240.
20. Տես Հովհաննես 7.17:
21. Հովհաննես 15.11
22. “Where Can I Turn for Peace?” no. 129.
23. «Կենդանի Քրիստոսը», 3

**Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմ**
Յոթանասունի Քվորումից

# Մի՞թե հրաշքների օրը դադարել է

*Մեր ուշադրությունը մեծապես պետք է կենտրոնացած լինի հոգևոր հրաշքների վրա, որոնք հասանելի են Աստծո բոլոր զավակների համար։*

Մի տարի առաջ, մինչ որոշակի հանձնարարությամբ գտնվում էի Կալիֆորնիա նահանգում, ցցի նախագահի հետ եսայցելեցիՔլարկ և Հոլլի Ֆեյլսներիընտանիքին իրենց տանը։ Ինձ ասացին, որ վերջերս նրանց կյանքում հրաշք էր տեղի ունեցել։ Երբ ներս մտանք, Քլարկը դժվարացավ կանգնել և ողջունել մեզ, քանի որ նա կրում էր մեջքի, պարանոցի և ձեռքերի երկաթակապեր։

Ընդամենը երկու շաբաթ առաջ Քլարկը, նրա որդի Թայը և մոտ 30 այլերիտասարդ տղամարդիկ և ղեկավարներ մասնակցում էին ցցի միջոցառմանը, մագլցելով 14180 ոտնաչափ (4,322 մ)բարձրություն ունեցող Շաստա սարը, որն ուներ ամենաբարձր գագաթներից մեկը։ Դժվարին արշավի երկրորդ օրը մագլցողների մեծ մասը հասավ գագաթին. հուզիչ ձեռքբերում, որը հնարավոր դարձավ ամիսների նախապատրաստությունների արդյունքում։

Այդ օրը գագաթին հասած մարդկանցից էր Քլարկը։ Գագաթի ծայրին կարճատև հանգիստ առնելուց հետո նա կանգնեց ու սկսեց քայլել։ Այդ պահին նա սայթաքեց և ժայռի գագաթից ցած ընկավ մոտ 40 ոտնաչափ (12 մ) բարձրությունից, իսկ հետո գլորվելով սահեց մոտ 300 ոտնաչափ (91 մ)։ Քլարկը հրաշքով կենդանի մնաց, սակայն լուրջ վնասվածքներ ստացավ և չէր կարողանում տեղից շարժվել։

Հրաշքները, որոնք պիտի պատահեին Քլարկի հետվնասվածքներով լի այսիրադարձությունների ընթացքում, դեռ նոր էին սկսվում։ Առաջինը

նրան օգնության հասածների մեջ «պատահաբար» գտնվեցին արշավի մի քանի մասնակիցներ, որոնց մեջ կային լեռնային փրկարարական ուղեկցողներ և արտակարգ իրավիճակներում գործող մասնագետ բժիշկներ։ Նրանք անմիջապես միջոցներ ձեռնարկեցին Քլարկին ցնցումներից հանելու և արտահագուստներով նրան տաքացնելու համար։ Այս խումբը նաև «պատահաբար» փորձարկում էր կապի նոր սարքավորումներ և արտակարգ պատահարի կանչ ուղարկեցին օգնության համար մի տարածքից, որտեղ բջջային հեռախոսներն անջատվում էին։ Անմիջապես ուղղաթիռ ուղարկվեց Շաստա լեռ, որը գտնվում էր մեկ ժամվա հեռավորության վրա։ Վայրէջք կատարելու երկու վտանգավոր, սակայն անհաջող փորձերից հետո, հողմային քամու դեմ մաքառելով, օդաչուն սկսեց երրորդ և վերջին փորձը։ Երբ ուղղաթիռը մոտեցավ մեկ այլ անկյունից, «պատահաբար» փոխվեց քամու ուղղությունը, և ուղղաթիռը կարողացավ վայրէջք կատարել լոկ այնքան ժամանակ, որ բավական եղավ խմբի համար արագ տեղավորել Քլարկին օդաչուի խցիկի հետնամասում։

Երբ Քլարկին զննում էին վնասվածքաբանական կենտրոնում, պարզվեց, որ նա ուներ բազմաթիվ կոտրվածքներպարանոցի, մեջքի, կողոսկրերի և դաստակների վրա, վնասված էր թոքը և ուներ բազմաթիվ վերքեր ու քերծվածքներ։ Այդ օրը «պատահաբար» այնտեղ էր գտնվում լավագույն վիրաբույժը, նա այդ հիվանդանոցում լինում էր ընդամենը տարին մի քանի անգամ։ Ավելի ուշ այդ բժիշկը նշել է, որ երբեք չէր տեսել մեկին, ով ունենար ողնաշարի և գարկերակների հետ կապված այդքան խնդիրներ և ապրեր։ Քլարկըակնկալում էր ոչ միայն ապրել, այլև վերադառնալ լիարժեք գործունեության։ Իրեն որպես ագնոստիկ ներկայացնելով, վիրաբույժն ասաց, որ Քլարկի դեպքը հակասում էր նյարդաբանական վնասվածքների վերաբերյալ մինչ այդ իր բոլոր

ուսումնասիրություններին և կարող է նկարագրվել միայն որպես հրաշք։

Երբ Քլարկը և Հոլլին ավարտեցին իրենց հուզիչ պատմությունը, ես զգացի, որ դժվարանում եմ խոսել։ Դրա պատճառը ոչ թե պարզապես ակնհայտ հրաշքներն էին, այլ ավելին։ Ես մեծ ոգեշնչում զգացի՝ հոգևոր վկայություն, որ Հոլլին և հինգ գեղեցիկ երեխաներից յուրաքանչյուրը, ովքեր նստած էին հյուրասենյակում իրենց ծնողների կողքին, այնպիսի հավատ ունեին, որ կարող էին ընդունել այն, ինչ էլ որ լիներ արդյունքում այդ օրը, և նրանք միևնույնն է, կունենային հոգևոր մեծ աճ։ Քլարկը, Հոլլին և նրանց երկու ավագ զավակները՝ Թայը և Պորտերը, այսօր մեզ հետ են համաժողովների կենտրոնում։

Ֆեյլերի ընտանիքի փորձառության մասին խորհելիս ես հիմնականում մտածում էի բազմաթիվ այլ մարդկանց իրավիճակների մասին։ Ի՞նչ կասեք հավատով լցված, քահանայության օրհնություն ստացող, անվերջ աղոթող, ուխտեր պահող, հույսով լի անթիվ Վերջին Օրերի Սրբերի մասին, ովքեր երբեք հրաշք չեն տեսել։ Առնվազն այնպես, ինչպես նրանք են հասկանում հրաշքը։ Առնվազն այնպես, ինչպես ուրիշները կարծես տեսնում են հրաշքներ։

Ի՞նչ կասեք նրանց մասին, ովքեր տուժել են մեծ տառապանքների արդյունքում՝ ֆիզիկապես, մտավոր, հուզական, տարիներ շարունակ, կամ տասնյակ տարիներ, կամ իրենց ողջ մահկանացու կյանքի ընթացքում։ Ի՞նչ կասեք նրանց մասին, ովքեր մահանում են շատ երիտասարդ։

Ընդամենը երկու ամիս առաջ երկու տաճարային երաշխավորագիր ունեցող ամուսնացած զույգեր, ովքեր ունեին երեք լիաժամկետ միսիա ծառայող երեխաներ և հինգ ուրիշ երեխաներ, մի կարճ թռիչք պիտի ունենային մի փոքր ինքնաթիռով։ Ես վստահ եմ, որ թռիչքից առաջ նրանք աղոթել են ապահովության համար և վթարից առաջ ջերմեռանդորեն աղոթել են, երբ իրենց ինքնաթիռում ի հայտ եկան

մեխանիկական լուրջ խնդիրներ։ Ոչ ոք չփրկվեց։ Ի՞նչ կասեք նրանց մասին։

Արդյո՞ք լավ մարդիկ և նրանց սիրելիները պատճառ ունեն տալու հարցը, որը տվեց Մորոնին. «Մի՞թե հրաշքների օրը դադարել է»։[1]

Իմ սահմանափակ գիտելիքները չեն կարող բացատրել, թե ինչու է երբեմն տեղի ունենում աստվածային միջամտություն, իսկ երբեմն էլ՝ ոչ։ Բայց հավանաբար մենք լավ չենք հասկանում, թե ինչ է իրենից ներկայացնում հրաշքը։

Հաճախ մենք նկարագրում ենք հրաշքը՝ որպես առանց լիարժեք բժշկական բացատրության տեղի ունեցած բժշկում կամ որպես խուսափում ողբերգական վտանգից, երբ ականջ ենք դնում պարզ ոգեշնչմանը։ Ինչևէ, սահմանելով *հրաշքը* որպես «օգտակար իրադարձություն, որն ի հայտ է գալիս աստվածային զորությամբ, որն անհասկանալի է մահկանացուներին»,[2] ձեռք ենք բերում ավելի լայն հասկացողություն այն երևույթների վերաբերյալ, որոնք հավերժական են իրենց էությամբ։ Այս սահմանումըմեզ թույլ է տալիս նաև հասկանալ հավատի կարևոր դերը հրաշքում։

Մորոնին ուսուցանել է. «Եվ ոչ էլ երբևէ որևէ մեկը հրաշքներ է գործել, նախքան իր հավատքը»։[3] Ամոնը հայտարարել է. «Աստված ապահովել է մի միջոց, որ մարդ հավատքի միջոցով կարողանա հզոր հրաշքներ գործել»։[4]։ Տերը հայտնել է Ջոզեֆ Սմիթին. «Քանզի ես Աստված եմ, . . . և հրաշքներ . . . ես պիտի ցույց տամ նրանց, ովքեր հավատում են իմ անվանը»։[5]

Նաբուգոդոնոսոր թագավորը պահանջում էր, որ Մեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը երկրպագեին ոսկյա արձանին, որը նա կանգնեցրել էր որպես աստված, սպառնալով՝ «Բայց եթէ երկրպագութիւն չանէք, իսկոյն պիտի գցուիք կրակով բորբոքուած հնոցի մէջը»։ Այնուհետև նա ծաղրելով ասում է. «Եվ ո՞ր աստուածն է որ ձեզ ազատէ իմ ձեռքից»։[6]

Այս երեք նվիրյալ աշակերտներն ասացին. «Ահա մեր Աստուածը, որին մենք պաշտում ենք, կարող է մեզ ազատել կրակով բորբոքուած հնոցիցը։ . . . Եւ եթէ ոչ, թող քեզ յայտնի լինի, ով թագաւոր, որ քո աստուծուն մենք չենք պաշտում»։[7]

Նրանք ունեին ամեն վստահություն, որ Աստված կարող էր փրկել իրենց, «եւ եթէ ոչ», նրանք կատարյալ հավատ ունեին Նրա ծրագրի հանդեպ։

Նմանապես, Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը մի անգամ հարցրեց մի երիտասարդ տղամարդու, ով խնդրել էր քահանայության օրհնություն. «Եթե դա մեր Երկնային Հոր կամքն է, որ դու քո երիտասարդության տարիներին հեռանաս այս կյանքից ու գնաս հոգիների աշխարհ՝ շարունակելով քո ծառայությունները, արդյո՞ք դու հավատ ունես ենթարկվելու Նրա կամքին և չբժշկվելու»։[8] Արդյո՞ք *մենք* հավատ ունենք «չբժշկվելու» մեր աշխարհիկ չարչարանքներից, որպեսզի կարողանանք բժշկվել հավերժ։

Սիա քննադատական մի հարց, որի շուրջ արժե խորհել. «Ինչո՞ւմ պիտի հավատ ունենանք»: Արդյո՞ք մեր հավատը կենտրոնացած է պարզապես մեր ցանկության վրա՝ ազատվելու ցավից ու չարչարանքից, թե՞ այն ամուր կերպով կենտրոնացած է Աստծո և Նրա Քավության վրա: Հավատն առ Հայրը և Որդին մեզ թույլ է տալիս հասկանալ և ընդունել Նրանց կամքը, մինչ մենք նախապատրաստվում ենք հավերժության համար:

Այսօր ես վկայում եմ հրաշքների մասին: Աստծո զավակ լինելը հրաշք է:[9] Նրա պատկերով և նմանությամբ մարմին ստանալը հրաշք է:[10] Փրկիչի պարգևը հրաշք է:[11] Հիսուս Քրիստոսի Քավությունը հրաշք է:[12] Հավերժական կյանքի ներուժը հրաշք է:[13]

Թեև լավ է ֆիզիկական պաշտպանության և բժշկության համար աղոթելը մեր մահկանացու գոյության ընթացքում, մեր ուշադրությունը մեծապես պետք է կենտրոնացած լինի հոգևոր հրաշքների վրա, որոնք հասանելի են Աստծո բոլոր զավակների համար: Անկախ մեր ռասայից, անկախ մեր ազգությունից, անկախ այն բանից, թե ինչ ենք արել ապաշխարելու համար, անկախ այն բանից, թե ինչ է պատահել մեզ հետ, բոլորս ունենք հավասար իրավունք այս հրաշքների համար: Մենք ապրում ենք հրաշքով, և հետագա հրաշքները սպասում են մեզ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Մորոնի 7.35
2. *Encyclopedia of Mormonism* (1992), “Miracles,” 2:908.
3. Եթեր 12.18
4. Մոսիա 8.18
5. Վարդապետություն և Ուխտեր 35.8
6. Դանիել 4.15
7. Դանիել 3.17–18
8. David A. Bednar, “Accepting the Lord’s Will and Timing,” *Liahona,* Aug. 2016, 19–20.
9. Տես Սաղմոս 82.6, Գործք Առաքելոց 17.29:
10. Տես Աբրահամ 4.26:
11. Տես Եսայիա 9.6:
12. Տես Մատթեոս 20.28, Ալմա 7.11–13, Վարդապետություն և Ուխտեր 76.69:
13. Տես Հովհաննես 10.28, Մորոնի 7.41, Վարդապետություն և Ուխտեր 45.8:

**Երեց Դեյվիդ Ա. Բեդնար**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Ամենամեծ և պատվական խոստումները

*Մեր Երկնային Հոր երջանկության հրաշալի ծրագիրը պարունակում է վարդապետությունը, արարողությունները և ամենամեծ ու պատվական խոստումները, որոնց միջոցով կարող ենք հաղորդակից լինել աստվածային էությանը:*

Դժվարին խնդիրներից մեկը, որին բախվում է մեզանից յուրաքանչյուրն ամեն օր, այն է, որ չպիտի թույլ տանք, որ այս աշխարհիկ հոգսերն այնքան վատնեն մեր ժամանակն ու եռանդը, որ անտեսենք հավերժական բաները, որոնք ավելի կարևոր նշանակություն ունեն:[1] Մենք կարող ենք հեշտությամբ շեղվել կարևոր հոգևոր

առաջնահերթությունները հիշելուց և դրանց վրա կենտրոնանալուց մեր բազմաթիվ պարտականությունների և զբաղվածության պատճառով: Երբեմն մենք փորձում ենք այնքան գործեր կատարել, որ մոռանում ենք, թե որն է մեր նպատակը և ինչու ենք փորձում իրականացնել այն:

Պետրոս Առաքյալը հիշեցնում է մեզ, որ Հիսուս Քրիստոսի աշակերտների համար «նորա աստուածային զօրութիւնը շնորհեց մեզ այն ամենը. որ *կեանքի եւ աստուածապաշտութեան* համար պէտք էնորա գիտութիւնովը, որ մեզ կանչեց փառքով եւ առաքինութիւնով.

Որոնցով *ամենամեծ եւ պատուական խոստումներ* են տրուած մեզոր նորանցով *հաղորդակից լինիք աստուածային բնութեանը*՝ աշխարհքի մէջ ցանկութիւնից եղած ապականութիւնից հեռու փախչելով»:[2]

Իմ ուղերձը շեշտում է ամենամեծ և պատվական խոստումները,

որոնք Պետրոսը նկարագրել է որպես ճշմարիտ հիշեցումներ այն մասին, թե մենք ուր և ինչու ենք գնում մեր մահկանացու ճամփորդության ճանապարհով: Ես նաև կխոսեմ Հանգստության օրվա, սուրբ տաճարի և մեր տան դերի մասին այս կարևոր հոգևոր խոստումները հիշելու գործում:

Ես թախանձագին աղոթում եմ, որ Սուրբ Հոգին ուսուցանի յուրաքանչյուրիս, երբ մենք միասին քննարկենք այս կարևոր ճշմարտությունները:

**Մեր աստվածային ներուժը**

Մեր Երկնային Հոր երջանկության հրաշալի ծրագիրը պարունակում է վարդապետությունը, արարողությունները և ամենամեծ ու պատվական խոստումները, որոնց միջոցով կարող ենք հաղորդակից լինել աստվածային էությանը: Նրա ծրագիրը սահմանում է մեր հավերժական ինքնությունը և ուղին, որին մենք պիտի հետևենք՝ սովորելով, փոխվելով, աճելով և, ի վերջո, հավիտյան ապրելով Նրա հետ:

Ինչպես բացատրված է «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրում.

«Մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: . . .

Նախաերկրային աշխարհում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հորը և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի պետք է ֆիզիկական մարմիններ ձեռք բերեին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն ընթանալու և իրենց աստվածային ճակատագիրը որպես հավերժական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար»:[3]

Աստված խոստանում է Իր զավակներին, որ եթե նրանք հետևեն իր ծրագրի սկզբունքներին և Իր Միրելի Որդու օրինակին, պահեն պատվիրանները և հավատով տոկան մինչև վերջ, ապա Փրկիչի Քավության շնորհիվ նրանք «կունենա[ն] հավերժական կյանք, պարգև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից»:[4] Հավերժական կյանքը վերջնական ամենամեծ ու պատվական խոստումն է:

**Հոգևոր վերածնունդ**

Մենք լիարժեք հասկանում ենք ամենամեծ ու պատվական խոստումները և սկսում հաղորդակից լինել աստվածային էությանը՝ պատրաստակամ ընդունելով Տիրոջ կանչը փառքով ու առաքինությամբ: Ինչպես Պետրոսն է նկարագրում, այս կանչը կատարվում է, երբ ձգտում ենք փախչել աշխարհի ապականությունից:

Երբ մենք առաջ ենք ընթանում Փրկիչի հանդեպ հաստատամտությամբ, Նրա քավության շնորհիվ և Սուրբ Հոգու զորությամբ «մեր մեջ կամ մեր սրտերում մի զորեղ փոփոխություն է [առաջանում], այնպես որ մենք այլևս հակված չենք գործելու չարիք, այլ շարունակ գործելու բարիք»:[5] Բոլորը «պիտի վերստին ծնվեն. այո՛, Աստծուց ծնվեն, իրենց մարմնական ու ընկած վիճակից փոխված դեպի արդարության մի վիճակի, փրկագնվելով Աստծո կողմից»:[6] «Ուրեմն եթե մեկը Քրիստոսումն է՝ նոր ստեղծված է. հիները անցան, ահա ամեն բան նոր եղավ»:[7]

Այսպիսի ամբողջական փոփոխությունը մեր էության մեջ չի կատարվում արագ կամ միանգամից: Ինչպես Փրկիչը, մենք նույնպես չստացանք «լիությունը սկզբում, այլ [ստացանք] շնորհ՝ շնորհի տեղ»:[8] «Քանզի, ահա, այսպես է ասում Տեր Աստված. Ես կտամ մարդկանց զավակներին՝ տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ. և օրհնված են նրանք, ովքեր ականջ են դնում իմ ցուցումներին և ունկնդրում իմ խորհրդին, քանզի նրանք իմաստություն կսովորեն»:[9]

Քահանայության արարողությունները և սրբազան ուխտերը կարևոր են հոգևոր վերածննդի այս անընդհատ գործընթացում, դրանք նաև

այն միջոցներն են, որոնքԱստված է նշանակել, որոնցով մենք ստանում ենք Նրա ամենամեծ ու պատվական խոստումները: Արարողությունները, որոնք ստանում ենք արժանիորեն և միշտ հիշում, բացում են երկնքի դարպասները, որոնց միջոցով աստվածայնության զորությունը կարող է հոսել մեր կյանք: Ուխտերը, որոնք անսասան պատվում ենք և միշտ հիշում, ապահովում են նպատակ և հավաստիացում թե՛ այս կյանքի, թե՛ հավերժության օրհնությունների համար:

Օրինակ՝ համաձայն մեր հավատարմության, Աստված խոստանում է մեզ Աստվածագլխի երրորդ անդամի՝ Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը,[10] որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք միշտ կարող ենք ստանալ և պահպանել մեր մեղքերի թողությունը,[11] որ մենք կարող ենք խաղաղություն ձեռք բերել այս աշխարհում,[12] որ Հիսուս Քրիստոսը կոտրել է մահվան կապանքները և հաղթել մահին,[13] և ընտանիքները կարող են միասին լինել հավերժության մեջ:

Հասկանալի է, որամենամեծ ու պատվական խոստումները, որ Երկնային Հայրն առաջարկում է Իր զավակներին, հնարավոր չէ հաշվել կամ ամբողջությամբ նկարագրել: Սակայն խոստացված օրհնությունների անգամ մասնակի ցուցակը, որը ես ներկայացրի, պիտի ստիպի մեզանից յուրաքանչյուրին «մնալ զարմացած»[14] և «վայր ընկնե[լ] ու երկրպագե[լ] Հորը»[15] Հիսուս Քրիստոսի անունով:

### Հիշել խոստումները

Նախագահ Լորենզո Մնոուն զգուշացրել է. «Մենք հակում ունենք մոռանալու կյանքի նպատակը, պատճառը, որի համար Մեր Երկնային Հայրն ուղարկել է մեզ այստեղ ապրելու մահկանացու կյանքով, ինչպես նաև ընդունելու սուրբ կանչը, որով մենք կանչվել ենք, ուստի, փոխանակ հաղթահարելու աշխարհիկ խնդիրները . . . , շատ հաճախ ինքներս մեզ թույլ ենք տալիս կենտրոնանալ այս աշխարհիկ հարցերի վրա, առանց օգտվելու աստվածային օգնությունից, որն Աստված է ապահովում, ինչը միակն է, որ կարող է հնարավորություն տալ մեզ հաղթահարել (այդ աշխարհիկ խնդիրները)»:[16]

Հանգստության օրը և սուրբ տաճարը աստվածային օգնության այն երկու հատուկ աղբյուրներն են, որոնք տրամադրվում են Աստծո կողմից, որպեսզի օգնեն մեզ բարձրանալ աշխարհի մակարդակից ու ապականությունից վեր: Մենք սկզբում կարող ենք կարծել, որ Հանգստության օրը սուրբ պահելու և տաճար այցելելու բարձրագույն նպատակները փոխկապակցված, բայց առանձին նպատակներ են: Սակայն ես կարծում եմ, որ այդ երկու նպատակները որոշակիորեն նույնն են և աշխատում են միասին, որպեսզի հոգևորապես զորացնեն մեզ՝ որպես անհատներ և ընտանիքի անդամներ:

### *Հանգստության օրը*

Երբ Աստված ստեղծեց ամեն բան, Նա հանգստացավ յոթերորդ օրը և պատվիրեց, որ շաբաթվա մեկ օրը լինի հանգստի օր, որը կօգնի մարդկանց հիշել Իրեն:[17] Հանգստության օրը Աստծո ժամանակն է, մի **սուրբ ժամանակ,** որը հատկապես առանձնացված է Նրան երկրպագելու համար և Նրա ամենամեծ ու պատվական խոստումները ստանալու և հիշելու համար:

Տերն ուղղորդում է այս տնտեսությունում.

«Եվ որ դու կարողանաս էլ ավելի անբիծ պահել քեզ աշխարհից, դու պետք է գնաս աղոթքի տուն և քո հաղորդությունները մատուցես իմ սուրբ օրը.

Քանզի, ճշմարիտ, դա է քեզ նշանակված օրը, որ քո աշխատանքներից հանգստանաս և քո տուրքը մատուցես Բարձրյալին».[18]

Այսպիսով, Հանգստության օրը մենք երկրպագում ենք Հորը Որդու անունով, մասնակցելով արարողություններին և սովորելով դրանց մասին, ստանալով, հիշելով և նորոգելով ուխտերը: Նրա սուրբ օրը մեր մտքերը, գործողությունները և վարքագիծը նշաններ են հանդիսանում, որոնք մենք տալիս ենք Աստծուն. դա մեր սիրո նշանն է Նրա հանդեպ:[19]

Հանգստության օրվա մեկ այլ նպատակն է բարձրացնել մեր կենտրոնացումը աշխարհիկ բաներից դեպի հավերժության օրհնությունները: Այդ սուրբ ժամանակ, երբ հեռանում ենք մեր բազմազբաղ կյանքի սահմանված կարգից, մենք կարող ենք «նայել Աստծուն և ապրել»,[20] ստանալով և հիշելով ամենամեծ ու պատվական խոստումները, որոնց միջոցով մենք դառնում ենք աստվածային բնույթի հաղորդակիցները:

### *Սուրբ Տաճարը*

Աստված միշտ պատվիրել է Իր ժողովրդին կառուցել տաճարներ՝ սուրբ վայրեր, որտեղ արժանավոր Սրբերը կատարում են ավետարանական սուրբ արարողությունները իրենց և մահացածների համար: Տաճարները Երկրի վրա գոյություն ունեցող երկրպագության ամենասուրբ վայրերն են: Տաճարը բառացիորեն Տիրոջ տունն է՝ մի սուրբ վայր, որը հատկապես առանձնացված է Նրան երկրպագելու, Նրա ամենամեծ ու պատվական խոստումները ստանալու և հիշելու համար:

Տերը ուղղորդում է այս տնտեսությունում. «Կազմակերպվեք. նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. և հաստատեք մի տուն, այսինքն՝ աղոթքի տուն, ծոմապահության տուն, հավատքի տուն, ուսման տուն, փառքի տուն, կարգ ու կանոնի տուն, Աստծո տուն»:[21] Տաճարային երկրպագության գլխավոր նպատակը է՝ մասնակցել արարողություններին, սովորել դրանց մասին, ստանալ և հիշել ուխտերը: Տաճարում մենք մտածում ենք, գործում, հագնվում մեկ այլ առանձնահատուկ ձևով, քան այլ վայրերում:

Տաճարի գլխավոր նպատակն է՝ բարձրացնել մեր կենտրոնացումը աշխարհիկ բաներից դեպի հավերժության օրհնությունները: Մի կարճ ժամանակով հեռանալով աշխարհիկ միջավայրից, որին մենք ծանոթ ենք, մենք կարող ենք «նայել Աստծուն և ապրել»,[22] ստանալով և հիշելով ամենամեծ ու պատվական խոստումները, որոնց միջոցով մենք դառնում ենք աստվածային էության հաղորդակիցները:

Խնդրում եմ ուշադրություն դարձրեք, որ Հանգստության օրը *սուրբ ժամանակ* է, իսկ տաճարը սուրբ վայր է, որը հատկապես առանձնացված է Աստծուն երկրպագելու համար և Իր զավակներին տրված Նրա ամենամեծ ու պատվական խոստումները ստանալու և հիշելու համար: Ինչպես սահմանվել է Աստծո կողմից, այս երկու աստվածային օգնության աղբյուրների սկզբունքային նպատակները միանգամայն նույնն են. նշանակալիորեն և հաճախակի կենտրոնացնել մեր ուշադրությունը Երկնային Հոր, Նրա Միածին Որդու, Սուրբ Հոգու վրա և այն խոստումների վրա, որոնք զուգակցվում են Փրկիչի վերականգնված ավետարանի արարողությունների և ուխտերի հետ:

*Մեր տները*

Տունը պիտի լինի **տեղի և ժամանակի** լավագույն համադրությունը, որտեղ անհատներն ու ընտանիքները արդյունավետ կերպով հիշում են Աստծո ամենամեծ ու պատվական խոստումները: Կիրակի օրը մենք հեռանում ենք տնից, որպեսզի ժամանակ անցկացնենք կիրակնօրյա ժողովներին և մտնենք տաճարի սուրբ տարածքը. սա շատ կարևոր է, բայց ոչ բավարար: Միայն այն ժամանակ, երբ մենք տուն ենք բերում հոգին ու զորությունը, որոնք ստանում ենք այդ սուրբ միջոցառումներից, մենք կարող ենք շարունակել կենտրոնանալ մահկանացու կյանքի ամենամեծ նպատակների վրա և հաղթահարել ապականությունը, որը տիրում է աշխարհում: Հանգստության օրվա և տաճարային փորձառությունները պիտի լինեն հոգևոր միջոցներ, որոնք անհատներին, ընտանիքներին ու մեր տները կլցնեն մեր կողմից սովորած դասերի մշտական հիշեցումներով, Սուրբ Հոգու ներկայությամբ ու զորությամբ, Տեր Հիսուս Քրիստոսի հետ մշտական ու խորացող երկխոսությամբ և «հույսի կատարյալ պայծառությամբ»[23] Աստծո հավերժական խոստումներում:

Հանգստության օրը և տաճարը կարող են օգնել մեզ մեր տներում հաստատել «ավելի գերազանց ճանապարհ»,[24] երբ մենք «ամեն բան բովանդակ(ենք) Քրիստոսումը, ինչ որ երկնքումն է՝ եւ ինչ որ երկրումը, նորանում»:[25] Այն, ինչ մենք անում մեր տներում Նրա *սուրբ ժամանակին* և ինչ սովորում ենք Նրա սուրբ վայրում, անհրաժեշտ է աստվածային էության հաղորդակիցներ դառնալու համար:

**Խոստում և վկայություն**

Մահկանացու կյանքի հասարակ խնդիրներն ու սահմանված կարգը կարող են հեշտությամբ հաղթահարել մեզ: Քնելը, ուտելը, հագնվելը, խաղալը, մարզվելը և շատ այլ սովորական գործողություններ անհրաժեշտ են և կարևոր: Սակայն, ի վերջո, այն ինչ մենք դառնում ենք, մեր գիտելիքների, Երկնային Հորից, Որդուց և Սուրբ Հոգուցսովորելու պատրաստակամության արդյունքն է. Դա մեր առօրյա գործունեության պարզ հանրագումարը չէ կյանքի ընթացքում:

Ավետարանն ավելին է, քան տարբեր խնդիրների կատարման համար սահմանված ցուցակ. հակառակը, այն «միասին հարմարված» և միահյուսված տարբեր ճշմարտությունների հոյակապ գոբելեն է[26] որը նախատեսված է օգնել մեզ՝ նմանվելու մեր Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին և անգամ դառնալու աստվածային էության հաղորդակիցները: Հիրավի, մենք կուրանում ենք նշանակետից այն կողմ նայելուց,[27] երբ այս գերագույն հոգևոր իրողությունը նսեմացվում է աշխարհիկ հոգսերով, մտահոգություններով ու անհոգությամբ:

Երբ մենք իմաստուն ենք և հրավիրում ենք Սուրբ Հոգուն լինելու մեզ ուղեկից,[28] ես խոստանում եմ, որ Նա կսովորեցնի մեզ՝ ինչն է ճշմարիտ: «Նա կվկայի Քրիստոսի մասին և կլուսավորի մեր մտքերը երկնքի լույսով»,[29] երբ մենք ձգտենք իրականացնել մեր հավերժական ճակատագիրը և դառնանք աստվածային էության հաղորդակիցները:

Ես բերում եմ իմ վկայությունը, որամենամեծ և պատվական խոստումները, մեր արարողությունների և ուխտերի հետ զուգորդված, ճշմարիտ են: Տերը հայտարարել է.

«Ես տալիս եմ ձեզ ուղղություններ, թե ինչպես վարվեք իմ առաջ, որպեսզի այն դառնա ձեզ՝ ձեր փրկության համար:

Ես՝ Տերս, կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ. բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք»:[30]

Ես վկայում եմ, որ Երկնային Հայրն ապրում է, և Նա է փրկության ծրագրի ստեղծողը: Հիսուս Քրիստոսը Նրա Միածին Որդին է, մեր Փրկիչն ու Քավիչը: Նա ապրում է: Ես վկայում եմ, որ Հոր ծրագիրը և խոստումները, Փրկիչի Քավությունը և Սուրբ Հոգու ընկերակցությունը հնարավոր են դարձնում խաղաղությունն այս աշխարհում և հավերժական

կյանքը՝ գալիք աշխարհում:[31] Այս ճշմարտությունների մասին ես վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 25.10
2. Բ Պետրոս 1.3–4, շեշտադրումն ավելացված է
3. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյեմբեր 2010, 129
4. Վարդապետություն և Ուխտեր 14.7
5. Մոսիա 5.2
6. Մոսիա 27.25
7. Բ Կորնթացիս 5.17
8. Վարդապետություն և Ուխտեր 93.12
9. 2 Նեփի 28.30
10. Տես Մորոնի 2.2, Սուրբ գրությունների ուղեցույց, «Սուրբ Հոգի», scriptures.lds.org
11. Տես Մոսիա 4.10–12
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 59.23
13. Տես Մոսիա 16.7–8
14. «Ես մնում եմ զարմացած», *Օրհներգեր*, հ. 193
15. Վարդապետություն և Ուխտեր18.40
16. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Լորենզո Սնոու* (2012), 101–2
17. Տես Ելից 20.8–11
18. Վարդապետություն և Ուխտեր59.9–10
19. Տես Ռասսել Մ. Նելսոն,«Հանգստության օրը բերկրանք է», *Լիահոնա,* մայիս 2015, 130
20. Ալմա 37.47, տես նաև Ալմա 37.46
21. Վարդապետություն և Ուխտեր 88.119
22. Ալմա 37.47
23. 2 Նեփի 31.20
24. Ա Կորնթացիս12.31, Եթեր 12.11
25. Եփեսացիս 1.10
26. Եփեսացիս 2.21
27. Հակոբ 4.14
28. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.57
29. "Let the Holy Spirit Guide," *Hymns,* no. 143.
30. Վարդապետություն և Ուխտեր 82.9-10
31. Վարդապետություն և Ուխտեր 59.23

**Եպիսկոպոս Վ. Քրիստոֆեր Վադել**
Նախագահող Եպիսկոպոսության Երկրորդ Խորհրդական

# Դարձեք դեպի Տերը

*Մենք չենք կարող վերահսկել այն ամենը, ինչ պատահում է մեզ հետ, բայց մենք բացարձակ վերահսկողություն ունենք այն բանի վրա, թե ինչպես ենք արձագանքում փոփոխություններին մեր կյանքում։*

1998 թվականի գարնանը ես և Քերոլըկարողացանք միավորելընտանեկան արձակուրդը գործուղման հետ և մի քանի օրով-մեր չորս երեխաներին տարանք վերջերս այրիացած զոքանչիմոտ՝ Հավայան կղզիներ։

Դեպի Հավայան կղզիներ մեր թռիչքից առաջ, մեր չորս ամսական որդուն՝ Ջոնաթանին, ախտորոշեցինմիջին ականջի բորբոքում, մեզ ասացին, որ նա չէր կարող ճանապարհորդել առնվազն երեք-չորս օր։ Որոշում ընդունվեց, որ Քերոլը մնար տանը Ջոնաթանի հետ, մինչ ես մնացածներիհետ կճամփորդեի։

Իմ առաջին զգացողությունը մեր ժամանումից քիչ անց այն էր, որ դա այն ուղևորությունը չէր, որ ես էի նախատեսե։ Քայլելով ներքև լուսնի լույսով ողողված արմավենիներիարահետով և նայելով օվկիանոսին, ես շրջվեցի, որ իմ մտքերն արտահայտեմկողզու գեղեցկության վերաբերյալ և այդ ռոմանտիկ պահին, Քերոլին հիշելու փոխարեն, ես կարծես նայում էիՔերոլի մոր աչքերի մեջ, ում, կարող եմ ասել, որ շատ եմ սիրում։ Դա ուղղակի այն չէր, ինչ ես էի ակնկալում։ Ոչ էլ Քերոլն էր սպասումիր արձակուրդը տանը մենակ անցկացնել մեր հիվանդ մանկիկի հետ։

Մեր կյանքում կլինեն ժամանակներ, երբ մենք կհայտնվեքմի անսպասելի արահետում, դիմակայելով հանգամանքներին, որոնք շատ ավելի խիստ են, քան ձախողված արձակուրդը։ Ինչպե՞ս ենք արձագանքում, երբ հաճախ մեր վերահսկողությունից դուրս իրադարձությունները փոխում են մեր ծրագրածկամ սպասվելիք կյանքը։

*Հայրում Շամվեյը, ով կուրացել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, իրենից հետո իր սերնդին թողեց Տիրոջ հանդեպ հավատքի և վստահության ժառանգությ*

1944 թվականի հունիսի 6-ին Միացյալ Նահանգների բանակի կրտսեր լեյտենանտ Հայրում Շամուեյը այդ օրվա հարձակման ժամանակափ դուրս եկավՕմահա Բիչում Նաանվտանգ վայրեջք կատարեց, բայց հուլիսի 27-ին Դաշնակից զորքերի առաջխաղացման ժամանակծանր վիրավորվեց հակատանկային ականի պայթյունից։ Մի ակնթարթում նրա կյանքը և ապագա բժշկական կարիերան խիստ տուժեցին։ Հետևեցին բազմաթիվ վիրահատություններ, որոնք օգնեցին նրան ապաքինվել լուրջ վնասվածքների մեծ մասից, բայց Եղբայր Շամուեյի տեսողությունը երբեք չվերականգնվեց։ Ինչպե՞ս նա արձագանքեց։

Հիվանդանոցում երեք տարի վերականգնվելուց հետո նա տուն վերադարձավ Լովել (Վայոմինգ)։ Նա գիտեր, որբժիշկ դառնալու իր երազանքն այլևս հնարավոր չէր իրականացնել, բայցորոշեց առաջ գնալ, ամուսնանալ և ընտանիք կազմել։

Նա ի վերջո աշխատանք գտավ Բալթիմորում (Մերիլենդ)՝ որպես վերականգնող խորհրդական և կույրերին աշխատանք ապահովող մասնագետ։ Իրվերականգման ընթացքում, նա սովորել էր, որ կույրերն ընդունակ են ավելի շատ բաներ անել, քան ինքը կարծում էր նութ տարիների ընթացքում իր այդ պաշտոնում նաավելի շատ կույր մարդկանց աշխատանքի տեղավորեց, քան որևէ այլ խորհրդատու ողջ երկրում։

Այժմ վստահ լինելով ընտանիքին ապահովելու իր ունակությանը, Հայրումը առաջարկություն արեց իր սիրած աղջկան՝ասելով. «Եթե դու կարդաս նամակները, տեսակավորես գուլպաները և վարես մեքենան, ես կարող եմ անել մնացածը»: Նրանք շուտով կնքվեցին Սոլթ Լեյք Տաճարում և ի վերջո օրհնվեցին ութ երեխաներով:

1954 թվականին Շամուեյները վերադարձան Վայոմինգ, որտեղ Եղբայր Շամուեյն աշխատեց 32 տարի՝ որպես նահանգի խուլերի և կույրերի համար կրթության տնօրեն: Այդընթացքում Չեյենի Առաջին Ծխում նա յոթ տարի ծառայեց որպես եպիսկոպոս, իսկ հետո 17 տարի՝ որպես ցցի հայրապետ: Թոշակի անցնելուց հետո Եղբայր և Քույր Շամուեյները ծառայեցին նաև որպես տարեց զույգ ԱնգլիաԼոնդոնՀարավային Միսիայում:

Հայրում Շամուեյը մահացավ 2011 թվականի մարտին, իրենից հետո թողնելով Տիրոջ հանդեպ հավատքի և վստահության ժառանգություն, նույնիսկ, փորձության պայմաններում իր երեխաների, թոռների և ծոռների մի մեծ սերունդ:[1]

Հայրում Շամուեյի կյանքը գուցե փոխվեց պատերազմի պատճառով, բայց նա երբեք չկասկածեց իր աստվածային էությանը և հավերժական ներուժին: Նրա նման մենք Աստծո հոգևոր որդիներն ու դուստրերն ենք և մենք «ընդունեցինք Նրա ծրագիրը, ըստ որի պետք է ֆիզիկական մարմիններ ձեռք բերեինք և աշխարհիկ փորձ կուտակեինք դեպի կատարելություն ընթանալու և [մեր] աստվածային ճակատագիրը որպես հավերժական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար»:[2] Ոչ մի տեսակիփոփոխություն, փորձություն կամ հակադրություն չեն կարող փոխել այդ հավերժականընթացքը. միայն մեր ընտրությունները կարող են փոխել, երբ մենք գործադրում ենք մեր ազատ կամքը:

Փոփոխությունները նդրանցից բխող մարտահրավերները, որոնց մենք հանդիպում ենք մահկանացու կյանքում, գալիս են տարբեր տեսքով, չափերով և ազդեցությամբ, մեզանից յուրաքանչյուրին՝ առանձնահատուկ ուղիներով: Ձեզ նման ես ականատես եմ եղելընկերների և ընտանիքների, որոնք բախվել են դժվարությունների հետևյալ պատճառներով.

- Սիրելի անձնավորության մահը:
- Դառը ամուսնալուծությունը:
- Գուցե երբեք ամուսնանալու հնարավորություն չունենալը:
- Լուրջ հիվանդությունը կամ վնասվածքը:
- Եվ նույնիսկ բնական աղետները, ինչպեսվերջերս ականատես եղանք ողջ աշխարհում:

Եվ ցուցակը շարունակվում է: Չնայած յուրաքանչյուր «փոփոխություն» կարող է եզակի լինել մեր անհատական հանգամանքներում, կա մի ընդհանուր տարր, որն առաջանում է փորձության կամ մարտահրավերի ժամանակ՝ հույս և խաղաղություն, որոնք միշտ մատչելի են Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության միջոցով: Հիսուս Քրիստոսի Քավությունն ապահովում է վերջնական ուղղիչ և բուժիչ միջոցներ՝ յուրաքանչյուր վիրավոր մարմնի, վնասված հոգու և կոտրված սրտի համար:

Նա գիտի մի եղանակ, որն ուրիշ ոչ մեկը չի կարող հասկանալ, թե ինչն է մեզ անհրաժեշտ անձնապես, որպեսզի առաջ շարժվենք փոփոխության ընթացքում: Ի տարբերություն ընկերների և սիրելիների, Փրկիչը ոչ միայն համակրում է մեզ, այլևկարողանում է կատարելապես կարեկցել, որովհետև Նա եղել է այնտեղ, որտեղ մենք ենք: Բացի մեր մեղքերիգինը վճարելուց և տառապելուց, Հիսուս Քրիստոսը քայլեց նաև ամեն արահետով, գործ ունեցավ ամեն դժվարության հետ, դիմակայեց ամեն ցավի՝ ֆիզիկական, հուզական ուհոգևոր, որ մենք երբևէ հանդիպում ենք մահկանացու կյանքում:

Հիսուս Քրիստոսի ողորմածությունը և շնորհը չեն սահմանափակվում միայն նրանց համար, ովքեր մեղքեր են գործում . . . , այնտարածվում է հավերժական խաղաղության խոստումով բոլոր նրանց վրա, ովքեր

կընդունեն և կհետևեն Նրան: . . . Նրա ողորմածությունը հզոր բուժիչ ուժ է, անգամ անմեղ վիրավորների համար»:[3]

Այս մահկանացու փորձառության ընթացքում մենք չենք կարող *վերահսկել* այն ամենը, ինչ պատահում է մեզ հետ, բայց մենք բացարձակ վերահսկողություն ունենք այն բանիվրա, թե ինչպես ենք *արձագանքում* փոփոխություններին մեր կյանքում: Սա չի նշանակում, որ մարտահրավերներն ու փորձությունները, որոնց մենք դիմակայում ենք, ոչ մի հետևանք չեն ունենա և հեշտ է հաղթահարել կամ պայքարել: Սա չի նշանակում, որ մենք ազատ կլինենք ցավից ու վշտից: Բայց դա իրոք նշանակում է, որ կա պատճառ հույսի համար, և որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք առաջ շարժվել և գտնել ավելի լավ օրեր՝ նույնիսկ, ուրախությամբ, լույսով և երջանկությամբ լի օրեր:

Մոսիայի գրքում մենք կարդում ենք Ալմայի պատմությունը, թագավոր Նոյի նախկին քահանայի և նրա ժողովրդի մասին, ովքեր «նախազգուշացված լինելով Տիրոջից . . . հեռացան անապատ թագավոր Նոյի զորքերից առաջ»: Ութ օր հետո «նրանք հասան . . . մի շատ գեղեցիկ և հաճելի երկիր», որտեղ «նրանք վրաններ խփեցին, և սկսեցին մշակել հողը, և սկսեցին շենքեր կառուցել»:[4]

Իրավիճակը, որում նրանք գտնվում էին, խոստումնալից էր թվում: Նրանք ընդունել էին Հիսուս Քրիստոսի ավետարանը: Նրանք մկրտվել էին որպես ուխտ, որ իրենք ծառայելու էին

Տիրոջը և պահելու էին Նրա պատվիրանները: Եվ «նրանք բազմացան ու չափազանց ուժեղացան երկրում:»[5]

Սակայն, նրանց հանգամանքները շուտով փոխվելու էին: «Լամանացիների մի բանակ երկրի սահմաններում էին»:[6] Ալման և նրա ժողովուրդը շուտով գերության մատնվեցին և «այնքան մեծ էին նրանց չարչարանքները, որ նրանք սկսեցին ուժգնորեն աղաղակել առ Աստված»: Բացի այդ, զավթիչները նույնիսկ հրամայեցին, որ նրանք դադարեցնեն իրենց աղոթքները, այլապես «ում գտնեին առ Աստված կանչելիս, պետք է մահվան դատապարտվեին»:[7] Ալման և նրա ժողովուրդը ոչինչ չէին արել, որ արժանանային այդ նոր վիճակին: Նրանք ինչպե՞ս արձագանքեցին:

Աստծուն մեղադրելու փոխարեն, նրանք դարձան դեպի Նա և «դուրս թափեցին իրենց սրտերն առ նա»: Ի պատասխան նրանց հավատքին և լուռ աղոթքներին, Տերը պատասխանեց. «Հանգիստ եղեք: . . . Ես . . . կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին:» . . . Շուտով «Տերն ուժեղացրեց նրանց, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին»:[8] Չնայած դեռ գերությունից ազատված չէին, դառնալով *դեպի* Տերը և ոչ թե *Տիրոջից շրջվելով*, նրանք օրհնվեցին համաձայն իրենց կարիքների նՏիրոջ իմաստության:

Երեց Դալլին Հ. Օուքսնուսուցանել է. «Բժշկող օրհնությունները գալիս են շատ ուղիներով, յուրաքանչյուրը մեր անձնական կարիքներին համապատասխան, ըստ Նրա իմացության, ով մեզ ամենաշատն է սիրում: Երբեմն «բժշկումը» ապաքինում է մեր հիվանդությունը կամ թեթևացնում մեր բեռը: Բայց երբեմն մենք բժշկվում ենք՝ մեզ վրա դրված բեռները կրելու համար ուժ, հասկացողություն կամ համբերություն ստանալով»:[9]

Ի վերջո «այնքան մեծ էր նրանց հավատքը և համբերությունը», որ Ալման և նրա ժողովուրդը ազատվեցին Տիրոջ կողմից, ինչպես մենք, «և նրանք գոհություն հայտնեցին», «քանզի նրանք ճորտության մեջ էին, և ոչ ոք չէր կարող ազատել նրանց, բացի, Տիրոջից՝ իրենց Աստծուց»:[10]

Ցավալինայն է, որ շատ հաճախ նրանք, ովքեր ամենաշատը կարիք ունեն, հեռու են շրջվում օգնության միակ կատարյալ աղբյուրից՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսից: Մի նմանատիպ սուրբ գրային պատմություն «պղնձե օձի» մասին ուսուցանում է մեզ, որ մենք ունենք ընտրություն, երբ հանդիպում ենք մարտահրավերների: Երբ Իսրայելի զավակներից շատերը խայթվեցին «թևավոր կիզող օձերից»,[11] «մի նախատիպ էր բարձրացվել . . . որ, ով որ նայեր դրա վրա . . . ապրեր: [Բայց դա ընտրություն էր:] Եվ շատերը նայեցին ու ապրեցին:

Բայց կային շատերը, ովքեր այնպես էին կարծրացած, որ նրանք հրաժարվեցին նայել, այդ պատճառով նրանք մեռան»:[12]

Հնադարյան իսրայելացիների նման, մեզ ևս հրավիրումն խրախուսում են նայել դեպի Փրկիչը և ապրել, քանզի Նրա լուծը քաղցր է և նրա բեռը թեթև, նույնիսկ, երբ մերը կարող է ծանր լինել:

Կրտսեր Ալման ուսուցանեց այս սրբազան ճշմարտությունը, երբասաց. «ես գիտեմ, որ ովքեր որ դնեն իրենց վստահությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց փորձանքների, և իրենց տագնապների, և իրենց չարչարանքների մեջ, և պիտի բարձրացվեն վերջին օրը»:[13]

Այս վերջին օրերում, Տերը տվել է մեզ բազմաթիվ աղբյուրներ՝ մեր «պղնձե օձերը», որոնքբոլորը նախատեսված են օգնելու մեզ նայելՔրիստոսին ևմեր վստահությունը Նրա վրա դնել: Գործ ունենալով կյանքի մարտահրավերների հետ, չպիտի անտեսենք իրականությունը, այլ ավելի շուտպիտի ընտրենք ինչի վրա կենտրոնանալ և ընտրենք հիմքը, որի վրապիտի կառուցենք:

Այս աղբյուրները ներառում են, բայցչեն սահմանափակվում.

- Սուրբ գրությունների և ապրող մարգարեների ուսմունքների կանոնավոր ուսումնասիրություն:
- Հաճախակի անկեղծ աղոթք և ծոմ:
- Արժանավոր ճաշակել հաղորդությունը:
- Կանոնավորայցելություններ տաճար:
- Քահանայության օրհնություններ:
- Իմաստուն խորհրդատվություն ուսուցանված մասնագետների միջոցով:
- Եվ նույնիսկ դեղորայք, երբ ճիշտնշանակված է և օգտագործվում է, ինչպես նշված է:

Կյանքի հանգամանքների ինչ փոփոխության էլհանդիպենք մեր ճանապարհին և ինչ անսպասելի ուղիով էլ ստիպված լինենք ճամփորդել, թե ինչպեսկարձագանքենք՝ մերընտրությունն է: Մեր լավագույն տարբերակն է՝ միշտ շրջվել դեպի Փրկիչը և բռնել Նրա մեկնած ձեռքը:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է այս հավերժական ճշմարտությունը. «իսկական, հարատև երջանկությունը, որն ուղեկցվում է ուժով, քաջությամբ և կարողությամբ հաղթահարելու ամենամեծմարտահրավեր հանդիսացող դժվարությունները, գալիս է մի կյանքից, որը կենտրոնացած է Հիսուս Քրիստոսում: . . . Մի գիշերվա արդյունքով երաշխավորություն չկա, բայց կա բացարձակ համոզվածություն, որ Տիրոջ ժամանակին կգան լուծումներ, կգերիշխի խաղաղություն և դատարկությունը կլցվի»:[14]

Այս ճշմարտությունների մասին ես կիսվում եմ իմ վկայությամբ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Պատմություն՝ ստացված ուղղակի Ջոզեֆ Շամուեյից՝ Հայրում Սմիթ Շամուեյի հետնորդից
2. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
3. Բոյդ Ք. Փաքեր, «Մեր հույսի պատճառը», *Լիահոնա,* նոյ. 2014, 7
4. Մոսիա 23.1–5
5. Մոսիա 23.20
6. Մոսիա 23.25
7. Մոսիա 24.10–11
8. Մոսիա 24.12–15
9. Դալլին Հ. Օուքս, «Նա բժշկում է ծանրաբեռնվածներին», *Լիահոնա,* նոյ. 2006, 7–8:
10. Մոսիա 24.16, 21, 22
11. 1 Նեփի 17.41
12. Ալմա 33.19–20
13. Ալմա 36.3
14. Richard G. Scott, “Trust in the Lord,” *Ensign,* Nov. 1995.



**Երեց Վ. Քրեյգ Ցվիք**
Յոթանասունի պատվավոր անդամ

# Տեր, թույլ տուր, որ իմ աչքերը բացվեն

*Մենք պետք է նայենք ուրիշներին մեր Փրկիչի աչքերով։*

Ա*ռյուծ արքան* դասական անիմացիոն ֆիլմ է աֆրիկյան սավաննայի մասին։ Երբ առյուծ արքան մահանում է, փրկելով իր որդուն, մանկահասակ առյուծ արքայազնը վտարվում է երկրից, մինչ բռնակալ կառավարիչը կործանում է սավաննայի հավասարակշռությունը։ Առյուծ արքայազնը վերականգնում է թագավորությունը ուսուցչի օգնությամբ։ Նրա աչքերը բացվում են՝ տեսնելով սավաննայի կյանքի մեծ շրջանի հավասարակշռության անհրաժեշտությունը։ Որպես թագավոր, իր օրինական տեղը զբաղեցնելու համար երիտասարդ առյուծը հետևեց հետևյալ խորհրդին՝ «նայիր քո տեսածից այն կողմ»։[1]

Մինչ մենք սովորում ենք դառնալ ժառանգներն այն ամենի, ինչ ունի մեր Հայրը, ավետարանը ուսուցանում է մեզ նայել մեր տեսածից այն կողմ։ Մեր տեսածից այն կողմ տեսնելու համար մենք պետք է նայենք ուրիշներին մեր Փրկիչի աչքերով։ Ավետարանի ցանցը լցված է ամեն տեսակ մարդկանցով։ Մենք չենք կարող լիարժեք հասկանալ մեզ շրջապատող մարդկանց, Եկեղեցու անդամների, նույնիսկ մեր ընտանիքի անդամների ընտրությունները և հոգեբանական վիճակը, քանի որ մենք դժվար թե լիարժեք պատկերացում ունենք, թե ովքեր են նրանք։ Մենք պետք է նայենք անիմաստ ենթադրություններից և կարծրատիպերից այն կողմ և լայնացնենք մեր սեփական փորձի փոքրիկ ոսպնյակը։

Մինչ ծառայում էի որպես միսիայի նախագահ, ես բացել եմ շատ աչքեր՝ «նայելու իմ տեսածից այն կողմ»։ Մի երիտասարդ երեց ժամանեց, ում աչքերում մտավախություն կար։ Երբ մենք հանդիպեցինք, հարցազրույցի ժամանակ նա հուսահատությամբ ասաց. «Ես ուզում եմ տուն գնալ»։ Եսմտածեցի. «Դե, մենք կարող ենք դա շտկել»։ Ես նրան խորհուրդ տվեցի ջանասիրաբար աշխատել և աղոթել այդ մասին մեկ շաբաթվա ընթացքում, ապա զանգել ինձ։ Ուղիղ մեկ շաբաթ անց նա զանգեց։ Նա դեռ ցանկանում էր տուն գնալ։ Ես կրկին խորհուրդ տվեցի նրան աղոթել, ջանասիրաբար աշխատել և զանգել ինձ մեկ շաբաթից։ Մեր հաջորդ հարցազրույցի ժամանակ ոչինչ չէր փոխվել։ Նա պնդեց, որ պիտի տուն գնար։

Ես պարզապես չէի ուզում, որ դա տեղի ունենար։ Ես սկսեցի սովորեցնել նրան իր կոչման սուրբ բնույթի մասին։ Ես քաջալերեցի նրան «մոռանալ [իրեն] և գնալ աշխատելու»։[2] Սակայն անկախ իմ առաջարկներից, նա չէր մտափոխվում։ Ի վերջո ես հասկացա, որ թերևս չունեի ամբողջական պատկերը։ Այդ ժամանակ ես ոգեշնչում զգացի տալու նրան հետևյալ հարցը. «Երեց, ի՞նչն է դժվար քեզ համար»։ Նրա խոսքերը խոցեցին իմ սիրտը. «Նախագահ, ես չեմ կարողանում կարդալ»։

Իմաստուն խորհուրդը, որն իմ կարծիքով շատ կարևոր էր նրա համար լսել, բացարձակապես չէր համապատասխանում նրա կարիքներին։ Ամենաշատը նա սպասում

էր, որ ես նայեի իմ հապճեպ տրված գնահատականից այն կողմ և թույլ տայի Հոգուն օգնել ինձ հասկանալ, թե իրականում ինչ մտահոգություն ուներ այս երեցը: Նա կարիք ուներ, որ ես ամեն բան ճիշտ տեսնեի և հուսալի առաջարկ անեի: Փոխարենը, ես գործում էի որպես մի հսկա ավերիչ գունդ: Այդ խիզախ երեցը սովորեց կարդալ և դարձավ Հիսուս Քրիստոսի ազնիվ աշակերտ: Նա բացեց իմ աչքերը և օգնեց հասկանալ Տիրոջ հետևյալ խոսքերը. «Որովհետեւ մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տէրը սրտին է նայում» (Ա Թագավորաց 16.7):

Ինչպիսի օրհնություն է, երբ Տիրոջ Հոգին մեծացնում է մեր տեսադաշտը: Հիշեք Եղիսե մարգարեին, ով արթնացավ ու գտավ իր քաղաքը, շրջապատված ասորական բանակի ձիերով և կառքերով: Նրա ծառան վախեցած էր և հարցրեց Եղիսեին, թե ինչ էին անելու նման արտասովոր պայմաններում: Եղիսեն պատվիրեց նրան չանհանգստանալ հետևյալ հիշարժան խոսքերով. «Մի վախենար. որովհետեւ մեզ հետ եղողները շատ են քան թէ նորանց հետ եղողները» (Դ Թագավորաց 6.16): Ծառան գաղափար չուներ, թե ինչի մասին էր խոսում մարգարեն: Նա չէր կարողանում նայել իր տեսածից այն կողմ: Ինչևէ, Եղիսեն տեսավ հրեշտակների հզոր բանակ՝ պատրաստված պատերազմելու մարգարեի ժողովրդի համար:

Ուստի, Եղիսեն աղոթեց, որ Տերը բացեր երիտասարդի աչքերը, «եւ նա տեսաւ, եւ ահա սարը լիքն էր հրեղէն ձիերով եւ կառքերով Եղիսէի շուրջը» (Դ Թագավորաց 6.17):

Մենք հաճախ առանձնանում ենք ուրիշներից, քանի որ տարբեր կերպ ենք տեսնում բաները: Մենք հարմարավետ ենք զգում նրանց շրջապատում, ովքեր մտածում, խոսում, հագնվում և գործում են մեր նման և անհարմարավետ նրանց հետ, ովքեր ունեն այլ հանգամանքներ կամ իրավիճակներ: Արդյո՞ք իրականում մենք չենք գալիս տարբեր երկրներից և խոսում տարբեր լեզուներով: Մի՞թե մենք բոլորս չենք տեսնում աշխարհը մեր իսկ կյանքի փորձառությունների հսկայական սահմանափակումների միջոցով: Ոմանք տեսնում և խոսում են հոգևոր աչքերով, ինչպես Եղիսե մարգարեն, իսկ ոմանք էլ տեսնում և շփվում են համաձայն աչքի տեսածի, համաձայն ոչ տառաճանաչ միսիոների հետ իմ ունեցած փորձառության:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որը սնվում է համեմատություններով, պիտակներ դնելով և քննադատությամբ: Սոցկայքերի տեսապակու միջոցով նայելու փոխարեն մենք պետք է նայենք ներսում եղած աստվածային հատկանիշներին, որոնցով օժտված է մեզանից յուրաքանչյուրը: Աստվածային այդ արժեքները և ցանկությունները հնարավոր չէ տեղադրել Pinterest-ում կամ Instagram-ում:

Ուրիշներին ընդունելը և սիրելը չի նշանակում, որ մենք պետք է ընդունենք նրանց գաղափարները: Ակնհայտ է, որ ճշմարտությունը մեզանից պահանջում է լիարժեք նվիրվածություն, չնայած այն երբեք չպիտի խոչընդոտ հանդիսանա բարության համար: Ուրիշներին անկեղծորեն սիրելը պահանջում է անվերջ փորձել ընդունել մարդկանց լավագույն ջանքերը, ում կյանքի փորձառությունները և սահմանափակումները գուցե մենք երբեք ամբողջությամբ չիմանանք: Մեր տեսածից այն կողմ տեսնելը պահանջում է կենտրոնացնել մեր գիտակցությունը Փրկիչի վրա:

2016թ. մայիսի 28-ին 16-ամյա Բաու Ռիչին և նրա ընկեր Աուստինը Կոլորադոյում գտնվող ընտանեկան ազարակում էին: Բաուն և Աուստինը բարձրացան իրենց ամենագնացները՝ մեծ ակնկալիք ունենալով, կապված արկածալի օրվա հետ: Դեռ շատ հեռու չէին գնացել, երբ հայտնվեցին վտանգավոր պայմաններում և տեղի ունեցավ ողբերգություն: Մեքենան, որը վարում էր Բաուն, հանկարծ շրջվեց, թողնելով նրան 400 ֆունտ (180 կգ) պողպատի ծանրության տակ: Երբ Բաուի ընկեր Աուստինը հասավ նրան, տեսավ, որ Բաուն պայքարում էր իր կյանքի համար: Իր ամբողջ ուժով նա փորձեց հրել մեքենան իր ընկերոջ վրայից: Այն տեղից չէր շարժվում: Նա աղոթեց Բաուի համար, ապա շտապ գնաց օգնություն կանչելու: Արտակարգ իրավիճակների անձնակազմն ի վերջո ժամանեց, սակայն մի քանի ժամ անց Բաուն մահացավ: Նա հեռացավ այս մահկանացու կյանքից:

Ժամանեցին նրա հուսահատ ծնողները: Մինչ նրանք կանգնած էին մի փոքր հիվանդանոցում Բաուի ամենամոտ ընկերոջ և ընտանիքի անդամների հետ, ներս մտավ մի ոստիկան և Բաուի մայրիկին փոխանցեց իր որդու բջջային հեռախոսը: Երբ նա վերցրեց այն, հնչեց ձայնային մի ազդանշան: Նա բացեց հեռախոսը և տեսավ Բաուի ամենօրյա ազդանշանը: Նա

բարձրաձայն կարդաց իր կենսուրախ, արկածասեր դեռահաս որդու ուղերձը, որը գրել էր ամեն օր կարդալու համար: Ահա այն. «Հիշիր այսօր դնել Հիսուս Քրիստոսին քո կյանքի կենտրոնում»:

Բաուի՝ Քավիչի վրա կենտրոնացած լինելը չէր մեղմացնում նրանսիրողների վիշտը նրա բացակայության ժամանակ: Այնուամենայնիվ, այն մեծ հույս և իմաստ է տալիս Բաուի կյանքին և կյանքում կայացրած որոշումներին: Այն թույլ է տալիս նրա ընտանիքին և ընկերներին նայելու նրա վաղաժամ մահվան վշտից այն կողմ՝ հանդերձյալ կյանքի ուրախ իրողությանը: Ինչպիսի զորովագութ ողորմություն է Բաուի ծնողների համար՝ տեսնել իրենց որդու աչքերով այն, ինչն ամենաարժեքավորն էր նրա համար:

Որպես Եկեղեցու անդամներ, մենք ունենք անձնական հոգևոր ազդանշանների պարգևը, որը նախազգուշացնում է մեզ, երբ նայում ենք լոկ մեր մահկանացու աչքերով՝ փրկությունից հեռու: Հաղորդությունն ամեն շաբաթ մեզ հիշեցնում է շարունակ կենտրոնանալ Հիսուս Քրիստոսի վրա, որպեսզի մենք միշտ հիշենք Նրան և կարողանանք միշտ ունենալ Նրա Հոգին մեզ հետ (տես ՎԵՈՒ 20.77): Սակայն մենք երբեմն անտեսում ենք հիշեցումի այս զգացումները և ահազանգերը: Եթե մենք ունենք Հիսուս Քրիստոսին մեր կյանքի կենտրոնում, Նա այնպես կանի, որ մեր աչքերը կարողանան տեսնել ավելի լայն հնարավորություններ, քան մենք ինքներս կարող ենք ըմբռնել:

Ես մի շատ հետաքրքիր նամակ եմ ստացել պաշտպանիչ ազդանշանի մասին, որ ստացել էր մի հավատարիմ քույր: Նա պատմեց ինձ, որ ցանկանալով օգնել իր ամուսնուն հասկանալ իրեն, նա իր հեռախոսի մեջ սկսեց գրառել ամուսնու այն խոսքերը և արարքները, որոնք ցավ էին պատճառում իրեն: Նա մտածում էր, որ հարմար պահին նա կունենար գրավոր ապացույց և կկիսվեր նրա հետ դրանով, ինչն էլ կստիպեր նրան փոխվելու ցանկություն ունենալ: Ինչևէ, մի կիրակի,

մինչ ճաշակում էին հաղորդությունը և կենտրոնանում Փրկիչի Քավության վրա, նա հասկացավ, որ իր ամուսնու վերաբերյալ բացասական զգացողություններ գրառելն իրականում հեռացնում էր նրանից Հոգին և երբեք չէր փոխելու նրան:

Մի հոգևոր ազդանշան նշմարվեց նրա սրտում, որն ասում էր. «Թույլ տուր այդ վատ զգացողությանը հեռանալ, թույլ տուր, որ այդ ամբողջը հեռանա: Ջնջիր այդ նշումները: Դրանք չեն կարող օգնել»: Ապա նա գրել է, և ես մեջբերում եմ. «Ժամանակ պահանջվեց, որ ես կարողանայի սեղմել «նշել բոլորը» և նույնիսկ ավելի երկար ժամանակ պահանջվեց, որ սեղմեի «ջնջել»: Սակայն հենց արեցի դա, այդ բոլոր բացասական զգացողությունները կորան տարածության մեջ: Միրտս լցվեց սիրով՝ ամուսնուս հանդեպ սիրով և Տիրոջ հանդեպ սիրով»: Նրա տեսիլքը փոխվեց, ինչպես Սողոսինը՝ Դամասկոս տանող ճանապարհին: Աղավաղող թեփերը թափվեցին նրա աչքերից:

Մեր Փրկիչը հաճախ է բացել ֆիզիկապես և հոգեպես կույրերի աչքերը: Մեր աչքերը բառացիորեն կամ փոխաբերական իմաստով աստվածային ճշմարտության համար բացելը նախապատրաստում է մեզ բժշկվելու մահկանացու կարճատեսությունից: Եթե մենք ուշադրություն ենք դարձնում հոգևոր «զգուշացումներին», որոնք ազդանշում են ճիշտ ուղղություն բռնելու կամ ավելի լայն հավերժական հեռանկար ունենալու կարիքի մասին, մենք ստանում ենք հաղորդության խոստումը՝ ունենալու Նրա Հոգին մեզ հետ: Դա տեղի ունեցավ Ջոզեֆ Սմիթի և Օլիվեր Քաուդերիի հետ Կիրթլենդի Տաճարում, երբ Հիսուս Քրիստոսն ուսուցանեց ազդեցիկ ճշմարտություններ և խոստացավ, որ մահկանացու սահմանափակումների «վարագույրը [կհեռացվեն նրանց] մտքերից և [նրանց] հասկացողության աչքերը [կբացվեն]» (ՎԵՈՒ 110.1):

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի զորության միջոցով մենք կարողանում ենք հոգևորապես նայել այն ամենից այն կողմ, ինչ տեսնում ենք մեր ֆիզիկական աչքերով: Եթե մենք հիշենք Նրան և Նրա Հոգին մեզ հետ ունենանք (տես ՎԵՈՒ 20.77), մեր հասկացողության աչքերը կբացվեն: Ապա մեզանից յուրաքանչյուրի մեջ աստվածայնության առկայության հրաշալի իրողությունը ավելի մեծ զորությամբ կամրապնդվի մեր սրտերում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. From *The Lion King 1½* (2004); outside North America, known as *The Lion King 3: Hakuna Matata*.
2. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Գորդոն Բ. Հինքլի* (2016), 229:

**Նախագահ Հենրի Բ. Այրինգ**
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

# Մի վախեցեք բարիք գործել

*Տերն ասել է մեզ, որ երբ հավատքով կանգնենք Նրա վեմի վրա, կասկածներն ու վախերը կցրվեն և բարիք գործելու ցանկությունը կմեծանա։*

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես խոնարհաբար աղոթում եմ, որ իմ ելույթի ժամանակ Տիրոջ Հոգին մեզ հետ լինի։ Միրտս լի է երախտագիտությամբ Տիրոջ հանդեպ, ում Եկեղեցում մենք գտնվում ենք, այն ոգեշնչման համար, որ մենք զգացինք այս համաժողովին՝ անկեղծ աղոթքների, ոգեշնչված քարոզների և հրեշտակային երաժշտության համար։

Անցած ապրիլին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մի ելույթ ունեցավ, որը խորապես ազդեցամբողջ աշխարհի մարդկանց, այդ թվում՝ ինձ վրա։ Նա խոսեց Մորմոնի Գրքի զորության մասին։ Նա հորդորեց մեզ ուսումնասիրել, խորհել և կիրառել դրա ուսմունքները։ Նա խոստացավ, որ եթե մենք ամենօր ժամանակ հատկացնենք և ուսումնասիրենք, խորհենք ու պահենք Մորմոնի Գրքի պատվիրանները, մենք ձեռք կբերենք դրա ճշմարտացիության կենսական վկայությունը և կենդանի Քրիստոսի մասին ձեռք բերած այդ վկայությունը կօգնի մեզ ապահով զգալ դժվարությունների ժամանակ (տես «Մորմոնի Գրքի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2017, 86–87)։

Ձեզանից շատերի նման, ես մարգարեների խոսքերն ընկալում եմ որպես ինձ ուղղված Տիրոջ խոսքեր։ Եվ ձեզանից շատերի նման ես որոշեցի հնազանդվել այդ խոսքերին։ Երիտասարդ ժամանակ ես վկայություն ձեռք բերեցի, որ Մորմոնի Գիրքն Աստծո խոսքն է, որ Հայրն ու Որդին հայտնվեցին և խոսեցին Ջոզեֆ Սմիթի հետ և հնադարյան Առաքյալները հայտնվեցին Մարգարե Ջոզեֆին և վերականգնեցին քահանայության բանալիները Տիրոջ Եկեղեցում։

Այդ վկայությամբ զինված, ես 50 տարի շարունակ ամեն օր կարդացել եմ Մորմոնի Գիրքը։ Այսպիսով, ես միգուցե հիմնավորվածմտածեի, որ Նախագահ Մոնսոնի խոսքերն ուրիշ մեկի համար են։ Բայց ձեզանից շատերի նման ես զգացի մարգարեի հորդորը, և նրա խոստումը հրավիրեց ինձ ավելի շատ ջանքեր գործադրել այդ ուղղությամբ։ Շատերդ վարվել եք ինձ նման. աղոթել եք ավելի մեծ անկեղծությամբ, ավելի մեծ անկեղծությամբ եք խորհել սուրբ գրությունների հատվածների շուրջ և ավելի շատ եք ջանացել ծառայել Տիրոջը և ուրիշներին՝ Նրա անվան համար։

Երջանիկ արդյունքը ինձ և շատերիդ համար մարգարեի խոստման իրականացումն էր։ Մեզանից նրանք, ովքեր ի սրտե ընդունել են նրա ոգեշնչված խորհուրդը, Հոգուն ավելի հստակ են լսել։ Մենք ավելի մեծ ուժ ենք գտել դիմակայելու գայթակղությանը և ավելի մեծ հավատք ենք ձեռք բերել հարություն առած Հիսուս Քրիստոսի, Նրա ավետարանի և Նրա կենդանի Եկեղեցու հանդեպ։

Աշխարհում աճող տագնապի ժամանակներում, այն մարդիկ, ովքեր ավելի են ամրապնդել իրենց

վկայությունները, վանել են կասկածներն ու վախերը և ապրել են խաղաղության զգացումը: Հնազանդվելով Նախագահ Մոնսոնի խորհրդին, ես հասել եմ երկու հրաշալի արդյունքիիմ կյանքում. Առաջինը, նրա խոստացած Հոգին ստեղծել է լավատեսության զգացում ապագայի հանդեպ, նույնիսկ այն պարագայում, երբխառնաշփոթությունն աշխարհում շարունակում է աճել: Եվ երկրորդը, Տերն ինձ և ձեզ շնորհել է ավելի մեծ սերայն մարդկանց հանդեպ, ովքեր գտնվում են նեղության մեջ: Ուրիշներին փրկության հասնելու մեր ցանկությունը մեծացել է: Այդ ցանկությունը կենտրոնական տեղ է գրավել Նախագահ Մոնսոնի ծառայության և դասավանդման մեջ:

Տերը Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին խոստացավ սեր ուրիշների հանդեպ և խիզախություն, երբ նրանց առջև դրված հանձնարարությունները անհաղթահարելի թվան: Տերն ասաց, որ անհրաժեշտ խիզախությունը կծնվի որպես վեմ Նրա հանդեպ ունեցած նրանց հավատքից.

«Մի վախեցեք բարիք գործել, իմ որդիներ, քանզի ինչ որ սերմանեք, այն էլ կհնձեք. հետևաբար, եթե դուք բարիք սերմանեք, բարիք էլ կհնձեք, որպես վարձք:

Ուստի, մի վախեցիր, փոքրի՛կ հոտ. բարիք գործիր. թող երկիրն ու դժոխքը միանան քո դեմ, քանզի, եթե դու կառուցված ես իմ վեմի վրա, նրանք չեն կարող գերիշխել:

Ահա, ես ձեզ չեմ դատապարտում. գնացեք ձեր ճամփով և այլևս մի մեղանչեք. լրջմտորեն կատարեք այն գործը, որը պատվիրել եմ ձեզ:

Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք:

Տեսեք խոցվածքը, որ ծակեց իմ կողը, և նաև բևեռների նշանները՝ իմ ձեռքերի ու ոտքերի վրա. եղեք հավատարիմ, պահեք իմ պատվիրանները և դուք կժառանգեք երկնքի արքայությունը» (ՎԵՈՒ 6.33–37):

Տերն ասել է Վերականգնման Իր մարգարեներին և ասում է մեզ, որ երբ մենք հավատքով կանգնենք Նրա վեմի վրա, կասկածներն ու վախերը կցրվեն և բարիք գործելու

ցանկությունը կմեծանա: Երբ մենք ընդունենք Նախագահ Մոնսոնի հրավերը՝մեր սրտերում սերմանելու Հիսուս Քրիստոսի մասին վկայությունը, մենք ձեռք կբերենք զորություն, ցանկություն և խիզախություն, որպեսզի առանց մեր անձնական կարիքների մասին մտահոգվելու գնանք և փրկենք ուրիշներին:

Ես այդ հավատքին ու խիզախությանը բազմաթիվ անգամներ ականատես եմ եղել, երբ հավատացյալ Վերջին Օրերի Սրբերն առնչվել են սարսափելի փորձությունների հետ: Օրինակ, ես գտնվում էի Այդահո նահանգում, երբ 1976թ.-ի հունիսի 5-ին Տետոն ամբարտակը կոտրվեց: Ջրե պատնեշը իջավ ցած: Հազարավոր մարդիկ փախան իրենց տներից: Հազարավոր տներ և ձեռնարկություններ ավերվեցին: Հրաշքով միայն 15 հոգի զոհվեց:

Այն, ինչի ականատես եղա այնտեղ, ես տեսել եմ ամենուր, որտեղ Վերջին Օրերի Սրբերն ամուր կանգնել են Հիսուս Քրիստոսի վկայության վեմի վրա: Քանի որ նրանք կասկածներ չունեին, որ Նա հետևում է իրենց, նրանք դարձան անվախ: Նրանք անտեսում էին իրենց փորձությունները և փրկության հասնում ուրիշներին: Եվ դա անում էին Տիրոջ հանդեպ սիրուց մղված, առանց որևէ բանպահանջելու դրա դիմաց:

Օրինակ, երբ Տետոն ամբարտակը կոտրվեց, Վերջին Օրերի Սրբերի մի զույգ ճամփորդում էր տնից հեռու: Երբ նրանք ռադիոյով լսեցին գույժը, շտապ վերադարձան Ռեքսբուրգ: Իրենց տուն գնալուն համոզվելու փոխարեն, որ այն չէր կործանվել, նրանք գնացին փնտրելու իրենց եպիսկոպոսին: Նա գտնվում էր այն շենքում, որն օգտագործվում էր որպես վերականգնողական կենտրոն: Նա օգնում էր և ցուցումներ տալիս այն կամավորներին, ովքեր դեղին դպրոցական ավտոբուսներով ժամանում էին օգնության:

Այդ զույգը գնաց եպիսկոպոսի մոտ և ասաց. «Մենք հենց նոր վերադարձանք: Եպիսկոպոս, ինչո՞վ կարող ենք օգնել»: Նա տվեց նրանց մի ընտանիքի անուն: Այդ զույգը օգնեցցեխից և ջրից ազատել բազմաթիվ տներ: Նրանք օրեր շարունակ առավոտից երեկո աշխատում էին: Ի վերջո նրանք ընդմիջում տվեցին և որոշեցին ստուգել իրենց տունը: Ջրհեղեղը քշել էր այն և ոչինչ չէր թողել: Ուստի, նրանք հետ շրջվեցին և գնացին հետ՝ իրենց Եպիսկոպոսի մոտ: Նրանք հարցրեցին. «Եպիսկոպո՛ս, կարո՞ղ եք ինչ որ մեկին հանձնարարել օգնել մեզ»:

Խիզախության և գթության այդ հրաշքը, Քրիստոսի մաքուր սերը, բազմաթիվ անգամներ կրկնվել է տարիների ընթացքում և աշխարհով մեկ: Դա պատահել է հալածանքների և փորձությունների սոսկալի ժամանակներում, երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը գտնվում էր Միսսուրիում: Դա պատահել է, երբ Բրիգամ Յանգն առաջնորդեց ժողովրդին Նավույից դուրս, իսկ հետո կոչ արեց Սրբերին գնալ անմարդաբնակ վայրեր Միացյալ Նահանգների արևմուտքով մեկ, որպեսզի

օգնի մարդկանց հաստատել Սիոնը Տիրոջ համար։

Եթե կարդաք այդ ռահվիրաների օրագրերը, դուք կտեսնեք հավատքի հրաշքները, որոնք դուրս են վանում կասկածներն ու վախերը։ Եվ կկարդաք, թե ինչպես են Սրբերն իրենց գործերը թողած օգնում ուրիշին Տիրոջ համար, նախքան կվերադառնային իրենց ոչխարների մոտ կամ իրենց չհերկված դաշտերը։

Ես այդ նույն հրաշքին ականատես եղա մի քանի օր առաջ, երբ տեսա Իրմա փոթորկի ավերածությունները Պուերտո Ռիկոյում, Սենթ Թոմասում և Ֆլորիդայում, որտեղ Վերջին Օրերի Սրբերը համագործակցում էին այլ եկեղեցիների, տեղի համայնքային խմբերի և պետական կազմակերպությունների հետ, որպեսզի տարածքը մաքրեին։

Ռեքսբուրգի իմ ընկերների նման, Ֆլորիդայում ապրող ոչ անդամ մի զույգ իր տարածքը մաքրելու փոխարեն կենտրոնացել էր համայնքին օգնելու վրա։ Երբ Եկեղեցու անդամ իր հարևաններն առաջարկեցին իրենց օգնությունը, որպեսզի հեռացնեն նրանց ճանապարհը արգելափակող երկու մեծ ծառերը, նրանք բացատրեցին, որ ծանրաբեռնված են եղել ուրիշներին օգնելով և հավատացել են, որ Տերն օգնության կհասնի կարիքի դեպքում։ Ապա, զույգն ասաց, որ մեր Եկեղեցու անդամներին օգնություն առաջարկելուց առաջ նրանք աղոթում էին դրա համար։ Նրանք պատասխան ստացան, որ օգնությունը կհասնի։ Այդ հավաստիացումից ժամեր չանցած, օգնությունը հասավ։

Ինձ հայտնել են, որ որոշ մարդիկ դեղին Օգնող ձեռքեր անունով վերնաշապիկներ կրող Վերջին Օրերի Սրբերին սկսել են անվանել «Դեղին Հրեշտակներ»։ Վերջին Օրերի Սրբերի մի անդամ իր մեքենան տարել է սպասարկման կենտրոն և նրան օգնող մասնագետը նկարագրել է այն «հոգևոր փորձառությունը», որը նա ունեցել է, երբ մարդիկ օգնում էին նրա այգուց հեռացնել ծառերը, և նա ասաց, որ նրանք «երգում էին երգեր Աստծո զավակ լինելու վերաբերյալ»։

Ֆլորիդայի մեկ այլ բնակիչ, ով նույնպես մեր հավատքից չէ, պատմեց, որ Վերջին Օրերի Սրբերը եկան իր տուն, երբ նա աշխատում էր իր ավերված այգում, ծանրաբեռնված ու գերլարված էր զգում և գրեթե արտասվում էր։ Նա ասաց, որ կամավորները ստեղծեցին «մաքուր հրաշք»։ Նրանք ոչ միայն ջանասիրաբար աշխատեցին, այլ նաև ծիծաղ ու ժպիտ պարգևեցին և դրա դիմաց ոչինչ չընդունեցին։

Ես ականատես եղա այդ ջանասիրությանը և ծիծաղին, երբ շաբաթ երեկոյան ես Ֆլորիդայում այցելեցի վերջին Օրերի Սրբերի մի խմբի։ Այդ կամավորներն ավելի վաղ դադարեցրել էին իրենց աշխատանքը, որպեսզի հնարավորություն ընձեռեին ինձ սեղմել իրենց ձեռքերը։ Նրանք ասացին, որ անցած գիշեր Ջորջիայի իրենց ցցի 90 անդամներ ծրագիր էինմշակելօգնության հասնելու Ֆլորիդայում տուժածներին։

ՆրանքՋորջիայից մեկնել էին առավոտյան ժամը 4:00-ին, վարել մեքենան ժամեր շարունակ, կեսօրից հետո սկսել էինաշխատել մինչև երեկո և ծրագրում էին աշխատանքը կրկին սկսել հաջորդ օրնառավոտյան։

Այդ բոլորը նրանք նկարագրեցին ժպիտը դեմքներին և կատակելով։ Միակ լարվածությունը, որ նկատեցի, այն էր, որ նրանք ցանկանում էին դադարեցնել շնորհակալություն ընդունելը և վերադառնալիրենց աշխատանքին։ Երբ վերադարձանք մեր մեքենան, որպեսզի գնանք հաջորդ թիմի մոտ, նկատեցին, որ ցցի նախագահն արդեն գործի էր դրել իր շարժիչով աշխատող սղոցը և աշխատում էր ընկած ծառերի վրա, իսկ եպիսկոպոսը կտրում էր ծառի ճյուղերը։

Ավելի վաղ այդ օրը, երբ հեռացանք մեկ այլ վայրից, մի մարդ մոտեցավ մեքենային, հանեց իր գլխարկը և շնորհակալություն հայտնեց կամավորների համար։ Նա ասաց. «Ես ձեր եկեղեցու անդամ չեմ։ Անհավատալի է, թե ինչ եք արել մեզ համար։ Աստված օրհնի ձեզ»։ Դեղին վերնաշապիկով նրա կողքին կանգնած ՎՕՍ կամավորականը ժպտաց և թոթովեց ուսերը, կարծես թե նա արժանի չէր գովասանքի։

Մինչ Ջորջիայից եկած կամավորները ժամանեցին և օգնեցին այդ մարդուն այնպես, որ նա չէր հավատում դրան, տուժած Ֆլորիդայից հարյուրավոր Վերջին Օրերի Սրբեր հարյուրավոր մղոններ էին անցել հարավ, որպեսզի օգնեին Ֆլորիդայի այլ վայրերի բնակիչներին, ովքեր ավելի շատ էին տուժել։

Այդ օրը ես ավելի լավ հասկացա Մարգարե Ջոզեֆ Սմիթի մարգարեական խոսքերը. «Աստծո սիրով լցված մարդը չի ձգտում օրհնել միայն իր ընտանիքը, այլ տարածում է այն ողջ աշխարհի վրա՝ ցանկանալով օրհնել ողջ մարդկային ցեղը»։ (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 426)։

Մենք այդ սերը տեսնում ենքՎերջին Օրերի Սրբերի կյանքում ամենուր։ Ամեն անգամ, երբ ողբերգական դեպք է տեղի ունենում աշխարհում, Վերջին Օրերի Սրբերը նվիրաբերում են և կամավոր կերպով մասնակցում են Եկեղեցու մարդասիրական ջանքերին։ Կամավորների մասնակցության խնդրանքի անհրաժեշտություն հազվադեպ է լինում։ Ի դեպ, որոշ դեպքերում, մենք խնդրում ենք կամավորներին չշտապել վերականգնողական վայրեր, մինչև որ այնտեղ պատրաստ լինեն նրանց ընդունել։

Օրհնելու այդ ցանկությունը այն մարդկանց գործերն են, ովքերվկայություն են ստացել Հիսուս

Քրիստոսի, Նրա վերականգնված ավետարանի և Նրա մարգարեի մասին: Դրա շնորհիվ է, որ Տիրոջ ժողովուրդը չի կասկածում և չի վախենում: Դրա շնորհիվ է, որ միսիոներները կամավործառայում են աշխարհի բոլոր անկյուններում: Դրա շնորհիվ են ծնողներն իրենց զավակների հետ աղոթում այլոց համար: Դրա շնորհիվղեկավարները կոչ են անում երիտասարդներին ընդունել Նախագահ Մոնսոնի խնդրանքը և ողջ սրտով ընդգրկվել Մորմոնի Գրքի ուսումնասիրության մեջ: Արդյունքն ակնհայտ է ոչ այն բանիշնորհիվ, որ ղեկավարները հորդորում են երիտասարդներին և անդամներին այդպես վարվել, այլ այն, որ երիտասարդները գործում են ըստ իրենց հավատքի: Այդ հավատքը դրված է գործի մեջ, որը պահանջում է անձնազոհ զոհաբերություն, բերում է սրտի փոփոխություն, որը հնարավորություն է տալիս նրանց զգալու Աստծո սերը:

Սակայն մեր սրտերը մնում են անփոփոխ, եթե մենք հետևում են մարգարեի խորհրդին: Եթե մենք մեկ անգամ ուժեղ ջանք թափելուց հետո այլևս չփորձենք, ապա այդ հավատքը կխամրի:

Հավատարիմ Վերջին Օրերի Սրբերը մեծացրել են իրենց հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ, Մորմոնի Գրքի հանդեպ՝ որպես Աստծո խոսքի և Նրա ճշմարիտ Եկեղեցում քահանայության բանալիների վերականգնման հանդեպ: Այդ աճող վկայության շնորհիվ մենք ավելի շատ քաջություն և մտահոգություն ենք տածում Աստծո մյուս զավակների հանդեպ: Բայց առջևում սպասվող դժվարություններն ու հնարավորությունները կպահանջեն ավելին:

Մենք չենք կարող կանխատեսել մանրամասները, բայց մենք գիտենքապագայի ընդհանուր պատկերը: Մենք գիտենք, որ այս վերջին օրերին աշխարհը կլինի խառնաշփոթության մեջ: Մենք գիտենք, որ ցանկացած դժվարության մեջ Տերը կառաջնորդի հավատարիմ Վերջին Օրերի Սրբերին, որպեսզի Հիսուս Քրիստոսի ավետարանը տարածեն բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովրդին: Եվ գիտենք, որ Տիրոջ ճշմարիտ աշակերտներն արժանի ու պատրաստված կլինեն, որպեսզի ընդունեն Նրան, երբ Նա կրկին գա: Մենք չպետք է վախենանք:

Այսպիսով, նույնիսկ երբ մենք արդեն այսքան քաջություն ու հավատ ենք ամբարել մեր սրտերում, Տերն ավելին է ակնկալումմեզանից և գալիք սերունդներից: Նրանք պետք է ավելի ուժեղ ու արի լինեն, քանի որ նրանք ավելի մեծ ու ավելի դժվար գործեր կանեն, քան մենք ենք արել: Եվ նրանք կառնչվեն ավելի մեծ ընդդիմության մեր հոգիների թշնամու կողմից:

Լավատես մնալու ուղին նշվել է Տիրոջ կողմից. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք»: (ՎևՈ 6.36): Նախագահ Մոնսոնն ասել է, թե ինչպես անել դա: Մենք պետք է խորհենք և կիրառենք Մորմոնի Գիրքն ու մարգարեների խոսքերը: Միշտ աղոթեք: Եղեք հավատացող: Ծառայեք Տիրոջը ողջ ձեր սրտով, զորությամբ, մտքով և ուժով: Մենք պետք է ի սրտե աղոթենք գթության պարգևի, Քրիստոսի մաքուր սիրո համար (տես Մորոնի 7.47–48): Եվ ամենից առաջ մենք պետք է հաստատուն և հետևողական լինենք մարգարեական խորհրդին հետևելիս:

Երբ ճանապարհը դժվար է, մենք կարող ենք ապավինել Տիրոջ խոստմանը, մի խոստում, որի մասին Նախագահ Մոնսոնը հիշեցրեց մեզ, երբ նա մեջբերեց Փրկիչի խոսքերը. «Եվ որտեղ որ ձեզ ընդունեն, այնտեղ կլինեմ նաև ես, քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ» (ՎևՈ 84.88):

Ես վկայում եմ, որ Տերը գնում է ձեր առջևից, երբ դուք ծառայում եք Նրան: Երբեմն, դուք կլինեք այն հրեշտակը, որին Տերը կուղարկի մյուսներին բարձրացնելու համար: Երբեմն, դուք կլինեք այն մեկը, ով շրջապատված կլինի հրեշտակներով, ովքեր կբարձրացնեն ձեզ: Բայց դուք ընդմիշտ կունենաք Նրա Հոգին ձեր սրտերում, ինչպես ձեզ

խոստացել են բոլոր հաղորդության ժողովներին: Դուք միայն պետք է պահեք Նրա պատվիրանները:

Երկրի վրա լավագույն օրերը դեռ առջևում են Աստծո արքայության համար: Ընդդիմությունը կամրապնդի Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը, ինչպես դա եղել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի օրերից ի վեր: Հավատքը միշտ հաղթում է վախին: Աշխատելով միասին, կստեղծենք միություն: Եվ սիրող Աստված լսում ու պատասխանում է կարիքավորների համար ձեր հնչեցրած աղոթքներին: Նա ո՛չ ննջում է, և ո՛չ էլ քնում:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հայր Աստված ապրում է և ցանկանում է, որ դուք գնաք տուն՝ Իր մոտ: Սա Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին է: Նա ճանաչում է ձեզ: Նա սիրում է ձեզ: Նա հոգ է տանում ձեր մասին: Նա քավել է ձեր և իմ մեղքերը և Երկնային Հոր բոլոր զավակների մեղքերը: Հավերժական կյանք տանող միակ ճանապարհը ձեր կյանքում և ուրիշներին ծառայելու ընթացքում Նրան հետևելու մեջ է:

Այդ բոլորը ես վկայում եմ և թողնում եմ իմ օրհնությունն ու սերը: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

**Երեց Մ. Ռասսել Բալլարդ**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Գաղթը շարունակվում է

*Դեպի մեր Երկնային Հայրը ետդարձի ուղին ամենակարևոր ուղին է մեր կյանքում։*

Շարյուր յոթանասուն տարի առաջ Բրիգամ Յանգը նայեց Սոլթ Լեյքի հովտին առաջին անգամ և հայտարարեց. «Սա է ճիշտ տեղը»։[1] Նա գիտեր այդ վայրը, որովհետև Տերը նրան հայտնի էր դարձրել այն։

Մինչև 1869 թվականը ավելի քան 70000 Սրբեր անցան գաղթի նույն ճանապարհով։ Չնայածլեզվում, մշակույթում և ազգությունների միջև տարբերություններին, նրանք կիսում էին մի վկայություն Հոր, Որդու և Սուրբ Հոգու, Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման մասին և ցանկություն՝ կառուցել Սիոնը, որը խաղաղության, երջանկության և գեղեցկության մի վայր է՝ Փրկիչի Երկրորդ Գալուստին նախապատրաստվելու համար։

Ջեյն Մանինգ Ջեյմսը առաջին Սրբերի թվում էր, ովքեր ժամանեցին Յուտա. նաազատ արձակված մի ստրուկի դուստր էր, վերականգնված Եկեղեցու մի նորադարձ և մի շատ նշանավոր աշակերտ, ով դիմակայել էր դժվարին մարտահրավերների։ Քույր Ջեյմսը մնաց հավատարիմ Վերջին Օրերի Սուրբ մինչև իր մահը՝ 1908 թվականը։

Նա գրել է. «Ես ուզում եմ ասել հենց այստեղ, որ իմ հավատքը Հիսուս Քրիստոսի ավետարանի հանդեպ, ինչպես այն ուսուցանվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից, այնքան ուժեղ է այսօր, ոչ, ավելի ուժեղ է, քան այն օրը, երբ ես մկրտվեցի։ Ես վճարում եմ իմ տասանորդներն ու զոհաբերությունները, պահում եմ իմաստության խոսքը, ես շուտ եմ քնումև վաղ եմ վեր կենում, ես փորձում եմլավ օրինակ հանդիսանալ բոլորի համար։[2]

Քույր Ջեյմսը ուրիշ շատ Վերջին Օրերի Սրբերի նման, ոչ միայն

*Ջեյն Մենինգը մնաց հավատարիմ Վերջին Օրերի Սուրբ՝ անկախ դժվարություններից։*

կառուցեց Սիոնը արյամբ, քրտինքով և արցունքներով, այլև ձգտեց Տիրոջ օրհնություններին, որքան կարողացավ, ապրեցավետարանի սկզբունքներով, դիմանալով հավատքով առ Հիսուս Քրիստոսը, ովմեծ բժշկողն է բոլորի, ովքեր անկեղծորեն որոնում են Նրան։

Առաջին Սրբերը կատարյալ չէին, բայց նրանք հաստատեցին մի հիմք, որի վրա մենք կառուցում ենք ընտանիքներ և մի հասարակություն, ովքեր սիրում են և պահում ուխտեր, որոնք մեկնաբանվում են տարբեր նորությունների պատմություններով ողջ աշխարհում, շնորհիվՀիսուս Քրիստոսի հանդեպ մեր նվիրվածության և կամավոր ջանքերի, օգնելով նրանց ովքեր մոտիկ են և հեռու։[3]

Նախագահ Այրինգ, կարելի՞ է երախտագիտություն հայտնել տասնյակ հազարավոր դեղին վերնաշապիկներով հրեշտակներին, ովքեր ծառայում են Տեխասում, Մեքսիկայում և այլ վայրերում, ձեր թույլտվությամբ։

Եսխորը համոզմունք ունեմ, որ եթե մենք կորցնենք մեր կապերը նրանց հետ, ովքեր գնացել են մեզանից առաջ, ներառյալ՝ մեր ռահվիրա նախահայրերն ու մայրերը, մենք կկորցնենք մի շատ արժեքավոր գանձ։ Ես խոսել եմ «Հավատք ամեն քայլում» թեմայի վերաբերյալ անցյալում և կշարունակեմ ապագայում, որովհետև ես գիտեմ, որ սերունդներ մեծացնելու համար պետք է ունենալ նույն տեսակի հավատք, ինչպիսին ունեին առաջին Սրբերն առ Տեր Հիսուս Քրիստոս և Նրա վերականգնված ավետարանը։[4]

Իմ սեփական ռահվիրա նախահայրերն ու մայրերը նրանց շարքում էին, ովքեր հավատարիմ ռահվիրաներ էին, ովքեր քաշեցին ձեռնասայլակներ, վարեցին կառքեր և քայլեցին դեպի Յուտա։ Նրանք Քույր Ջեյն Մանինգ Ջեյմսի նման ունեին խորը հավատք իրենց յուրաքանչյուր քայլի հանդեպ, երբ քայլում էինգաղթի ճանապարհով։

Նրանց օրագրերը լի են նեղությունների, սովի և հիվանդության մասին նկարագրություններով և նաև Աստծո հանդեպ

վկայություններով՝ իրենց հավատքի և Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին։

Նրանքքիչ աշխարհիկ իրերունեին, բայց վայելում էին օրհնությունների առատություն եղբայրներից և քույրերից, ում նրանք գտել էին Հիսուս Քրիստոսի Եկեղեցում։ Երբ նրանք կարողանում էին, բարձրացնում էին վայր ընկածներին և օրհնում հիվանդներին միմյանց ծառայելու և Աստծո քահանայության միջոցով։

Յուտայի Քաշ հովտում քույրերը ծառայեցին Սրբերին Սփոփող Միության ոգով. «Աշխատել միասնաբար օգնելու նրանց, ովքեր կարիքի մեջ են»։[5] Իմ նախատատՄարգարեթ ՄաքՆիլ Բալլարդը ծառայեց իր ամուսնու՝ Հենրիի կողքին, երբ նա 40 տարի նախագահում էր Լոգանի Երկրորդ Ծխում `որպես եպիսկոպոս։ Մարգարեթըայդ տարիներին ծխի Սփոփող Միության նախագահն էր 30 տարի։ Նա իրենց տուն էր բերում աղքատներին, հիվանդներին, այրիացածներին ու որբացածներին, և նա նույնիսկ հագցնում էր մահացածներին իրենց մաքուր տաճարային հագուստները։

Չնայած տեղին է և կարևոր հիշել պատմական 19-րդ դարիՄորմոն ռահվիրաների գաղթը, մենք պետք է հիշենք, որ «գաղթը կյանքի միջով շարունակվում է» մեզանից յուրաքանչյուրի համար, երբ մենքապացուցում ենք մեր «հավատքը ամեն քայլում»։

Նորադարձներն այլևս չեն հավաքվում ռահվիրաների բնակատեղերում Միացյալ Նահանգների արևմուտքում։ Փոխարենը, նորադարձները հավաքվում են իրենց տեղական համայնքներում, որտեղ Սրբերը երկրպագում են մեր Երկնային Հորը Հիսուս Քրիստոսի անունով։ Ավելի քան 30000 համայնքներ են հիմնադրված ողջ աշխարհում, բոլորը հավաքվում են իրենց իսկ Սիոնում։ Ինչպես նշում են սուրբ գրությունները. «Քանզի Սիոնը սա է՝ սրտով մաքուրները»։[6]

Երբքայլում ենք կյանքի ճանապարհով, մենք ստուգվում ենք՝ տեսնելով, արդյոք«կիետևենք, որ կատարենք բոլոր բաները, որոնք [Տերը] պատվիրել է»։[7]

Մեզանից շատերը բացահայտման զարմանահրաշ ճամփորդությունների վրա ենք, որոնք տանում են մեզ դեպի անձնական կայացման և հոգևոր լուսավորման։ Սակայն մեզանից ոմանք գաղթի ճանապարհին են, որը տանում է դեպի վիշտ, մեղք, տառապանք և հուսահատություն։

Այս համատեքստում, խնդրում եմ հարցրեք ինքներդ ձեզ. Ո՞րն է ձեր վերջնական նպատակակետը։ Ո՞ւր են ձեր քայլերը տանում ձեզ։ Եվ արդյո՞ք ձեր ճամփորդությունը տանում է ձեզ այն «օրհնությունների բազմազանությունը», որը Փրկիչն է խոստացել։[8]

Դեպի մեր Երկնային Հայրը հետադարձ ուղին ամենակարևորն է մեր կյանքում, և այն շարունակվում է ամեն օր, ամեն շաբաթ, ամեն ամիս և ամեն տարի, երբ մենք մեծացնում ենք մեր հավատքը Նրա հանդեպ և Նրա Միրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ։

Մենք պետք է զգոն լինենք, թեմեր քայլերն ուր են տանում մեզ կյանքում։ Մենք պետք է ուշադիր լինենք և ականջ դնենք Հիսուսի խորհրդին, որը տվեց Իր աշակերտներին, երբ պատասխանեց այս հարցերին. «Ասիր մեզ, այդ ե՞րբ կլինի եւ ի՞նչ կլինի քո գալստեան եւ աշխարհքիս վերջի նշանը։

Հիսուսն էլ պատասխանեց և ասաց նրանց. Զգույշ կացեք, որ ոչ մի [մարդ և ես ավելացնում եմ՝ կին] ձեզ չխաբի»։[9]

Այսօր ես կրկնում եմԵկեղեցու ղեկավարների կողմից ավելի վաղ տրված խորհուրդը.

- Եղբայրնե՛ր և քույրե՛ր, պահեք Քրիստոսի վարդապետությունը մաքուր և երբեք մի խաբվեք նրանց կողմից, ովքեր կեղծում են վարդապետությունը։ Հոր և Որդու ավետարանը վերահաստատվեց Ջոզեֆ Սմիթի՝ այս վերջին տնտեսության մարգարեի միջոցով։
- Մի լսեք նրանց, ովքեր չեն ձեռնադրվել կամ ի սպաս դրվել Եկեղեցու իրենց

կոչումներում և ընդունվում են Եկեղեցու անդամների ընդհանուր համաձայնությամբ։[10]
- Զգուշացեք կազմակերպություններից, խմբերից կամ անհատներից, ովքեր հայտարարում են գաղտնի պատասխաններ վարդապետական հարցերին, որոնքայսօրվա առաքյալները և մարգարեները չունեն կամ չեն հասկանում։
- Մի լսեք նրանց, ովքեր գայթակղում են ձեզ հարստանալու նախագծերով։ Մեր անդամները մեծ քանակությամբ փող են կորցրել, այնպես որ զգույշ եղեք։

Որոշ տեղերում մեր մարդկանցիցշատերը նշանից այն կողմ են նայում նգաղտնի գիտելիք են փնտրում թանկարժեք և կասկածելի մեթոդներովբժշկություն և աջակցություն ապահովելու համար։

Եկեղեցու մի պաշտոնական հայտարարություն, որը լույս է տեսել մեկ տարի առաջ, նշում է. «Մենք հորդորում ենք Եկեղեցու անդամներին

զգույշ լինել որևէ խմբի մասնակցելիս, որը փողի դիմաց խոստանում էհրաշագործ բժշկություն կամ հայտարարում է, որ ունի հատուկ մեթոդներ պատշաճ ձեռնադրված քահանայություն կրողներից դուրս՝ ձեռք բերելու բժշկող զորություն:[11]

Եկեղեցու *Հեռնարկը* խորհուրդ է տալիս. «Անդամները չպետք է օգտագործեն բժշկական կամ առողջապահական մեթոդներ, որոնք բարոյապես կամ օրինականորեն կասկածելի են: Տեղական ղեկավարները պետք է խորհուրդ տան անդամներին, ովքեր առողջական խնդիրներ ունեն, բուժվել գործիմաց մասնագետ բժիշկների մոտ, ովքեր հավաստագրվածեն այն երկրներում, որտեղ նրանք աշխատում են»:[12]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, եղեք իմաստուն և զգույշ, քանի որ այդպիսի բուժումը կարող է լինել զգացմունքայնորեն գրավիչ, բայց ի վերջո պարզվի, որ հոգևորապես և ֆիզիկապես վնասակար է:

Մեր ռահվիրա նախահայրերի համար անկախությունը և ինքնապահովումը կենսական էր, բայց համայնքի նրանց զգացումընդայնքան կարևոր էր: Նրանք աշխատում էին միասին և օգնում միմյանց հաղթահարել իրենց ժամանակի ֆիզիկական և էմոցիոնալ մարտահրավերները: Տղամարդկանց համար կար քահանայության քվորումը իսկ կանայք ծառայում էին Սփոփող Միությունում: Այս արդյունքները չեն փոխվել մեր օրերում:

Սփոփող Միությունը և քահանայության քվորումը ապահովում են մեր անդամների հոգևոր ևնյութական բարօրությունը:

Մնացեք ավետարանի ուղու վրա՝ ունենալով «հավատք ամեն քայլում», որպեսզի դուք անվտանգ ետ վերադառնաք Երկնային Հոր և Տեր Հիսուս Քրիստոսի ներկայություն: Տերը մեր թանկագին Փրկիչն է: Նա է աշխարհի Քավիչը: Մենք պետք է պատվենք Նրա սրբազան անունը և ոչ մի ձևով սխալ չօգտագործենք այն, միշտ ձգտելով պահել Նրա պատվիրանները: Եթե մենք այդպես անենք, Նա կօրհնի մեզ նկտանի մեզ տուն:

Ես կոչ եմ անում ամենքին, ում լսելի է իմ ձայնը, ով այսօր գաղթում է, անկախ նրանից, թե որտեղ են նրանք իրենց ճամփորդության մեջ:

Խնդրում եմ հիշեք, չկա ավելի մեծ օրհնություն, քան Վերականգնման ուղերձը, որը, երբ ստանում ենք և ապրում դրանով, խոստանում է հավիտենական ուրախություն և խաղաղություն, այսինքն՝ հավերժական կյանք: Եկեք օգտագործենք մեր եռանդը, ուժը և վկայությունները՝ օգնելով մեր միսիոներներին գտնել, ուսուցանել և մկրտել Աստծո զավակներին, որպեսզի նրանք կարողանան ունենալ ավետարանի վարդապետության ուժը՝ առաջնորդելու նրանց իրենց ամենօրյա կյանքում:

Մենք պետք է ընդունենք Աստծո զավակներին կարեկցանքով և վերացնենք ամեն նախապաշարմունք, ներառյալ՝ ռասայական խտրականությունը, սեռական խտրականությունը և ազգայնականությունը: Թող ասվի, որ մենք իսկապես հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի օրհնությունները Աստծո յուրաքանչյուր զավակի համար է:

Ես վկայում եմ, որ «գաղթը շարունակվում է», և ես կոչ եմ անում ձեզ մնալ ավետարանի ուղու վրա, երբ շարունակեք առաջ մղվել՝ հասնելով Աստծո բոլոր զավակներին սիրով և կարեկցանքով, և մենք կարող ենք միասնաբար մեր սրտերն անբիծ դարձնել և մեր ձեռքերը մաքուր, ստանալով «օրհնությունների բազմազանությունը», որոնքսպասում են բոլորին, ովքեր իսկապես սիրում են մեր Երկնային Հորը և Նրա Միրելի Որդուն, որի համար ես խոնարհաբար աղոթում եմ, Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**


1. Brigham Young, as remembered by Wilford Woodruff, in *The Utah Pioneers* (1880), 23.
2. Jane Manning James autobiography, ca. 1902, Church History Library, Salt Lake City; see also James Goldberg, “The Autobiography of Jane Manning James,” Dec. 11, 2013, history.lds.org.
3. Տես, օրինակ, Jill DiSanto, “Penn Research Shows That Mormons Are Generous and Active in Helping Others,” *Penn News,* Apr. 17, 2012
4. Տես M. Russell Ballard, “Faith in Every Footstep,” *Ensign,* Nov. 1996, 23–25
5. “The Purpose of Relief Society,” lds.org/callings/relief-society/purposes; see also *Handbook 2: Administering the Church* (2010), 9.1.1.
6. Վարդապետություն և Ուխտեր 97.21
7. Վարդապետություն և Ուխտեր 97.25
8. Վարդապետություն և Ուխտեր 97.28
9. Մատթեոս 24.3–4
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 26.2, 28.13, 43.6–7:
11. Church spokesman Eric Hawkins, in Daniel Woodruff, “The Business behind Christ-Centered Energy Healing,” Sept. 28, 2016, kutv.com.
12. *Հեռնարկ 2*, 21.3.6

**Թեդ Ռ. Քալիսթեր**
Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ

# Մորմոնի Գիրքը որպես Աստծո զորավոր վկա

*Մորմոնի Գիրքը Աստծո վառ վկայությունն է Հիսուս Քրիստոսի աստվածայնության, Ջոզեֆ Սմիթի մարգարեական կոչման և այս Եկեղեցու բացարձակ ճշմարտության մասին։*

Մորմոնի Գիրքը ոչ միայն մեր կրոնի հիմնաքարն է, այլև կարող է դառնալ մեր վկայությունների հիմնաքարն այն առումով, որ երբ փորձություններ կամ անպատասխան հարցեր հանդիպեն, այն ապահով կպահի մեր վկայությունները։ Այս գիրքը ճշմարտության կշեռքի նժարի վրա այնպիսի քաշ ունի, որ գերակշռում է բոլոր քննադատների փաստարկները։ Ինչո՞ւ։ Որովհետև, եթե այն ճիշտ է, ապա Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, և սա Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին է, անկախ նրանից, պատմական, թե այլ բնույթի ինչ հակառակ փաստարկներ կան։ Այս պատճառով քննադատները ձգտում են հերքելՄորմոնի Գիրքը, սակայն նրանց առջև կանգնող խոչընդոտները անհաղթահարելի են, քանի որ այս գիրքը ճշմարիտ է։

Նախ, քննադատները պետք է բացատրեն, թե ինչպես էր Ջոզեֆ Սմիթը՝ սահմանափակ կրթությամբ 23-ամյա ֆերմեր տղան, ստեղծել մի գիրք, որտեղ կան հարյուրավոր եզակի անուններ և վայրեր, ինչպես նաև մանրամասն պատմություններ ու իրադարձություններ։ Հետևաբար, շատ քննադատներ պնդում են, որ նա ստեղծարար հանճար էր, ով հիմնվելով բազմաթիվ գրքերի և այլ տեղական աղբյուրների վրա, ստեղծել է Մորմոնի Գրքի պատմական բովանդակությունը։ Սակայն հակառակ իրենց պնդմանը, ոչ մի վկա չկա, ով կհաստատեր, որ թարգմանությունը սկսելուց առաջ տեսել է Ջոզեֆին այդ ենթադրյալ աղբյուրներից օգտվելիս։

Նույնիսկ եթե այդ փաստարկը ճշմարիտ լիներ, այն ծայրահեղ անբավարար էր Մորմոնի Գրքի գոյությունը բացատրելու համար։ Պետք է նաև պատասխանել այս հարցին. ինչպե՞ս էր Ջոզեֆը կարդացել բոլոր այդ ենթադրյալ նյութերը, հստակեցրել անհամապատասխանությունները, հիշել այդ բարդ փաստերը՝ թե ով որտեղ էր եղել և երբ, այնուհետև թելադրել դա կատարյալ հիշողությամբ։ Քանի որ, երբ Ջոզեֆ Սմիթը թարգմանում էր, նա ոչ մի գրառում չուներ իր մոտ։ Ի դեպ, նրա կինը՝ Էմման հիշում էր. «Նա ոչ ձեռագիր, ոչ էլ որևէ գիրք ուներ, որտեղից կարդար։ . . . Եթե նա նման բաներ ունենար, չէր կարող թաքցնել ինձանից»։[1]

Ուրեմն ինչպե՞ս էր Ջոզեֆը կատարում այս նշանավոր գործը, թելադրելով 500-ից ավել էջանոց գիրքը առանց գրառումների։ Դա անելու համար նա ոչ միայն ստեղծարար հանճար պետք է լիներ, այլև հսկայական համամասնությունների պատկերավոր հիշողություն պետք է ունենար։ Բայց եթե դա ճիշտ է, ինչո՞ւ քննադատներն ուշադրություն չեն դարձրել այս նշանավոր տաղանդին։

Եվ դեռ ավելին։ Այս փաստարկներում հաշվի է առնվել միայն գիրքի պատմական բովանդակությունը։

Իրական խնդիրները դեռևս մնում են. ինչպե՞ս Զոզեֆը ստեղծեց մի գիրք, որը տարածում է Հոգին, և որտեղի՞ց նա ստացավ այնպիսի խորը վարդապետություն, որը մեծամասամբ պարզաբանում կամ հակասում է իր ժամանակի քրիստոնեական հավատալիքներին:

Օրինակ, հակառակ քրիստոնեական հավատալիքների, Մորմոնի Գիրքը սովորեցնում է, որ Ադամի անկումը դրական քայլ էր դեպի առաջ: Այն բացահայտում է մկրտության ժամանակ կապվող ուխտերը, որոնց մասին չկա Աստվածաշնչում:

Բացի այդ, հարց է ծագում, թե Զոզեֆը որտեղի՞ց հստակ պատկերացում ուներ, որ Քրիստոսի Քավության շնորհիվ Նա կարող է մեզ ոչ միայն մաքրել, այլև՝ կատարելագործել: Որտեղի՞ց նա ստացավ Ալմա 32-ում գրված հավատքի վերաբերյալ այդ ցնցող քարոզը: Կամ թագավոր Բենիամինի քարոզը Փրկիչի Քավության մասին, թերևս ամենանշանավոր քարոզն այս թեմայով բոլոր սուրբ գրությունների միջից: Կամ ձիթենու այլաբանությունն իր ողջ բարդությամբ և վարդապետական հարստությամբ: Երբ ես կարդացի այդ այլաբանությունը, կարիք ունեի քարտեզագրելու, որպեսզի հետևեի դրա զարգացումներին: Մենք հիմա պիտի հավատա՞նք, որ Զոզեֆ Սմիթը ուղղակի թելադրում էր այդ քարոզներն իր մտքից, առանց որևէ նշումների:

Հակառակ այդ եզրակացության, Աստծո մատնահետքերն ամենուր են Մորմոնի Գրքում, ինչի վկայությունն են զերազանց վարդապետական ճշմարտությունները, մասնավորապես գրքի հմուտ քարոզները Հիսուս Քրիստոսի Քավության մասին:

Եթե Զոզեֆը մարգարե չլիներ, ապա այս և շատ այլ ուշագրավ վարդապետական գաղափարներ գրելու համար քննադատները պետք է փաստեին, որ նա նաև աստվածաբանական հանճար էր: Բայց եթե այդպես լիներ, հարց է ծագում. ինչո՞ւ էր Զոզեֆը միակը, ով Քրիստոսի ծառայությունից հետո 1800-ական թվականներին ստեղծեցեզակի և հստակեցնող ծավալուն վարդապետություններ: Որովհետև այս գրքի աղբյուրը հայտնությունն էր, ոչ թեմտքի պայծառությունը:

Նույնիսկ եթե ենթադրենք, որ Զոզեֆը պատկերավոր հիշողությամբ մի ստեղծարար և աստվածաբանական հանճար էր, ապա միայն այս տաղանդները նրան չեն դարձնում հմուտ գրող: Մորմոնի Գրքի գոյությունը բացատրելու համար քննադատները պետք է նաև պնդեն, որ Զոզեֆը 23 տարեկանում գրելու բնատուր տաղանդ ուներ: Հակառակ դեպքում, ինչպես էր նա վերածելու բազմաթիվ անունները, վայրերը և իրադարձությունները ներդաշնակ մի ամբողջության, որտեղ չկային անհամապատասխանություններ: Ինչպե՞ս նա գրեց ռազմական մարտավարությունների մանրամասները, ստեղծեց պերճախոս քարոզներ և հորինեց արտահայտություններ, որոնք միլիոնավոր մարդկանց կողմից ընդգծվում, անգիր արվում, մեջբերվում և փակցվում են սառնարանների դռների վրա, ինչպես, օրինակ. «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17) կամ «Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.25): Սրանք սիրտ ցնցող ուղերձներ են՝ ուղերձներ, որոնք ապրում են, շնչում և ոգեշնչում: Ասել, թե Զոզեֆ Սմիթը 23 տարեկանում ունեցել է հմտություններ, որոնք անհրաժեշտ էին այս հսկայական աշխատանքը մեկ սևագրով մոտ 65 աշխատանքային օրում գրելու համար, պարզապես հեռու է իրականությունից:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, ով փորձառու և հմուտ գրող է, ասել է, որ վերջին գերագույն համաժողովի իր ելույթը շուրջ 40 անգամ վերանայել է: Արդյո՞ք հավատալի է, որ Զոզեֆ Սմիթը ինքն է թելադրել է ամբողջ Մորմոնի Գիրքը միայն մեկ սևագրով, որից հետո կատարվել են միայն քերականական աննշան փոփոխություններ:

Զոզեֆի կինը՝ Էմման հաստատել է նման վարկածի անհնարինությունը. «Զոզեֆ Սմիթը [երիտասարդ տարիքում] չէր կարող ոչ գրել, ոչ էլ թելադրել որևէ տրամաբանական նամակ, էլ չեմ ասումՄորմոնի Գիրքը թելադրելու մասին»:[2]

Եվ վերջապես, նույնիսկ, եթե ընդունվում են բոլոր վերը նշված փաստարկները, կասկածելի լինելով հանդերձ, քննադատները դեռ կանգնած են մեկ այլ խոչընդոտի առաջ: Զոզեֆը պնդում էր, որ Մորմոնի Գիրքը գրված էր ոսկյա թիթեղների վրա: Այդ հայտարարությունը

դաժան քննադատությունների արժանացավ նրա օրոք, քանի որ «բոլորը» գիտեին, որ հնագույն պատմությունները գրվել են պապիրուսի կամ մագաղաթի վրա, մինչև որ տարիներ անց հայտնաբերվեցին հնագույն գրվածքներով մետաղյա թիթեղներ: Բացի այդ, քննադատները պնդում էին, որ հին ամերիկացիները չունեին ցեմենտի օգտագործման փորձ, ինչպես նկարագրված է Մորմոնի Գրքում, մինչև այն պահը, երբ ցեմենտային կառուցվածքներ հայտնաբերվեցին հին Ամերիկայում: Ինչպե՞ս են քննադատներն այժմ վերաբերում այդ և նման ուրիշ անհավանական հայտնագործություններին: Ջոզեֆը, ինչպես տեսնում եք, նաև պետք է լիներ շատ-շատ հաջողակ գուշակ: Ինչ-որ կերպ, չնայած նրա դեմ ուղղված ամեն ինչին, հակառակ բոլոր գիտական և ակադեմիական գիտելիքներին, նա ճիշտ էր գուշակել այն դեպքում, երբ մյուսները սխալվել էին:

Ասված և արված ամեն ինչից հետո հետաքրքիր է՝ ինչպես կարելի է հավատալ, որ քննադատների կողմից առաջ քաշվող բոլոր այդ անհիմն գործոններն ու պնդումները բարեհաջող կհամատեղվեն այնպես, որ հնարավորություն կտան Ջոզեֆին գրել Մորմոնի Գիրքը և դրանով նպաստել սատանայի խարդախ գործին: Բայց ինչպե՞ս է դա հնարավոր: Ճիշտ հակառակ այս հայտարարությանը՝ այս գիրքը միլիոնավոր մարդկանց ոգեշնչեց մերժել սատանային և ապրել ավելի Քրիստոսանման կյանքով:

Մինչ ոմանքկարող ենհավատալ քննադատների տրամաբանականշղթային, ինձ համար այն մտավոր և հոգևոր անկում է: Դրան հավատալու դեպքում, ես պետք է մեկը մյուսի հետևից ընդունեմ անապացույց ենթադրությունները: Բացի դրանից, ես ստիպված կլինեի անտեսել 11 վկաներից յուրաքանչյուրի վկայությունը,[3] թեև նրանցից յուրաքանչյուրը հավատարիմ մնաց իր վկայությանը մինչև վերջ: Ես ստիպված կլինեի մերժել սուրբ վարդապետությունը, որը լցնում է այս սուրբ գրքի էջերը իր անզուգական ճշմարտություններով, ես ստիպված կլինեի անտեսել այն փաստը, որ ամբոխը, այդ թվում ես ինքս, մոտեցել է Աստծուն՝ կարդալով այս և ոչ ուրիշ գիրք, և ամեն ինչից զատ ես ստիպված կլինեի ժխտել Սուրբ Հոգու հաստատող հուշումները: Սա հակառակ կլիներ նրան, ինչը ես գիտեմ, որ ճշմարիտ է:

Իմ լավ ու լուսավոր ընկերներից մեկը մի ժամանակ լքել էր Եկեղեցին: Վերջերս նա գրել էր ինձ իր վերադարձի մասին. «Սկզբում ես ցանկանում էի, որ Մորմոնի Գիրքը պատմականորեն, աշխարհագրորեն, լեզվական և մշակութային առումներով ապացուցվեր ինձ: Բայց, երբ ուշադրությունս տեղափոխեցիայն բանի վրա, թեգիրքը ինչ է սովորեցնում Հիսուս Քրիստոսի ավետարանի և Նրա փրկող առաքելության մասին, ես սկսեցի վկայություն ստանալ գրքի ճշմարտացիության վերաբերյալ: Մի օր իմ սենյակում Մորմոնի Գիրքը կարդալիս, ես

դադար առա, ծնկի իջա և սրտանց աղոթեցի, որից հետո մի զորեղ զգացում ունեցա՝ Երկնային Հայրը շշնջաց իմ հոգուն, որ Եկեղեցին ու Մորմոնի Գիրքը իսկապես ճշմարիտ են: Երեք ու կես տարի ես կրկին ուսումնասիրում էի Եկեղեցին և այդ տարիներն ինձ հետ առաջնորդեցին դեպի Եկեղեցի, սրտից բխող խորը համոզվածությամբ վերջինիս ճշմարտացիության մեջ»:

Եթե մարդ ժամանակ հատկացնի խոնարհաբար կարդալու Մորմոնի Գիրքը և խորհելու դրա մասին, ինչպես իմ ընկերն էր արել և ականջ դնի Հոգու քաղցր պտուղներին, ապա նա ի վերջո կստանա ցանկալի վկայությունը:

Մորմոնի Գիրքը մեզ տրված Աստծո անգին պարգևներից մեկն է: Այն և՛ սուր է, և՛ վահան, այն Աստծո խոսքը ուղարկում է ճակատամարտ՝ պայքարելու արդարների սրտերի համար և ծառայում որպես ճշմարտությունը պաշտպանող նիզակ: Որպես սրբեր, մենք ոչ միայն արտոնություն ունենք պաշտպանելու Մորմոնի Գիրքը, այլև հնարավորություն՝ զորությամբ քարոզելու նրա աստվածային վարդապետությունը և վկայելու Հիսուս Քրիստոսի մասին գրքի ունեցած հզոր վկայության վերաբերյալ:

Ես բերում եմ իմ հանդիսավոր վկայությունը, որ Մորմոնի Գիրքը թարգմանվել է Աստծո պարգևով և զորությամբ: Դա Աստծո վառ վկայությունն է Հիսուս Քրիստոսի աստվածայնության, Ջոզեֆ Սմիթի մարգարեական կոչման և այս Եկեղեցու բացարձակ ճշմարտացիության մասին: Թող այն դառնա մեր վկայությունների հիմնաքարը, որ մեր մասին ասվի, ինչպես դարձի եկած լամանացիների մասին էր ասվել՝ որ նրանք «երբեք չհեռացան» (Ալմա 23.6): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Emma Smith, in “Last Testimony of Sister Emma,” *Saints’ Herald,* Oct. 1, 1879, 289, 290.
2. Emma Smith, in “Last Testimony of Sister Emma,” 290.
3. Տես «Երեք վկաների վկայությունը» և «Ութ վկաների վկայությունը», Մորմոնի Գիրք:

**Երեց Զոնի Լ. Քոչ**
Յոթանասունից

# Միմյանցից հեռու, բայց միասին

*Եկեղեցում, անկախ մեր տարբերություններից, Տերն ակնկալում է, որ մենք մեկ լինենք։*

1994 թ. հունիսին ես մեքենայով անհամբեր տուն էի վերադառնում աշխատանքից հեռուստացույց դիտելու. մեր ազգային ֆուտբոլային թիմը խաղալու էր աշխարհի գավաթի առաջնությունում։ Երբ ճանապարհ ընկա, հեռվում մայթեզրին տեսա մի մարդու, ով արագ առաջ էր շարժվում իր սայլակով, որը զարդարված էր մեր բրազիլական դրոշով։ Ես գլխի ընկա, որ նա նույնպես տուն է գնում ֆուտբոլի խաղը դիտելու։

Երբ մեր ճանապարհները խաչվեցին, և մեր աչքերը մի պահ իրար հանդիպեցին, ես նրա հետ շատ հզոր միասնություն զգացի։ Մենք ընթանում էինք տարբեր ուղղություններով, չճանաչելով մեկմեկու, մենք սոցիալական ու ֆիզիկական ակնհայտ տարբեր պայմաններ ունեինք, բայց ֆուտբոլի հանդեպ նույն կիրքը և մեր երկրի հանդեպ տածած սերը այդ պահին մեզ միավորեցին։ Այդ օրվանից հետո ես չեմ տեսել այդ մարդուն, բայց այժմ, երկար տարիներ անց, ես հիշում եմ նրա աչքերը և այն ամուր կապը, որ զգացի նրա հանդեպ։ Վերջիվերջո, մենք հաղթեցինք այդ տարվա խաղում և նվաճեցինք աշխարհի գավաթը։

Եկեղեցում, անկախ մեր տարբերություններից, Տերն ակնկալում է, որ մենք մեկ լինենք։ Վարդապետություն և Ուխտերում Տերն ասել է. «Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք»։[1]

Երբ մենք խմբով մտնում ենք ժողովատուն երկրպագելու համար, մենք պետք է մի կողմ դնենք մեր տարբերությունները, ինչպիսիք են ռասան, սոցիալական կարգավիճակը, քաղաքական հայացքները, ակադեմիական և պրոֆեսիոնալ ձեռքբերումները և փոխարենը կենտրոնանանք մեր ընդհանուր հոգևոր նպատակների վրա։ Մենք միասին երգում ենք հիմները, հաղորդության ժողովի ժամանակ խորհում ենք նույն ուխտերի մասին, միաձայն ասում ենք «ամեն» ելույթներից, դասերից և աղոթքներից հետո՝ միասին համաձայնելով ասվածի հետ։

Այս ամենը, որ մենք անում ենք միասին, օգնում են միասնության ուժեղ զգացում ունենալ համայնքում։

Այնուամենայնիվ, ինչն իրոք նպաստում, ամրացնում կամ ոչնչացնում է մեր միասնությունը, այն է, թե ինչպես ենք մենք գործում, երբ Եկեղեցու անդամներով հեռու ենք գտնվում իրարից։ Ինչպես գիտենք, դա անխուսափելի է և նորմալ, որ մենք, ի վերջո, խոսում ենք միմյանց մասին։

Կախված նրանից, թե ինչ ենք խոսում միմյանց մասին, մեր խոսքերը կամ «կմիավորեն մեր սրտերը միությամբ»,[2] ինչպես Ալման էուսուցանել նրանց, ում մկրտել է Մորմոնի Ջրերում, կամ կքայքայեն այն սերը, վստահությունը և բարեհաճությունը, որոնք կան մեր մեջ։

Կան մեկնաբանություններ, որոնք աննկատ ոչնչացնում են միասնությունը, ինչպես, օրինակ. «Այո, նա լավ եպիսկոպոս է, բայց դուք պետք է տեսնեիք նրան, երբ երիտասարդ էր»։

Ավելի կառուցողական տարբերակ կարող է լինել հետևյալը. «Եպիսկոպոսը շատ լավն է և նա բավականին աճել է տարիների ընթացքում՝ հասունացել է, ավելի իմաստուն է դարձել»։

Հաճախ մենք պիտակավորում ենք մարդկանց, ասելով. «Մեր

Սփոփող Միության նախագահը դժվար դեպք է՝ նա այնքան համառ է»: Փոխարենը, կարող ենք ասել. «Սփոփող Միության նախագահը վերջերս ճկուն չի գործում, գուցե նա դժվարություններ ունի: Եկեք օգնենք ու աջակցենք նրան»:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք ոչ մի իրավունք չունենք որևէ մեկին, այդ թվում մեր Եկեղեցու շրջանակներից, նկարագրել որպես «վատ պատրաստված ապրանք»: Փոխարենը, ընկերների մասին մեր խոսքերը պետք է արտացոլեն մեր հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, և որ Նրանում և Նրա շնորհիվ մենք ընդմիշտ կարող ենք փոխվել դեպի լավը:

Ոմանք սկսում են քննադատել և բաժանվել Եկեղեցու ղեկավարներից ու անդամներից աննշան բաների համար:

Այդպիսին է Սայմոնդս Ռայդեր անունով մի մարդու պատմությունը, ով Եկեղեցու անդամ էր դարձել 1831 թվականին: Կարդալով իրեն վերաբերող հայտնությունը, նա շփոթվեց, տեսնելով, որ իր ազգանունը սխալ է գրված՝ Ռայդեր բառն ա տառով գրված լինելու փոխարեն՝ ե տառով էր: Այդ խնդրի շուրջ նա գնաց պարզաբանումներ պահանջելու մարգարեից, ինչից հետո սկսեց հալածել Ջոզեֆին և հեռացավ Եկեղեցուց:[3]

Նույն զարգացումն է, եթե մենք նկատողություն ստանանք մեր հոգևոր առաջնորդներից և դա ստուգարք լինի, թե որքան միասնական ենք մենք նրանց հետ:

Ես 11 տարեկան էի, բայց հիշում եմ, որ 44 տարի առաջ, ժողովատունը, ուր մենք հաճախում էինք ընտանիքով, պետք է հիմնովին վերանորոգվեր: Նախքան այդ նախաձեռնությունը սկսելը, տեղի էր ունեցել ժողով, որի ժամանակ տեղական և տարածքային ղեկավարները քննարկել էին, թե ինչպես են անդամները մասնակցելու այդ աշխատանքներին: Հայրս, ով նախկինում երկար տարիներ այդ միավորի նախագահն էր, իր հստակ կարծիքն էր արտահայտել, որ այդ աշխատանքը պետք է իրականացվի պայմանագրային աշխատողների կողմից, ոչ թե կամավորների:

Նրա կարծիքը ոչ միայն մերժվեց, այլև լսեցինք, որ նա այդ առիթով խիստ և հրապարակայնորեն նախատվել էր: Նա Եկեղեցուն շատ նվիրված մարդ էր, եղել էր Եվրոպայում Երկրորդ Համաշխարհային պատերազմի զինվոր, սովոր էր դիմադրել ու պայքարել իր հավատալիքների համար: Ձեզ կարող է հետաքրքիր լինել, թե ինչ կաներ նա այս միջադեպից հետո: Նա կպնդե՞ր իր կարծիքը և կշարունակեր հակադրվել արդեն կայացված որոշմանը:

Մենք տեսել էինք ընտանիքներ մեր ծխում, որոնք թույլ էին դարձել ավետարանում և դադարել էին հաճախել ժողովներին, քանի որ չէին կարող միասնական լինել նրանց հետ, ովքեր ղեկավարում էին: Անձամբ ես տեսել էի, որ իմ ընկերները Երեխաների Միությունից հավատարիմ չմնացին իրենց երիտասարդ տարիներին, քանի որ նրանց ծնողները միշտ սխալ էին գտնում Եկեղեցու ներսում գտնվողների մեջ:

Հայրս, սակայն, որոշեց միասնական մնալ մեր ընկերների՝ սրբերի հետ: Մի քանի օր անց, երբ ծխի անդամները հավաքվեցին մասնակցելու շինարարությանը, նա «հրավիրեց» մեր ընտանիքին իր հետ գնալ հավաքատուն, որտեղ մենք կկարողանայինք ցանկացած ձևով օգտակար լինել գործին:

Ես զայրացած էի: Մտքովս անցնում էր հարցնել նրան. «Հայրիկ, որպես ի՞նչ ենք գնում օգնելու շինարարության մեջ, եթե դու դեմ էիր, որ անդամները դա անեն»: Սակայն նրա դեմքի արտահայտությունը մտափոխեց ինձ: Ես ցանկանում էի լավ վիճակում լինել վերանվիրագործման համար: Այնպես, որ, բարեբախտաբար, ես որոշեցի հանգիստ լինել և պարզապես գնալ ու օգնել:

Հայրս չտեսավ նորակառույց հավաքատունը, քանի որ մահացավ այդ աշխատանքների ավարտից առաջ: Բայց մենք ընտանիքով, առաջնորդվելով արդեն մայրիկիս կողմից, շարունակեցինք կատարել

մեր բաժինը, մինչև վերանորոգումն ավարտվեց, և դա մեզ միասնական պահեց հորս հետ, Եկեղեցու անդամների, մեր ղեկավարների և ամենակարևորը՝ Տիրոջ հետ:

Իր Գեթսեմանիի ցավագին փորձառությունից վայրկյաններ առաջ, երբ Հիսուսն աղոթում էր Հորը Իր Առաքյալների ու մեր՝ սրբերիս համար, Նա ասաց. «Որ ամենքը մէկ լինեն, ինչպէս դու, Հայր, ինձանում, և ես քեզանում»:[4]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես վկայում եմ, որ երբ մենք որոշում ենք մեկ լինել Եկեղեցու անդամների և ղեկավարների հետ՝ այդ դեպքում թե՛ միասին, և թե՛ հատկապես իրարից հեռու գտնվելու պարագայում, մենք ավելի ցայտուն կզգանք, որ միասնական ենք մեր Երկնային Հոր և Փրկիչի հետ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Վարդապետություն և Ուխտեր 38.27
2. Մոսիա 18.21
3. Տես Milton V. Backman Jr., *The Heavens Resound: A History of the Latter-day Saints in Ohio, 1830–1838* (1983), 93–94.
4. Հովհաննես 17.21



**Երեց Սթենլի Գ. Էլիս**
Յոթանասունի պատվավոր անդամ

# Արդյո՞ք մենք վստահում ենք Նրան. Որքան դժվար, այնքան լավ

*Անկախ նրանից, թե ինչպիսին է խնդիրը, դժվարությունը կարող է օգտակար լինել նրանց համար, ովքեր առաջ են շարժվում հավատքով և ապավինում Տիրոջն ու Նրա ծրագրին։*

Սինչև սկսելը, բոլորիս անունից, ովքեր տուժել են վերջերս տեղի ունեցած ավերիչ փոթորիկներից և երկրաշարժերից, ես սրտանց երախտագիտություն եմ հայտնում բոլոր Օգնող Ձեռքերին և նրանց կազմակերպիչներին, ովքեր մեզ օգնություն և հույս պարգևեցին։

2006 թվականի հոկտեմբերին ես առաջին անգամ ելույթ ունեցա զերագույն համաժողովին։ Ես զգացի, որ կարևոր էր, որամբողջ աշխարհի Եկեղեցուն ուղղված ուղերձը պարունակեր հավաստիացում՝ «Տերը վստահում է մեզ»։

Նա իսկապես վստահում է մեզ շատ ոլորտներում։ Նա տվել է մեզ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը իր լրիվությամբ այս տնտեսությունում։ Նա վստահում է մեզ Իր քահանայության իշխանությունը՝ իր բանալիներով, որպեսզի պատշաճ օգտագործենք այն։ Այդ զորությամբ մենք կարող ենք օրհնել, ծառայել, ստանալ արարողություններ և կապել ուխտեր։ Նա վստահում է մեզ Իր վերականգնված Եկեղեցին, այդ թվում՝ սուրբ տաճարը։ Նա Իր ծառաներին է վստահում կնքման զորությունը, որ կապենԵրկրի վրա և երկնքում։ Նա անգամ վստահում է մեզ լինել Իր զավակների երկրային ծնողները, ուսուցիչները և խնամակալները։

Աշխարհի տարբեր վայրերում Բարձրագույն Իշխանավորի ծառայության այս տարիներից հետո ես էլ ավելի մեծ վստահությամբ եմ հայտարարում՝ Նա վստահում է մեզ։

Այժմ այս համաժողովի հարցը հետևյալն է. «Արդյո՞ք մենք վստահում ենք Նրան»։

### Արդյո՞ք մենք վստահում ենք Նրան։

Նախագահ Թոմաս Ս Մոնսոնը հաճախ հիշեցնում է մեզ «Տիրոջն ապավինել ձեր բոլոր սրտով, եւ ձեր հասկացողութեանը չապավինել։

Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, և նա կուղղէ քո ճանապարհները։

Դու քո աչքի առաջին իմաստուն մի լինիր» (Առակաց 3.5–7)։

Արդյո՞ք մենք վստահում ենք, որ Նրա պատվիրանները մեր բարիքի համար են։ Որ Նրա տված առաջնորդները, լինելով անկատար, մեզ լավ են ղեկավարում։ Որ Նրա խոստումները վստահելի են։ Արդյո՞ք մենք վստահ ենք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ճանաչում են մեզ և ցանկանում են օգնել մեզ։ Փորձությունների, դժվարությունների և ծանր ժամանակներում արդյո՞ք մենք դեռ վստահում ենք Նրան։

Ետ նայելով, ես տեսնում եմ, որ լավագույն դասերը սովորել եմ ամենադժվար ժամանակներում՝երիտասարդ տարիքում, միսիայում, նոր կարիերա սկսելիս, իմ կոչումները մեծարելիս, մեծ ընտանիք մեծացնելիս, թե ինքնապահով դառնալու ճանապարհին։ Կարծես պարզ է՝ «որքան դժվար, այնքան լավ»։

### Որքան դժվար, այնքան լավ

Դժվարությունը մեզ դարձնում է ավելի ուժեղ, ավելի խոնարհ և տալիս է ինքնահաստատվելու հնարավորություն։ Ձեռնասայլակներով ճամփորդող մեր սիրելի ռահվիրաները ճանաչեցին Աստծուն ծայրահեղ հանգամանքներում։ Ինչո՞ւ պահանջվեց երկու գլուխ, որպեսզի նկարագրվեր Նեփիի ու նրա եղբայրների կողմից արույրե թիթեղների ձեռքբերման պատմությունը, և միայն երեք տող՝ նկարագրելու անապատում նրանց միանալու Իսմայելի ընտանիքի պատմությունը։ (տես 1 Նեփի 3–4, 7.3–5)։ Կարծես, Տերն ուզում էր ամրացնել Նեփիին թիթեղները ձեռք բերելու պայքարի միջոցով։

Մեր կյանքում դժվարությունները պետք է գան ոչ որպես անակնկալ։ Տիրոջ հետ կապած ամենավաղ ուխտերից մեկը զոհաբերության օրենքով ապրելն է։ Զոհաբերությունը, ըստ սահմանումի, որևէ ցանկալի բանից հրաժարվելն է։ Փորձ ձեռք բերելով, մենք հասկանում ենք, որ գինը շատ փոքր էայն օրհնությունների համեմատ, որոնք կստանանք։ Ջոզեֆ Սմիթի ղեկավարությամբ ասվել է, որ «կրոնը, որը չի պահանջում բոլոր

բաների զոհաբերությունը, երբեք չի ունենա բավականաչափ ուժ՝ առաջացնելու անհրաժեշտ հավատքն ի կյանք և ի փրկություն»:[1]

Աստվածազլխի անդամների համար դժվարությունը անսովոր երևույթ չէ: Հայր Աստված զոհաբերեց Իր Միածին Որդուն, մատնելով Նրան Քավության սարսափելի տառապանքներին, այդ թվում՝ խաչելությամբ մահվան: Սուրբ գրություններում ասվում է, որ Հիսուս Քրիստոսը «այն չարչարանքներիցը հնազանդութիւնը սովորեց» (Եբրայեցիս 5.8): Նա կամովին կրեց Քավության հոգևարքը: Սուրբ Հոգին երկար ժամանակ տանջվելով հուշում է, նախազգուշացնում և ուղղորդում մեզ, երբեմն լինելով անտեսված, սխալ մեկնաբանված կամ մոռացված:

### Ծրագրի մասը

Դժվարությունը հանդիսանում է ավետարանի ծրագրի մասը: Այս կյանքի նպատակներից մեկը փորձվելն է (տես Աբրահամ 3.25): Ալմայի ժողովուրդը այլոց նման արժանի չէր այդ տառապանքին: Նրանք փրկվեցին ամբարիշտ Նոյ թագավորից Լամանացիների ստրուկները դառնալու համար: Այդ փորձությունների միջոցով Տերն ուսուցանեց նրանց, որ նախատում է Իր ժողովրդին և փորձում նրանց համբերությունը և հավատքը (տես Մոսիա 23.21):

Լիբերթի բանտում անցկացրած սոսկալի օրերին Տերը Ջոզեֆ Սմիթին սովորեցրեց դիմանալ (տես ՎևՈՒ 121.8) և խոստացավ, որ այդ դեպքում «այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար» (ՎևՈՒ 122.7):

Նախագահ Մոնսոնն ասել է. «Եկեք ընտրենք դժվար ճիշտը հեշտ սխալի փոխարեն»:[2] Մեր տաճարների հետ կապված նա ասել է, որ «չկա չափից մեծ զոհաբերություն, չափից բարձր գին, չափից ծանր պայքար՝ տաճարային օրհնությունները ստանալու համար»:[3]

Բնության մեջ դժվարությունը կյանքի շրջանի մասն է կազմում: Հավի ճտին դժվար է դուրս գալ կարծր կեղևից: Բայց երբ մեկը

դրսից հեշտացնում է այդ ընթացքը, ճուտը չի կարողանում ձևավորել ապրելու համար անհրաժեշտ ուժը: Նույն ձևով բոժոժից դուրս գալու թիթեռի պայքարը ամրացնում է նրան իր կյանքի համար:

Այս օրինակները մեզ ցույց են տալիս, որ դժվարությունը հաստատուն միավոր է: Մենք բոլորս ունենք դժվարություններ: Իսկ դժվարությանը տված մեր արձագանքը փոփոխական միավոր է:

Եղավ ժամանակ, երբ Մորմոնի Գրքի ժողովուրդները մեծ հալածանքների և դժվարությունների հանդիպեցին (Հելաման 3.34): Նրանք ինչպե՞ս արձագանքեցին: «Նրանք հաճախ ծոմ էին պահում ու աղոթում և դառնում էին ավելի ու ավելի ուժեղ իրենց խոնարհության մեջ, և ավելի ու ավելի կայուն՝ Քրիստոսի հավատքում, որը նրանց հոգիները լցնում էր ուրախությամբ ու սփոփանքով» (Հելաման 3.35): Մեկ այլ օրինակ տեղի ունեցավ պատերազմից հետո տարիներ անց. «Նեփիացիների ու Լամանացիների միջև պատերազմի չափազանց երկարատևության պատճառով շատերը դարձել էին կարծրացած, . . . շատերն էլ փափկել էին՝ իրենց չարչարանքների պատճառով, այնպես որ նրանք իրենց խոնարհեցրել էին Աստծո առաջ, մինչև իսկ համեստության խորքերը» (Ալմա 62.41):

Յուրաքանչյուրս ինքն է ընտրում, ինչպես արձագանքել դժվարությանը:

### Զգույշ եղեք հեշտն ընտրելիս

Այս կոչումից առաջ ես ֆինանսական խորհրդատու էի աշխատում Հյուստոնում (Տեխաս): Աշխատանքս հիմնականում կապված էր մեծահարուստների հետ, ովքեր ունեին իրենց սեփական բիզնեսները: Նրանցից գրեթե բոլորը ստեղծել էին իրենց հաջողակ բիզնեսները զրոյից՝ ծանր աշխատանքի շնորհիվ: Ամենացավալինինձ համար այնէր, թե ինչպես էին նրանցից ոմանք ասում, որ կցանկանային հեշտացնել իրենց երեխաների կյանքը: Նրանք չէին կամենում, որ իրենց զավակները տանջվեին իրենց նման: Այլ խոսքով ասած, նրանք պատրաստ էին զրկել իրենց զավակներին այն ամենից, ինչը նրանց հաջողակ էր դարձրել:

Ի տարբերություն սրա, մենք ճանաչում ենք մի ընտանիքի՝ լիովին այլ մոտեցումով: Ծնողները ոգեշնչվել էին Ջեյ Սի Փեննիի փորձով, ում ութ տարեկանում հայրն ասաց, որ այժմ նա ֆինանսապես ինքնուրույն է: Նրանք կիրառեցին իրենց սեփական տարբերակը. երբ յուրաքանչյուր երեխա ավարտում էր ավագ դպրոցը, նա ֆինանսապես ինքնուրույն էր դառնում, ապահովելով իր հետագա կրթությունը (քոլեջը, բարձրագույն կրթությունը և այլն) և նյութական վիճակը (իսկապես ինքնապահով) (տես ՎևՈՒ 83.4): Բարեբախտաբար, երեխաները իմաստուն ձևով արձագանքեցին: Նրանք բոլորը ավարտեցին քոլեջ, մի քանիսը՝ բարձրագույն դպրոց, և բոլորը՝ ինքնուրույն: Դա հեշտ չէր, բայց նրանք կարողացան դա անել: Նրանք դրան հասան ծանր աշխատանքով և հավատքով:

### Նրան վստահելու հավատքը

«Արդյո՞ք մենք վստահում ենք Նրան» հարցը կարելի է ավելի լավ ձևակերպելայսպես. «Արդյո՞ք մենք ունենք Նրան վստահելու հավատքը»:

Արդյո՞ք մենք ունենք հավատք՝ վստահելու Նրա խոստումներին տասանորդի հետ կապված, ընդունելով, որ մեր եկամտի 90 տոկոսով և Տիրոջ օգնությամբ մենք ավելին կստանանք, քան մեր վաստակած 100 տոկոսով:

Արդյո՞ք մենք բավականաչափ հավատք ունենք՝ վստահելու, որ Նա կայցելի մեզ մեր չարչարանքների մեջ (տես Մոսիա 24.14), որ Նա կվիճի մեզ հետ վիճողների հետ (տես Եսայիա 49.25, 2 Նեփի 6.17), և որ Նա կնվիրաբերի մեր չարչարանքները մեր օգտի համար: (տես 2 Նեփի 2.2):

Արդյո՞ք մենք կարող ենք գործադրել անհրաժեշտ հավատք Նրա պատվիրանները պահելու համար, որպեսզի Նա մեզ օրհնի նյութապես և հոգևոր առումով: Եվ կարո՞ղ ենք մենք շարունակել հավատքով մինչև վերջ, որպեսզի Նա ընդունի մեզ Իր ներկայությունը: (տես Մոսիա 2.41):

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք կարող ենք ունենալ Նրան վստահելու հավատք: Նա ցանկանում է լավագույնը մեզ համար (տես Մովսես 1.39): Նա կպատասխանի մեր աղոթքներին (տես ՎևՈՒ 112.10): Նա կպահի Իր խոստումները (տես ՎևՈՒ 1.38): Նա ունի այդ խոստումները պահելու զորությունը (տես Ալմա 37.16): Նա գիտե ամեն ինչ: Եվ ամենակարևորը՝ Նա գիտե, թե որն է լավագույնը (տես Եսայիա 55.8–9):

### Վտանգավոր աշխարհ

Մեր աշխարհն այսօր դժվար վայր է: Տիրում է կատաղի չարիք, կաշառակերությունը առկա է բոլոր երկրներում, ահաբեկչությունը հասնում է անգամ ամենաապահով վայրերին, տեղի է ունենում տնտեսական ճգնաժամ, ավելանում են գործազրկությունը, հիվանդությունները, բնական աղետները, քաղաքացիական պատերազմները, բռնատիրական ղեկավարները և այլն: Մենք ի՞նչպետք է անենք: Պետք է փախչենք, թե՞ պայքարենք: Ո՞րն է ճիշտը: Երկու որոշումներն էլ կարող են վտանգավոր լինել: Ջորջ Վաշինգտոնի և նրա բանակի համար վտանգավոր էր կռվելը, բայց մեր ռահվիրաների համար վտանգավոր էր փախչելը: Նելսոն Մանդելայի համար վտանգավոր էր ազատության համար պայքարելը: Ասում են, որպեսզի չարիքը տարածվի, անհրաժեշտ է միայն, որ բարի մարդիկ ոչինչ չանեն:[4]

### Մի՛ վախեցիր

Ինչ էլ մենք անենք, մենք չպետք է որոշենք կամ գործենք վախից ելնելով: Իրոք՝ «Աստուած չ՚տուաւ մեզ երկչոտութեան հոգի» (Բ Տիմոթեոս 1.7): (Երբևէ մտածե՞լ եք որքան է հանդիպում սուրբ գրություններում «մի վախեցիր» գաղափարը:) Տերն ինձ սովորեցրել է, որ հուսահատությունը և վախը ձախորդության գործիքներն են: Դժվարին ժամանակ Տիրոջ պատասխանն է՝առաջ շարժվել հավատքով:

### Ի՞նչ է դժվարությունը:

Մեզանից յուրաքանչյուրը կարող է տարբեր կարծիք ունենալ այն մասին, թե ինչն է դժվար: Ոմանք դժվար են համարում տասանորդ վճարելը, երբ ֆինանսական վիճակը ծանր է: Ղեկավարները երբեմնհամարում են, որ դժվար է աղքատներից ակնկալել տասանորդ վճարելը: Մեզանից ոմանց համար կարող է դժվար լինել շարժվել հավատքով ամուսնանալու և ընտանիք կազմելու հարցում: Ոմանք դժվարանում են «գոհ լինել[լ] այն բաների համար, որոնք Տերը բաշխել է [իրենց]» (Ալմա 29.3): Կարող է դժվար լինել գոհանալ մեր ներկայիս կոչումից (տես Ալմա 29.6): Եկեղեցու կարգապահությունը կարող է շատ դժվար թվալ, բայց ոմանց համար դա ճշմարիտ ապաշխարության գործընթացի սկիզբն է:

Անկախ նրանից, թե ինչպիսին է խնդիրը, դժվարությունը կարող է օգտակար լինել նրանց համար, ովքեր առաջ են շարժվում հավատքով և ապավինում Տիրոջն ու Նրա ծրագրին:

### Իմ վկայությունը

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես վկայում եմ, որ իմ ետևում նստած այս ղեկավարները կանչված են Աստծո կողմից: Նրանց ցանկությունն է լավ ծառայել Տիրոջը և օգնել մեզ հիմնել ավետարանը մեր սրտերում: Ես սիրում և հաստատում եմ նրանց:

Ես սիրում եմ մեր Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին: Ես հիանում եմ նրանով, որ Նա այնքան սիրեց Հորը և մեզ, որ դարձավ մեր Փրկիչն ու Քավիչը, որ դա անելով, Նա տարավ այնպիսի տառապանք, որը ստիպեց Նրան «ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե հոգով» (ՎևՈՒ 19.18): Բայց ունենալով այդ սոսկալի հեռանկարը և դրա անհրաժեշտությունը, Նա հաստատեց Իր կամքը, ասելով Հորը. «Ոչ թե իմ կամքը, բայց Քո կամքը լինի» (Ղուկաս 22.42): Ես փառավորում եմ հրեշտակի այս խոսքերը. «Այստեղ չէ. որովհետև հարություն առավ» (Մատթեոս 28.6):

Նրա օրինակը իրոք «ճանապարհն է եւ ճշմարտութիւնը եւ կեանքը» (Հովհաննէս 14.6): Միայն Նրա օրինակին հետևելով, մենք կարող ենք ճանաչել «խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում» (ՎևՈ 59.23): Հետևելով Նրա օրինակին և կիրառելով Նրա ուսմունքները, ես հասկացել եմ, որ Նրա բոլոր «ամենամեծ եւ պատուական խոստմունքները» (Բ Պետրոս 1.4) ճշմարիտ են:

Իմ մեծագույն ցանկությունն է կանգնել Մորմոնի կողքին՝ որպես Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտ, (տես 3 Նեփի 5.13) և մի օր լսել Նրա շուրթերից. «Լավ, բարի եւ հաւատարիմ ծառայ» (Մատթեոս 25.21): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

### ՀՂՈՒՄՆԵՐ


1. *Lectures on Faith* (1985), 69.
2. Thomas S. Monson, “Choices,” *Liahona,* May 2016, 86.
3. Thomas S. Monson, “The Holy Temple—a Beacon to the World,” *Liahona,* May 2011, 92.
4. See John Stuart Mill, *Inaugural Address: Delivered to the University of St. Andrews, Feb. 1, 1867* (1867), 36.

**Երեց Ադիլսոն դե Փոլա Պարելլա**
Յոթանասունի Քվորումից

# Հավերժական ճշմարտություններ. մեր գործելու անհրաժեշտությունը

*Առաջին Տեսիլքը և Մարգարե Ջոզեֆ Սմիթը ի հայտ բերեցին լրացուցիչ գիտելիք և ճշմարտություն, որոնք էական են մեր երջանկության համար այս կյանքում և մեր վեհացման համար։*

Երբ մոտ յոթ տարեկան էի, հարցրեցի մայրիկիս. «Երբ ես և դումահանանք և գնանք երկինք, դու դեռ իմ մայրիկը կլինե՞ս»։ Նա չէր սպասում նման հարցի։ Բայց աշխատելով իր իմացածին համապատասխան տալ լավագույն պատասխանը, նա ասաց. «Ոչ, երկնքում մենք կլինենք եղբայրներ և քույրեր։ Ես չեմ լինի քո մայրիկը»։ Դա այն պատասխանը չէր, որը ես հույս ունեի լսել։

Այդ զրույցից ոչ շատ ժամանակ անց երկու երիտասարդ տղամարդ մոտեցան մեր տան մուտքին։ Ինչ-որ հրաշքով հայրս թույլ տվեց նրանց ներս մտնել։ Նրանք ասացին, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներ են։

Այդ երեցները, ինչպես մենք սովորեցինք կոչել նրանց, սկսեցին ուսուցանել մեր ընտանիքին։ Ես վառ հիշում եմ երջանկության և ոգևորության զգացումը, որ ապրում էինք ամեն անգամ, երբ նրանք գալիս էին մեր տուն։ Նրանք պատմեցին մեզ մի երիտասարդ տղամարդու մասին, որը գնացել էր պուրակ և հարցրել Աստծուն, թե որ եկեղեցին էր ճշմարիտ կտեսել էր Աստծուն և Հիսուս Քրիստոսին։[1] Երեցները ցույց տվեցին մեզ այդ տեսիլքի նկարը, և երբ ես տեսա այն, այդ պահին իմացա, որ Ջոզեֆ Սմիթն իսկապես տեսել էր Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին։ Միսիոներներն ասացին, որ այդ տեսիլքի շնորհիվ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին կրկին Երկրի վրա է։[2]

Միսիոներներն ուսուցանեցին մեզ նաև Աստծո երջանկության ծրագիրը և պատասխանեցին կրոնի մասին մեր ընտանիքի հարցերին։ Նրանք ուսուցանեցին մեզ, որ ընտանիքները կարող են միասին լինել այս կյանքից հետո՝ որպես հայր, մայր, որդիներ և դուստրեր։

Մեր ընտանիքը մկրտվեց։ Հին սովորույթները փոխելու, ավանդույթներից հրաժարվելու և Եկեղեցու ակտիվ անդամներ դառնալու ճանապարհը երբեմն դժվար անցանելի է։ Բայց Աստծո գթասրտության և սիրո շնորհիվ, շատ ղեկավարների ու անդամների օգնությամբ մենք կարողացանք անցնել այդ դժվար առաջին տարիների ճանապարհով։

Միլիոնավոր մարդիկ, ովքեր արդեն միացել են Եկեղեցուն, ինչպես նաև այն շատերը, ովքեր դարձի են գալիս և մկրտվում ամեն շաբաթ, ձեռք են բերել վկայություն Առաջին Տեսիլքի մասին։ Սուրբ Հոգին հաճախ կարող է կրկնել այդ վկայությունը յուրաքանչյուրիս, եթե մենք ձգտենք ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանի պարզ ճշմարտություններով։

Առաջին Տեսիլքը և Մարգարե Ջոզեֆ Սմիթը ի հայտ բերեցին լրացուցիչ գիտելիք և ճշմարտություն, որոնք էական են մեր երջանկության համար այս կյանքում և մեր վեհացման համար Աստծո ներկայության մեջ։ Ես կթվարկեմ երեք ճշմարտություն, որոնք մենք ստացել ենք, և ըստ որոնց պետք է գործենք, որովհետև մի երիտասարդ տղա ծնկի իջավ անկեղծ աղոթքով։

### Աստված կանչում է մարգարեների՝ առաջնորդելու և ուղղություն տալու մեզ

Մի հիմնարար ճշմարտություն, որը մենք սովորում ենք Առաջին Տեսիլքից և Մարգարե Ջոզեֆ Սմիթից, այն է, որ Աստված կանչում է մարգարեների,[3] տեսանողների և հայտնողների՝ուսուցանելու,

ուղղություն տալու, նախազգուշացնելու և առաջնորդելու մեզ:[4] Այդ տղամարդիկ Աստծո շուրթերն են Երկրի վրա՝[5] Տիրոջ անունով խոսելու և գործելու իշխանությամբ:[6] Եթե խստորեն հետևենք նրանց խորհուրդներին, պաշտպանված կլինենք և կստանանք ընտրյալ օրհնություններ այս Երկրի վրա մեր ճամփորդության ընթացքում:

Երբեմն երիտասարդ ամուրի էի և նոր էի վերադարձել միսիայից, սովորում էի Բրիգամ ՅանգիՀամալսարանում, ներկա գտնվեցի Տաճարային Հրապարակի Թաբերնաքլում տեղի ունեցող գերագույն համաժողովի քահանայության նիստին: Այդ ժամանակ Եկեղեցու Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը հորդորեց բոլոր վերադարձած միսիոներներին լուրջ մտածել ամուսնության մասին և դարձնել այն կյանքի առաջնահերթ հարցերից մեկը:[7] Նիստից հետո ես արդեն գիտեի, որ ինձ կոչ էին արել ապաշխարել և գործել ըստ մարգարեի խորհրդի:

Այսպիսով, ես գիտեի, որ պետք է գնայի իմ հայրենիք Բրազիլիա՝ կին գտնելու: Բրազիլիայում երկու ամսվա պրակտիկայի մեկնելուց առաջ ես զանգահարեցի մայրիկիս և ընկերներիցս մի քանիսին և կազմեցի 10 երիտասարդ կանանց անունների ցանկ, որոնցից յուրաքանչյուրը կարող էր դառնալ իմ կինը:

Բրազիլիայում գտնվելիս, շատ խորհելուց և աղոթելուց հետո ես սկսեցի հանդիպել այդ ցանկից մի երիտասարդ կնոջհետ, սկսեցի ժամադրվել, նշանվեցի և նշանակեցի ամուսնության ամսաթիվը: Յուտա նահանգի Պրովո քաղաքի ուսանողների համար դա ժամադրվելու և նշանվելու ռեկորդային ժամանակ չէր, սակայն Բրազիլիայի չափանիշներով բավական արագ էր:

Մի քանի ամիս անց ես ամուսնացա Էլեյնի հետ: Նա իմ կյանքի սերն է և առանձնահատուկ օրհնություն:

Ես չեմ առաջարկում բոլորին նման ցանկով առաջնորդվել, բայց խորհուրդ եմ տալիս, միգուցե ավելին, քան խորհուրդ, որ մենք միշտ գործենք, երբ խոսում է մեր կենդանի մարգարեն:

Այսօր Աստծո մարգարեն Նախագահ Թոմաս Ս Մոնսոնն է, և մենք կօրհնվենք, եթե ճշգրիտ հետևենք Նրա խորհուրդներին:

### Աստծո ճշմարիտ էության մասին գիտելիքը

Մեկ այլ ճշմարտություն, որը սովորում ենք Առաջին Տեսիլքից և Մարգարե Ջոզեֆ Սմիթից, դա Աստծո ճշմարիտ էությունն է: Միայն պատկերացրեք, որքան օրհնված ենք մենք, որ գիտենք, որ Աստված մսից ու ոսկորից մարմին ունեցող էակ է՝ մեր մարմնի նման շոշափելի,[8] որ մենք կարող ենք երկրպագել Աստծուն, ով իրական է, ումմենք կարող ենք հասկանալ, և ով ցույց է տվել ու հայտնել Իրեն և Իր Որդուն Իր մարգարեներին՝ և՛ հին, և՛ նոր օրերի մարգարեներին:[9] Նա այն Աստվածն է, որը լսում և պատասխանում է մեր աղոթքներին,[10] Աստված, որը նայում է մեզ երկնքից[11] և անընդմեջ մտահոգվում մեր հոգևոր և նյութական բարեկեցությամբ, Աստված, որը մեզ տվել է ընտրության ազատություն՝ ինքնուրույն որոշելու, որհետևենք և հնազանդվենք Իր պատվիրաններին առանց պարտադրման,[12] Աստված, որը մեզ օրհնություններ է տալիս և թույլ տալիս փորձությունների առաջ կանգնել, որպեսզի աճենք և դառնանք Իր նման:

Նա մեզ սիրող Աստվածն է, որը տվել է մի ծրագիր, որի միջոցով մենք կարող ենք վայելել երջանկություն այս կյանքում և հավերժության մեջ:

### Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է

Առաջին Տեսիլքից և Մարգարե Ջոզեֆ Սմիթից մենք ստացել ենք գիտելիք մեր կրոնի հիմնաքարի՝ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ առաքելության և իրողության մասին:

Քանի որ մահը մտավ աշխարհ, ինչպես ապրում ենք այժմ, անշուշտ մի օր էլկմահանանք: Մահվան հետևանքներից մեկը կլինի մեր ֆիզիկական մարմնի մշտական կորուստը. մենք չենք կարողանա որևէ կերպ այն վերադարձնել: Բացի դա, քանի որ մենք բոլորս մեղքեր ենք գործել մեր երկրային ճամփորդության ընթացքում, մենք ի վիճակի չենք լինի վերադառնալ մեր Երկնային Հոր ներկայությունը:

Կարո՞ղ եք պատկերացնել Աստծո ներկայությունից զրկված լինելու և այլևս երբեք մարմին չունենալու հետևանքները:

Մեզ մահից և մեղքից ազատելու համար հարկավոր էր Փրկիչ ու Քավիչ: Երկնային Հոր ղեկավարությամբ Հիսուս Քրիստոսը եկավ Երկիր, տանջանքների ենթարկվեց, մահացավ խաչի վրա և հարություն առավ, որպեսզի մենք նույնպես հարություն առնենք և անկեղծ ապաշխարության ու սուրբ ուխտերը կապելու ու պահելու միջոցով կրկին հայտնվենք Աստծո ներկայության մեջ:

Հակոբը բացատրել է. «Օ՜հ, որքան մեծ է բարությունը մեր Աստծո, որն այս սարսափելի հրեշի ճանկից, մեր փախուստի համար, ուղի է պատրաստում. այո, այն հրեշի՝ մահի ու դժոխքի, որը ես կոչում եմ մահը մարմնի, և նաև մահը հոգու»:[13]

Հիսուսը խոստացված Մեսիան է, Օրենք տվողը, Իսրայելի Սուրբը, մեր Տերը, մեր Փրկիչը, մեր Քավիչը, մեր Թագավորը, մեր Ամեն-ինչը:

Եկեք շարունակենք գործել ըստ այս կարևոր ճշմարտությունների և գիտելիքի, առաջարկելով մեր հնազանդությունը Աստծուն և Նրա Սիրելի Որդուն: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17–18
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.30
3. Տես Ամովս 3.7:
4. Տես, օրինակ, *instruct:* Մատթեոս 28.20; 2 Նեփի 9.48; *guide: Teachings of Presidents of the Church: Gordon B. Hinckley* (2016), 262–63; *warn:* Եզեկիել 3.17; *lead:* Վարդապետություն և Ուխտեր 124.45:
5. Տես 2 Նեփի 3.18
6. Տես Եզեկիել 3.4, Ղուկաս 1.70, Գործք 3.21, Վարդապետություն և Ուխտեր 1.38:
7. Տես Ezra Taft Benson, "To the Single Adult Brethren of the Church," *Ensign,* May 1988, 51–53:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.22:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 110.2-3:
10. Տես Մոսիա 9.18:
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.1:
12. Տես 2 Նեփի 2.27; Հելաման 14.30; Վարդապետություն և Ուխտեր 58.28:
13. 2 Նեփի 9. 10:

**Երեց Յան Ս. Արդերն**
Յոթանասունի Քվորումից

# Փնտրեք լավագույն գրքերից

*Ուսումնասիրելով լավագույն գրքերը, մենք պաշտպանում ենք մեզ այն մարդկանց սպառնացող ծնոտներից, ովքեր ձգտում են կրծել մեր հոգևոր արմատները։*

Մի օր վաղ առավոտյան վարդի գեղեցիկ թփի մեջ ես նկատեցի քաղցած ու լավ քողարկված մի թրթուր։ Տերևազուրկ որոշ ցողունների տեսքից նույնիսկ պատահական դիտորդին պարզ կլիներ, որ վտանգավոր ծնոտներով կրծոտելով նուրբ տերևները, թրթուրն իր ճանապարհն է հարթում։ Ես մտածեցի, որ փոխաբերական իմաստով որոշ մարդիկ նման են այս թրթուրին։ Նրանք ամբողջ աշխարհում են, բայց ոմանք այնքան խելացիորեն ծպտված են, որ մենք թույլ ենք տալիս նրանց մտնել մեր կյանք և մինչ կհասցնենք գլխի ընկնել, նրանք արդեն կերել ենմեր հոգևոր արմատներն ու մեր ընտանիքի անդամներին ու ընկերներին։

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ մեր համոզմունքների մասին ապատեղեկատվությունը շատ է։ Այսպիսի ժամանակներում մեր հոգևոր արմատները պաշտպանելու և ամրացնելու թերացումը կարող է դրանքքայքայելու հրավեր լինել նրանց համար, ովքեր նպատակ ունեն ոչնչացնել մեր հավատքը Քրիստոսի և վերականգնված Եկեղեցու հանդեպ։ Մորմոնի Գրքի ժամանակներում Զիզրոմն էր, ով մտադիր էր ոչնչացնել հավատացյալների հավատքը։

Նրա գործերն ու խոսքերը «հակառակորդի ծուղակն էր, որը նա դրել է՝ բռնելու այս ժողովրդին, որ կարողանա հպատակության բերել [նրանց] առ իրեն, որ կարողանա շուրջանակի օղակել [նրանց] իր շղթաներով» (Ալմա 12.6)։ Այդ նույն ծուղակներն այսօր էլ կան, և եթե հոգևոր առումով աչալուրջ չլինենք և չկառուցենք ամուր հիմք մեր Քավիչի վեմի վրա (տես Հելաման 5.12), մենք կկապվենք սատանայի շղթաներով և հանգիստկառաջնորդվենք ներքև՝ Մորմոնի Գրքում հիշատակված արգելված ուղիներով (տես 1 Նեփի 8.28)։

Պողոս Առաքյալը նախազգուշացրել է իր օրերի համար, որը կիրառելի է նաև մեր օրերում. «Որովհետև ես գիտեմ, որ . . . հէնց ձեզանից մարդիկ վեր կկենան, որ ծուռ բաներ կխօսեն, որ աշակերտներին իրանց ետևից քաշեն» (Գործք 20.29–30)։

Նա նախազգուշացրել է, իսկ մեր մարգարեներն ու առաքյալները հիշեցնում են մեզ, որ մենք պետք է անենք ամեն հնարավորը՝ հոգևորապես ամրապնդելու մեզ ընդդիմության և խաբեության խոսքերի դեմ։ Այցելելով Եկեղեցու ծխերն ու ցցերը, ես ցնծում եմ, տեսնելով, լսելով և զգալով, թե Սրբերն ինչպես են դրականորեն ու հավատարմորեն են արձագանքում Փրկիչի և Նրա ծառաների ուսմունքներին։

Հանգստության օրվա երկրպագության աճը օրինակներից միայն մեկն է, թե ինչպես են անդամները հոգևորապես ամրապնդվում, հետևելով մարգարեական հրավերներին։ Ամրապնդման մասին է վկայում նաև տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի ընդլայնումը, երբ ընտանիքները հավաքում են իրենց նախնիներին տաճարային արարողությունների միջոցով։ Մեր հոգևոր արմատներն ավելի խորն են գնում, երբ անձնական և ընտանեկան անկեղծ աղոթքները դառնում են մեր հավատքի ամրոցները, և երբ ամեն օր ապաշխարում ենք, ցանկանում ենք ունենալ Սուրբ Հոգու ընկերակցությունը և սովորում մեր Փրկիչի ու Նրա հատկանիշների մասին, ձգտելով դառնալ Նրա նման (տես 3 Նեփի 27.27)։

Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, Աշխարհի Լույսն է, և Նա խնդրում է մեզ հետևել Իրեն։ Մենք պետք է նայենք Նրան բոլոր ժամանակներում, հատկապես՝ մութ ու փոթորկոտ գիշերը, երբ կասկածի ու անորոշության մրրիկը, պատող մառախուղի պես վախեցնում է մեզ։ Եթե «ջրի գետի մյուս կողմում, մեծ ու ընդարձակ մի շենք[ի]» (1 Նեփի 8.26) մատնացույց անող մատները ուղղված լինեն դեպի ձեզ՝ ծաղրանքով, ստորացումով ու կանչելով, խնդրում եմ ձեզ անմիջապես ետ դառնալ, որ դուք չհամոզվեք խորամանկ և խաբուսիկ միջոցներով՝ հեռացնել ինքներդ ձեզ ճշմարտությունից և դրա օրհնություններից։

Սակայն, միայն դրանով չի սահմանափակվում այս օրը, երբ խեղաթյուրված բաները խոսվում, գրվում և պատկերվում են։ Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է մեզ՝«Մինչև

լիարժեք չապրեք ավետարանով՝ ապրելով ձեր ողջ սրտով, կարողությամբ, մտքով և ուժով, հնարավոր չէ բավարար լույս ունենալ, որպեսզի հետ մղեք խավարը» (“Out of Darkness into His Marvelous Light,” *Liahona*, July 2002, 78)։ Անշուշտ, մեր ցանկությունը հետևելու Քրիստոսին, ով Աշխարհի Լույսն է, (տես Հովհաննես 8.12), նշանակում է, որ մենք պետք է գործենք Նրա ուսմունքներին համաձայն։ Մենք հոգևորապես ամրապնդված, ուժեղացած և պաշտպանված ենք, երբ գործում ենք Աստծո խոսքի համաձայն։

Ինչքան մեծ լինի լույսը մեր կյանքում, այնքան քիչ կլինեն ստվերները։ Այնուամենայնիվ, նույնիսկ լույսի առատության պարագայում, մենք հասանելի ենք մարդկանց և մեկնաբանություններին, որոնք խեղաթյուրում են մեր համոզմունքները և փորձում մեր հավատքը։ Հակոբոս Առաքյալը գրել է. «[մեր] հավատքի փորձառությունը համբերություն է գործում» (Հակոբոս 1.3)։ Այս առումով Երեց Նիլ Ա. Մաքսվելն ուսուցանել է. «Համբերող աշակերտը . . . չի զարմանա կամ ջախջախվի, երբ Եկեղեցին սխալ ներկայացնեն» (“Patience” [Brigham Young University devotional, Nov. 27, 1979], speeches.byu.edu)։

Մեր Եկեղեցու պատմության և հավատալիքների մասին հարցեր միշտ էլ բարձրանում են։ Թե որ աղբյուրին ենք դիմում ճիշտ պատասխաններ գտնելու նպատակով, մեծ ուշադրության խնդիր է։ Ոչինչ չկա քաղելու, երբ ուսումնասիրում ես այն մարդկանց տեսակետներն ու կարծիքները, ովքեր լավատեղյակ չեն կամ դժգոհ են։ Լավագույն խորհուրդը տրվել է Հակոբոս Առաքյալի կողմից. «Եթե մեկը ձեզանից իմաստութեան պակասություն ունի, թող խնդրէ Աստուածանից» (Հակոբոս 1.5)։

Աստծուց հարցնելը պետք է նախորդվի լավ ուսումնասիրությամբ, որ սուրբ գրային լիազորագրի ներքո «իմաստության խոսքեր փնտրեք լավագույն գրքերից. ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎևՈւ 88.118)։ Այդպիսի գրքերի հարուստ տեսականի կա, գրված Եկեղեցու ի վերուստ ոգեշնչվածեկավարների և Եկեղեցու պատմության և վարդապետության ճանաչված, ապահով ու հուսալի վարդապետների կողմից։ Թեև, վերոնշյալներից ոչ մեկը չի գերազանցում կանոնիկ սուրբ գրություններում Աստծո հայտնած խոսքի մեծությունը։ Այդ «բարակ» էջերից, որոնք հոգևոր «հաստ» գաղափարներ են պարունակում, մենք իմանում ենք ճշմարտությունը Սուրբ Հոգու միջոցով և, այդպիսով, ավելի ենք լցվում լույսով։

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խնդրել է մեզ «աղոթքով ուսումնասիրել և խորհել Մորմոնի Գրքի շուրջ ամեն օր» (“Մորմոնի Գրքի զորությունը,” *Լիահոնա,* մայիս 2017, 87)։

Մի քանի տարի առաջ, երբ ծառայում էի որպես Ֆիջի Սուվա Միսիայի նախագահ, որոշ միսիոներներ մի փորձառություն ունեցան, ինչն ամրապնդեց նրանց մեջ Մորմոնի Գրքի դարձի բերող ուժը։ Մի շոգ ու խոնավ օր երկու երեցներ եկան մի տուն Լաբասայի փոքրիկ բնակավայրերից մեկում։

Դռան թակոցին պատասխանեց մի ծեր մարդ, ով լսեց միսիոներներին, որոնք վկայեցին Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին։ Տղաները գրքի մի օրինակ տվեցին նրան և հրավիրեցին կարդալ ու աղոթել, իմանալու համար, որ դա Աստծո խոսքն է, ինչպես իրենք են արել։ Նրա պատասխանը կարճ էր. «Վաղը գնում եմ ձկնորսության։ Ես կկարդամ գիրքը ծովում և երբ վերադառնամ, կարող եք կրկին այցելել ինձ»։

Մինչ նա բացակայում էր, միսիոներների փոփոխություններ կատարվեցին, և մի քանի շաբաթ անց երկու նոր միսիոներներ եկան ձկնորսին այցելության։ Այդ ժամանակ տարեց մարդը կարդացել էր Մորմոնի Գիրքն ամբողջությամբ, ստացել էր դրա ճշմարտացիության հաստատումը և ցանկանում էր ավելին իմանալ։

Այս մարդը դարձի էր եկել Սուրբ Հոգու միջոցով, ով վկայել էր թանկագին բառերի ճշմարտացիության մասին՝ յուրաքանչյուր էջում գրված իրադարձությունների և վարդապետության ճշմարտացիության, որոնք երկար տարիներ առաջ Մորմոնի Գրքում ուսուցանվել և պահպանվել են մեր օրերի համար։ Այդ նույն օրինությունը հասանելի է յուրաքանչյուրիս։

Տունը ընտանիքների համար իդեալական վայր է, որտեղ կարելի է ուսումնասիրել և միմյանց հետ կիսվել սուրբ գրություններից և ապրող մարգարեների խոսքերից արժեքավոր գաղափարներով, ինչպես նաև օգտվել LDS.org-ում առկա Եկեղեցու նյութերից։ Այստեղ դուք առատ տեղեկատվություն կգտնեք ավետարանական թեմաներով, որոնցից են, օրինակ, Առաջին Տեսիլքի պատմությունները։ Ուսումնասիրելով լավագույն գրքերը, մենք

պաշտպանում ենք մեզ այն մարդկանց սպառնացող ծնոտներից, ովքերձգտում են կրծել մեր հոգևոր արմատները:

Չնայած մեր բոլոր աղոթքներին, ուսումնասիրությանը և խոհերին, դեռ կարող ենմնալ որոշակի չպատասխանված հարցեր, բայց մենք չպետք է թույլ տանք, որ դա հանգցնի այն հավատքի բոցը, որն առկայծում է մեր մեջ: Այդպիսի հարցերը հրավեր ենմեր հավատքը կառուցելու համար և չպետք է սնուցենմեզ մոլորեցնող կասկածները: Դա կրոնի հիմնական էությունն է, որ ամեն հարցի վստահ պատասխան չլինի, քանի որ դա հավատի նպատակներից մեկն է: Այդ առումով երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է. «Երբ այդ պահերը գան ու խնդիրները ջրի երես ելնեն, որոնց լուծումն անմիջապես չի գտնվում, *ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից և ամուր կանգնեք, մինչև որ լրացուցիչ գիտելիքներ կտրվեն*» («Հավատում եմ, Տէր», *Լիահոնա,* մայիս 2013, 94):

Մենք տեսնում ենք մեր շուրջը գտնվող շատ մարդկանց ուրախությունը, ովքեր ամուր են կանգնած՝ անընդհատ սնուցելով իրենց հոգևոր արմատները: Նրանց հավատքն ու հնազանդությունը բավարար են Փրկիչի հանդեպ վստահություն ունենալու համար, և այդտեղից է բխում մեծ երջանկությունը: Նրանք չեն հավակնում իմանալ բոլոր բաները, բայց նրանք վճարել են այնքան բանիմանալու գինը, որ ունենան խաղաղություն և համբերությամբ ապրեն, երբձգտում են ավելին իմանալ: Տող առ տող նրանց հավատքն ամրացվում է Քրիստոսում, և նրանք ամուր են կանգնում՝ որպես Սրբերի հետ համաքաղաքացիներ:

Թող մեզանից յուրաքանչյուրն ապրի այնպես, որ ծպտված թրթուրների վտանգավոր ծնոտները երբեք տեղ չգտնեն մեր կյանքում, որպեսզի մենք մնանք «հաստատուն Քրիստոսի հավատքում, նույնիսկ մինչև վերջ» (Ալմա 27.27): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**Երեց Խոսե Լ. Ալոնսո**
Յոթանասունից

# Սիրենք միմյանց, ինչպես Նա սիրեց մեզ

*Անկեղծ սիրով ծառայելով ու ներելով մարդկանց, մենք կարող ենք բուժվել և ուժ ստանալ՝ հաղթահարելով սեփական դժվարությունները:*

Վերջին Ընթրիքի ժամանակ Փրկիչը նոր պատվիրան տվեց Իր աշակերտներին, ասելով.

«Նոր պատվիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք. ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք:

Սորանով կգիտենան ամենքը թե իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք»:[1]

Փրկիչի աշակերտներին նոր պատվիրան տրվեց՝ կատարել ավելի մեծ ու ավելի սուրբ մի բան: Այս նոր պատվիրանն ու հրավերը ամփոփվեց մի արտահայտությամբ. «ինչպէս ես ձեզ սիրեցի»:

### Սերը գործողություն է և ծառայություն

«Սերը խորը նվիրվածության, մտահոգության և կապվածության զգացում է: Իր զավակների հանդեպ Աստծո սիրո մեծագույն օրինակն արտահայտվում է Հիսուս Քրիստոսի անսահման քավությամբ»:[2] Հովհաննեսը գրել է. «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը, որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չկորչի այլ յաւիտենական կեանքն ունենայ»:[3] «Աստծո և մերձավորների հանդեպ սերը Հիսուս Քրիստոսի աշակերտներին բնորոշ հատկանիշ է»:[4]

Մի քանի տարի առաջ, երբ մեր մեծ թոռը՝ Խոսեն, չորս տարեկան էր, նա խաղում էր կնոջս հետ: Երբ նրանք ծիծաղում էին և միասին ուրախ ժամանակ անցկացնում, մեր թոռը հարցրեց. «Տատիկ, դու ինձ սիրո՞ւմ ես»:

Տատիկը պատասխանեց. «Այո, Խոսե, ես քեզ սիրում եմ»:

Ապա նա հաջորդ հարցը տվեց. «Ինչպե՞ս ես իմանում, որ սիրում ես ինձ»:

Տատիկը բացատրեց նրան իր զգացմունքները և պատմեց, թե որքան է խնամել և դեռ ինչեր է պատրաստ անել նրա համար:

Ավելի ուշ իմ կինը Խոսեին այդ նույն հարցերը տվեց, ներառյալ այդ խորիմաստ հարցը. «Ինչպե՞ս ես իմանում, որ սիրում ես ինձ»:

Պարզամտաբար, բայց ամենայն անկեղծությամբ Խոսեն ասաց. «Ես սիրում եմ քեզ, քանի որ զգում եմ դա իմ սրտում»: Խոսեի սիրալիր վարքը տատիկի նկատմամբ այդ օրը և առհասարակ վկայում է, որ սերըգործողություններիևխորը զգացմունքների համադրություն է:

Բենիամին Թագավորն ուսուցանել է. «Եվ ահա, ես ասում եմ ձեզ այս բաները, որ դուք կարողանաք իմաստություն սովորել. Որ դուք կարողանաք սովորել, որ երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»:[5]

Դժվար իրավիճակներով հագեցածներկայիս աշխարհում, ծիծաղելի ժպիտովհաղորդագրություն կամ «Ես սիրում եմ քեզ» խոսքերի հետ մի գեղեցիկ նկար ուղարկելը լավ ու գնահատելի երևույթ է: Բայց ահա թե ինչ պետք է անենք շատերս՝ բջջային սարքերը մի կողմ դնենք և ձեռքերով ու ոտքերով նետվենք մարդկանց օգնելու, երբ մեծ կարիքի մեջ: Մերն առանց ծառայության, ինչպես հավատքն առանց գործերի՝ անշուշտ, մեռած է:

**Սերը ներում է**

Քրիստոսի մաքուր սերը, որը գթությունն է,[6] ոգեշնչում է մեզ ոչ միայն գործել և ծառայել, այլև ուժ ունենալ ներելու՝ անկախ իրավիճակից: Թույլ տվեք կիսվել ձեզ հետ մի փորձառությամբ, որը տպավորել և փոխել է իմ կյանքը: Թեդը և Շերոնը՝ Կուպերի ծնողները, որոնք այսօր ներկա են այստեղ, ինձ թույլ տվեցին կիսվել այս պատմությամբ, որը պատահել էր իրենց ընտանիքի հետ ավելի քան ինը տարի առաջ: Ես կպատմեմ պատմությունը Թեդի՝ Կուպերի հոր անունից:

2008թ. օգոստոսի 21-ը դպրոցի առաջին օրն էր և Կուպերի երեք ավագ եղբայրները՝ Իվանը, Գարեթը և Լոգանը կանգառում կանգնած ավտոբուսին էին սպասում: Չորս տարեկան Կուպերն իր հեծանվով էր, կինս՝ Շերոնը, քայլում էր:

Կինս փողոցի մեջտեղում էր և Կուպերին նշան արեց, որ նա էլ անցնի: Այդ պահին մի մեքենա դանդաղ ձախ թեքվեց և ընթացավ Կուպերի ուղղությամբ:

Մեր հարևանը զանգահարեց ինձ և տեղեկացրեց, որ Կուպերին մեքենա է խփել: Ես արագ վարեցի դեպի ավտոբուսի կանգառ, որ տեսնեմ նրան: Կուպերը պառկած էր խոտերի մեջ, հազիվ էր շնչում, բայց տեսանելի վնասվածքներ չկային:

Ես ծնկի իջա Կուպերի կողքին և քաջալերող խոսքեր ասացի. «Ամեն ինչ լավ կլինի: Դիմացիր»: Այդ պահին քահանայապետերի խմբի իմ ղեկավարը՝ Նաթանը հայտնվեց կնոջ հետ: Նրա կինն առաջարկեց, որ Կուպերին քահանայության օրհնություն տանք: Մենք մեր ձեռքերը դրեցինք Կուպերի գլխին: Չեմ կարող հիշել, թե ինչ ասացի օրհնություն տալիս, բայց հստակ հիշում եմ ուրիշների ներկայությունը մեր շուրջը, և դա այն պահին էր, երբ ես գիտեի, որ Կուպերը մահամերձ էր:

Կուպերին ուղղաթիռով տեղափոխեցին հիվանդանոց, բայց նա մահացավ: Ես զգում էի, ինչպես էր Երկնային Հայրն ինձ ասում, որ իմ երկրային խնամակալությունն ավարտվել է և Կուպերն այժմ Իր խնամքի տակ էր:

Մենք կարողացանք որոշ ժամանակ Կուպերի հետ անցկացնել հիվանդանոցում: Բժիշկներն ամեն ինչ ձեռնարկեցին, որ ժամանակ ունենայինք գրկել ու հրաժեշտ տալ նրան, և թույլ էին տվել մեզ նրա կողքին լինել ու գրկել նրան, որքան կցանկանայինք:

Տուն վերադառնալու ճանապարհին, իմ վշտահար կինն ու ես նայեցինք միմյանց և սկսեցինք խոսել այն տղայի մասին, ով մեքենայի ղեկին էր: Մենք չէինք ճանաչում նրան, թեև նա ապրում էր մի փողոց վերև ու մեր ծխից էր:

Հաջորդ օրը շատ դժվար էր մեզ համար, քանի որ բոլորս ամբողջովին համակված էինք վշտով: Ես ծնկի իջա և արտաբերեցի իմ ամենաանկեղծ աղոթքը, որ երբևէ ունեցել էի: Ես խնդրեցի Երկնային Հորը

Փրկիչի անունով հեռացնել ինձանից այս կլանող վիշտը: Նա արեց դա:

Ավելի ուշ այդ օրը մեր ցցի նախագահության խորհրդականներից մեկը կազմակերպեց, որ իր տանը հանդիպենք այն երիտասարդի հետ, ով վարում էր մեքենան: Ներկա էին լինելու նաև տղայի ծնողները: Ես ու Շերոնը ասում էինք տղային և նրա ծնողներին: Երբ դուռը բացվեց, մենք առաջին անգամ հանդիպեցինք նրանց: Իմ եպիսկոպոսը շշնջաց ականջիս. «Մոտեցիր նրան»: Ես և Շերոնը գրկախառնվեցինք նրանց հետ: Մենք միասին արտասվում էինք հավանաբար երկար ժամանակ: Մենք ասացինք նրան, որ գիտենք, որտեղի ունեցածը դժբախտ պատահար էր:

Իմ և Շերոնի համար զարմանալի էր, որ մենք նույն կերպ վարվելու զգացում ունեցանք և մինչև հիմա էլ այդպես է: Աստծո շնորհով մենք կարողացանք հաղթահարել մեծ ճանապարհը, ակնհայտ ուղին, միակ ճանապարհը և սիրել այս լավ երիտասարդին:

Տարիների ընթացքում մենք ավելի մտերմացանք նրա և նրա ընտանիքի հետ: Նա մեզ հետ է կիսել իր կյանքի ամենաթանկ պահերը: Մենք նույնիսկ տաճար գնացինք նրա հետ, երբ նա պատրաստվում էր միսիայի:[7]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, Թեդն անկասկած գիտի, որ մեր Երկնային Հայրը սիրում է մեզ: Նա գիտի, որ ներել կարողանալը և այդպիսովսեփական անձը թեթևացնելը, նույնքան քաղցր է, որքան ներում ստանալը: Այս քաղցրությունը գալիս է մեր մեծագույն Օրինակինհետևելու շնորհիվ: Մորմոնի Գրքում Ալման հայտարարում է Քրիստոսի մասին. «Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի. և այս՝ որպեսզի խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները»:[8]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ինչ հրաշալի պատմություն է սա իրական սիրո և ներման մասին: Մենք նույնպես կարող ենք ուրախություն և երջանկություն ունենալ, երբ ծառայում և ներում ենք ուրիշներին: Ջորջին, մեր մյուս թոռնիկը, հաճախ ասում է. «Ինչպիսի՞ ընտանիք ենք մենք»: Եվ ինքն էլ պատասխանում է. «Մենք երջանի՜կ ընտանիք ենք»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խարհուրդ է տվել մեզ. «Քննենք մեր կյանքը և հետևենք Փրկիչի օրինակին՝ լինելով բարի, սիրող և գթառատ»:[9]

Ես գիտեմ, որ մեր Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, սիրում են մեզ և պատրաստ են օգնել մեզ գործելու այնպես, որ սիրենք միմյանց, ինչպես Նրանք մեզ սիրեցին: Ես գիտեմ, որ անկեղծ սիրով ծառայելով ու ներելով մարդկանց, մենք կարող ենք բուժվել և ուժ ստանալ՝ հաղթահարելով սեփական դժվարությունները: Եվ ես ասում եմ սա Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Հովհաննես 13.34-35
2. «Սեր», Ավետարանական թեմաներ, topics.lds.org.
3. Հովհաննես 3.16
4. «Սեր», Ավետարանական թեմաներ, topics.lds.org.
5. Մոսիա 2.17
6. Տես Մորոնի 7.47
7. Հատված Թեդ Մարդեսիչի չհրապարակված ձեռագրից
8. Ալմա 7.11
9. Թոմաս Ս. Մոնսոն, «Բարություն, գթություն և սեր», *Լիահոնա*, մայիս 2017, 67

**Երեց Նիլ Լ. Անդերսեն**
Տասներկու Առաքյալների Քվորումից

# Տիրոջ ձայնը

*Ես վկայում եմ, որ այս համաժողովի ընթացքում մենք լսեցինք Տիրոջ ձայնը: Թե ինչպես կարձագանքենք դրան, կլինի մեզանից յուրաքանչյուրի քննությունը:*

Ապ և առաջ, կցանկանայի խոսք հղել փոքր երեխաներին: Այո, սա վերջին նիստն է, և այո, ես վերջին խոսնակն եմ:

Վերջերս Պրովո քաղաքի կենտրոնական տաճար այցելության ժամանակ ես հիացա մի նկարով, որի անուն էր՝ *Առաջին Տեսիլքը Աֆարի կողմից:* Նկարը պատկերում էր երկնքից իջնող լույսն ու զորությունը, երբ Հայրն ու Որդին այցելեցին պատանի Ջոզեֆ Սմիթին:

Ամենևին չցանկանալով համեմատություն անցկացնել այն սրբազան իրադարձության հետ, որին հաջորդեց վերականգնումը, ես պատկերացնում եմ նմանատիպ պատկեր, որը ցույց կտար Աստծո լույսն ու հոգևոր զորությունը, որը կիջներ այս գերագույն համաժողովի ժամանակ և վերջում կտարածվեր աշխարհով մեկ:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Նա առաջնորդում է իր սուրբ գործը, և որ գերագույն համաժողովն այն կարևոր պահերից մեկն է, երբ Նա անձնապես ուղղորդում է Իր Եկեղեցին:

### Ուսուցանվել բարձրյալից

Եկեղեցու կազմավորման օրը Տերը Ջոզեֆ Սմիթին նշանակեց մարգարե, տեսանող և Տեր Հիսուս Քրիստոսի առաքյալ[1] և ասաց Եկեղեցուն.

«Քանզի նրա խոսքը դուք պետք է ընդունեք, ինչպես որ իմ իսկ բերանից, ողջ համբերությամբ ու հավատքով:

Քանզի այդ բաները կատարելով, դժոխքի դռները չեն հաղթի ձեզ այո՛, . . . և Տեր Աստված ձեր առջևից կցրի խավարի զորությունները և այնպես կանի, որ երկինքները կցնցվեն՝ ձեր բարիքի համար»:[2]

Ավելի ուշ, Առաջին Նախագահության բոլոր անդամները և Տասներկու Առաքյալների Քվորումը հաստատվեցին և կարգվեցին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:[3]

Այժմ, երբ հավաքվում ենք Թոմաս Ս. Մոնսոնի առաջնորդության ներքո, մենք ակնկալում ենք, որ կլսենք Տիրոջ կամքը . . . Տիրոջ միտքը, . . . Տիրոջ ձայնը, և Աստծո զորությունը ի փրկություն»:[4] Մենք վստահում ենք Նրա խոստմանը. «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է»:[5]

Այս ժամանակակից աշխարհի իրարանցման և խառնաշփոթության մեջ կարևոր է, որ վստահենք ու հավատանք Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի խոսքերին, որպեսզի հոգևոր աճ ու տոկունություն ունենանք:[6]

Մենք հավաքվել ենք այս հրաշալի համաժողովի համար: Միլիոնավոր Վերջին Օրերի Սրբեր և այլ հավատքի մարդիկ, ովքեր ավելի քան 200 երկրներից են, խոսում են ավելի քան 93 լեզուներով, հաճախում են այս նիստերին կամ կարդում են համաժողովի ուղերձները:

Մենք աղոթել ու պատրաստվել ենք այս համաժողովի համար: Շատերս ունենք անհանգստացնող

Առաջին տեսիլքը Աֆարից կտավը պատկերում է երկնքի լույսը և զորությունը:

*Աստծո լույսն ու հոգևոր զորությունը իջնում են գերագույն համաժողովի վրա:*

*Գերագույն համաժողովից զորությունն ու լույսը տարածվում են աշխարհով մեկ:*

մտավախություններ և անկեղծ հարցեր: Մենք ցանկանում ենք նորոգել մեր հավատքը մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ, ցանկանում ենք ամրապնդել գայթակղությանը դիմակայելու և նպատակներից չշեղվելու մեր ունակությունը: Մենք գալիս ենք ուսուցանվելու բարձրյալից:

**Տիրոջ միտքը և կամքը**

Առաջին Նախագահության և Տասներկուսի համար, ովքեր սովորաբար խոսում են յուրաքանչյուր համաժողովին, իրենց ուղերձների նախապատրաստությունը կրկնվող բեռ ու սրբազան վստահություն է:

Բարձրագույն Իշխանավոր ծառայելուց տարիներ առաջ ես հարցրեցի Երեց Դալլին Հ. Օուքսին, թե արդյոք նա տարբեր ելույթներ է պատրաստել յուրաքանչյուր ցցի համաժողովի համար: Նա ժխտական պատասխան տվեց և ավելացրեց. «Բայց, գերագույն համաժողովի իմ ելույթները տարբեր են եղել: Պատահում էր, որ 12-15 սևագիր օրինակներ էի պատրաստում, որպեսզի համոզվեի, որ ասում եմ այն, ինչ Տերն է ցանկանում, որ ես ասեմ»:[7]

Ե՞րբ և ինչպե՞ս է գերագույն համաժողովների ելույթների ոգեշնչումը գալիս:

Առանց հանձնարարված թեմաների, մենք տեսնում ենք, թե յուրաքանչյուր համաժողովի ժամանակ ինչպես է երկինքը հրաշալիորեն ուղղորդում հավերժական ճշմարտությունների մասին թեմաները:

Իմ Եղբայրներից մեկն ինձ ասել է, որ համաժողովի ելույթի իր թեման հանձնարարվել է նրան անցյալ Ապրիլի համաժողովից անմիջապես հետո: Մեկ ուրիշը նշել է, որ երեք շաբաթ առաջ նա դեռ աղոթում և սպասում էր Տիրոջը: Երբ երրորդին-հարցրին, թե որքան ժամանակ է պահանջվել շատ զգայուն թեմայով մի ելույթ կազմելու համար, նա պատասխանեց. «Քսանհինգ տարի»:

Երբեմն, գլխավոր միտքը շատ արագ է գալիս, բայց բովանդակությունն ու մանրամասները դեռևս պահանջում են մեծ հոգևոր ջանքեր: Ծոմապահությունն ու աղոթքը, ուսումնասիրությունն ու հավատքը մշտապես կազմում են գործընթացի մասը: Տերը չի ցանկանում, որ որևէ պատրվակով Իր ձայնըՍրբերին թույլինչի:

Հաճախ գերագույն համաժողովի ելույթների ցուցումները տրվում են գիշերները կամ վաղ առավոտյան ժամերին, երբ ելույթը ձեր մտքերից դուրս է գտնվում: Հանկարծ սպասվող գաղափարը, իսկ երբեմն, որոշակի բառեր և արտահայտություններ են պարզ հայտնության ձևով ծագում մտքում:[8]

Երբ ունկնդրեք, ձեր լսած ուղերձները կարող են շատ անձնական լինել կամ դրանք կարող են հարմարեցվել հենց ձեզ համար:

Շատ տարիներ առաջ, երբ մտածում էի, թե արդյոք ես պատրաստ եմ ծառայել միսիայում, գերագույն համաժողովի ելույթի ժամանակ, մի արտահայտություն ծագեց իմ գլխում: Այդ արտահայտությունն էր՝ «Դու չգիտես ամեն ինչ, բայց դու գիտես բավականաչափ»:[9] Այդ նույն օրը գերագույն համաժողովին ներկա գտնվող մի երիտասարդ աղջիկ ասաց ինձ, որ աղոթում էր իր ամուսնության առաջարկի շուրջ և մտածում էր, թե այդ երիտասարդ տղային դեռևս լավ չէր ճանաչում: Երբ արտասանեցի՝ «Դու չգիտես ամեն ինչ, բայց դու գիտես բավականաչափ» բառերը, Հոգին հաստատեց նրան, որ նա *իրոք,* բավականաչափ, ճանաչում էր այդ տղային: Երկար տարիներ շարունակ նրանք երջանիկ ամուսիններեն եղել:

Ես խոստանում եմ, որ եթե դուք հոգեպես պատրաստվեք և մասնակցեք այն ակնկալիքով, որ կլսեք Տիրոջ ձայնը, ապա մտքերը և զգացումները կծագեն ձեր գլխում, կարծես թե դրանք հարմարեցվել են հատուկ ձեզ համար: Դուք դա զգացել եք այս համաժողովի ընթացքում, կամ դեռ կզգաք, երբ առաջիկա շաբաթների ընթացքում ուսումնասիրեք ուղերձները:

**Ներկայիս և հետագա ամիսների համար**

Նախագահ Մոնսոնն ասել է.

«Ժամանակ տրամադրեք և կարդացեք համաժողովի ելույթները:[10]

Մտածեք [դրանց մասին]: . . . Ես հասկացել եմ, որ ավելին եմ քաղում այս ոգեշնչված քարոզներից, երբ ուսումնասիրում եմ դրանք ավելի մեծ խորությամբ»:[11]

Գերագույն համաժողովի ուսմունքներն այն նկատառումներն են, որոնց մասին Տերը ցանկանում է, որ մտածենք այժմ և առաջիկա ամիսների ընթացքում:

Հովիվը «գնում է [իր ոչխարների] հետևից և ոչխարները հետևում են նրան, քանի որ նրանք ճանաչում են նրա ձայնը»:[12]

Հաճախ, նրա ձայնը ուղղորդում է մեզ փոխել ինչ-որ բան մեր

կյանքում: Նա հրավիրում է մեզ ապաշխարել: Նա հրավիրում է մեզ «հետևել Իրեն»:

Մտածեք այս համաժողովից մեջբերված նախադասությունների շուրջ.

Նախագահ Հենրի Բ. Այրինգն առավոտյան նիստին ասել է. «Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հայր Աստված ապրում է և ցանկանում է, որ դուք գնաք տուն՝ Իր մոտ: Սա Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին է: Նա ճանաչում է ձեզ, Նա սիրում է ձեզ, Նա հոգ է տանում ձեր մասին»:[13]

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը երեկ կայացած նիստին ասել է. «Ես վկայում եմ, որ երբ մենք շարունակենք ծառայել կամ շարունակենք այդ հրաշալի ճամփորդությունը, որը տանում է Աստծո մոտ, մեր կյանքն ավելի լավը կդառնա, և Տերը կգործի մեր միջոցով ուշագրավ եղանակներով, որպեսզի օրհնի մեր շրջապատի մարդկանց և իրականացնի Իր հավերժական նպատակները»:[14]

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը երեկ կայացած ցերեկային նիստին ասել է. «Ես խոստանում եմ, որ երբ դուք ընկղմվեք Մորմոնի Գրքի ուսումնասիրության մեջ, դուք կպատվաստվեք օրվա չարի դեմ, նաև՝ պոռնոգրաֆիայի տանջող ժանտախտի ամիտքը թմրեցնող այլ վատ սովորույթների դեմ»:[15]

Երեց Դալլին Հ. Օուքսը երեկ կայացած նիստերի ժամանակ ասել է. «Ես վկայում եմ, որ ընտանիքի հռչակագիրը հավերժական ճշմարտության արտահայտություն է, Տիրոջ կամքն Իր զավակների համար, ովքեր փնտրում են հավերժական կյանք»:[16]

Եվ Երեց Մ. Ռասսել Բալլարդը մի քանի րոպե առաջ ասել է. «Մենք պետք է ընդունենք Աստծո զավակներին կարեկցանքով և վերացնենք ամեն նախապաշարմունք, ներառյալ՝ ռասայական խտրականությունը, սեռական խտրականությունը և ազգայնականությունը»:[17]

Քանի որ մենք ունենք լրացուցիչ րոպեներ, ես պարզապես կցանկանայի համառոտ ներկայացնել Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի մեջբերումը: Առաջին Նախագահությունը Երեց Հեյլսին ասել էր, որ նա կարող է կարճ ելույթ ունենալ Կիրակի առավոտյան նիստի ժամանակ, եթե նրա առողջությունը ների: Չնայած նրա առողջությունը թույլ չտվեց, այնուամենայնիվ նա ելույթ էր պատրաստել, որը վարտել էր անցած շաբաթ և դրանով կիսվեց ինձ հետ: Քանի որ նա մահացավ մոտերեք ժամ առաջ, ես կկիսվեմ երեք տող նրա ելույթից:

Մեջբերում Երեց Հեյլսի ելույթից. «Երբ մենք ընտրում ենք հավատքը, մենք պատրաստ ենքկանգնել Աստծո առաջ: . . . Փրկիչըխաչելությունից հետոհայտնվեց միայն այն մարդկանց, ովքեր «[Նրա] վկայության մեջ հավատարիմ էին եղել մահկանացության մեջ ապրելու ժամանակ»: [ՎևՈւ 138.12:] Այն մարդիկ, «ովքեր մերժեցին մարգարեների վկայությունները [չէին կարող] տեսնել

*1979թ. Դոկտոր Նելսոնը զգացում ունեցավ, ըստ որի պետք է հետևեր մանդարին չինարեն սովորելու Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի խորհրդին:*



*Նախագահ Քիմբալի հորդորին հետևելու Բժիշկ Նելսոնի ցանկությունը հանգեցրեց այն բանին, որ Բժիշկ Վուն այցելեց Սոլթ Լեյք Սիթի, իսկ բժիշկ Նելսոնը ճամփորդեց Չինաստան՝ դասախոսություններ կարդալու և վիրահատություններ անցկացնելու նպատակով:*

*2015թ.-ի հոկտեմբերին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն արժանացավ «Չինաստանի հին բարեկամ» պաշտոնական տիտղոսին:*

[Փրկիչի] ներկայությունը, ոչ էլ նայել Նրա դեմքին»: [ՎԿՈ 138.21:] . . . Մեր հավատքը նախապատրաստում է ապրելու Տիրոջ ներկայության մեջ»:

Ինչքան բարի էր Տերը, որ ոգեշնչեց Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին անմիջապես դուրս գնալ առավոտյան նիստից հետո, բաց թողնել իր ճաշը և արագ տեսակցել Երեց Հեյլսին, նրա քվորումի նախագահին և հրեշտակային Մերի Հեյլսին, երբ Երեց Հեյլսը հեռացավ մահկանացու կյանքից:

**Արձագանքել Տիրոջ ձայնին**

Ես վկայում եմ, որ այս համաժողովի ընթացքում մենք լսեցինք Տիրոջ ձայնը:

Մենք չպետք է անհանգստանանք, երբ Տիրոջ ծառաների խոսքերը հնչում են աշխարհին, իսկ երբեմն մեր մտածելակերպին հակառակ: Դա միշտ այդպես է եղել: Տաճարում ես ծնկի եմ գալիս իմ Եղբայրների հետ: Ես հաստատում եմ, որ նրանց սրտերը բարի են: Նրանց ամենամեծ ցանկությունն է գոհացնել Տիրոջը և օգնել Աստծո զավակներին վերադառնալ Նրա ներկայություն:

Յոթանասունականները, Եպիսկոպոսությունները, Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց, Երեխաների Միության և օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահները, հրաշալի երաժշտությունը և իմաստալից աղոթքները հրաշալի ոգեշնչում հաղորդեցին այս համաժողովին:

Գերագույն համաժողովների ելույթները պարունակում են գանձեր, որոնք սպասում են ձեր բացահայտմանը: Թե ինչպես կարձագանքենք դրանց, կլինի մեզանից յուրաքանչյուրի քննությունը:

Թույլ տվեք կիսվել մարգարեական խոսքերին արձագանքելու մի փորձառությամբ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կյանքից:

1979թ.-ին, Բարձրագույն Իշխանավոր կանչվելուց հինգ տարի առաջ Եղբայր Նելսոնը այցելեց մի ժողովի, որը նախորդեց գերագույն համաժողովին: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը «մարտահրավեր նետեց ներկաներին՝ մեծացնելու իրենց քայլը և տարածելու ավետարանն ամբողջ աշխարհում: Իր նշած երկրներից Նախագահ Քիմբալը հատկապես մատնանշեց Չինաստանը և հայտարարեց. «Մենք պետք է ծառայենք չինացիներին: Մենք պետք է սովորենք նրանց լեզուն: Մենք պետք է աղոթենք նրանց համար և օգնենք նրանց»:[18]

54 տարեկանում Եղբայր Նելսոնը ժողովի ժամանակ զգացում ունեցավ, որ պետք է սովորի Մանդարին լեզուն: Չնայած նասրտիվիրաբույժ էր և չափազանց զբաղված, անմիջապես մի ուսուցիչ վարձեց:

Չինարեն լեզվի դասերը սկսելուց շատ չանցած, Բժիշկ Նելսոնը այցելեց մի համաժողովի և անսպասելիորեն հայտնվեց «ականավոր չինացի վիրաբույժ բժիշկ Վու Ինկայի կողքին: Քանի որ [Եղբայր Նելսոնը] ուսումնասիրում էր Մանդարին լեզուն, նա զրույցի [բռնվեց] [բժիշկ Վուի] հետ»:[19]

Մարգարեի հորդորին հետևելու Բժիշկ Նելսոնի ցանկությունը հանգեցրեց այն բանին, որ Բժիշկ Վուն այցելեց Սոլթ Լեյք Սիթի, իսկ բժիշկ Նելսոնը մեկնեց Չինաստան՝ դասախոսություններ կարդալու և վիրահատություններ անցկացնելու նպատակով:

Նրա սերընչինժողովրդի հանդեպ, ինչպես նաև այդ ժողովրդի սերն ու հարգանքը նրա հանդեպ աճեց:

1985թ.-ի փետրվարին, Տասներկուսի Քվորում կանչվելուց 10 ամիս անց, Երեց Նելսոնը մի անակնկալ հեռախոսազանգ ստացավ Չինաստանից, որովհնդրում էին Բժիշկ Նելսոնին գալ Պեկին և վիրահատել Չինաստանի ամենահայտնի օպերային երգչի սիրտը: Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հորդորի արդյունքում Երեց Նելսոնը վերադարձավ Չինաստան: Վերջին վիրահատությունը, որ նա կատարեց, Չինաստանի ժողովրդական հանրապետությունում էր:

Երկու տարի առաջ, 2015թ.-ի հոկտեմբերին, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ևս մեկ անգամ արժանացավ պաշտոնական հայտարարության, որտեղ նրան անվանում էին «Չինաստանի հին բարեկամ»:

Ապա երեկ մենք լսեցինք, որ այժմ 93 տարինբոլորած Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոսում է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խնդրանքի մասին, որ «ամեն օր աղոթքով [ապրիլի համաժողովին] ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը և խորհենք դրա շուրջ»:

Ինչպես Նախագահ Նելսոնը նասրտիվիրաբույժ աշխատած բազմազբաղ տարիներին վարձեց Մանդարին լեզվի ուսուցիչ, այնպես էլ անմիջապես հետևեց Նախագահ Մոնսոնի խորհրդին և կիրառեց իր կյանքում: Նա ասել է, որ կարդալուց

բացի«ցուցակ է կազմել, թե ինչի *մասին է* Մորմոնի Գիրքը, ինչ է այն *հաստատում,* ինչ է *հերքում,* ինչ է *իրականացնում,* ինչ է *պարզաբանում,* և ինչ է *հայտնում*»:[20]

Իսկ հետո, հետաքրքիր է, որ այս առավոտյան որպես երկրորդ վկա Նախագահ Հենրի Բ. Այրինգը նույնպես խոսել է Նախագահ Մոնսոնի հորդորին հետևելու իր արձագանքի մասին: Դուք հիշո՞ւմ եք այս խոսքերը. «Ձեզանից շատերի նման ես մարգարեների խոսքերն ընկալում եմ, որպես ինձ ուղղված Տիրոջ խոսքեր: Եվ ձեզանից շատերի նման ես որոշեցի հնազանդվել այդ խոսքերին»:[21]

Թող որ մենք ընդօրինակենք այդ օրինակները մեր կյանքում:

### Խոստում և օրհնություն

Խոստանում եմ ձեզ, որ երբ լսեք ձեզ ուղղված Տիրոջ ձայնը այս գերագույն համաժողովի ելույթների մեջ, իսկ հետո շարժվեք ըստ հուշումների, դուք երկնքի աջը կզգաք ձեր գլխին և ձեր ու ձեզ շրջապատողների կյանքը կօրհնվի:[22]

Այս համաժողովի ընթացքում մենք մտածել ենք մեր սիրելի մարգարեի մասին: Նախագա՛հ Մոնսոն, մենք սիրում ենք Ձեզ: Ես փակում եմ նրա խոսքերով, որը նա հղել է այս բեմից: Հավատում եմ, որ դա մի օրհնություն է, որը նա կուզեր տալ մեզ այսօր, եթեկարողանար լինել մեզ հետ: Նա ասել է. «Հեռանալով այս համաժողովից, ես խնդրում եմ, որ երկնքի օրհնություններն իջնեն յուրաքանչյուրիդ վրա: . . . Ես աղոթում եմ, որ մեր Երկնային Հայրն օրհնի ձեզ և ձեր ընտանիքները: Թող այս համաժողովի ուղերձները և ոգին արտահայտվեն այն ամենի մեջ, ինչ անում եք դուք ձեր տներում, ձեր աշխատավայրում, ձեր ժողովներում և ձեր բոլոր գործերում»:

Նա ավարտեց, ասելով՝ «Ես սիրում եմ Ձեզ: Ես աղոթում եմ ձեզ համար: Թող Աստված օրհնի ձեզ: Թող Նրա խոստացած խաղաղությունը լինի ձեզ հետ այժմ և հավիտյան»:[23]

Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 21.1:
2. Վարդապետություն և Ուխտեր 21.5-6
3. Ջոզեֆ Սմիթը գրել է, որ 1886թ.-ի մարտի 27-ին հետևյալ իրադարձությունը տեղի ունեցավ Կիրթլենդի Տաճարի նվիրագործման ժամանակ.

   «Այնուհետև, ես կարճ ելույթ ունեցա և տարբեր քվորումներին ու Սրբերի ողջ ժողովին առաջարկեցի հաստատել [Առաջին] Նախագահությանը՝ որպես Մարգարեներ և Տեսանողներ և աղոթքներով սատար կանգնել նրանց: Բարձրանալով՝ նրանք բոլորն ուխտ արեցին անել դա:

   Դրանից հետո քվորումներին և Սրբերի ժողովին ես առաջարկեցի հաստատել Տասներկու Առաքյալներին, որոնք ներկա էին, որպես Մարգարեներ, Տեսանողներ, Հայտնողներ և հատուկ վկաներ երկրի բոլոր ազգերի համար՝արքայության բանալիները կրելու, դռները բացելու կամ այնպես անելու, որ դրանք բացվեն. ես առաջարկեցի աջակցել նրանց իրենց աղոթքներով, որին նրանք հավանություն տվեցին՝ ձեռքի բարձրացումով»: (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները . Ջոզեֆ Սմիթ* [2007], 199):
4. Վարդապետություն և Ուխտեր 68.4
5. Վարդապետություն և Ուխտեր 1.38
6. Մի առիթով Նախագահ Հենրի Բ. Այրինգն ասել է.

   «Մարգարեական խորհուրդը չընդունելու ընտրությունը փոխում է հենց այն հողը, որի վրա մենք կանգնած ենք Այն դառնում է ավելի վտանգավոր: Մարգարեական խորհրդին չհետևելը թուլացնում է հետագայում ոգեշնչված խորհուրդ ընդունելու զորությունը: Լավագույն ժամանակը, երբ Տերը որոշեց օգնել Նոյին կառուցել տապանը, այն ժամանակ էր, երբ նա առաջին անգամ խնդրեց Տիրոջը: Դրանից հետո յուրաքանչյուր խնդրանք, յուրաքանչյուր ձախողում կթուլացներ Հոգին զգալու նրա կարողությունը: Եվ այսպիսով, ամեն անգամ նրա խնդրանքն ավելի հիմարկթվար, մինչև անձրևները սկսվեին: Իսկ հետո ուշ կլիներ:

   Ամեն անգամ, երբ ես կյանքում իմ ընտրությամբ հետաձգել եմ ոգեշնչված խորհրդին հետևել կամ որոշել եմ, որ ես բացառություն եմ կազմում, հայտնաբերել եմ, որ ինքս ինձ դրել եմ վտանգավոր ուղու վրա: Ամեն անգամ, երբ ես լսել եմ մարգարեների խորհուրդը, զգացել եմ դրա հաստատումն աղոթքի մեջ և հետևել դրան, ես պարզել եմ, որ շարժվում եմ դեպի ապահովություն»: («Finding Safety in Counsel», *Ensign*, մայիս 1997, 25):
7. Տես Նիլ Լ. Անդերսեն. «Teaching Our Children to Love the Prophets», *Ensign,* ապրիլ. 1996, 47:
8. Երեց Բոյդ Կ. Փաքերը մի անգամ ասել է.

   «Ես լսել եմ, որ Նախագահ Հարոլդ Բ. Լին հայտնության վերաբերյալ խոսքերը սկսում էր այսպես. «Առավոտյան ժամերին, երբ մտածում էի այս խնդրի շուրջ. . .»: Նա սովորություն էր դարձրել հայտնություն պահանջող խնդիրների շուրջ մտածել վաղ առավոտյան ժամերին՝ առույգ վիճակում:

   «Տերը գիտեր և այդ պատճառով Նա ցուցում տվեց Վարդապետություն և Ուխտերում, «դադարեք քնել ավելի շատ, քան անհրաժեշտ է. վաղ մտեք ձեր անկողինը, որպեսզի չհոգնեք. վաղ վեր կացեք, որ ձեր մարմինն ու միտքն առույգ լինեն»: (ՎԱՈ 88.124) . . .

   «Ես հասկացել եմ«Շուտ քնեք, շուտ արթնացեք» ասույթի ուժը: Երբ լարված եմ, դուք ինձ չեք տեսնի արթուն: Ավելի լավ է շուտ քնել և արթնանալ առավոտյան վաղ, երբ կարող ես մոտ լինել Նրան, ով ղեկավարում է այս աշխատանքը» *(Teach Ye Diligently* [2005], 244-45):
9. Նիլ Լ. Անդերսեն, «Դուք բավականաչափ գիտեք», *Լիահոնա*, նոյ. 2008:
10. Թոմաս Ս. Մոնսոն, «Մինչև նոր հանդիպում», *Լիահոնա*, մայիս 2014թ., 115:
11. Թոմաս Ս. Մոնսոն, «Տեր ընդ ձեզ մինչև նոր հանդիպում», *Լիահոնա*, նոյ. 2012, 110:
12. Հովհաննես 10.4
13. Հենրի Բ. Այրինգ. «Մի վախեցեք բարիք գործել», *Լիահոնա,* նոյ. 2017թ., 103:
14. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Տան թախիծ», *Լիահոնա,* նոյ. 2017թ., 22, 24:
15. Ռասսել Մ. Նելսոն. «Վկայություն Մորմոնի Գրքի մասին. Ինչպիսի՞ ն կլիներձեր կյանքն առանց նրա»: *Լիահոնա,* նոյ. 2017, 63:
16. Դալլին Հ. Օուքս. «Ծրագիր և հռչակագիր», *Լիահոնա,* նոյ. 2017թ., 30:
17. Մ. Ռասսել Բալլարդ, «Գաղթը շարունակվում է»: *Լիահոնա,* նոյ. 2017, 106:
18. Սպենսեր Ջ. Կոնդի, *Russell M. Nelson: Father, Surgeon, Apostle* (2003), 215:
19. Սպենսեր Ջ. Կոնդի, *Russell M. Nelson,* 215:
20. Ռասսել Մ. Նելսոն. «Վկայություն Մորմոնի Գրքի մասին. Ինչպիսի՞ նկլիներձեր կյանքն առանց նրա», 61:
21. Հենրի Բ. Այրինգ. «Մի վախեցեք բարիք գործել», 100:
22. Մի առիթով Գորդոն Բ. Հինքլին ասել է.

   «Մտուգարքը կլինի տրված ուսմունքների հիման վրա: Եթե այստուհետ լինենք ավելիբարի, ավելի բարի դրացիական, եթե ավելիմոտենանքՓրկիչին և ունենանք ավելի շատ վճռականություն հետևելու Նրա ուսմունքներին և Նրա օրինակին, ապա այս համաժողովը հրաշալի հաջողության է հասել: Մյուս կողմից, եթե մեր կյանքը չի բարելավվել, ապա խոսնակները մեծ անհաջողություն կկրեն:

   Այդ փոփոխությունները տեսանելի չեն լինի մեկ օր, մեկ շաբաթ կամ մեկ ամիս անց: Որոշումները կայացվում են արագ և արագ էլ մոռացվում: Սակայն, եթե մեկ տարի անց մենք ավելի լավ ենք գործում, քան անցյալում, ապա այս օրերի ջանքերը ապարդյուն չեն լինի» («An Humble and a Contrite Heart», *Ensign,* նոյ. 2000, 88):
23. Թոմաս Ս. Մոնսոն, «Փակման խոսք», *Լիահոնա*, մայ 2010:

## Համաժողովի պատմությունների ցուցիչ

*Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցումների ժամանակ: Նշված համարները ցույց են տալիս ելույթի առաջին էջը:*

| Խոսնակ | Պատմություն |
|---|---|
| **Խոսե Լ. Ալոնսո** | (119) Խոսե Լ. Ալոնսոյի թոռը հարցականի տակ է դնում իր պապիկի սերն իր հանդեպ: Ծնողները, ում որդին մահանում է ավտովթարի հետևանքով, թեթևացնում են իրենց բեռը ներման շնորհիվ: |
| **Նիլ Լ. Անդերսեն** | (122) Սուրբ Հոգին օգնում է երիտասարդ կնոջը ընդունել ամուսնության առաջարկը: Ռասսել Մ Նելսոնն օրհնում է Չինաստանի ժողովրդին՝ հետևելով մարգարեական խորհրդին: |
| **Յան Ս. Արդերն** | (117) Զկնորսը ստանում է վկայություն Մորմոնի Գրքի մասին, երբ ծովում է գտնվում: |
| **Մ. Ռասսել Բալլարդ** | (104) Վերջին Օրերի Սուրբ ռահվիրան՝ Ջեյն Մանինգ Ջեյմսը, հավատարիմ է մնում՝ չնայած դժվարություններին: Մ. Ռասսել Բալլարդի ծոռները տասնամյակներ շարունակ հավատարմորեն ծառայում են: |
| **Ջին Բ. Բինգհեմ** | (85) Ջին Բ. Բինգհեմը անգիր է սովորում «Կենդանի Քրիստոսը»: Խորվաթիայից մի քույր մեկնում է տաճար իր մահացած ամուսնու և ծնողների հետ կնքվելու: |
| **Թեդ Ռ. Քալիսթեր** | (107) Թեդ Ռ Քալիստերի ընկերը վերադառնում է Եկեղեցի Եկեղեցու և Մորմոնի Գրքի մասին վկայություն ստանալուց հետո: |
| **Դ. Թոդ Քրիստոֆերսոն** | (36) Միսիայի նախագահն ապաշխարում է և փոխում իր սիրտը՝ հետևելով երազին: |
| **Քվենթին Լ. Քուք** | (51) Հեբեր Ս. Քիմբալը գնում է Անգլիա՝ ծառայելու միսիայում: Երբ հանդիպում է Թոմաս Բ. Մարշին, Ջոզեֆ Սմիթը ստանում է Վարդապետություն և Ուխտերի բաժին 112-ը: |
| **Սթենլի Գ. Էլիս** | (112) Հայրը և մայրը իրենց երեխաներին ֆինանսական օգնություն չեն տրամադրում ավագ դպրոցն ավարտելուց հետո, դրանով իսկ ուժեղացնելով նրանց: |
| **Շարոն Յուբանկ** | (6) Ապաշխարելով, կինը փոխում է իր ընտանիքի կյանքը: Մարդկային շղթան փրկում է ուժեղ հոսանքի մեջ հայտնված լողորդներին: Երիտասարդ աղջիկը հաղորդագրություն է ուղարկում իրենց ծուխ տեղափոխվող աղջկան: |
| **Դեյվիդ Ֆ. Էվանս** | (68) Երիտասարդ Դեյվիդ Ֆ. Էվանսը գտնում է պատասխաններ ավետարանի հարցերին և ստանում վկայություն Մորմոնի Գրքի մասին: Երիտասարդ կինը վկայություն է ստանում տաճարային արարողությունների մասին: |
| **Հենրի Բ. Այրինգ** | (81) Սարկավագների քվորումի քարտուղարը եկեղեցի է հրավիրում քիչ ակտիվ տղային: Երիտասարդ չափահասն աղոթում է, որ Եպիսկոպոս Հենրի Բ Այրինգը ոգեշնչում ստանա և իրենց խորհուրդ տա: Բրիգամ Յանգը վկայում է Ջոզեֆ Սմիթի մարգարեական կոչման մասին:<br>(100) Հենրի Բ. Այրինգը օրհնվում է, հնազանդվելով Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու Նախագահ Մոնսոնի խորհրդին: Վերջին Օրերի Սրբերն օգնում են աղետից տուժածներին: |
| **Օ. Վինսենթ Հալեք** | (58) Մեծահասակ զույգը զոհաբերություններ է կատարում Եկեղեցուն միանալու համար: Սամոացի ղեկավարը թույլ է տալիս, որ իր գյուղը ստանա ավետարանը: Սամոացի Սրբերը հայտնում են տաճար կառուցելու իրենց ցանկությունը: |
| **Դոնալդ Լ. Հոլսթրոմ** | (88) Կալիֆորնիայում Եկեղեցու մի անդամ հրաշքով փրկվում է ժայռից ընկնելուց հետո: Դեյվիդ Ա. Բեդնարը հարցնում է երիտասարդ տղամարդուն, թե արդյոք նա ունի հավատք, որ չբուժվի: |
| **Ջեֆրի Ռ. Հոլլանդ** | (40) Լև Տոլստոյի պատմվածքում անկատար քահանան պաշտպանում է ուղին, որով անկատար է առաջ գնում: |
| **Ջոյ Դ. Ջոնս** | (13) Սուրբ Հոգին երեք կանանց հաստատում է նրանց աստվածային արժեքը՝ որպես Աստծո դուստրեր: |
| **Ջոնի Լ. Քոչ** | (110) Ջոնի Լ. Քոչը իրեն «մեկ է զգում» բրազիլացի ֆուտբոլային երկրպագուհու հետ: Ջոնի Լ. Քոչը որոշում է «մեկ մնալ» իր եղբայր Սրբերի հետ՝ անկախ ծաղրից: |
| **Նիլ Ֆ. Մերիոթ** | (10) Երեխաների Միության տղաները իրեն միայնակ զգացող դասարանի անդամին բացատրում են, թե ինչու է նա առանձնահատուկ: Նիլ Ֆ. Մերիոթն աղոթում է, որ կարողանա սիրել «դժվար» ազգականին: |
| **Ռիչարդ Ջ. Մեյնզ** | (75) Ռիչարդ Ջ Մեյնզը իր հորից սովորում է երբեք չզիջել, եթե խոսքը գնում է ազնվության, անաչառության մասին: |
| **Ռասսել Մ. Նելսոն** | (60) Ռասսել Մ. Նելսոնը Մորմոնի Գիրք է նվիրում աֆրիկյան մի ցեղի թագավորի: Ռասսել Մ. Նելսոնը հետևում է Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու Նախագահ Մոնսոնի խորհրդին: Վիրաբույժ Ռասսել Մ. Նելսոնը ձգտում է վշտացող ընտանիքի անդամներին սովորեցնել, որ մահը մեր անմահ գոյության մասն է: |
| **Բոննի Լ. Օսկարսոն** | (25) 10 և 17 տարեկանները իրենց ընտանիքի անդամներին ծառայելու ուղիներ են փնտրում: Սփոփող Միության նախագահը իր հարևանին ծառայելու ոգեշնչում է ստանում: |
| **Ստեֆեն Վ. Օուենս** | (48) Ստեֆեն Վ. Օուենը հասկանում է, որ նոր միսիոներները «հավատք են գործադրել ապաշխարության հանդեպ»: Վերադարձած միսիոները աշխատում է իրեն «ճիշտ ուղու» վրա պահել: |
| **Ադիլսոն դե Փոլա Պարելա** | (115) Միսիոներներն ուսուցանում են Փարելայի ընտանիքին, որ նրանք կարող են հավերժ միասին լինել: Ուսանելու տարիներին Ադիլսոն դե Փոլա Փարելան հետևում է կյանքի ընկեր գտնելու մարգարեական խորհրդին: |
| **Ջոն Ք. Փինգրի Կրտսեր** | (32) Եկեղեցու անդամը Նեպալից ծառայում է Նեպալի փախստականներին Յուտայում և օգնում թարգմանել Մորմոնի Գիրքը նեպալերեն: Սուրբ Հոգին օգնում է Ջոն Ք. Փինգրի Կրտսերին հասկանալ «աստվածային հանձնարարությունների» նպատակը: Տերն աշխատում է հոգևոր պարգևների և փորձությունների միջոցով Իր զավակներին օրհնելու համար: |
| **Ռոնալդ Ա. Ռասբենդ** | (55) Ռոնալդ Ա. Ռասբենդի թոռնուհին հուզիչ հանդիպում է ունենում միսիայում գտնվող իր եղբոր հետ: Ռոնալդ Ա. Ռասբենդը Տաճարային Հրապարակում հանդիպում է մի քույր միսիոների, ում օգնել էր միանալ Եկեղեցուն: |
| **Դեյլ Գ. Ռենլանդ** | (64) Դեյլ Գ. Ռենլանդն ուրախ է, որ երիտասարդ տղամարդու քահանայության օրհնությունները վերականգնվեցին: |
| **Գարի Ի. Սթիվենսոն** | (44) Սրբերը տոնում են Նախագահ Մոնսոնի ծննդյան օրը: Արևի լիակատար խավարումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում գերում է միլիոնավոր մարդկանց: |
| **Դիտեր Ֆ. Ուխդորֆ** | (21) Կորած շունը 3220 կիլոմետր է անցնում տուն հասնելու համար: Եկեղեցու վաղ ժամանակների ղեկավարները իրական են դառնում Դիտեր Ֆ. Ուխդորֆի համար, երբ նրա ընտանիքը այցելում է Եկեղեցու պատմական վայրերը: |
| **Վ. Քրիստոֆեր Վադել** | (94) Վադելների ընտանիքի արձակուրդը ամբողջովին շեղվում է ծրագրից: Վերջին Օրերի Սուրբը, ով կուրացել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, իրենից հետո իր սերնդին թողեց Տիրոջ հանդեպ հավատքի, ծառայության և վստահության ժառանգություն: |
| **Վ. Քրեյգ Ցվիք** | (97) Սուրբ Հոգին օգնում է Քրեյգ Ցվիքին հասկանալ անգրագետ միսիոների կարիքները: Մահից առաջ որդու կենտրոնացումը Փրկիչի վրա օգնում է ընտանիքին ուրախությամբ նայել հաջորդ կյանքին: Կինը լցվում է ուրախությամբ և սիրով, երբ թույլ է տալիս, որ ամուսնու հանդեպ բացասական զգացմունքները հեռանան: |

## Երեց Խուան Ա. Ուսեդա

*Յոթանասունի Նախագահություն*

Պերուի Մաչու Պիկչու ավերակները մագլցելիս, երիտասարդ միսիոներ երեց Խուան Ա. Ուսեդան սայթաքել էր նեղ արահետից: Հուսահատ կառչելով մի քանի ճյուղերից և կախված լինելով գետի վերևում 2000 ոտնաչափ (610մ) բարձրությամբ անդունդի վրա, նա ի սրտե աղոթել էր օգնության համար: Նա ասել է, որ նույն օրը առավոտյան աղոթել էր իր շուրթերով, սակայն երբ մոտ էր կործանմանը, աղոթեց սրտով: Այն պահին, երբ նա արդեն ընկնում էր, մյուս միսիոները միանգամայն անվտանգ քաշեցհանեց նրան այդտեղից:

Նա ասել է. «Ամենամեծ դասերից մեկն այն էր, որ ես պետք է միշտ, միշտ աղոթեմ «մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք [գործադրելով] առ Քրիստոս» (Մորոնի 10.4):

Երեց Ուսեդան հաստատվել է որպես Յոթանասունի Բարձրագույն Իշխանավոր 2010թ. ապրիլի 3-ին: 2017թ. օգոստոսի 1-ին Յոթանասունի նախագահություն կանչվելու պահին երեց Ուսեդան ծառայում էր Միսիոներական Բաժանմունքում որպես գործադիր տնօրենի տեղակալ, ինչպես նաև որպես Հյուսիսային Ամերիկայի արևելյան հատվածի տարածքային օգնական:

2010-2013թթ. նա ծառայել է Հարավային Ամերիկայի հյուսիս-արևմտյան տարածաշրջանում որպես նախագահության խորհրդական, իսկ 2013-2016 թվականներին՝ որպես նույն տարածաշրջանի նախագահ:

Երեց Ուսեդան ուսումը ստացել է Պերուում: Նա ուսանել է Լիմայի Խոսե Կառլոս Մարիատեգուի ինստիտուտում, որտեղ ուսումնասիրել է հաշվապահություն և հասարակական հարաբերություններ: Նա Սան Լուիս Գոնզագայի համալսարանի շրջանավարտ է, որտեղ նրան շնորհվել է հասարակական հարաբերությունների բակալավրի աստիճան:

Երեց Ուսեդան աշխատել է Եկեղեցու կրթական համակարգում որպես Պերուի և Բոլիվիայի տարածաշրջանների տնօրեն: 2003 թվականին նա Պերուից տեղափոխվել է Նյու Ջերսի (ԱՄՆ)՝ օգնելու իր հորը ընտանեկան բիզնեսում:

1972 թվականին Եկեղեցուն միանալուց հետո երեց Ուսեդան ծառայել է բազմաթիվ կոչումներում, այդ թվում եղել է Լիմա Պերու միսիայի լիաժամկետ միսիոներ, ցցի նախագահ, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդի անդամ, ցցի նախագահության խորհրդական, ցցի նախագահ, Լիմա Պերու Հյուսիսային Միսիայի նախագահ (1992-1995) և Տարածքային Յոթանասունական:

Նա ամուսնացել է Մարիա Իզաբել Բենդեզուի հետ 1979թ. մարտին: Նրանք հինգ երեխաների ծնողներ են: ■

## Երեց Պատրիկ Քիրոն

*Յոթանասունի Նախագահություն*

Եվրոպայի Տարածաշրջանի Նախագահի պաշտոնում ծառայելիս Երեց Պատրիկ Քիրոնը ականատես է եղել պատերազմից տուժած Մերձավոր Արևելքից դեպի Եվրոպա ճամփորդող երկու միլիոն փախստականների ճամփորդությանը: «Նրանց աչքերին նայելուց ու ահաբեկումներից, փախուստի և ապաստան գտնելու համար նրանց վտանգավոր ճամփորդության մասին պատմությունները լսելուց հետո ես երբեք էլ նույնը չեմ լինի,– ասել է նա: Ոգեշնչված էի, ականատես լինելով, թե աշխարհի բոլոր ծայրերում գտնվող Եկեղեցու անդամներն ինչպես են շռայլ նվիրատվություններ կատարում օգնելու համար այս անհատներին ու ընտանիքներին, ովքեր մեծ կորուստներ են ունեցել»:

Երեց Քիրոնը, որ հաստատվել է որպես Յոթանասունի Բարձրագույն Իշխանավոր 2010թ. ապրիլի 3-ին, կանչվել է Յոթանասունի Նախագահություն 2017թ. օգոստոսի 1-ին:

Երեց Քիրոնը ծնվել է 1961թ. հուլիսին Փադի և Պատրիշա Քիրոնների ընտանիքում, Քարլայլում, Քամբերլենդ, Անգլիա: Քանի որ նրա հայրը ծառայում էր Բրիտանիայի Թագավորական Օդային Ուժերում, Երեց Քիրոնը սովորել է Միջին Արևելքում և Միացյալ Թագավորությունում:

Եկեղեցին ուսումնասիրելու ժամանակ նա մի անգամ կարդաց Մորմոնի Գրքում. «Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.25): «Սուրբ գրության այդ հատվածը հնչում էր իմ ականջներում», – ասում է երեց Քիրոնը: «Նրանց մեջ, ում ես հանդիպել էի, տեսել էի, թե որքան կարող է մեր կյանքը մեծապես հարստանալ, եթե հետևենք ուրախ լինելու Փրկիչի խորհրդին»: Նա միացել է Եկեղեցուն 1987 թվականի Սուրբ Ծննդյան նախօրեին:

Անգլիայում Բրիգամ Յանգ Համալսարանում ուսանելու տարիներին նա հանդիպել է Ջենիֆեր Քերոլ Հալմին: Նրանք ամուսնացել են Օքլենդ Կալիֆորնիա Տաճարում 1991 թվականին և ապրում էին Անգլիայում մինչև 2010 թվականին նրա կանչվելը: Նրանք ունեն չորս զավակ:

Երեց Քիրոնը ապրել է Միացյալ Թագավորությունում, Սաուդյան Արաբիայում և Միացյալ Նահանգներում, աշխատել է տարբեր բնագավառներում, ներառյալ՝ առողջապահության, սննդի, տրանսպորտի, ավտոմոբիլային, ինչպես նաև ունեցել է իր սեփական գործը կապի ոլորտում:

Երեց Քիրոնը ծառայել է Եկեղեցու բազմաթիվ կոչումներում, այդ թվում՝ որպես ծխի գործավարի օգնական, ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, եպիսկոպոսության խորհրդական, ճյուղի նախագահ, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: ■

# Օգնություն դժվար պահերին

Ջյուսթոնում (Տեխաս, ԱՄՆ) փոթորիկից և ջրհեղեղից հետո մի տարեց կին տեսավ, որ Վերջին Օրերի Սրբերը «օգնող ձեռքեր» գրությունով դեղին վերնաշապիկներ հագած, օգնության են հասնում աղետի զոհերին: «Ես գիտեի, որ մորմոնները գալու են», – ասաց նա:

Այս իրադարձությունը, որի մասին ֆեյսբուքյան էջում գրել է Տեխաս Հյուսթոն Հարավային Միսիայի նախագահ Ահարոն Թ. Հոլը, ցույց է տալիս, թե ինչպես է Եկեղեցին դժվարությունների ժամանակ օգնության գալիս թե՛ անդամներին, և թե՛ հարևաններին: «Տիրոջ Եկեղեցու անդամների համար չափազանց մեծ մարտահրավեր չկա», – գրել է Նախագահ Հոլը:

Աղետների ժամանակ Եկեղեցին առաջիններից մեկն է արձագանքողների թվում և տուժած տարածքներում Եկեղեցու մարդասիրական օգնությունը հաճախ շարունակվում է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարատև վերականգնման ծրագրերով՝ ինքնապահովման վերականգնման նպատակով: Տեղական ղեկավարները համագործակցում են Եկեղեցու վարչական գրասենյակի հետ՝ կարիքների գնահատման և դրանք ապահովելու նպատակով, ինչպես նաև կազմակերպում են անդամներին ռեսուրսների բաշխման, մաքրման, վերականգնման և վերակառուցման աշխատանքներ տանելու համար:

ՎՕՍ բարեգործությունների միջոցներով, ինչպես նաև համագործակցելով տուժած տարածքներում հաստատված բարեգործական գործակալությունների հետ, Եկեղեցին վերջերս օգնություն է ցուցաբերել բազմաթիվ տուժածների՝ Պերուի ջրհեղեղից, Սիերա Լեոնեի սողանքներից, Մոնտանայի (ԱՄՆ) և Ալբերտայի (Կանադա) անտառային հրդեհներից, Տեխասի, Ֆլորիդայի և Կարիբյան կղզիների փոթորիկներից, ներառյալ Պուերտո Ռիկոյի, Հաիթիի և Դոմինիկյան Հանրապետության, օգնություն է ցուցաբերվել նաև Մեքսիկայի երկու ուժեղ երկրաշարժերից տուժածներին:

Սեպտեմբերին Եկեղեցին հայտարարեց, որ շուրջ 11 մլն ԱՄՆ դոլար կտրամադրի Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի ութ երկրներում սովի նվազեցման և սովյալ երեխաների կերակրման ծրագրերին: ՎՕՍ բարեգործությունները համագործակցում է 11 կազմակերպությունների հետ, 25 ծրագրերի շրջանակներում՝ օգնությունը բաշխելու նպատակով:

ՎՕՍ բարեգործությունները 1985 թվականից ի վեր 189 երկրներում միլիոնավոր մարդկանց աջակցություն է ցուցաբերել մոտ 2 մլրդ դոլարի չափով, սկսած Եթովպիայում սովի զոհերին տրամադրված օգնությունից: ■

*Նրանք, ովքեր ցանկանում են նվիրաբերել Եկեղեցու մարդասիրական օգնության հիմնադրամին, կարող են դա անել տասանորդի թերթիկը լրացնելով:*

## Նվիրագործվել են երեք տաճարներ

2017 թվականի ապրիլյան գերագույն համաժողովից հետո նվիրագործվել և վերանվիրագործվել են երեք տաճարներ: Փարիզ Ֆրանսիա Տաճարը նվիրագործվել է մայիսին, Այդահո Ֆոլզ Այդահո Տաճարը (ԱՄՆ)՝ հունիսին և Տուքսոն Արիզոնա Տաճարն (ԱՄՆ)՝ օգոստոսին:

Մերիդիան Այդահո Տաճարը (ԱՄՆ) կնվիրագործվի 2017 թվականի նոյեմբերի 19-ին, Սեդար Սիթի Յուտա Տաճարը (ԱՄՆ)՝ դեկտեմբերի 10-ին և Ջորդան Ռիվեր Յուտա Տաճարը (ԱՄՆ)՝ կվերանվիրագործվի 2018 թվականի մայիսի 20-ին:

Հայտարարվել է նախագծերի կամ նախապատրաստման և շինարարական աշխատանքները շարունակելու մասին աշխարհում 23 տաճարների համար: Վեց տաճար այս պահին փակ են վերանորոգման նպատակով և հինգ տաճար ծրագրված է փակել նույն նպատակով 2018 թվականին: ■

*Նորություններին կարող եք ծանոթանալ **temples.lds.org** կայքում:*

# Մարգարեները և առաքյալները ծառայում են ամբողջ աշխարհում

Մարգարեներն ու առաքյալները կանչված են որպես «Քրիստոսի անվան հատուկ վկաները ողջ աշխարհում» (ՎԱՌ 107.23)։ Ահա որոշ մանրամասներ նրանց գործունեությունից ապրիլի գերագույն համաժողովից հետո։

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը համեստ նշել է իր ծննդյան 90-ամյակը **Յուտայում (ԱՄՆ),** օգոստոսի 21-ին։ Նա կրկին արտահայտել է ծննդյան օրվա ցանկությունը, որը նախկինում էր ասել՝ որ լավագույն նվերը նրա համար կլիներ այն, որ մարդիկ «գտնեին մի մարդու, ով նեղության մեջ է, հիվանդ է կամ միայնակ և մի լավ բան անեին նրա համար»։

Համիլտոնում, **Նոր Զելանդիա,** Նախագահ Հենրի Բ. Այրինգը շենքեր է նվիրագործել Թեմփլ Վյու թաղամասում, որոնք նախկինում Նոր Զելանդիայի Եկեղեցու քոլեջի շենքերն էին։ Իրմա փոթորիկից հետո նա այցելել է **Պուերտո Ռիկո, Սան Թոմաս,** և եկեղեցու կամավորներին, ովքեր ներգրավված էին մաքրման աշխատանքներում **Ֆլորիդայում (ԱՄՆ)**։

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը այցելել է **Տեխաս, ԱՄՆ** և տեսել է Հյուսթոնի Վերջին Օրերի Սրբերի թիմերը, որոնք աշխատում էին կողք կողքի մյուսների հետ Հարվեյ փոթորիկից հետո, ասելով, որ «ես կարող եմ օգնել» տրամադրվածությունը բնորոշ է Վերջին Օրերի Սրբերին ամբողջ աշխարհում։

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը **Նեբրասկայի (ԱՄՆ)** նահանգապետին նվիրել է ընտանեկան պատմության մի հատոր, այցելել է ղեկավարներին և միսիոներներին **Նյու Յորքում (ԱՄՆ)** և պատմել է ինստիտուտի ուսանողներին **Յուտայում**, որ Աստվածաշունչը «լեցուն է մարգարեություններով. . . վերականգնման մասին»։

**Ճապոնիայի** և **Կորեայի** անդամներին այցելելուց հետո Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է. «Տերը հոգ է տանում Իր զավակների համար։ Նա գիտի նրանց հանգամանքները և մտահոգությունները ու գթառատ է Իր սիրո մեջ»։ Կորեայում «Դեմ առ Դեմ» հանդիպման ժամանակ Երեց Օուքսը պատասխանել է երիտասարդների հարցերին։ Նա հանդիպել է նախարարի հետ 2020 թվականին Տոկիոյում անցկացվելիք օլիմպիական խաղերի հարցերով։ **Պերուի** նախագահի խնդրանքով Երեց Օուքսը հանդիպել է նրան, որ ստանա նախագահի շնորհակալագրերը ջրհեղեղի ժամանակ Եկեղեցու ցուցաբերած օգնության համար։

**Յուտայում** Երեց Բալլարդը խրախուսել է երիտասարդ ամուրիներին, որ հանգստության օրն ընդունեն որպես «հրաշալի և փառահեղ ժամանակ» և ուսումնասիրեն Եկեղեցու հիմնարար սկզբունքները և վարդապետությունները։ Նա ասել է տաճարի աշխատողներին, որ այսօր կառուցվող տաճարները կգործեն նաև Հազարամյակի ժամանակ։ Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդի հետ միասին նա այցելել է **Տեխաս**՝ քաջալերելու կամավորներին մաքրել փոթորիկի և ջրհեղեղի վնասները։

Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը ստացել է «2017թ. Առաջադիմության պիոներներ» Նախագահի պարգևը **Յուտայի** համայնքային կազմակերպություններից մեկի կողմից։ «Միմյանց օգնել, բարձրացնել, ամրապնդել կարողանալը ռահվիրա լինելու լավագույն հատկանիշն է», – ասել է նա։

**Ռուսաստանում** և **Ուկրաինայում** Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը ուսուցանել է, որ կյանքը ենթադրում է փորձություններ, սակայն ավետարանը հեռանկար, հույս և քաջալերանք է տալիս։ **Անգլիայում** կրոնական հալածանքներին նվիրված Վինդզոր քաղաքում անցկացվող երկրորդ համաժողովի ժամանակ Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է, որ հավատքը շատերին է օգնում ազատվել փախստականի կարգավիճակից և օգտակար լինել հասարակությանը։ Համաժողովից հետո նա խորհուրդ տվեց Եկեղեցու անդամներին, միսիայի նախագահներին և միսիոներներին **Պորտուգալիայում** և **Իսպանիայում**։

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն այցելել է Արևմտյան Աֆրիկայի այն 3 երկրները, որտեղ նախկինում չի այցելել որևէ Առաքյալ. **Սենեգալ,** որտեղ նա ասել է նվիրագործման աղոթքը, **Գվինեա** և **Մալի:** Նա նաև հանդիպել է **Նիգերիայի** և **Գանայի** անդամների հետ։ Համաշխարհային հոգևոր երեկոյի ժամանակ, որը մեկնարկել է **Հյուսիսային Կարոլինայում (ԱՄՆ)**, Երեց Բեդնարը խրախուսել է չափահաս երիտասարդներին իրենց հավերժական ընտանիքի շղթայում «եռակցման օղակ» լինել։

Երեց Քվենթին Լ. Քուքը հանդիպել է **Թայվանի, Հոնկոնգի, Հնդկաստանի** և **Թաիլանդի** անդամների ու միսիոներների հետ, նշելով, որ «անդամները ոգևորված են Եկեղեցով, կենտրոնանալով տաճարային և միսիոներական աշխատանքի վրա»։ **Նյու Ջերսիում (ԱՄՆ)** նա ելույթ է ունեցել Սեյմուրի ինստիտուտի սեմինարին՝ կրոնական ազատության թեմայով։ «Մենք պետք է շարունակենք մեր տևական և վճռական ջանքերը՝ խթանելով բարոյականությունը և պաշտպանելով ընտանիքները», – ասել է նա։ **Կալիֆորնիայում (ԱՄՆ)** նա խրախուսել է հասարակության իրավական դաշտի անդամներին պահպանել հավատքը և հավասարակշռությունը կյանքում և պաշտպանել կրոնական ազատությունը։

**Էկվադորում** և **Կոլումբիայում** Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է, որ Քրիստոսի հարության հանդեպ հավատքը կմխիթարի և կաջակցի մեզ։ **Հնդկաստանում** նա ստացել է Խաղաղության Համաշխարհային մրցանակ՝ ներկայացնելով Եկեղեցին և նեպալերենով Մորմոնի Գրքի օրինակներ է նվիրել **Նեպալի** նախագահին և փոխնախագահին, ինչպես նաև Կատմանդու ճյուղին։

*Ժամացույցի սլաքի ուղղությամբ, վերևի ձախից. Նախագահ Հենրի Բ. Այրինգը մասնակցում է Նոր Զելանդիայի Թեմփլ Վյու թաղամասի նվիրագործմանը, Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը ողջագուրվում է «օգնող ձեռքեր» ծրագրի երիտասարդ մասնակցի հետ Տեխասի (ԱՄՆ) Հարվեյ փոթորիկից հետո, Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը զրուցում է բարոնուհի Էմմա Նիքլսնի հետ կրոնական հալածանքներին նվիրված Վինդզորի երկրորդ համաժողովի ժամանակ, Երեց Ռոնալդ Ռասբենդը Հարավային Կորեա իր այցի ժամանակ ողջունում է մի քրոջ, Երեց Քրիստոֆերսոնը ողջունում է Հնդկաստանի Քենջալի Կամալաբայ Ջոշիի դպրոցի աշակերտներին, Երեց Քվենթին Լ. Քուքը այցելում է Թայվանի Եկեղեցու անդամներին։*

Փոթորիկներից և ջրհեղեղներից մի քանի ամիս առաջ Երեց Նիլ Լ. Անդերսենը այցելել էր **Պուերտո Ռիկո, Հաիթի** և **Դոմինիկյան Հանրապետություն**, ելույթ ունենալով ինքնապահովման, կրթության և տաճարային օրհնությունները ստանալուն պատրաստվելու մասին։ **ԱՄՆ-ի Արիզոնա** նահանգի Արիզոնայի պետական համալսարանում ՎՕՍ Ընտանեկան կրթության երեկոյի ժամանակ նա կոչ է արել Վերջին Օրերի Սրբերին «բացել դռները, հարգել մյուսների համոզմունքները [և] ավելին իմանալ նրանց մասին»։ Երեց Անդերսենը հիմնել է 100-րդ ցիցը **Ֆիլիպիններում** և նվիրագործել միսիոներների ուսուցման ընդլայնված կենտրոնը Մանիլայում։

**Հարավային Աֆրիկայում** և **Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում** Երեց Ռոնալդ Ռասբենդը ասել է, որ Աֆրիկայում երեք գործող տաճարներով և հինգ այլ շենքերով, որոնք կառուցվում են կամ հայտարարվել են, «Տերը պատրաստում է աֆրիկյան ժողովրդին ստանալու Իր բոլոր օրհնությունները»։

Երեց Գարի Ս. Սթիվենսոնը այցելել է **Վանուատու, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Ֆրանսիական Պոլինեզիա** և **ԱՄՆ-ի Հավայան կղզիների** Բրիգամ Յանգ Համալսարան։ «Եթե մենք նայենք մեր դժվարություններին ավետարանի տեսանկյունից, կգտնենք պատասխաններ, որոնք մեզ տալիս են երջանկություն և ուրախություն», – ասել է նա։ Նա հանդիպել է Վանուատուի նախագահին և վարչապետին, ինչպես նաև Պապեթեի արքեպիսկոպոսին (Թահիթի)։

Երեց Դեյլ Գ. Ռենլանդը հունիսին այցելել է հինգ երկրներ՝ **Գվատեմալա, Կոստա Ռիկա, Էլ Սալվադոր, Նիկարագուա** և **Հոնդուրաս**։ Նա կազմակերպել է առաջին քեքչի լեզվով խոսող ցիցը Գվատեմալայում և մասնակցել կրոնական ազատությանը նվիրված համաժողովին, ինչպես նաև երիտասարդական համաժողովին։ Օգոստոսին նա և նրա կինը՝ քույր Ռութ Լ. Ռենլանդը մասնակցել էին Առաջին «Դեմ առ Դեմ» միջոցառմանը, որը մեկնարկել էր **Աքրայում (Գանա)**, իսկ սեպտեմբերին նա կոչ է արել **ԱՄՆ-ի Այդահո** նահանգի Բրիգամ Յանգ Համալսարանի ուսանողներին ապավինել Քրիստոսի վարդապետությանը։ ■

*Եկեղեցու այս ղեկավարների ծառայության մասին թարմ տեղեկությունները կարելի է տեսնել նրանց ֆեյսբուքյան էջերում և **prophets.lds.org-ում:***

# Միջոցներ լսողական խնդիրներ ունեցողների համար

«Լսողական խնդիրներ ունեցող անդամներին աջակցելու նպատակով տաճարներում և հավաքատներում առկա են Եկեղեցու կողմից տրամադրվող տեխնոլոգիաներ», – ասվում է 2017 թվականի սեպտեմբերի 14-ին ամբողջ աշխարհի եկեղեցու ղեկավարներին ուղղված նամակում: «Ղեկավարները պետք է ծանոթ լինեն այդ տեխնոլոգիաներին և հավաստիանան, որ բոլոր այն մարդիկ, որոնց այդ սարքավորումները հարկավոր են, տեղեկացված լինեն այդ մասին և կարողանան օգտվել դրանցից»:

Տաճարներում լսողական խնդիրներ ունեցող անդամները կարող են խնդրել այդ պարագաները, որոնք աշխատում են տաճարում հեռարձակվող ինֆրակարմիր համակարգի միջոցով: Հավաքատներում անդամները կարող են մուտք գործել ռադիոհաճախականության համակարգ (1) ռադիոհաճախականության (ՌՀ) օժանդակ ընդունիչների, գրպանի սարքերի միջոցով, որոնք օգտագործում է հավաքատունը կամ ականջակալին ձայնը հասցնող ուժեղացուցիչի միջոցով, որը կլինի հավաքատանը կամ մշակութային սրահի աուդիո համակարգում, կամ (2) աջակցվող (ALS) լսողական համակարգի միջոցով, որն իրենից ներկայացնում է պարանոցի օղակներ, որոնք հաղորդում են ձայնը անմիջապես անհատի T-coil լսողության սարքին:

Ծանուցումը հավելյալ հրահանգում է, որ «ծխերն ու ճյուղերը պետք է ունենան շատ [ՌՀ] ընդունիչներ և [ALS] պարանոցի օղակներ: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ սարքեր կարող են պատվիրվել ցցի շինությունների և հարմարությունների ներկայացուցչի միջոցով: ■

*Լսողությանն օժանդակող համակարգի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ* ***mhtech.lds.org****. կայքից: Լսողության կորստի, խլության և ժեստերի լեզվի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ* ***disabilities.lds.org****. կայքից:*

# Սուրբ գրությունների նոր թարգմանություններ

Վերջին մի քանի տարիների ընթացքում սուրբ գրությունների նոր թարգմանությունների հաստատված ծրագրերը ներառում են Մորմոնի Գիրքը բիրմայերեն, էֆիկ, վրացերեն, նավախո, պոնպեյան, սեսոտո և թշիլուբա, ինչպես նաև սուրբ գրությունների եռահատորը ամերիկյան նշանների լեզվով, աֆրիկերեն, ամհարերեն, արաբերեն, բիսլամա, հունարեն, հիլիգայնոն, հինդի, հմոնգ, լաո, լինգալա, մալայերեն, պարսկերեն, լեհերեն, սերբերեն, սեթսվանա, սինհալա, սլովակերեն, սլովեներեն, թաիթերեն, թամիլերեն, տելուգու, թոքփիս, թուրքերեն, թվի, ուրդու և յորուբա լեզուներով:

2017 թվականի հոկտեմբերի 9-ի նամակում Առաջին Նախագահությունը թվարկել է այս ծրագրերը և ներկայացրել նոր գործընթաց, որը թույլ կտա անհատներին ուսումնասիրել թարգմանությունների նախագծային տարբերակները, նախքան դրանց վերջնական հրատարակումը:

«Թարգմանության գործընթացին զուգահեռ ավարտուն հատվածները կարող են հերթականությամբ հրատարակվել», – նշվում է նամակում: «Այս հաջորդական հատվածները, թեև վերջնական չեն համարվում, մինչև ամբողջ թարգմանությունն ավարտվի, մատչելի կլինեն *LDS.org* -ում և Gospel Library բջջային հավելվածում»: Ընտրված մի քանի լեզուների նախնական թողարկումը կսկսվի 2017թ. նոյեմբերի 30-ին: Երբ անհրաժեշտ ստուգումներով և հաստատումներով թարգմանությունն ավարտվի, ավելի վաղ թողարկված հերթական հատվածները կփոխարինվեն վերջնական տարբերակներով, որից հետո կհետևեն տպագիր հրատարակությունները:

Թարգմանությունների նախնական տարբերակների գործընթացը մի քանի տարի է տևում, մինչև սուրբ գրությունների ուղերձները մանրակրկիտ թարգմանվեն: Հետևաբար, նախագծերը ներկայումս տարբեր փուլերում են: Հաստատված նախագծային թարգմանությունների սկզբնական թողարկումը կներառի այն բովանդակությունը, որը թարգմանվել է և հետո վերանայվել տեղական ղեկավարների կողմից: Թարգմանությունների լրացուցիչ հատվածներ կշարունակվեն պարբերաբար թողարկվել: Թարգմանությունները, որոնք ընթացքում մոտենում են ավարտին, չեն ունենա հրատարակված նախագծեր:

Առաջին Նախագահությունը խնդրում է, որ քանի դեռ թարգմանչական ծրագրերը ընթացքի մեջ են կամ սպասվում են, անդամներն ու ղեկավարները «շարունակեն օգտագործել Հավատո Հանգանակների, հաղորդության աղոթքների և մկրտության աղոթքի ներկայիս թարգմանությունը, մինչև նոր թարգմանություններն ավարտվեն»:

Սուրբ գրությունների ՎՕՍ հրատարակությունները թարգմանված և մատչելի են լեզուների հետևյալ քանակով. Աստվածաշունչը՝ 3, Աստվածաշնչի նախընտրելի ոչ ՎՕՍ հրատարակությունները՝ 95, Մորմոնի Գիրքը՝ 90, Մորմոնի Գրքից ընտրված հատվածներ՝ 21, Վարդապետություն և Ուխտեր և Թանկագին Մարգարիտ՝ 58: ■

# Միսիոներների պատրաստման կենտրոն

Միսիոներների պատրաստման նոր կենտրոնը Ակկրայում (Գանա) և ընդլայնված կենտրոնը՝ Պրովոյում (ԱՄՆ, Յուտա) ցույց են տալիս միսիոներական ծառայության անսպառ կարևորությունը:

Վերջերս ավարտված Գանայի ՄՊԿ-ն, որը գտնվում է Ակրա Գանա Տաճարի հարևանությամբ, տեղավորում է 320 միսիոներ և դեռ ընդլայնվելու տեղ ունի: Մեծ շենքը տեղավորում է միսիոներներին, որոնք Աֆրիկայի արևմուտքից և հարավ-արևելքից են, ինչպես նաև ամբողջ աշխարհից եկող միսիոներներին, որոնք կանչվել են ծառայելու Աֆրիկայում: Նոր կառույցները նպաստում են, որ միսիոներները սովորեն իրենց մայրենի լեզվով՝ անգլերենով կամ ֆրանսերենով և սովորեն այն տարածքի լեզուն և մշակույթը, որտեղ նրանք պատրաստվում են աշխատել:

Ֆիլիպինների ՄՊԿ-ի ընդլայնումը կրկնապատկել է դրա հնարավորությունները՝ ընդունելով մինչև 280 միսիոներներ: Ավելացել է երկու նոր շենք՝ հինգ շենքերից բաղկացած համալիրում, որը գտնվում է Ֆիլիպինների տարածքային գրասենյակների կողքին՝ դեպի Մանիլա Ֆիլիպիններ Տաճար տանող փողոցում: 1983 թվականին Ֆիլիպինների ՄՊԿ-ի բացումից ի վեր այն ծառայել է 60 ազգություններից եկող ու գնացող միսիոներներին:

Պրովո քաղաքի ՄՊԿ-ի ընդլայնումը ներառում է երկու նոր վեց հարկանի շենքեր, որոնցից յուրաքանչյուրում կան 200 նոր դասարաններ, 100-ից ավելի դասարաններ, որոնք գործնական դասերի համար են և 13 համակարգչային լաբորատորիաներ, որտեղ միսիոներները ուսուցում են անցնում, նախքան կուղարկվեն աշխարհի այն վայրը, ուր նշանակվել են: Պրովոյի ՄՊԿ-ն հնարավորություն ունի ուսուցանելու ավելի քան 3,700 երիտասարդ տղամարդկանց, կանանց և ավագ միսիոներների:

Եկեղեցին ունի 15 միսիոներների պատրաստման կենտրոններ աշխարհի տարբեր վայրերում: ■

*Գանայի միսիոներների պատրաստման նոր կենտրոնի հրահանգիչը լսում է, թե ինչպես են միսիոներները քննարկում ավետարանի ուսուցման եղանակները:*

## Քույր Բինգհեմը ՄԱԿ-ում

2017 թվականի ապրիլի 13-ին, ելույթ ունենալով Նյու Յորք Սիթիում կայացած Միացյալ Ազգերի Կազմակերպության հավատքին նվիրված խմբային քննարկմանը, Սփոփող Միության գերագույն նախագահ Ջին Բ. Բինգհեմը հույս է հայտնել, որ կրոնական կազմակերպությունները «միասին կաշխատեն և փոքր ու հասարակ միջոցներով արտասովոր արդյունքների կհասնեն»:

«Կենտրոնանալ հավատքի վրա» տարեկան ճեպազրույցի ժամանակ Քույր Բինգհեմը խոսել է փախստականներին ուղղված Եկեղեցու մարդասիրական ջանքերի մասին և անկեղծ գոհունակություն է հայտնել բոլոր նրանց, ովքեր ներգրավված են տառապանքները նվազեցնելու «դժվարին, բայց հատուցվող աշխատանքում» ամբողջ աշխարհում:

Քույր Բինգհեմը վերջերս աշխատանքային այցով գտնվում էր Ուգանդայում, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) կողմից Քույր Շարոն Յուբանկի հետ, ով Սփոփող Միության Գերագույն Նախագահության առաջին խորհրդականն է և ՎՕՍ Բարեգործությունների տնօրենը: Քույր Յուբանկը մասնակցել է նաև Նյու Յորքում կայացած հանդիպմանը: ■

*Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչ կարող եք անել փախստականներին օգնելու նպատակով, այցելեք* ***IWasAStranger.lds.org***:

# Նոր ուղղություն Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ժողովների համար

*Նոր ուսումնական ծրագիրը հիանալի փոփոխություններ է մտցնում մեր կիրակնօրյա ժողովներում, որոնք կառուցված են «Ուսուցանել Փրկիչի ձևով» ծրագրի վրա: Մեր առաջին կիրակնօրյա ժողովին միասին կիսորհրդակցենք մեր պարտականությունների, հնարավորությունների և խնդիրների շուրջ, որոնց բախվում ենք Տիրոջ աշխատանքը կատարելիս: Մյուս կիրակիներին «Եկեղեցու նախագահների ուսմունքները» նոր ձևնարկից ուսուցանելու փոխարեն մենք կկենտրոնանանք վերջին գերագույն համաժողովի ուղերձների և մեր Եկեղեցու բարձրագույն ղեկավարների կողմից ընտրված հատուկ թեմաների վրա: Սակայն այդ փոփոխությունները միայն ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ չեն: Նոր ուսումնական ծրագիրը ընդգրկում է նաև այն, թե ինչպես ենք մենք պատրաստվում, ուսուցանում, խորհրդակցում, միասին սովորում, ոգեշնչում ստանում և գործում համաձայն դրա: Անդամներն ու ղեկավարները Մեքսիկայում և ԱՄՆ-ի Յուտայում, Կալիֆորնիայում և Ջորջիայում մասնակցել են նոր նյութերի փորձարկմանը: Ահա որոշ մանրամասներ նրանց փորձից.*

«Ի՞նչ եմ անելու առանց ձեռնարկի», – մտածել է Նենսի Ֆերագենը՝ Սփոփող Միության ուսուցիչը, երբ առաջին անգամ ընթերցել է *«Եկ, հետևիր ինձ ուղերձը Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության համար»* նյութը: «Սկզբում խուճապի մեջ էի», – խոստովանել է նա: «Այնուհետև մի միտք ծագեց. Տերը ցանկանում է, որ ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենանք ինքնուսուցման հարցին և մեծացնենք մեր հոգևորությունը՝ որպես եղբայրներ և քույրեր ավետարանում»:

« Անվստահ ես զգում քննարկում վարելու գալ առանց մեծաքանակ նյութերով պատրաստվելու և միայն Տիրոջ վրա հույս դնելով, – ասել է Սփոփող Միության նախագահ Լինդա Հարմոնը, – բայց եթե պատրաստվել եք աղոթքով, ուսումնասիրությամբ, տաճար գնալով և էլի ինչ-որ եղանակներով, ապա զարմանալի կերպով դուք ոգեշնչված կլինեք դա կատարելու»:

## ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ՓՐԿԻՉԻ ՁԵՎՈՎ

«Նոր ուսումնական ծրագրի մարտահրավերներից մեկն այն է, որ մարդիկ չուսուցանեն հին ձևով», – ասել է եպիսկոպոս Բոյդ Ռոբերթսը: «Մենք պարզապես պետք է դադարենք տեղեկատվություն տարածել, դուրս գանք այդ ուղուց և թույլ տանք, որ Հոգին ուսուցանի»:

«Դա ուսուցանելու նոր եղանակ է, որը կարող է դժվար լինել որոշ մարդկանց համար», – ասել է Սփոփող Միության նախագահ Լիզա Սմիթը՝ անդրադառնալով *«Ուսուցանել Փրկիչի ձևով»* ծրագրին: «Դրա համար կարևոր է ձևավորել ուսուցման լավ մեթոդներ և խրախուսել ղեկավարներին հետևողականորեն հաճախել ուսուցիչների խորհրդի ժողովներին», – ասել է նա:

## ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՎ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ

Դեյվիդ Մայքլսոնը՝ քահանայապետերի խմբի ուսուցիչը, ասել է, որ Վարդապետություն և Ուխտեր 88.78-ում գրված «ուսուցանել ջանասիրությամբ» արտահայտությունը վերաբերում է մեր նախապատրաստվելուն և մեր ունակությանը՝ ուսուցանելու ընթացքում ջանասիրաբար հետևել Հոգուն: Եթե ուսուցանենք ջանասիրաբար, Տիրոջ շնորհը կայցելի մեզ, և մենք կուսուցանվենք կատարյալ կերպով: Ես կարծում եմ, որ դա ուսուցման Տիրոջ կատարյալ եղանակն է: Ուսուցիչը, որը վարում է քննարկումը, պետք է ցանկանա ուսուցանվել Տիրոջ կողմից:

Աղամ Բուշմենը, ով երեցների քվորումի ուսուցիչ է, պատրաստվում է դասերին, վերընթերցելով գերագույն համաժողովից որոշ ընտրված ելույթներ, այնուհետև աղոթքով որոշելով, թե որ գաղափարներն են կարևոր քվորումի համար: «Որպեսզի օգնենք մարդկանց ավելի շատ ժամանակ ունենալ խորհելու համար, – բացատրում է նա, – շաբաթվա

ընթացքում մի էլեկտրոնային նամակ է ուղարկվում, որում ասվում է. «Սա այն ելույթն է, որը մենք քննարկելու ենք և կցանկանայինք, որ մտածեիք հետևյալ հարցերի շուրջ»:

### ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼ ԵՎ ՍՈՎՈՐԵԼ ՄԻԱՍԻՆ

«Կիրակիները Սփոփող Միությունում այլևս միայն ղեկավարների պարտականությունների ցանկում չեն, – ասել է Սփոփող Միության նախագահության խորհրդական Բրուք Ջենսենը: Յուրաքանչյուր անդամ ակտիվ դեր ունի»:

Եղբայր Բուշմենի կարծիքով, երբ շրջանաձև են նստում դասին, այն ավելի լավ է ընթանում: «Ինձ դուր է գալիս այդպես, – ասել է նա: Դա փոխում է զրույցի բնույթը: Փոխում է մարդկանց ակնկալիքները: Հիմա ավելի շատ մարդիկ են հաճախում: Եթե նախկինում եղբայրներից մեկը կամ երկուսն էին սովորաբար պատասխանում հարցերին, այժմ նոր մարդիկ են միանում զրույցին»:

Երբ Ռեբեկկա Սիբախը՝ մի քույր Սփոփող Միությունից, առաջին անգամ լսեց խորհուրդները նորովի անցկացնելու մասին, անմիջապես մտածեց ընկերների մասին, ովքեր ակտիվ չէին: «Ես գիտեի նրանց մտահոգությունները, – ասել է նա: Նրանք ինձ հետ կիսվել էին Եկեղեցի գալու հետ կապված իրենց մտավախություններով և դժվարություններով և ես մտածեցի, որ այս փոփոխությունը հիանալի հնարավորություն է նրանց հետ կապվելու և ասելու, որ նրանց կարիքը կա խորհրդում: Խնդրում եմ, եկե՛ք և արտահայտվե՛ք»:

«Երբ ես վերջապես արտահայտվեցի խորհրդի ժողովի ժամանակ, – ասել է Սփոփող Միության նախագահության խորհրդական Լոնա Մարի Քուքը, զարմանալի էր զգալ, որ մարդիկ համամիտ էին, և որ դու այդ համայնքի մի մասն ես»:

### ՍՏԱՆԱԼ ՈԳԵՇՆՉՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

«Մենք այնպիսի մթնոլորտ ենք ստեղծում, որտեղ Հոգին կարող է ուսուցանել, իսկ մենք՝ լսել», – ասել է եպիսկոպոս Ռոբերթսը: «Հոգին դառնում է ուսուցիչ, ցույց է տալիս մեզ, թե ինչ պետք է անենք մեր անձնական կյանքում, ընտանիքում և կոչումներում: Այն, ինչ մենք անում ենք այդ հուշումների արդյունքում, հանգեցնում է ճշմարիտ դարձին և ծառայությանը»:

Սփոփող Միության նախագահ Սյուզան Ֆարրը ասել է. «Այս մեթոդը մեզ դրդում է վեր կենալ և գործել, ոչ թե հեռանալ դասից, մտածելով, որ այն ոգեշնչող էր, բայց շուտով մոռանալ դրա մասին: Միասին խորհրդակցելը օգնում է մեզ հասկանալ, որ ուսումը և գործողությունները բոլորիս համար են, ոչ թե միայն ուսուցչի»:

«Երբ գրի ենք առնում մեր տպավորությունները, այնուհետև գործում ըստ դրանց, մենք սրտի փոփոխություն ենք զգում և դառնում ենք Տիրոջ ավելի լավ ծառաները», – ասել է Սփոփող Միության նախագահության խորհրդական Սյուզան Միտչելը:

«Իմանալով, որ հաշվետու ենք լինելու ինչ-որ բանի համար, և ինչ-որ մեկը հարցնելու է մեր կարծիքը, – ասել է քույր Սմիթը, – մենք ավելի ակտիվ մասնակից ենք դառնում մեր վկայությունների կառուցման գործում»:

Քահանայապետերի խմբի ղեկավար Լանդեն Ռոնդին ասել է, որ է-փոստով տեղեկացնելը, թե ինչ է պլանավորվել և քննարկվել, «օգնում է անդամներին ուշադրություն դարձնել շաբաթվա ընթացքում իրենց ունեցած փորձին, որով կցանկանային կիսվել հաջորդ կիրակի օրը»:

Եպիսկոպոս Ռոբերթսը հավելել է. «Այդ հաղորդագրություններից ես զգացել եմ կիսվելու և ուսուցանվելու շարունակական ոգին, երբ շաբաթվա ընթացքում եղբայրները էլեկտրոնային փոստով փոխանակվում էին մտքերով և զգացումներով, որոնք ամրապնդում են իրենց քվորումը»:

«Տերը ցանկանում է, որ մենք ի սրտե հաղորդակցվենք միմյանց հետ, և դա կարող է տեղի ունենալ, երբ մենք նպատակային հանդիպենք», – եզրափակել է քույր Սիբախը: «Այս նոր ուսումնական ծրագիրն օգնում է մեզ բացահայտել հետաքրքրող թեմաները, նպատակներ դնել, պատասխաններ ստանալու համար օգտվել ճիշտ աղբյուրից, ստանալ անձնական հայտնություն և բարձրացվել մեկս մյուսով, երբ դառնում ենք դեպի ապրող մարգարեները մեր օրերում մեզ անհրաժեշտ պատասխանների համար»: ■

### ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ:

Նոր «Եկ, հետևիր ինձ» ուղերձի Նյութերը Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության Ժողովների համար կօգտագործվեն ամբողջ Եկեղեցում սկսած 2018 թվականի հունվարից: Ի՞նչ կարող են անել Եկեղեցու միավորներն այս փոփոխությանը պատրաստվելու համար:

- Ծխի գալիք խորհրդին ժամանակ հատկացնել՝ միասին ծանոթանալով Նյութերին և քննարկելով, թե ինչն է փոխվելու: Ի՞նչ օգուտ կարող է լինել:
- Հրավիրեք ծխի խորհուրդ, առաջին կիրակի օրվա խորհրդի Ժողովներների համար թեմաները որոշելու նպատակով, որոնք լավագույնս կհամապատասխանեն ծխի կամ ճյուղի կարիքներին: Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները կորոշեն, թե երբ և ինչպես իրենց կազմակերպությունները նեցուկ լինեն այդ կարիքներին:
- Ներկայացրեք և քննարկեք Նոր Նյութերը քվորումի, խմբի կամ Սփոփող Միության գալիք Ժողովի Ժամանակ: Յուրաքանչյուր անդամ ի՞նչ պետք է անի այս փոփոխություններին պատրաստվելու համար:
- Խրախուսեք քահանայության և Սփոփող Միության ուսուցիչներին և ղեկավարներին մասնակցել ուսուցիչների խորհրդի Ժողովներին՝ քննարկելու իրենց փորձառությունները, մարտահրավերները և նոր Նյութերի վերաբերյալ հարցերը:

## Հայացք դեպի խորհրդի ժողով

Կիրակնօրյա առավոտ է և 45 քույրեր Գվադալախարա քաղաքի (Մեքսիկա) Բուգամբիլիաս ծխից մասնակցում են խորհրդի ժողովին: Բացման օրհներգից հետո Սփոփող Միության նախագահ Յարա Ռամիրեսը հրավիրում է նրանցից մի քանիսին կիսվել նախորդ դասի իրենց փորձով:

Երբ քույրերը մի քանի րոպե կիսվում են իրենց փորձառություններով, քույր Ռամիրեսը, նախքան շրջանում իր տեղը կզբաղեցներ, գրատախտակին մի բառ է գրում:

Այդ բառն է՝ «միասնություն»:

Քույր Ռամիրեսի ղեկավարությամբ նրանք բացում են Մոսիա 18.21 հատվածը և կարդում. «. . . միավորելով իրենց սրտերը միությամբ ու սիրով մեկը մյուսի հանդեպ»:

«Ի՞նչ կարող ենք անել որպես Սփոփող Միություն, որ այս սուրբ գրության հատվածը կյանքի կոչենք», – հարցնում է նախագահը:

Քույրերը մի քանի րոպե մտածում են: «Երիտասարդները չեն կարող գնալ տաճար, – արտահայտվում է քույրերից մեկը: Չափահաս քույրերը քիչ են, որոնք կուղեկցեն նրանց»:

«Գաղափար չունեմ», – ասում է մյուս քույրը: «Եթե չգիտեք, թե ինչի կարիք կա, – հարցնում է նա, – ուրեմն, ինչպե՞ս կարող եք օգնել»:

«Ահա, թե ինչու ենք մենք այստեղ», – ասում է քույր Ռամիրեսը: «Այսպիսի կարիքներ կան, որոնց մասին ես տեղեկանում եմ ծխի խորհրդի ժամանակ, և դրանց հարցում մենք բոլորս կարող ենք օգնել»:

«Չպատրաստե՞նք արդյոք օրացույց», – առաջարկում է մեկը: Խումբն այժմ ավելի է հետաքրքրվում: «Կարծում եմ, որ երիտասարդների համար պլանավորված ժամանակ կա տաճարում՝ ամեն ամիս մեկ հինգշաբթի օր»:

«Ես ինքս էլ եմ դժվարանում տաճար գնալ, – ասում է խմբից մի երիտասարդ մայր: Ես այնտեղ երկար ժամանակ չեմ եղել և մի քիչ ինքնամփոփ եմ դարձել: Կցանկանայի գնալ և ծառայել», – ասում է նա:

Քույրերից մի քանիսը գլխով են անում, համաձայնվելով ասվածի հետ: Նրանք նույնպես գտնում են, որ դժվար է այցելել տաճար այնքան հաճախ, որքան ցանկանում ես:

Մի երիտասարդ մայր առաջարկեց, որ նրանք պահեն միմյանց երեխաներին և հերթով տաճար գնան:

Այնուհետև քույրերը սկսում են հարցնել միմյանց, թե ով որտեղ է ապրում և որ երիտասարդի հարևանությամբ է: Նրանք քննարկում են, թե ինչպես կարող են հերթով օգնել երիտասարդներին՝ վերականգնել իրենց միջոցառումները:

«Մենք պետք է միմյանց էլ ճանաչենք, – ասում է մեկը: Պետք է միջոցառումներ կազմակերպենք»:

Քույրերը շարունակում են զրուցել, առաջարկություններ անելով և հարցեր տալով:

Խորհուրդի ավարտին քույր Ռամիրեսը խնդրում է քարտուղարին ամփոփել րոպեները: «Ի՞նչ տպավորություն ունեք խորհրդից», – հարցնում է նա:

Նրանք արձագանքում են, որ քաջատեղյակ դարձան բոլորի կարիքներից, որ իրենց ծառայությունը անհրաժեշտ է, և որ իրենք ընկերների շրջապատում են:

«Այսօրվա մեր փորձից ելնելով, ինչ կոնկրետ գործողություններ ենք ուզում կատարել այս ամսվա ընթացքում՝ որպես Սփոփող Միություն», – հարցնում է նախագահը:

Նրանք որոշեցին այդ կիրակի եկեղեցուց հետո ճաշի հավաքվել միասին (յուրաքանչյուրն ինչ-որ ուտելիք բերեր իր հետ), ամեն հինգշաբթի երեկոյան գնալ վոլեյբոլ խաղալու, կազմել տաճար գնալու օրացույց և պլանավորել, թե ինչպես օգնել երիտասարդներին վերականգնել իրենց միջոցառումները:

«Մենք այսօր միասնություն զգացինք», – եզրափակում է քույր Ռամիրեսը, հրավիրելով յուրաքանչյուր քրոջ մտածել, թե շաբաթվա ընթացքում նա ինչպես կարող է ծառայել: «Սուրբ Հոգին կշարունակի մեզ հուշումներ տալ, երբ գործենք անհատապես և որպես Սփոփող Միություն: Ես հրավիրում եմ ձեզ պատրաստ լինել կիսվելու ձեր փորձով հաջորդ կիրակի»: ■

### ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Համբերատար եղեք և թույլ տվեք Տիրոջը ուսուցանել ձեզ, թե ինչ է նշանակում միասին խորհրդակցել:
- Կան սկզբունքներ, որոնք պետք է ունենալ մտքում. Հետևեք Հոգուն, կիսվեք ձեր մտքերով և գործեք տպավորություններին համապատասխան:
- Ձեր սիրտն ու միտքը բաց պահեք նոր գաղափարների, տեսակետների և լուծումների համար:
- Յուրաքանչյուր Ժողովի ավարտից առաջ մտածեք, թե ինչ սովորեցրեց ձեզ Հոգին, ապա որոշեք, թե ինչպես եք գործելու Նրա հուշումներին համապատասխան:

*Գվադալախարա քաղաքի (Մեքսիկա) Սփոփող Միության քույրերը՝ խորհրդի ժողովին մասնակցելիս:*

# «Եկ, հետևիր ինձ» ուղերձը Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության համար




*Գտեք այս նյութերը Աստվածաշնչի գրադարան հավելվածում և comefollowme.lds.org:*

# Ո՞րն է տարբերությունը:

Այս վերջին օրերում Աստված վերականգնեց քահանայությունը և կազմավորեց քահանայության քվորումները և Սփոփող Միությունը, որպեսզի օգնի իրականացնել Իր աշխատանքը (տես Մովսես 1:39): Ուստի յուրաքանչյուր կիրակի, երբ մենք հավաքվում ենք Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ժողովներին, մենք հավաքվում ենք քննարկելու և ծրագրավորելու, թե ինչպես կատարենք Նրա աշխատանքը: Ահա ինչու այս ժողովները պիտի լինեն ավելին, քան դասեր: Դրանք նաև հնարավորություններ են խորհրդակցել փրկության աշխատանքի մասին, այդ աշխատանքի մասին սովորել Եկեղեցու ղեկավարների ուսմունքներից և կազմակերպել դրանց իրականացումը: Կիրակնօրյա ժողովների այս փոփոխությունները կօգնեն մեզ իրականացնել այդ նպատակները:

### Ամսական ժամանակացույց

Կիրակնօրյա Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ժողովները տեղի կունենան այսպիսի ամսական ժամանակացույցով.

| ՇԱԲԱԹ | ՆՊԱՏԱԿ |
|---|---|
| Առաջին Կիրակի | Միասին խորհրդակցեք տարածքի պարտականությունների, հնարավորությունների և դժվարությունների շուրջ և կազմեք գործելու ծրագիր |
| Երկրորդ և երրորդ կիրակիներ | Ուսումնասիրեք վերջին գերագույն համաժողովի ուղերձները, որոնք կընտրվեն նախագահության կամ խմբի ղեկավարների կողմից կամ երբեմն եպիսկոպոսի և ցցի նախագահի կողմից |
| Չորրորդ կիրակի | Քննարկեք որևէ հատուկ թեմա, ընտրված Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից |
| Հինգերորդ կիրակի | Թեմա՝ ընտրված եպիսկոպոսության կողմից |

### Ժողովի օրինակ

Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության մեր յուրաքանչյուր ժողովի ժամանակ մենք հետևում ենք որևէ օրինակի, որպեսզի իրականացնենք Աստծո գործը:

1. *Կիսվեք փորձառություններով*, ստացված քահանայության և Սփոփող Միության նախորդ ժողովներում տպավորությունների և հրավերների արդյունքում (նախագահության կամ խմբի ղեկավարի ղեկավարությամբ):
2. *Խորհրդակցեք միասին* (առաջին կիրակի, որը ղեկավարում է նախագահությունը կամ խմբի անդամը) կամ *սովորեք միասին* (երկրորդ, երրորդ և չորրորդ կիրակիներ, կանչված ուսուցչի ղեկավարությամբ):
3. *Ծրագրեք գործել* որպես խումբ կամ որպես անհատներ (նախագահի կամ խմբի ղեկավարի ղեկավարությամբ):

## ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ ՕՐՎԱ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՆԵՐ

Յուրաքանչյուր ամսվա առաջին կիրակի օրը քվորումների, խմբերի և Սփոփող Միության կողմից անցկացվող ժողովներում *չեն ընդգրկվում դասեր, որոնք ուսուցանվում են ուսուցչի կողմից:* Փոխարենը, նախագահություններն ու խմբերի ղեկավարները կղեկավարեն խորհրդի ժողովները: Յուրաքանչյուր քվորում, խումբ և Սփոփող Միության խորհուրդ միասին կխորհրդակցեն տեղական պարտականությունների, հնարավորությունների և դժվարությունների շուրջ, կսովորեն միմյանց գաղափարներից, փորձառություններից և կծրագրեն եղանակներ, գործելով համաձայն Սուրբ Հոգուց ստացած տպավորությունների:

### Նախքան խորհրդի ժողովը

- Ղեկավարները կպարզեն տեղական պարտականությունները, հնարավորություններն ու դժվարությունները և աղոթքով կընտրեն քննարկման թեման:
- Յուրաքանչյուրը պիտի փնտրի Հոգու առաջնորդությունը:
- Բոլորը կպատրաստվեն կիսվել իրենց փորձառություններով:

### Խորհրդի ժողովի ժամանակ

- Ղեկավարները հրավիրում են անդամներին կիսվել փորձառություններով, գործելով ըստ այն տպավորությունների, որոնք նրանք ստացել էին նախորդ ժողովների ժամանակ:
- Բոլորը միասին խորհրդակցում են թեմաների շուրջ, լսում մեկը մյուսին և ջանում ուղղորդում ստանալ Սուրբ Հոգուց:
- Ղեկավարներն ամփոփում են հիմնական հարցերը և հրավիրում գործելու:

### Խորհրդի ժողովից հետո

- Բոլորը գործում են համաձայն տպավորությունների և հրավերների՝ ինչպես միասին, այնպես էլ անհատապես:
- Բոլորը պատրաստվում են հետագա ժողովների ժամանակ կիսվել իրենց փորձառություններով:

«ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՑՐՎԱԾ Է ՄԵՐ ՄԵՋ»[1]

Երեց Նիլ Լ. Անդերսեն

«ՄԵՆՔ ՆՐԱ ՁԵՌՔԵՐՆ ԵՆՔ»:[2]

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

**ՆԵՌՈՒՄՆԵՐ**

1. Նիլ Լ. Անդերսեն, Ադամ Ս. Օլսոն, «Ձեռնարկի ուսուցումը շեշտադրում է Փրկության աշխատանքը», *Ensign* կամ *Լիահոնա*, ապրիլ 2011, 76:
2. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Դուք Իմ Ձեռքերն եք», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2010, 68:

ՊԱՏԿԵՐԱԿԱՆ՝ GETTY IMAGES-Ի

## Համատեղ խորհրդի սկզբունքները

Ոչ բոլոր խորհրդի ժողովներն են իրար նման: Թող Տերն ուսուցանի ձեզ: Ահա մի քանի սկզբունքներ, որոնք կօգնեն ձեզ սկսել.

1. Խորհրդի ժողովի նպատակն է՝ միասին խորհրդակցել տեղական պարտականությունների, հնարավորությունների և դժվարությունների մասին, սովորել միմյանց գաղափարներից, փորձառություններից և ծրագրել եղանակներ, գործելով համաձայն Սուրբ Հոգուց ստացած տպավորությունների:
2. Խորհրդի ժողովը պետք է հանգեցնի գործողության՝ Հոգով ոգեշնչված անհատական և խմբային ծրագրերի, ժողովից դուրս գործողության, իրականացնելով Տիրոջ աշխատանքը (տես ՎԱՈ 43.8–9):
3. Խորհուրդները պետք է օգտագործեն սուրբ գրությունները, վերջին օրերի մարգարեների, առաքյալների, այլ Բարձրագույն Իշխանավորների և Բարձրագույն Պաշտոնյաների խոսքերը, առաջնորդելով և աջակցելով քննարկմանը: Այս ձևով Եկեղեցու ոգեշնչված ղեկավարների խոսքերը կարող են օգնել քվորումներին, խմբերին և Սփոփող Միություններին խոսելու կարևոր կարիքների մասին:
4. Քննարկումների ժամանակ չպիտի շոշափվեն առանձին անդամներին կամ ընտանիքներին վերաբերող գաղտնի կամ նուրբ հարցեր:
5. Չնայած խորհրդի ժողովները ղեկավարվում են նախագահության որևէ անդամի կամ ղեկավարների խմբի կողմից, նրանք չպիտի հսկեն կիսվելու նախաձեռնությունը: Ղեկավարը ներկայացնում է հարցը քննարկման և հրավիրում է բոլորին կիսվել մտքերով և փորձառություններով, ինչպես կուղղորդի Հոգին:
6. Ոչ ոք չպիտի պարտավորված զգա մասնակցել խորհրդին, բոլորը պետք է ազատ զգան մեկնաբանություններով և գաղափարներով կիսվելիս, առանց քննադատվելու վախի:
7. Եթե հնարավոր է, նստեք շրջանով, ինչը կարող է սերմանել մտքերով կիսվելու և ազատ քննարկման ոգի:

## Առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովի հնարավոր թեմաներ

Խորհրդի ժողովների թեմաները կարող են վերցվել ծխի խորհրդից, նախագահության ժողովներից, տարածաշրջանի ծրագրից, անդամներին ծառայելիս ղեկավարների ստացած տպավորություններից և Սուրբ Հոգու տպավորություններից: Ստորև տրված թեմաները միայն առաջարկներ են: Ղեկավարները կարող են տեղյակ լինել ուրիշների կարիքներից և ոգեշնչված լինեն խոսելու դրանց մասին:

- Մենք ինչպե՞ս կարող ենք առաջնահերթություն սահմանել մեր տարբեր պարտականությունների համար:
- Մենք ինչպե՞ս կարող ենք ավելի մոտենալ Աստծուն և ավելի շատ առաջնորդություն ստանալ Հոգուց կյանքում և մեր տներում:
- Մենք ինչպե՞ս կարող ենք ավետարանով կիսվել մեր ընկերների ու հարևանների հետ: (տես Ալմա 17)
- Ինչպե՞ս կարող ենք պաշտպանել ինքներս մեզ և մեր ընտանիքները ոչ պատշաճ լրատվամիջոցներից և պոռնոգրաֆիայից: (Տես ՎԱՈ 42.22-23)
- Մենք ի՞նչ պիտի անենք, որպեսզի օգնենք դաստիարակել և զորացնել մեր ծխի երեխաներին ու երիտասարդներին:
- Ինչպե՞ս կարող ենք ամրացնել միասնությունը մեր քվորումում, խմբում և Սփոփող Միությունում: (Տես Մոսիա 18.19-22)
- Ինչպե՞ս կարող ենք ավելի շատ ընդգրկվել ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքում:
- Ինչպե՞ս կարող ենք հրավիրել Տիրոջ օգնությունը, երբ փնտրում ենք պատասխաններ մեր հարցերին և փնտրում ենք ավետարանի ավելի խորը հասկացողություն:
- Ծնողներն ինչպե՞ս կարող են դառնալ ավելի լավ ղեկավարներ իրենց տներում:
- Մենք ինչպե՞ս կարող ենք ուժեղացնել մեր վկայությունները Տիրոջ և Նրա ավետարանի վերաբերյալ և օգնել մեր ընտանիքներին՝ դառնալ հոգևորապես ինքնապահով:
- Ի՞նչ է նշանակում ծառայել: Մենք ինչպե՞ս ենք ծառայում մեզ շրջապատող մարդկանց: (տես 1 Պետրոս 4.11)

Եթե հնարավոր է, ղեկավարները կարող են նախօրոք տեղեկացնել անդամներին թեմայի մասին, որպեսզի նրանք կարողանան պատրաստված գալ քննարկմանը:

## ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐԻ ԺՈՂՈՎՆԵՐ

Ամեն ամսվա երկրորդ և երրորդ կիրակիները Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները և Սփոփող Միություններն ուսումնասիրում են ապրող մարգարեների, Առաքյալների և Եկեղեցու այլ ղեկավարների ուսմունքները՝ վերջին գերագույն համաժողովից: **Վերջին համաժողովի ցանկացած ուղերձ կարող է քննարկվել:**

Քվորումի նախագահությունը, խմբի ղեկավարությունը կամ Սփոփող Միության նախագահությունը ուսումնասիրելու համար հիմնականում կընտրի համաժողովի որևէ ուղերձ անդամների կարիքների համաձայն, չնայած եպիսկոպոսը կամ ցցի նախագահը կարող են առաջարկություններ անել: Ղեկավարները կարող են ընտրել ուղերձ, որը կապված է այն թեմայի հետ, որը քննարկվել է առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովի ժամանակ կամ նրանք կարող են ընտրել մեկ այլ ուղերձ՝ համաձայն Հոգու ոգեշնչման: Ղեկավարները և ուսուցիչները պետք է ուղիներ գտնեն, խրախուսելով անդամներին նախօրոք կարդալ ընտրված ուղերձները և պատրաստված գալ՝ կիսվելու իրենց մտքերով: Ստորև տրված ուսուցման վարժությունները, որոնք հիմնված են *«Ուսուցանել Փրկիչի ձևով»ձեռնարկի սկզբունքների վրա,* կարող են խրախուսել անդամներին սովորել գերագույն համաժողովի ուղերձներից:

**Շարոն Յուբանկ,** *«Վառեք ձեր լույսը»*

Ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամներին խնդրեք մտածել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել իրենց կյանքում մի արդարակյաց և հավատարիմ կին: Հրավիրեք մի քանի անդամների կիսվել, թե ինչպես է այդ կինը ներկայացնում արդարակյաց կանանց մեկ կամ մի քանի հատկանիշները, որոնք ընդգծված են Քույր Ուբանկի ուղերձում: Ի՞նչ ենք մենք սովորում Քույր Ուբանկից այն մասին, թե ինչպես կարող ենք վերջին օրերին դառնալ *«վիթխարի ուժ,* ինչը վերաբերում է Եկեղեցու թվական և հոգևոր աճին»:

**Նիլ Ֆ. Մերիոթ,** *«Մնալ Աստծո հետ և վերանորոգել ճեղքվածքը»*

Այս ուղերձը կարող է օգնել նրանց, ովքեր գուցե մեկուսացած են զգում Երկնային Հորից կամ իրենց շուրջը գտնվողներից: Ի՞նչը կօգնի ձեր ուսանողներին հասկանալ, թե ինչ է ճեղքվածքը: Ցույց տվեք տարբեր տեսակի ճեղքվածքների նկարներ: Ինչպե՞ս է Քույր Մարիոթը սահմանում ճեղքվածքը: Ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ ճեղքվածքները Աստծո և ուրիշների հետ մեր փոխհարաբերություններում: Հրավիրեք անդամներին Քույր Մարիոթի ուղերձում փնտրել խորհուրդներ, թե ինչ կարող ենք անել մեր կյանքի ճեղքվածքները վերանորոգելու համար: Ժամանակ տվեք անդամներին գրի առնել, թե Հոգին ինչ է նրանց հուշում անել՝ Աստծուն և ուրիշներին մոտենալու համար:

**Ջոյ Դ. Ջոնս,** *«Անչափելի արժեք»*

Ի՞նչ օրհնություններ են հորդում մեր կյանք, երբ մենք հասկանում ենք մեր աստվածային էությունը: Այս հարցին պատասխանելու համար ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամները միասին կարող են վերանայել Մարիամայի, Ռենուի և Թաիանայի պատմությունները Քույր Ջոնսի ուղերձից: Ի՞նչ խորհուրդ է տալիս Քույր Ջոնսը մեզ օգնելու համար, որ «հիշենք և ընդունենք մեր աստվածային ինքնությունը»: Հրավիրեք անդամներին գտնել և քննարկել սուրբ գրության մի հատված կամ Քույր Ջոնսի ուղերձից մի հարց, որն օգնում է նրանց հասկանալ իրենց իրական արժեքն Աստծո համար: Հրավիրեք նրանց կիսվել այս սուրբ գրություններից կամ հարցերից մեկով նրա հետ, ով կարիք ունի հիշելու իր աստվածային արժեքի մասին:

**Դիտեր Ֆ. Ուխդորֆ,** *«Երեք քույրեր»*

Նախագահ Ուխդորֆի ուղերձը վերանայելու համար կարող եք քվորումը կամ Սփոփող Միությունը բաժանել փոքր խմբերի: Դուք կարող եք հանձնարարել յուրաքանչյուր խմբին կարդալ Նախագահ Ուխդորֆի ուղերձի քույրերից մեկի մասին: Յուրաքանչյուր խումբ կարող է նամակ գրել այդ քրոջը՝ ամփոփելով իր

խորհուրդը, և իրենց գրածով կիսվել մյուս խմբի հետ: Ի՞նչ կարող ենք անել ավելի շատ երրորդ քրոջը նման լինելու համար: Ինչպե՞ս կարող ենք մեր քվորումը կամ Սփոփող Միությունը դարձնել «ապահով տուն» նրանց համար, ովքեր տառապում են:

**Դիտեր Ֆ. Ուխդորֆ,** *«Տան կարոտը»*

Ինչպե՞ս կարող եք օգնել ուսանողներին նկատել, թե ինչպես է Աստված օգտագործում իրենց՝ ուրիշներին օրհնելու համար: Դուք կարող եք հրավիրել նրանց վերանայել Նախագահ Ուխդորֆի ուղերձի «Աստված կօգտագործի ձեզ» վերնագրով բաժինը, փնտրելով խոստումներ, որոնք տրված են նրանց, ովքեր ձգտում են ծառայել Աստծո թագավորությունում՝ իրենց թուլություններից անկախ: Այս ուղերձի ընթերցումը նաև կարող է հիշեցնել անդամներին փորձառություններ, որոնցով կարող են կիսվել, երբ Աստված օգտագործել է իրենց ուրիշներին օրհնելու համար կամ երբ Նա օգտագործել է ուրիշներին՝ իրենց օրհնելու համար: Անդամներին ժամանակ տվեք խորհել, թե այս քննարկման արդյունքում ոգեշնչվելով, ի՞նչ են անելու:

**Բոնևի L. Օսկարսոն,** *«Կարիքները մեր առջևում են»*

Քույր Օսկարսոնի ուղերձի շուրջ քննարկում սկսելու համար բոլորին կարող եք տալ մի թերթիկ, որի վերևում գրված է՝ «Ո՞վ ունի իմ կարիքն

այսօր»: Ձեր Սփոփող Միության կամ քվորումի անդամները կարող են մի քանի րոպե խորհել և գրի առնել այդ հարցի պատասխանները: Ապա Քույր Օսկարսոնի ուղերձում նրանք կարող են գաղափարներ փնտրել, թե ինչպես կարող են ծառայել իրենց կազմած ցուցակի մարդկանց կամ անուններ ավելացնել ըստ ոգեշնչման: Թերևս մի քանիսը կարող են կիսվել իրենց սովորածով:

**Դալլին Հ. Օուքս,** *«Փրկության ծրագիրը և Ընտանիքի հռչակագիրը»*

Ձեր քվորումի, խմբի կամ Սփոփող Միության անդամներն ինչպե՞ս կգործեն համաձայն Երեց Օուքսի հրավերի՝ «ուսուցանել [և] ապրել համաձայն» ընտանեկան հռչակագրի, տանը, համայնքում և եկեղեցում: Հրավիրեք նրանց միմյանց հետ կիսվել մտքերով: Կարող է օգտակար լինել նաև ուսումնասիրել ընտանեկան հռչակագրի որոշ վարդապետական հայտարարությունները: Ինչպես են այս հայտարարություններն օգնում մեզ արձագանքել «ընտանիքի ներկայիս խնդիրներին»: Երեց Օուքսի ուղերձի IV բաժնում կան նման հայտարարությունների օրինակներ:

**Դ. Թոդ Քրիստոֆերսոն,** *«Կենդանի հացը, որն իջնում է երկնքից»*

Ահա մի քանի հարց, որ Սփոփող Միության և քվորումի անդամները կարող են ունենալ իրենց մտքում, մինչ նրանք կվերանայեն Երեց Քրիստոֆերսոնի ուղերձը. Ի՞նչ է սրբությունը: Ինչպե՞ս ենք մենք սրբություն փնտրում: Ինչպե՞ս է հաղորդությունը ընդունելը մեզ օգնում մեր ջանքերում: Անդամները կարող են օգտագործել Երեց Քրիստոֆերսոնի ուղերձի բառերը, որ կօգնեն պատասխանել այդ հարցերին: Ինչպե՞ս ենք օգնում միմյանց որպես «ընկերակից Սրբեր» ավելի սուրբ դառնալու մեր ջանքերում:

**Ջեֆրի Ռ. Հոլլանդ,** *«Արդ դուք կատարեալ եղիք, ի վերջո»*

Ոմանք գուցե զգան, որ իրենք բավականաչափ հասուն չեն, երբ խոսքը վերաբերում է Փրկիչի ուսմունքներով ապրելուն: Ըստ Երեց Հոլլանդի ուսմունքների, ի՞նչը կարող է մխիթարել և քաջալերել նրանց, ովքեր գուցե նման զգացումներ ունեն: Դուք կարող եք հրավիրել Սփոփող Միության կամ քվորումի անդամներին ինչ-որ բան փնտրել այդ ուղերձում, ինչով կարող են կիսվել մեկի հետ, ով դժվարանում է պատկերացնել, որ ինքը «բավականաչափ լավն է»: Կամ նրանք կարող են ինչ-որ բան գտնել ուղերձում, ինչը ոգեշնչում է նրանց զգալ «ավելի մեծ սեր և հիացմունք [Քրիսոսի]» հանդեպ և Նրան նմանվելու մեծ ցանկություն:

**Գարի Ի. Սթիվենսոն,** *«Հոգևոր խավարում»*

Ձեր քվորումի կամ Սփոփող Միության որևէ անդամ երբևէ տեսե՞լ է արևի խավարում: Եթե այո, ապա կարող եք հրավիրել նրան բացատրել նմանությունը, որով կիսվում է Երեց Սթիվենսոնը «հոգևոր խավարման» վերաբերյալ: Ի՞նչ խոչընդոտներ կարող են «արգելափակել Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի լույսի մեծությունը, պայծառությունը և ջերմությունը»: Ինչպե՞ս կարող են սոցիալական լրատվամիջոցները խանգարել մեզ տեսնել «ավետարանի գեղեցկությունը, ջերմությունը և երկնային լույսը»: Ինչպե՞ս ենք մենք դնում «ավետարանի ակնոցներ», որոնք պաշտպանում են մեզ հոգևոր կուրությունից: Ի՞նչ է ուսուցանում մեզ Երեց Սթիվենսոնի համանմանությունը ավետարանի հեռանկար ձեռք բերելու մասին:

**Քվենթին Լ. Քուք,** *«Հավերժական ամենօրը»*

Երեց Քուքի ուղերձը հիշեցնում է մեզ զանազան եղանակներով խոնարհ լինելու կարևորության մասին: Նրա ուսմունքները քննարկելու համար կարող եք բաժանել անդամներին երկու խմբի: Մի խմբին խնդրեք Երեց Քուքի ուղերձում փնտրել խորհուրդները, որոնք կարող են օգնել մեզ խոնարհություն զարգացնել, իսկ մյուս խմբին խնդրեք փնտրել ուղիները, որոնցով մարդիկ դրսևորում են հպարտություն: Հրավիրեք յուրաքանչյուր խմբին իրենց մտքերով կիսվել մյուս խմբի հետ: Անդամները կարող են նաև կիսվել, թե ինչպես կարող են ավելի շատ «խոնարհություն ցուցաբերել առօրյա» կյանքում և խորհել, թե ինչպես կարող է այդ խոնարհությունն օգնել իրենց նախապատրաստվել հանդիպելու Աստծուն:

**Ռոնալդ Ա. Ռասբենդ,** *«Աստծո ծրագրի համաձայն»*

Երեց Ռասբենդի ուղերձի շուրջ քննարկում ծավալելու համար կարող եք հրավիրել մի քանի անդամների բերել կարի նմուշ, գծագիր կամ բաղադրատոմս և խոսել այն մասին, թե ինչու են սրանք օգտակար: Երեց Ռասբենդի ուղերձի ո՞ր օրինակները կամ ուսմունքներն են ոգեշնչում անդամներին գիտակցել Աստծո ծրագիրը իրենց կյանքում: Հավանաբար դասարանի անդամները կարող են կիսվել փորձառություններով, երբ նկատել են, որ Տերն առաջնորդել է իրենց կյանքը: Ի՞նչ են նրանք արել, որպեսզի ցույց տան Աստծուն, որ գնահատում են Նրա առաջնորդությունը: Ինչո՞ւ է կարևոր հասկանալ Աստծո ծրագիրը:

**Ռասսել Մ. Նելսոն,** *«Մորմոնի Գիրքը. Ինչի՞ նման կլինի ձեր կյանքն առանց նրա»*

Նախագահ Նելսոնը հրավիրում է անդամներին մտածել երեք հարցերի շուրջ. (1) «Ինչի՞ նման կլինի ձեր կյանքն *առանց* Մորմոնի Գրքի»: (2) «Դուք ի՞նչ *չէիք իմանա*»: (3) «Դուք ի՞նչ *չէիք ունենա*»: Հրավիրեք ձեր քվորումի, խմբի կամ Սփոփող Միության անդամներին խորհել այս հարցերի շուրջ և կիսվել իրենց պատասխաններով: Ի՞նչ են նրանք գտել այս ուղերձում, որ ոգեշնչում է նրանց ավելի շատ գնահատել Մորմոնի Գիրքը, քան «աղամանդներն ու սուտակները»:

**Դեյլ Գ. Ռենլանդ,** *«Քահանայությունը և Փրկիչի քավող զոհաբերությունը»*

Ինչպե՞ս դուք կարող եք օգնել ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամներին հասկանալ, թե ինչպես է քահանայությունն օգնում իրենց համար մատչելի դարձնել Փրկիչի Քավության օրհնությունները: Գրատախտակին կարող եք գրել այս երկու վերնագրերը. «Ինչո՞ւ է մեզ անհրաժեշտ Հիսուս Քրիստոսի Քավությունը» և «Ինչպե՞ս է քահանայությունը

«մատուցում» մեզ Քավության օրինությունները»: Ապա հրավիրեք անդամներին ուսումնասիրել Երեց Ռենլանդի ուղերձը, փնտրելով արտահայտություններ, որոնք կարող եք գրել յուրաքանչյուր վերնագրի տակ: Ինչպե՞ս են քահանայությունը և դրա արարողություններն օգնում իրականացնել Երկնային Հոր նպատակներն Իր զավակների համար:

**Դիտեր Ֆ. Ուխդորֆ,** *«Երկնային լույսի կրողները»*

Հրավիրեք անդամներին ուսումնասիրել Նախագահ Ուխդորֆի ուղերձը և գտնել, թե ինչպես կարող է աստվածային լույսի բացակայությունն ազդել մեր կյանքի վրա: Դուք կարող եք հրավիրել անդամներին ուսումնասիրել Նախագահ Ուխդորֆի նշած սուրբ գրություններից մի քանիսը և ներկայացնել ճշմարտություններ, որոնք կապված են հոգևոր լույսի հետ: Ի՞նչ է ուսուցանում մեզ խավարման վերաբերյալ փոխաբերությունը ազատ ընտրության դերի մասին, երբ փնտրում ենք հոգևոր լույս: Ի՞նչ կարող ենք անել Հիսուս Քրիստոսի աստվածային լույսն ուրիշների հետ կիսելու համար՝ հատկապես մեր ընտանիքների և «մեր երիտասարդների, ովքեր լույս են փնտրում»:

**Հենրի Բ. Այրինգ,** *«Տերն առաջնորդում է Իր Եկեղեցին»*

Հրավիրեք ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամներին կիսվել փորձառություններով, երբ նրանք կարիք են ունեցել հավատ գործադրել, որ իրենց կամ մեկ ուրիշի կոչումը տրվել է Աստծուց: Նրանք ինչպե՞ս գործի դրեցին իրենց հավատը: Ինչպե՞ս նրանք հասկացան, որ կոչումն Աստծուց էր: Հրավիրեք անդամներին ուսումնասիրել Նախագահ Այրինգի ուղերձը և գտնել ճշմարտությունները, որոնք նա սովորել է անձնական փորձառությամբ, որը կարող է օգնել մեզ վստահել և համբերատար լինել մեր և ուրիշների հանդեպ, ում Տերը կանչել է:

**Ջին Բ. Բինգհեմ,** *«Եւ ձեր ուրախությունը լցուած լինի»*

Քույր Բինգհեմի ուղերձը կարող է օգնել ձեր Սփոփող Միության կամ քվորումի անդամներին հասկանալ, թե ինչպես գտնել ուրախություն՝ անկախ կյանքի դժվարություններից, մինչ մենք գալիս ենք Քրիստոսի մոտ: Նրա ուղերձը քննարկելու համար կարող եք մի արահետ նկարել գրատախտակին, որը տանում է դեպի *ուրախություն* բառը: Հրավիրեք մի քանի անդամների արահետի վրա գրել խորհուրդներ Քույր Բինգհեմի ուղերձից, որոնք տանում են դեպի իսկական ուրախություն: Խրախուսեք անդամներին խորհել ուղիների մասին, թե ինչպես կարող են գործի դնել Քույր Բինգհեմի խորհուրդը: Հրավիրեք մի քանի անդամների կիսվել իրենց մտքերով:

**Դեյվիդ Ա. Բեդնար,** *«Ամենամեծ ու պատվական խոստումներ»*

Որպեսզի օգնեք ձեր Սփոփող Միության կամ քվորումի անդամներին քննարկել Երեց Բեդնարի ուղերձը, կարող եք գրատախտակին ամրացնել նկարներ, որտեղ ներկայացված են Հանգստության օրը, տաճարը և մեր տները: Հրավիրեք անդամներին կարդալ Երեց Բեդնարի ուղերձի համապատասխան հատվածները և գրատախտակին գրել, թե ինչպես են Հանգստության օրը, տաճարը և մեր տները օգնում մեզ կենտրոնանալ մեզ տրված Աստծո խոստումների վրա: Մեր կյանքում առկա ո՞ր երևույթները կարող են հեռացնել մեր ուշադրությունն այդ խոստումներից: Ի՞նչ քայլեր կարող ենք ձեռնարկել համոզված լինելու համար, որ մենք հիշում ենք դրանք:

**Հենրի Բ. Այրինգ,** *«Մի վախեցեք բարիք գործել»*

Նախագահ Այրինգի ուղերձը կարող է օգնել ձեր ուսանողներին գտնել քաջություն և հավատ բարիք գործելու աշխարհում: Դուք կարող եք հրավիրել մի քանի անդամների ամփոփել հավատարիմ մարդկանց օրինակները, որոնցով կիսվել է Նախագահ Այրինգը: Ի՞նչ են այս օրինակներն ուսուցանում մեզ այն մասին, թե ինչպես ծառայել ուրիշներին: Այս օրինակներն ի՞նչ են խորհուրդ տալիս այն մասին, թե ինչպես կարող ենք ծառայել որպես քվորում կամ Սփոփող Միություն:

Այս ուղերձը քննարկելու համար կարող ենք նաև վերանայել օրհնությունները, որոնք Նախագահ Այրինգը տեսել է Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու վերաբերյալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խորհրդին հետևելու արդյունքում: Ի՞նչ օրհնություններ ենք մենք տեսել Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու արդյունքում:

**Մ. Ռասսել Բալլարդ,** *«Գաղթը շարունակվում է»*

Երեց Բալլարդի ուղերձի շուրջ քննարկում սկսելու համար դուք կարող եք հրավիրել որևէ մեկին կիսվել փորձառությամբ, երբ նրանք ունեցել են ճամփորդության վերջնակետ, սակայն պարզել են, որ սխալ ուղու վրա էին: Նման օրինակներն ինչպե՞ս են առնչվում դեպի Երկնային Հայրը տանող մեր անձնական «գաղթի» հետ: Ապա անդամները կարող են փնտրել Երեց Բալլարդի տված խորհուրդը և նախազգուշացումները, որոնք կարող են օգնել մեզ իմանալ, թե արդյոք մեր անձնական կյանքում մենք բռնել ենք ճիշտ ուղին: Ժամանակ տրամադրեք անդամներին իրենց սեփական ուղիների մասին խորհելու համար և քննարկեք ուղիներ, թե ինչպես կարող ենք օգնել և քաջալերել ուրիշներին՝ Երկնային Հոր մոտ վերադառնալու իրենց «գաղթի» ճանապարհին:

**Նիլ Լ. Անդերսեն,** *«Տիրոջ ձայնը»*

Ձեր Սփոփող Միության կամ քվորումի անդամները կարող են կիսվել փորձառությամբ, երբ գերագույն համաժողովի ուղերձը հատուկ նշանակություն է ունեցել իրենց համար: Ինչո՞ւ են այդ ուղերձներն այդքան մեծ նշանակություն ունեցել: Ի՞նչ է ուսուցանում Երեց Անդերսենը գերագույն համաժողովի ուղերձների կարևորության և դրանք նախապատրաստելու ջանքերի ու գործընթացի մասին: Այս գիտելիքն ինչպե՞ս է ազդում այդ խոսքերն ուսումնասիրելու և դրանց ականջ դնելու հրատապության վրա: Կազմեք հրավերների ցուցակ՝ վերցված վերջին համաժողովից: Մենք ի՞նչ ենք արել ըստ այդ հրավերների գործելու համար:

## ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ ՕՐՎԱ ԺՈՂՈՎՆԵՐ

Յուրաքանչյուր ամսվա չորրորդ կիրակի օրը քվորումները, խմբերը և Սփոփող Միությունը քննարկում են որևէ թեմա, որն ընտրված է Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից: Այս թեմաները կթարմացվեն յուրաքանչյուր զերագույն համաժողովի հետ: Մինչև հաջորդ զերագույն համաժողովը թեման կլինի Հանգստության օրը: Ղեկավարներն ու ուսուցիչները կարող են ընտրել ստորև տրված վարդապետություններից և ուսումնական վարժություններից, միացնել դրանցից մի քանիսը կամ ստեղծել իրենց սեփականը՝ ըստ անդամների կարիքների:

**Հանգստության օրը այն օրն է, երբ պիտի հիշենք, թե Աստված ինչ է արել է մեզ համար:**

Պատմության ընթացքում Աստված Հանգստության օրվա հետ զուգորդել է որոշակի հզոր գործեր: Այդ հզոր գործերն ընդգրկում են Արարումը (տես Ծննդոց 2.1–3), Իսրայելի զավակների դուրս գալը Եգիպտոսից (տես Երկրորդ Օրինաց 5.15) և Փրկիչի Հարությունը (տես Հովհաննես 20.1–19, Գործք 20.7): Հրավիրեք անդամներին վերանայել այս հատվածները և քննարկել, թե հիշելով այս իրադարձություններից յուրաքանչյուրը, ինչպե՞ս կարող ենք պատվել Հանգստության օրը: Որո՞նք են այն մի քանի հզոր գործերը, որոնք Աստված կատարել է մեզ համար: Մենք ինչպե՞ս կարող ենք հիշել այս բոլորը Հանգստության օրը: Եթե կիրառելի է, հրավիրեք անդամներին քննարկել այսպիսի հարցերը իրենց ընտանիքներում:

**Հիսուս Քրիստոսը Հանգստության օրվա Տերն է:**

Հանգստության օրը նաև կոչվում է Տիրոջ օր (տես Հայտնություն 1.10): Ձեր կարծիքով, Հիսուս Քրիստոսն ինչո՞ւ է կոչվում Հանգստության օրվա Տեր: (տես Մատթեոս 12.8): Միասին կրկնեք մի քանի հատվածներ, որոնք կարող են ոգեշնչել անդամներին եղանակներ մտածել իրենց Հանգստության օրվա փորձառությունները կենտրոնացնել Հիսուս Քրիստոսի վրա: (օրինակ՝ Հելաման 5.12, Եթեր12.41, Մորոնի 10.32, և ՎևՈւ 6.36–37): Ուրիշ ի՞նչ հատվածներով կարող են անդամները կիսվել, որը կօգնի նրանց Հանգստության օրը դարձնել ավելի Քրիստոսակենտրոն: Մենք ի՞նչ նպատակներ կարող ենք սահմանել, որոնք կօգնեն մեզ կենտրոնանալ Փրկիչի վրա Հանգստության օրվա ընթացքում:

**Հիսուս Քրիստոսը Հանգստության օրը մեծարելու մեր օրինակն է:**

Իր մահկանացու ծառայության ընթացքում Փրկիչն օգտվում էր Հանգստության օրվա մասին ուսուցանելու հնարավորություններից: Խնդրեք անդամներին կարդալ հետևյալ պատմությունները և կազմել այն գործերի ցուցակը, որոնք Հիսուսը կատարեց Հանգստության օրը և սկզբունքները, որոնք Նա ուսուցանեց. Ղուկաս 6.1–11, 13.11–17, Հովհաննես 5.1–20, 9.1–16: Հանգստության օրվա մասին ուրիշ ի՞նչ սկզբունքներ ենք սովորում հետևյալ հատվածներից:Ելից 20.8–11, 31.12–18, Եսայիա 58.13–14, և ՎևՈւ 59.9–19: Հրավիրեք անդամներին կիսվել, թե նրանք ի՞նչ կարող են անել Փրկիչի օրինակին հետևելու համար:

Տես նաև՝ Ռասսել Մ. Նելսոն «Կիրակին բերկրանք է», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2015, 129–32:

**Հանգստության օրը երկրպագության օր է:**

Գրատախտակին գրեք *երկրպագություն* բառը և խնդրեք ուսանողներին կողքին գրել ուրիշ բառեր, որոնք առնչվում են դրա հետ: Ապա կազմեք երեք սյունակ, յուրաքանչյուրի վերևում գրելով հետևյալ բառերը *նախքան, ընթացքում* և *հետո*: Մենք ի՞նչ կարող ենք անել Եկեղեցու դասերից առաջ, ընթացքում և հետո, որպեսզի երկրպագենք Տիրոջը Իր սուրբ օրը: Ուսանողները կարող են միասին կարդալ Մոսիա 18.17–29 և Մորոնի 6 հատվածները գաղափարների համար: Հրավիրեք անդամներին խորհել այն մասին, թե Հանգստության օրվա իրենց վերաբերմունքն ու գործողություններն ինչպե՞ս են օգնում նրանց երկրպագել Տիրոջը այդ օրը (տես Ելից 31.16–17): Մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի օգնենք մեր ընտանիքներին և ծխի անդամներին լավացնել երկրպագության փորձառությունը Եկեղեցու ժողովներին:

**Հաղորդությունից ճաշակելը մեզ թույլ է տալիս Հոգին միշտ մեզ հետ ունենալ:**

Գրատախտակին գրեք հետևյալ հարցը. Հաղորդությունն ինչպիսի՞ ներգործություն ունի ձեր կյանքի վրա: Այս հարցին պատասխանելու համար հրավիրեք անդամներին աշխատել զույգերով, որպեսզի ընտրեն և քննարկեն որևէ արտահայտություն հաղորդության աղոթքից Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79 և խորհուրդը Վարդապետություն և Ուխտեր 59.9 հատվածներում: Յուրաքանչյուր զույգի ժամանակ տվեք գտնել սուրբ գրություններ, որոնք կօգնեն նրանց ավելի լավ հասկանալ իրենց արտահայտությունը և քննարկել, թե իրենք ինչպես կպատասխանեին գրատախտակի հարցերին: Կարող եք նաև հրավիրել ուսանողներին ընտրել հաղորդության ժողովի իրենց նախընտրած օրհներգերը և երգել միասին:

Տես նաև Շերիլ Ա. Էսպլին, «Հաղորդություն՝ հոգու նորոգում», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2014, 12–14:

**Հանգստության օրը ուրիշներին ծառայելու օր է:**

Մենք ի՞նչ կարող ենք սովորել Հանգստության օրը ուրիշներին ծառայելու մասին այն եղանակներից, որոնցով Տերը ծառայեց և օրհնեց Իրեն շրջապատողներին: Խրախուսեք անդամներին վերանայել և քննարկել Մատթեոս 9.10–13, Ղուկաս 19.1–9, Հովհաննես 11.32–46, 13.1–5, 12–17, և 3 Նեփի 17.5–10 հատվածները: Խնդրեք անդամներին մտածել այս սուրբ գրությունների մասին, երբ նրանք խորհեն, թե ինչպես կարող են ծառայել Հանգստության օրը: Օրինակ՝ նրանք կարող են ծառայել ընտանիքի անդամներին, հասնել անհատներին ու ընտանիքներին, ում նրանք ծառայում են որպես տնային և այցելող ուսուցիչներ, աշխատել ընտանեկան պատմության վրա, այցելել հիվանդներին կամ կիսվել ավետարանով: Անդամները կարող են անցկացնել ընտանեկան խորհուրդ, ծրագրավորելու եղանակներ, որոնցով նրանք կարող են ծառայել ուրիշներին Հանգստության օրը:

© ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԻՍՏՈՍԵՆԵԼ

*«Ավետարանի ծրագիրը, որին յուրաքանչյուր ընտանիք պիտի հետևի հավերժական կյանքին և վեհացմանը պատրաստվելու համար, տրված է 1995թ.-ի Եկեղեցու հոչակագրում՝ «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին». . .*

*. . . Այն Եկեղեցու ուսմունքների և գործունեության հիմքն է հանդիսանում վերջին 22 տարիների ընթացքում և այդպիսով կշարունակվի ապագայում: Ընդունեք այն, ուսուցանեք, ապրեք դրանով և դուք կօրհնվեք՝ առաջ շարժվելով դեպի հավերժական կյանքը:*

*Քառասուն տարի առաջ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ուսուցանել է, որ «յուրաքանչյուր սերունդ ունի իր քնությունը ու հնարավորությունները՝ կանգնելու և ինքն իրեն հաստատելու համար»: Ես կարծում եմ, որ Ընտանիքի հոչակագրի հանդեպ մեր վերաբերմունքը և դրա օգտագործումը այս սերնդի քնություններից մեկն է»:*

Երեց Դալլին Հ. Օուքս, Տասներկու Առաքյալների Քվորում, «Ծրագիրը և Հոչակագիրը», 29, 30-31

*Պարը,*
Քեթլին Փեթերսոն

«Ես բերում եմ իմ հանդիսավոր և ուրախ վկայությունը, որ Տեր Հիսուս Քրիստոսը ղեկի մոտ է: Նա ղեկավարում է Իր Եկեղեցին և Իր ծառաներին», - ասել է Նախագահ Հենրի Բ Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, Եկեղեցու 187-րդ կիսամյա գերագույն համաժողովին: «Ես վկայում եմ, որ Թոմաս Ս. Մոնսոնը միակ տղամարդն է, ով այս ժամանակներում կրում և գործադրում է Սուրբ քահանայության բոլոր բանալիները Երկրի վրա: Եվ ես աղոթում եմ և օրհնություններ խնդրում բոլոր խոնարհ ծառաների համար, ովքեր այդքան պատրաստակամ և լավ ծառայում են Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում, որը Նա առաջնորդում է անձնապես: Ես վկայում եմ, որ Ջոզեֆ Սմիթը տեսավ Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին: Նրանք խոսել են նրա հետ: Քահանայության բանալիները վերականգնվեցին Երկնային Հոր բոլոր զավակներին օրհնելու նպատակով: Մեր առաքելությունն ու վստահությունն է ծառայել մեր տեղում՝ Տիրոջ գործի համար»:

ARMENIAN
4 021445 1201 0

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ